



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

2027 - 2029

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|-------|---|
| ԱԳՆ | Արտաքին գործերի նախարարություն |
| ԱԺ | Ազգային ժողով |
| ԱԷՄԳ | Ատոմային էներգիայի միջազգային գործակալության |
| ԱՃԳԾԱ | Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցություն |
| ԱՃԹՆ | Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն |
| ԱՄՀ | Արժույթի միջազգային հիմնադրամ |
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԱՊՀ | Անկախ Պետությունների Համագործակցություն |
| ԲՏ | Բարձր տեխնոլոգիական |
| ԲԷՍՀ | Բարձր էներգիաների ստերեոսկոպիկ համակարգ |
| ԲՈՒՀ | Բարձրագույն ուսումնական հաստատություն |
| ԳԱԱ | Գիտությունների ազգային ակադեմիա |
| ԳՏՃՄ | Գիտություն տեխնոլոգիա ճարտարագիտություն մաթեմատիկա |
| ԵԱՀԿ | Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն |
| ԵԱՏՄ | Եվրասիական տնտեսական միություն |
| ԵԽ | Եվրոպայի խորհուրդ |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԵՏՀ | Եվրոպական տնտեսական համագործակցություն |
| ԶԼՄ | Զանգվածային լրատվության միջոց |
| ԿԲ | Կենտրոնական բանկ |
| ՀԱԷԿ | Հայկական ատոմային էլեկտրակայան |
| ՀԱՊԿ | Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն |
| ՀԸԳՀ | Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |
| ՄԺԾԾ | Միջնաժամկետ ծախսերի ծրագիր |
| ՄՀՄԻ | Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ |
| ՊԵԿ | Պետական եկամուտների կոմիտե |
| ՊՕՊ | Պետական գանձապետական պարտատոմսեր |
| ՌԴ | Ռուսաստանի Դաշնություն |
| ՍԴ | Սահմանադրական դատարան |
| ՎԿ | Վիճակագրական կոմիտե |
| ՏԱՅ | Տնտեսական ակտիվության ցուցանիշ |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՏՏ | Տեղեկատվական տեխնոլոգիա |
| ՓՄՁ | Փոքր և միջին ձեռնարկատիրություն |
| ՖՆ | Ֆինանսների նախարարություն |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| ՄԱՍ 1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ | 8 |
| ԳԼՈՒԽ 1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ | 9 |
| 1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ | 9 |
| 1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ | 12 |
| 1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ | 17 |
| 1.3.1. ՀՆԱ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ | 17 |
| 1.3.2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ | 20 |
| 1.3.3. ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ և ՆԵՐՄՈՒԾՈՒՄ | 22 |
| 1.3.4. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ և ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐ | 26 |
| 1.3.5. ԳՆԱՃ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 28 |
| 1.4. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ | 31 |
| 1.5. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 33 |
| 1.6. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ | 36 |
| 1.6.1. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԵՊԻ ՆԵՐՔԸ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՌԻՍԿԵՐ | 36 |
| 1.6.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԵՊԻ ՎԵՐԱ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՌԻՍԿԵՐ | 37 |
| 1.7. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ | 38 |
| ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ | 40 |
| 2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ | 40 |
| 2.2. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ | 42 |
| 2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ | 45 |
| 2.4. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ | 50 |
| 2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ | 55 |
| 2.6. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ | 58 |
| 2.7. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ | 60 |
| ԳԼՈՒԽ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ | 64 |
| 3.1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ | 64 |
| 3.2. ՀՀ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ | 66 |
| 3.3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ | 69 |
| 3.4. 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ | 70 |
| 3.5. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ | 74 |

| | |
|--|-----|
| 3.6. 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՏՎԱՅՈՒՄՆԵՐԸ | 79 |
| ՄԱՍ II. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ | 80 |
| ՀՀ 2027-2029ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 81 |
| 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ | 81 |
| 2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 84 |
| 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 86 |
| 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ | 87 |
| 5. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | 88 |
| 6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ | 90 |
| 7. ԷԿՈՆՈՄԻԿԱ | 92 |
| 8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ | 94 |
| 9. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 96 |
| 10. ՖԻՆԱՆՍՆԵՐ | 96 |
| 11. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 96 |
| 12. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ | 97 |
| 13. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 97 |
| 14. ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ | 97 |
| 15. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ | 98 |
| 16. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 98 |
| 17. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ | 99 |
| 18. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | 100 |
| 19. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ | 102 |
| 20. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ | 102 |
| 21. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ | 102 |
| 22. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 103 |
| 22.1. ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | 103 |
| 22.2. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ | 103 |
| 22.3. ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ | 104 |
| 22.4. ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ | 105 |
| 22.5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ | 106 |
| 22.6. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ | 107 |
| 22.7. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ | 107 |
| 22.8. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ | 108 |
| 22.9. ՄՐՑԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ | 108 |
| 22.10. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ | 109 |
| 22.11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ | 110 |
| 22.12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ | 110 |

| | |
|--|-----|
| 22.13. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 113 |
| 22.14. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ | 113 |
| 22.15. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ | 114 |
| 22.16. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ | 115 |
| 22.17. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ | 116 |
| ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 117 |
| 1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ | 118 |
| 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ | 150 |
| 2.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ | 150 |
| 2.2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | 155 |
| 2.3 ՀԱՏՈՒԿ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | 158 |
| 3 ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ | 196 |
| ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ | 210 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետական միջնաժամկետ ծախսային ծրագիրը (այսուհետև՝ ՄԺԾԾ) ներկայացնում է ՀՀ կառավարության տնտեսական և հարկաբյուջետային, այդ թվում՝ պարտքային և ծախսային քաղաքականությունները եռամյա ժամանակահատվածում:

2027-2029թթ միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են՝ ՀՀ անվտանգության ամրապնդումը, տնտեսական ենթակառուցվածքների զարգացումն ու հասնելիության բարձրացումը, մարդկային կապիտալի զարգացումը:

Միջնաժամկետ հատվածում կիրականացվեն սոցիալական, կրթական, առողջապահական, ենթակառուցվածքային բնույթի մի շարք առաջնահերթ միջոցառումներ, որոնց արդյունքում ի թիվս այլ թիրախների, կապահովվի հետևյալ առանցքային թիրախների իրագործումը.

- առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի փուլային ներդրման շարունակական իրականացում՝ բնակչության նոր խմբերի ներառմամբ, որի արդյունքում կապահովվի առողջապահական ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունը և որակի բարձրացումը:
- մասնագիտական կրթության ոլորտում կմշակվեն և կներդրվեն տնտեսության ժամանակակից պահանջներից բխող նոր մասնագիտությունների կրթական ծրագրեր՝ մեծացնելով շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում, բարձրագույն կրթության ծրագրերում կխթանվի գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,
- հանրակրթական դպրոցների ուսուցիչների, նախնական և միջին մասնագիտական, արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման արդյունքում ուսուցիչների աշխատավարձերի աճի ապահովում,
- շարունակվելու են մանկապարտեզների և դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքները, որոնք ապահովվելու են անհրաժեշտ գույքով և սարքավորումներով,
- բարելավվելու է ընտանեկան/ անապահովության նպաստների համակարգը,
- շարունակվելու են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրումը,
- շարունակվելու են ջրային պաշարների մակերևութային հոսքի կառավարման նպատակով ջրամբարաշինության ծրագրերը, որի արդյունքում կապահովվի ջրային ռեսուրսների պաշարների ավելացում և ջրային հոսքերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում,
- շարունակվելու են ՀՀ-ում ճանապարհային ցանցի զարգացմանն ուղղված՝ ճանապարհների հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքների իրականացումը, կշարունակվի Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցումը և այլն:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու ու թիրախներն ապահովելու համար ձևավորվել է այնպիսի միջնաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակ, որը մի կողմից կապահովի անհրաժեշտ ռեսուրսներ ՀՀ կառավարության ռեֆորմների արդյունավետ իրագործման համար, իսկ մյուս կողմից համաշխարհային տուրբուլենտ ժամանակաշրջանում կպահպանի հետագա կայուն զարգացման համար անկյունաքարային նշանակություն ունեցող մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունությունը:

2026թ. համար սպասվում է շուրջ 5.4% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում (2027-2031թթ.)՝ միջինում 6. 0% աճ: Հատկանշական է, որ վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%:

Միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի տնտեսական և պաշտպանական ենթակառուցվածքներում, մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Նշված բարեփոխումների համար անհրաժեշտ հարկաբյուջետային տարածքի առաջանցիկ ընդլայնման պայմաններում պետական բյուջեի պակասուրդի համեմատաբար բարձր մակարդակի ձևավորումից հետո հարկաբյուջետային քաղաքականությունը ուղղված կլինի ծախսերի կառուցվածքի բարելավմամբ ուղեկցվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացմանը: Կառավարության պարտքի բեռը 2027-2029 թվականներին կգտնվի 49-50%-ի մակարդակում, որից հետո, բյուջեի պակասուրդի շարունակական նվազման արդյունքում, կհասնի 43.4%-ի մինչև 2031 թվականը:

Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, սուվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ 2026թ.՝ 0.4 տոկոսային կետով, 2027թ.-ին՝ 0.5, իսկ հաջորդող տարիներին՝ միջինում 0.25 տոկոսային կետի շրջանակներում, որով միջնաժամկետի վերջում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մոտենում է ներկա օրենսդրության և տնտեսական կառուցվածքի պայմաններում արդյունավետ հնարավորությունների սահմանագծին՝ 2031թ.-ին հասնելով ՀՆԱ-ի 26%-ի:

2027-2031թթ. միջնաժամկետ հատվածում խնդիր է դրվել ապահովել հարկաբյուջետային կայունությունը կրճատելով բյուջեի դեֆիցիտը՝ 2026թ. ՀՆԱ-ի 4.0%-ի դիմաց այն մինչև 2031թ.-ը աստիճանաբար հասցնելով ՀՆԱ-ի 1.0%-ի:

Այդ նպատակով միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ում կնվազեն, իսկ կապիտալ ծախսերը կկայունանան պատմական միջինից զգալիորեն բարձր մակարդակում՝ նպաստելով տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների զարգացմանը: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում կայունանում է ՀՆԱ 6.3%-ի շրջանակներում մինչև 2031թ. , իսկ ընթացիկ ծախսերը 2026թ-ի համար ակնկալվող 23.8% ցուցանիշից աստիճանաբար նվազելով 2031թ. -ին կհասնեն ՀՆԱ 21.3%-ի:

ՄԱՍ 1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ

- 2025թ. առևտրային լարվածության և քաղաքական անորոշությունների պայմաններում համաշխարհային տնտեսությունում և գործընկեր երկրներում հիմնականում դիտվել են տնտեսական աճի ավելի թույլ տեմպեր, գնաճի աստիճանական թուլացում և խոշոր տնտեսություններում շարունակվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ճշգրտումներ: Սակայն 2026թ. առաջին եռամսյակում ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումները ձևավորվել են աշխարհաքաղաքական անորոշության և փոփոխվող առևտրային հոսքերի պայմաններում՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում ընթացող ռազմական լարվածությամբ: Այս պայմաններում 2026թ. գործընկեր երկրներից ԱՄՆ-ում և ՌԴ-ում կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի արագացում, իսկ Եվրագոտում և Չինաստանում՝ դանդաղում: Միջնաժամկետ հորիզոնում գործընկեր երկրների համար կանխատեսվում են իրենց պատմական միջին աճերից ցածր տնտեսական աճեր:
- Տնտեսության նախորդ տարիների աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2023-2025 թվականներին՝ գրանցելով միջինում 7.1% իրական աճ՝ շարունակելով կրել դեռևս 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջերից Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց տնտեսական ազդեցությունները:
- Տնտեսական աճի տեմպերը 2026 թվականի առաջին եռամսյակում փոքր-ինչ դանդաղել են՝ գրանցելով 4.0% աճ, ինչը պայմանավորված է եղել ծառայությունների, արդյունաբերության և շինարարության աճերով՝ (նպաստումները համապատասխանաբար՝ 1.5, 1.1 և 0.8 տոկոսային կետեր): Գյուղատնտեսությունը նվազել է 1.6 տոկոսով՝ հակազդելով տնտեսական աճին (բացասական նպաստումը՝ 0.1 տոկոսային կետ):
- Ընթացիկ տնտեսական զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի պահպանման, ինչպես նաև Ամուլսարի շահագործման և կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունների արդյունքում 2026 թվականի համար սպասվում է շուրջ 5.4% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում (2027-2031թթ.)՝ միջինում 6. 0% աճ: Հատկանշական է, որ վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%:
- Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղման և վերաարտահանման դերի նվազման պայմաններում 2026թ. սպասվում է արտահանման և ներմուծման որոշակի նվազում: Այնուամենայնիվ, նախորդ տարվա արտահանման կտրուկ անկումից հետո՝ 2026թ. արտահանման և ներմուծման նվազման տեմպերի դանդաղման արդյունքում, կգրանցվի առևտրային հաշվեկշռի բարելավում: Դրամական փոխանցումների աճի և ապրանքներ-ծառայությունների հաշվեկշռի բարելավման արդյունքում 2026թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի՝ հասնելով ՀՆԱ-ում 5.6%-ի: Միջնաժամկետում, վերաարտահանման գործոնների ազդեցությունների չեզոքացման պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կկայունանա երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակի շուրջ:
- Միջնաժամկետ հատվածի սկզբում՝ կառուցվածքային բարեփոխումների համար հարկաբյուջետային տարածքի առաջանցիկ ընդլայնման պայմաններում պետական բյուջեի պակասուրդի համեմատաբար բարձր մակարդակի ձևավորումից հետո հարկաբյուջետային

քաղաքականությունը ուղղված կլինի ծախսերի կառուցվածքի բարելավմամբ ուղեկցվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացմանը: Կառավարության պարտքի բեռը 2027-2029 թվականներին կգտնվի 49-50%-ի մակարդակում, որից հետո, բյուջեի պակասուրդի շարունակական նվազման արդյունքում կհասնի 43.4%-ին մինչև 2031 թվականը: Հարկաբյուջետային կոնսոլիդացիան կիրականացվի ընթացիկ ծախսերի օպտիմալացման և արդյունավետության բարձրացման պայմաններում ՀՆԱ-ում դերի որոշակի նվազմամբ, ինչը կզուգորդվի զսպող հարկաբյուջետային ազդակով միջնաժամկետի սկզբում, իսկ միջնաժամկետի վերջում հարկաբյուջետային քաղաքականության դիրքը ամբողջական պահանջարկի վրա ազդեցության տեսանկյունից կվերադառնա չեզոքի՝ միաժամանակ ամբողջ հորիզոնում դրական ազդեցություն ունենալով տնտեսության ներուժի վրա: Հարկաբյուջետային քաղաքականության համար, ընդհանուր առմամբ, առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:

- 2026թ. գնաճը մոտ կլինի թիրախային ցուցանիշին և միջնաժամկետում կկայունանա դրա շուրջ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ն կձեռնարկի համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 3% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցներն աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՄԺԾժ շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար առկա են երկկողմանի ռիսկեր, սակայն դեպի ներքև ռիսկերը համեմատաբար գերակշռում են:

Աղյուսակ 1.1. 2027-2031թթ. ՄԺԾժ (ներառյալ 2027թ. պեղական բյուջեի) մակրոտնտեսական շրջանակ

| Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|---|---------|---------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| | փաստ | փաստ | փաստ | փաստ | սպաս. | ծրագիր | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. |
| Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ | 8,501.4 | 9,492.5 | 10,249.8 | 11,342.7 | 12,333.2 | 13,415.8 | 14,614.7 | 15,964.1 | 17,495.4 | 19,173.5 |
| Տնտեսական աճ, % | 12.6 | 8.3 | 5.9 | 7.1 | 5.4 | 5.6 | 5.8 | 6.1 | 6.4 | 6.4 |
| ՀՆԱ դեֆլյատորի աճ, % | 8.0 | 3.1 | 2.0 | 3.3 | 3.2 | 3.1 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| Գնաճ (ժամանակ. վերջ), % | 8.3 | -0.6 | 1.5 | 3.3 | 3.6 | 3.3 | 3.1 | 3.0 | 3.0 | 3.0 |
| Գնաճ (միջին), % | 8.6 | 2.0 | 0.3 | 3.3 | 3.7 | 3.3 | 3.1 | 3.0 | 3.0 | 3.0 |
| ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, % | | | | | | | | | | |
| Արդյունաբերություն | 6.9 | -3.0 | 2.0 | 3.8 | 7.2 | 6.5 | 6.5 | 6.3 | 6.6 | 6.9 |
| Գյուղատնտեսություն | -2.8 | -0.4 | 1.5 | 5.2 | 2.5 | 2.8 | 2.8 | 3.3 | 3.5 | 3.6 |
| Շինարարություն | 18.6 | 15.6 | 14.0 | 20.9 | 5.8 | 5.3 | 5.5 | 5.5 | 5.5 | 5.5 |
| Ծառայություններ | 18.4 | 12.5 | 8.0 | 6.0 | 5.2 | 5.7 | 6.0 | 6.4 | 6.8 | 6.7 |
| Զուտ հարկեր | 8.1 | 11.0 | -1.6 | 10.4 | 5.4 | 5.5 | 5.7 | 6.0 | 6.4 | 6.3 |
| ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, % | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|--------|--------|--------|--------|--------|--------|--------|----------|----------|----------|
| Վերջնական սպառում | 4.2 | 6.9 | 5.8 | 9.0 | 7.0 | 4.6 | 5.3 | 6.6 | 7.0 | 7.0 |
| Պետական | -2.2 | 10.2 | -8.2 | 3.7 | 11.6 | 0.8 | 4.5 | 12.6 | 14.2 | 13.2 |
| Մասնավոր | 5.4 | 6.4 | 8.3 | 9.8 | 6.3 | 5.2 | 5.4 | 5.7 | 5.9 | 6.0 |
| Հիմնական միջոցներում ներդրումներ ¹ | 14.0 | 9.0 | 11.9 | 14.9 | 5.2 | 7.5 | 7.0 | 6.5 | 6.2 | 7.1 |
| Պետական | 52.0 | 25.7 | 11.7 | 28.6 | 0.7 | 9.4 | 9.4 | 7.6 | 7.0 | 9.5 |
| Մասնավոր | 5.0 | 3.3 | 12.0 | 9.2 | 7.5 | 6.6 | 5.9 | 5.9 | 5.9 | 5.9 |
| Արտահանում | 65.3 | 32.3 | 27.6 | -27.8 | -8.4 | 1.7 | 2.8 | 3.5 | 5.1 | 1.1 |
| Ներմուծում | 38.6 | 32.5 | 28.5 | -21.2 | -9.3 | -2.6 | 3.4 | 2.5 | 2.4 | 3.3 |
| Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար) | | | | | | | | | | |
| Ընթացիկ հաշիվ | 144 | -670 | -1,195 | -2,111 | -1,779 | -1,308 | -1,665 | -1,798 | -1,729 | -1,915 |
| Ապր. և ծառայությունների հաշվեկշիռ | -100 | -343 | -732 | -1,588 | -1,453 | -961 | -1,238 | -1,359.1 | -1,272.9 | -1,443.7 |
| Արտահանում | 10,339 | 14,718 | 19,072 | 14,649 | 13,748 | 13,976 | 14,488 | 15,134 | 15,961.0 | 16,711.9 |
| Փոփոխություն, % | 107.7 | 42.3 | 29.6 | -23.2 | -6.2 | 1.7 | 3.7 | 4.5 | 5.5 | 4.7 |
| Ներմուծում | 10,439 | 15,062 | 19,804 | 16,237 | 15,202 | 14,936 | 15,726 | 16,493 | 17,233.9 | 18,155.5 |
| Փոփոխություն, % | 71.3 | 44.3 | 31.5 | -18.0 | -6.4 | -1.7 | 5.3 | 4.9 | 4.5 | 5.3 |
| Դրամական փոխանցումներ | 1,480 | 1,013 | 804 | 838 | 950 | 996 | 1,026 | 1,055.8 | 1,086.3 | 1,118.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ % | | | | | | | | | | |
| Ընթացիկ հաշիվ | 0.7 | -2.8 | -4.6 | -7.2 | -5.6 | -3.9 | -4.7 | -4.7 | -4.2 | -4.3 |
| Ապր. և ծառայությունների հաշվեկշիռ | -0.5 | -1.4 | -2.8 | -5.4 | -4.6 | -2.9 | -3.5 | -3.6 | -3.1 | -3.3 |
| Արտահանում | 53.0 | 60.9 | 73.1 | 50.0 | 43.3 | 41.9 | 40.7 | 39.6 | 38.9 | 37.9 |
| Ներմուծում | 53.5 | 62.3 | 75.9 | 55.4 | 47.9 | 44.7 | 44.2 | 43.2 | 42.0 | 41.2 |
| Դրամական փոխանցումներ | 7.6 | 4.2 | 3.1 | 2.9 | 3.0 | 3.0 | 2.9 | 2.8 | 2.6 | 2.5 |

¹ Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից սկսած ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Տնտեսական զարգացումներ: Առևտրային լարվածության և քաղաքականության անորոշության պայմաններում 2025թ. համաշխարհային տնտեսությունը և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսությունները զգալի դիմադրողականություն են դրսևորել (բացառությամբ ՌԴ-ի):

Այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսությունում և գործընկեր երկրներում հիմնականում դիտվել են տնտեսական աճի ավելի թույլ տեմպեր, գնաճի աստիճանական թուլացում և խոշոր տնտեսություններում շարունակվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ճշգրտումներ: Տնտեսական զարգացումների հիմնական որոշիչ գործոններն են եղել մաքսատուրքերի սահմանման հետ կապված առևտրային քաղաքականության անորոշությունները, որոնք որոշակի դրական ազդեցություններ են ունեցել Չինաստանի և Եվրագոտու համար: ԱՄՆ-ում և Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական աճի տեմպերը դանդաղել են՝ պայմանավորված ներդրումների դերի նվազմամբ: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գնահատականներով 2025թ. համաշխարհային տնտեսական աճը պահպանվել է նախորդ տարվա նույն մակարդակում՝ կազմելով 3.4%, իսկ ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ՌԴ-ում գրանցվել է 1% աճ, Եվրագոտում՝ 1.4%, ԱՄՆ-ում՝ 2.1%, Չինաստանում՝ 5%:

2026թ. առաջին եռամսյակում ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումները ձևավորվել են աշխարհաքաղաքական անորոշության և փոփոխվող առևտրային հոսքերի պայմաններում՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում ընթացող ռազմական լարվածությամբ: ԱՄՆ-ի և Չինաստանի տնտեսություններում պահպանվել են աճի համեմատաբար կայուն տեմպերը, Եվրագոտում արձանագրվել է աճի տեմպի դանդաղում, իսկ ՌԴ-ում՝ վերջին երեք տարիների ընթացքում առաջին անգամ՝ տնտեսական անկում: 2026թ. առաջին եռամսյակում ԱՄՆ տնտեսությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ գրանցել է 2.7% աճ²: Աճի կայուն մակարդակը պահպանվել է արհեստական բանականության ոլորտում կատարված ներդրումների, մասնավոր և պետական սպառման, ինչպես նաև արտահանման աճերի հաշվին: Եվրագոտու տնտեսությունն ընթացիկ տարվա առաջին եռամսյակում գրանցել է 0.8% աճ³՝ դանդաղելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 1.6% աճի համեմատ: Այս դանդաղումը պայմանավորված է եղել Մերձավոր Արևելքում սկիզբ առած պատերազմի հետևանքով առաջացած էներգետիկ ճգնաժամով, ինչն էլ հանգեցրել է հիմնական էներգետիկ ապրանքների գների կտրուկ աճի: Միության խոշոր տնտեսություններում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և Նիդերլանդներում աճի դանդաղումը պայմանավորված է եղել սպառման աճի դանդաղմամբ:

Չնայած համաշխարհային անորոշությանը՝ 2026թ. առաջին եռամսյակում Չինաստանի տնտեսությունը գրանցել է 5% աճ, որն առավելապես պայմանավորված է եղել արդյունաբերական արտադրանքի և արտահանման աճերով: Ռուսաստանի Դաշնությունում հունվար-մարտ ամիսներին գրանցվել է 0.3% անկում⁴. ընդ որում, հունվարին տնտեսական անկման չափը կազմել է 1.8%, փետրվարին՝ 1.1% և մարտին գրանցվել է աճ՝ 1.8%: Գրանցված անկումը հիմնականում պայմանավորված է եղել հունվարին և փետրվարին մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտների անկմամբ, ինչպես նաև ավելի թույլ սպառողական պահանջարկով:

Հունվարին և փետրվարին արձանագրված գնաճի տեմպերի թուլացման միտումներին մարտին հաջորդել է գների կտրուկ աճ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածության հետևանքով էներգակիրների գների աճով: Այս միտումներին զուգահեռ, ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը

² Աղբյուրը՝ Տնտեսական վերլուծությունների բյուրո, <https://www.bea.gov/>

³ Աղբյուրը՝ Եվրոստատ, <https://ec.europa.eu/eurostat/>

⁴ Աղբյուրը՝ ՌԴ տնտեսական զարգացման նախարարություն, <https://economy.gov.ru/>

և Եվրոպական կենտրոնական բանկը զգուշավորություն են դրսևորել՝ քաղաքականության տոկոսադրույքները պահպանելով արդեն իսկ սահմանված մակարդակներում: ԱՄՆ ԴԴՀ տոկոսադրույքը շարունակել է պահպանվել նախորդ տարեվերջին սահմանված 3.5-3.75% միջակայքում: ԵԿԲ-ն և Չինաստանը շարունակել են պահպանել նախորդ տարվա հունիսին սահմանված տոկոսադրույքների մակարդակները՝ համապատասխանաբար, 2.15% և 3%: Առաջին եռամսյակում ՌԴ ԿԲ-ն երկու անգամ 0.5 տոկոսային կետով նվազեցրել է տոկոսադրույքը՝ մարտին սահմանելով 15% մակարդակում՝ պայմանավորված գնաճի տեմպերի դանդաղմամբ:

Կանխատեսում: ԱՄՀ ապրիլ ամսվա կանխատեսումների համաձայն 2026 և 2027 թվականներին համաշխարհային տնտեսական աճը կդանդաղի՝ կազմելով, համապատասխանաբար, 3.1% և 3.2%՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում ռազմական գործողությունների հետևանքով արժեշրջանների խաթարումների ուղղակի և անուղղակի ազդեցություններով, ինչպես նաև անորոշությունների բարձր մակարդակով: ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ԱՄՆ-ում 2026թ. սպասվում է աճի արագացում՝ պայմանավորված հարկաբյուջետային քաղաքականության խթանող դիրքի և 2025թ. ընթացքում դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների նվազեցումների հետևանքով ազդեցությամբ: Հաջորդող տարիներին սպասվում է աճի դանդաղում՝ պայմանավորված տեխնոլոգիական ոլորտի աճի աստիճանաբար դանդաղմամբ, արտադրողականության կտրուկ աճի աստիճանական մարումով և ավելի թույլ սպառողական պահանջարկի հեռանկարներով: Եվրագոտում սպասվում է աճի տեմպի դանդաղում՝ 2026թ.՝ 1.1%, 2027թ.՝ 1.2%՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում ծավալված ռազմական գործողություններով, որն ավելի կխորացնի էներգակիրների աճի հետևանքները՝ ճնշումներ գործադրելով մշակող արդյունաբերության ոլորտի վրա: Մյուս կողմից բացասական նպաստող գործոն կհանդիսանա Եվրոյի դիրքի ամրապնդումը:

Աղյուսակ 1.2. ԱՄՀ կանխատեսումներ

| | 2025 | 2026թ.-ի կանխատեսում | | | 2027թ.-ի կանխատեսում | | | 2028թ. | 2029թ. | 2030թ. | 2031թ. |
|----------------------------|------|----------------------|-------------|------------|----------------------|--------------|------------|------------|------------|------------|------------|
| | Փաստ | 2025 Հոկտ . | 2026 Հունվ. | 2026 Ապրիլ | 2025 Հոկտ . | 2026 Հունվ . | 2026 Ապրիլ | 2026 Ապրիլ | 2026 Ապրիլ | 2026 Ապրիլ | 2026 Ապրիլ |
| Աշխարհի տնտեսական աճ, % | 3.4 | 3.1 | 3.3 | 3.1 | 3.2 | 3.2 | 3.2 | 3.2 | 3.2 | 3.1 | 3.1 |
| ՌԴ | 1.0 | 1.0 | 0.8 | 1.1 | 1.1 | 1.0 | 1.1 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 |
| Եվրագոտի | 1.4 | 1.1 | 1.3 | 1.1 | 1.4 | 1.4 | 1.2 | 1.4 | 1.2 | 1.1 | 1.1 |
| Չինաստան | 5.0 | 4.2 | 4.5 | 4.4 | 4.2 | 4.0 | 4.0 | 4.0 | 3.7 | 3.3 | 3.3 |
| ԱՄՆ | 2.1 | 2.1 | 2.4 | 2.3 | 2.1 | 2.0 | 2.1 | 2.1 | 1.9 | 1.8 | 1.8 |
| Համաշխարհային առևտրի աճ, % | 5.1 | 2.3 | 2.6 | 2.8 | 3.1 | 3.1 | 3.8 | 3.2 | 3.1 | 3.0 | 3.0 |

Աղբյուրը՝ ԱՄՀ «World Economic Outlook»

Չինաստանի տնտեսական աճը 2026թ. և միջնաժամկետում կդանդաղի՝ պայմանավորված տնտեսության կառուցվածքային խնդիրներով՝ անշարժ գույքի շուկայի շարունակվող դանդաղմամբ, աշխատուժի թվաքանակի կրճատմամբ և արտադրողականության աճի թուլացմամբ: Սակայն նշված գործոններին 2026թ. որոշակի կհակազդեն չինական ապրանքների վրա ԱՄՆ մաքսատուրքերի արդյունավետ դրույքաչափերի ցածր մակարդակը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի հակամարտության

հետևանքով առաջացած բացասական ազդեցությունը մեղմելուն ուղղված կառավարության խթանող միջոցառումները: ՌԴ-ում 2026թ. և միջնաժամկետում աճի թույլ միտումները կպահպանվեն՝ պայմանավորված մասնավոր սպառման և ներդրումների աճի տեմպերի դանդաղմամբ: Ընդ որում, ՀՀ հիմնական գործընկեր երկրների 2026թ. ապրիլի կանխատեսումների վերանայումները՝ հունվարի համեմատ, տարբեր ուղղվածություն ունեն. ՌԴ-ի կանխատեսումը 0.3 տոկոսային կետով վերանայվել է դեպի վեր՝ պայմանավորված հումքային ապրանքների բարձր գներով, իսկ ԱՄՆ-ի, Եվրագոտու և Չինաստանի կանխատեսումները վերանայվել են դեպի ներքև (ավելի մանրամասն տե՛ս Աղյուսակ 1.2 - ում):

2025թ. համեմատաբար թույլ պահանջարկը, առաջարկի էական աճը ոչ ՕՊԵԿ+ երկրների կողմից հանգեցրել են նավթի գների անկման, մինչդեռ պղնձի գների աճ է գրանցվել՝ պայմանավորված վերականգնվող էներգիայի ճյուղի պահանջարկի աճով և սահմանափակ առաջարկով: Կանխատեսվող հորիզոնում նավթի և պղնձի միջազգային գներն աճի միտում ունեն: Նավթի միջազգային գինը 2025թ. կազմել է 69 դոլար մեկ բարելի դիմաց՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 14.5%-ով: Պղնձի միջազգային գինը 2025թ. նախորդ տարվա համեմատ աճել է 8.8%-ով՝ կազմելով 9,947 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց, իսկ պարենային ապրանքների միջազգային գինը աճել է 4.3%-ով: Նավթի գների նվազումը պայմանավորող գործոններն են եղել ՕՊԵԿ+ երկրների կողմից արտադրության և արդյունահանման կրճատման պահանջի մեղմացումը, ինչպես նաև ոչ ՕՊԵԿ+ երկրների կողմից առաջարկի աճը, խոշոր տնտեսությունների պահանջարկի դանդաղումը, առևտրային լարվածության արդյունքում ձևավորված անորոշությունները: Պղնձի միջազգային գնի զգալի աճը պայմանավորված է եղել խտանյութի առաջարկի կրճատմամբ, կանաչ էներգիայի անցման և դրա հետևանքով էներգետիկ ոլորտում առկա պահանջարկով, դոլարի դիրքի թուլացմամբ, ինչպես նաև առևտրային քաղաքականության անորոշություններով:

2026թ. հունվար-ապրիլ ամիսներին հումքային և պարենային ապրանքների գների միտումները պայմանավորել են նոր աշխարհաքաղաքական իրողությունները՝ Մերձավոր Արևելքում ռազմական գործողությունները՝ խաթարելով մատակարարման արժեշրջանները: Ընթացիկ տարվա հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նավթի միջազգային գինն աճել է 22.8%-ով՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում սկիզբ առած հակամարտության սրմամբ:


Պղնձի միջազգային գինը 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աճել է 38.1%-ով՝ միջինում կազմելով 12,810 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց: Պղնձի միջազգային գնի զգալի աճը պայմանավորված է եղել մատակարարման շղթաների խաթարմամբ, դրա հետևանքով էներգակիրների գների աճով, ինչպես նաև առաջարկի սահմանափակմամբ:

Պարենի միջազգային գինը⁵ 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0.4%-ով: Միևնույն ժամանակ, հունվար-փետրվար ամիսներին գրանցվել է պարենի գնի նվազում՝ 0.7%-ով՝ պայմանավորված կաթնամթերքի, հացահատիկի և շաքարավազի գների նվազմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է եղել առաջարկի աճով: Նշված պարենային ապրանքների գների նվազման միտումներին որոշ չափով հակազդել է մսամթերքի և բուսական յուղերի գների աճը՝ պայմանավորված աճող պահանջարկով: Սակայն մարտ և ապրիլ ամիսներին պարենի միջազգային գնի աճը պայմանավորված է եղել էներգակիրների գների աճով և Մերձավոր Արևելքում հակամարտության հետևանքով առաջացած խափանումներով՝ նպաստելով արտադրության և տեղափոխման ծախսերի աճին:

Միջազգային փնտեսական և ֆինանսական զարգացումները և կանխափեսումները:


⁵ Աղբյուրը՝ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն <https://www.fao.org/worldfoodsituation/foodpricesindex/en/>

Գծապատկեր 1.1. Համաշխարհային և գործընկերերի կրթության անձերի տեմպերի փոփոխության ցուցանիշները (%)




Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.2. Հումքային ապրանքների գները (ԱՄՆ դոլար), 2026թ. փետրվարի դրությամբ




Աղբյուրը՝ կանխատեսումները ըստ Բլումբերգի

Գծապատկեր 1.3. Համաշխարհային առևտրի դոլարային անձերը (%)




Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.4. Զարգացող երկրների ազգային արժույթների դոլարի նկատմամբ փոփոխությունները⁶




Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.5. Գործընկեր երկրների բաժնետույնների շուկաների ինդեքսները



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.6. ՀՀ համադրելի երկրների ռիսկի հավելավճարները, սփրեթ⁷



Աղբյուրը՝ Բլումբերգ

Միջազգային ապրանքային, արժույթային և ֆինանսական շուկաներում էական տատանումներ են գրանցվել: Համաշխարհային առևտրի տեմպերը նախորդ տարվա համեմատ որոշակի վերականգնվել են, սակայն կանխատեսվող հորիզոնում աճի տեմպերը դանդաղում են: Ֆինանսական շուկաներում,

⁶ Դոլարի ինդեքսը հաշվարկվում է որպես կշռված երկրաչափական միջին՝ հետևյալ արժույթների նկատմամբ. Եվրո, Ճապոնական յեն, Բրիտանական ֆունտ, Կանադական դոլար, Շվեդական կրոն, Շվեյցարական ֆրանկ:



⁷ Երկրի ռիսկի հավելավճարները հաշվարկված են որպես տվյալ երկրի եվրոպարտատոմների (դոլարային արժույթով) և ԱՄՆ համապատասխան ժամկետայնությամբ գանձապետական պարտատոմների եկամտաբերությունների տարբերություն (պարտատոմների մարման ժամկետները նշված են երկրների անվանումների կողքը՝ փակագծերում):

հատկապես՝ ամերիկյան և եվրոպական, նկատվում են բաժնետոմսերի գների վերականգնում, ռուսական բաժնետոմսերի թույլ միտումները պահպանվել են: ԱՄՆ դոլարի դիրքի թուլացման միտումները պահպանվել են: Զարգացող երկրների արժույթները այս համապատկերում ամրապնդվել են ԱՄՆ դոլարի նկատմամբ: Չնայած որոշակի տատանումներին, ռուսական ռուբլու արժևորման միտումները պահպանվել են: Այս պայմաններում ՀՀ համադրելի զարգացող երկրների, այդ թվում՝ տարածաշրջանի երկրների ռիսկի հավելավճարները նվազել են:

2025թ. համաշխարհային պետական պարտքի բեռի բարձր մակարդակը պահպանվել է, իսկ Մերձավոր Արևելքում հակամարտությունը լրացուցիչ ճնշումներ է ստեղծել՝ սահմանափակելով հարկաբյուջետային տարածքը՝ չնայած, որ համաշխարհային տնտեսությունը որոշակի դիմադրողականություն է դրսևորել: Պարտքի աճի միտումներն առավել կենտրոնացած են Չինաստանում և Միացյալ Նահանգներում, սակայն խոցելիությունները լայնորեն տարածված են. թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում բյուջեի պակասուրդ/ՀՆԱ և պարտք/ՀՆԱ ցուցանիշների մակարդակները խորացել են: Տարբեր եկամտային խմբերի երկրներ բախվում են պարտքի բարձր մակարդակին, դրա անբարենպաստ դինամիկային կամ երկու գործոններին միաժամանակ: Արդյունքում, համաշխարհային պետական պարտքը 2025թ. կազմել է ՀՆԱ-ի 93.9%-ը, իսկ պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը՝ 5.0%:

Համաշխարհային հարկաբյուջետային զարգացումների հեռանկարի հիմնական ռիսկերից առաջնային է Մերձավոր Արևելքի հակամարտության հետևանքով էներգակիրների գների կտրուկ աճը՝ զուգակցված առևտրային խոչընդոտների և արդյունաբերական սուբսիդիաների հետ, որոնք լրացուցիչ հարկաբյուջետային ճնշումներ են կուտակում և սահմանափակում կենտրոնական բանկի անկախությունը:

Գծապատկեր 1.7. Համաշխարհային տնտեսությունում ընթացող հարկաբյուջետային զարգացումները





Աղբյուրը՝ IMF, Fiscal Monitor, April 2026.

1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.3.1. ՀՆԱ և տնտեսական աճ

Տնտեսության 2021-2022 թվականների աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2023-2025 թվականներին՝ գրանցելով միջինում 7.1% իրական աճ՝ շարունակելով կրել դեռևս 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջերից Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց տնտեսական ազդեցությունները: 2023-2025 թվականներին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և շինարարության աճերով (նպաստումները՝ համապատասխանաբար՝ միջինում 5.0 և 1.2 տոկոսային կետեր): Տնտեսական աճին նպաստել են նաև գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերը (նպաստումները՝ միջինում 0.2 և 0.1 տոկոսային կետեր): Պահանջարկի տեսանկյունից աճին նպաստել է ինչպես ներքին պահանջարկի (մասնավոր սպառման ու պետական և մասնավոր ներդրումների), այնպես էլ արտահանման աճը:





Տնտեսական աճի տեմպերը 2026 թվականի առաջին եռամսյակում փոքր-ինչ դանդաղել են՝ գրանցելով 4.0% աճ, ինչը պայմանավորված է եղել ծառայությունների, արդյունաբերության և շինարարության աճերով՝ (նպաստումները համապատասխանաբար՝ 1.5, 1.1 և 0.8 տոկոսային կետեր): Գյուղատնտեսությունը նվազել է 1.6 տոկոսով՝ հակազդելով տնտեսական աճին (բացասական նպաստումը՝ 0.1 տոկոսային կետ):



Ապրիլ ամսին տնտեսական ակտիվությունը որոշակիորեն արագացել է՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճերի արագացմամբ: Արդյունքում, 2026 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արձանագրվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի⁸ 6.9% աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների աճով (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ): Արդյունաբերության, շինարարության և առևտրի ճյուղերի աճերը ևս նպաստել են տնտեսական ակտիվությանը (նպաստումները՝ համապատասխանաբար՝ 2.1, 1.5 և 0.2 տոկոսային կետեր): Ընդ որում՝ արդյունաբերության դրական զարգացումները հունվար-մարտին պայմանավորված են եղել հիմնականում «մշակող արդյունաբերություն» և «հանքագործական արդյունաբերություն և

⁸ՏԱՅ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ոչ բոլոր հաշվարկներում է ներկայացված, քանի որ այն հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ:

բացահանքերի շահագործում» ենթաճյուղերի աճերով (նպաստումները՝ համապատասխանաբար 6.2 և 5.9 տոկոսային կետեր)։



Ներքին պահանջարկի աճի տեմպերը շարունակվել են նաև 2026 թվականի առաջին եռամսյակում: 2026 թվականի հունվար-մարտ ամիսներին տնտեսական աճը հիմնականում պայմանավորվել է ներքին մասնավոր պահանջարկի (մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների) աճով: Նույն ժամանակահատվածում գրանցվել են արտահանման և ներմուծման նվազման տեմպերի դանդաղում՝ պայմանավորված վերանշակման և վերարտահանման նպատակով ներմուծված թանկարժեք մետաղների ներմուծման գործոնի թուլացմամբ և հանքանյութերի արտահանման ծավալների ավելացմամբ: Ընդ որում՝ արտահանման վերականգնումն առաջանցիկ է եղել ներմուծման նկատմամբ, ինչի արդյունքում զուտ արտահանումը դրական նպաստում է ունեցել տնտեսական աճին:

Ապրիլ ամսին ներքին պահանջարկի աճի միտումները շարունակվել են՝ պայմանավորված դրամական փոխանցումների, հիպոթեքային, շինարարության, ինչպես նաև սպառողական վարկավորման աճերով: Սպառման աճի մասին են վկայում նույն ժամանակաշրջանում ծառայությունների աճը, իսկ ներդրումների աճի մասին՝ շինարարության աճը:


⁹SUS-ի նպաստումների «այլ» բաղադրիչի մեջ ներառված են գյուղատնտեսության (բացառությամբ՝ հունվար-մարտի) և ոչ շուկայական ծառայությունների նպաստումները:

Կանխատեսում: Ընթացիկ տնտեսական զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի պահպանման, ինչպես նաև Ամուլսարի շահագործման և կառուցվածքային բարեփոխումների (առավել մանրամասն տե՛ս 1.4 բաժնում) հնարավոր ազդեցությունների արդյունքում 2026 թվականի համար սպասվում է շուրջ 5.4% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում (2027-2031թթ.)՝ միջինում 6.0% աճ: 2026 թվականին և միջնաժամկետում տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճերով: Տնտեսական աճին իրենց նպաստումը կունենան նաև շինարարության և գյուղատնտեսության ճյուղերը, ինչը համահունչ է կառավարության նպատակադրած արտահանման խթանման և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականություններին: Ամբողջական պահանջարկը նույնպես կաճի՝ հիմնականում պայմանավորված ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճով:

2026 թվականին և միջնաժամկետում դեֆլյատորը կաճի շուրջ 3.0%-ով՝ պայմանավորված գնաճի և հանքահումքային և գյուղատնտեսական ապրանքների միջազգային գների զարգացումներով:


Վերոնշյալ զարգացումների պայմաններում անվանական ՀՆԱ-ն 2026 թվականին կկազմի 12,333.2 մլրդ դրամ՝ 399.5 մլրդ դրամով ավել լինելով 2026 թվականի պետական բյուջեով ծրագրված ցուցանիշից: Իսկ միջնաժամկետում անվանական ՀՆԱ-ն կաճի միջինում 9.2%-ով՝ 2031 թվականին կազմելով 19,173.5 մլրդ դրամ:

Գծապատկեր 1.14. Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ) և տնտեսական աճ (%)




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.15. Տնտեսական աճ (%) և տնտեսության ճյուղերի նպաստումները տնտեսական աճին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ



Գծապատկեր 1.16. Տնտեսական աճ (%) և տնտեսական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումները (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Համախառն առաջարկի կանխատեսում. 2026 թվականին արդյունաբերության և շինարարության աճերն առաջանցիկ կլինեն տնտեսական աճից, իսկ տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճերով (համապատասխանաբար՝ 5.2% և 7.2%): Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես կաճեն՝ նպաստելով տնտեսական աճին:

Միջնաժամկետում՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի աճով, տնտեսությունում իրականացվող պետական և մասնավոր ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություններով՝ արդյունաբերությունը կաճի միջինում 6.6%-ով (ճյուղի աճին կնպաստի նաև Ամուլսարի շահագործումը), ծառայությունները՝ 6.3%-ով (ծառայությունների աճը կշարունակի պայմանավորվել SS, տուրիզմի և ֆինանսական ծառայությունների աճերով), շինարարությունը՝ 5.5%-ով (պետական կապիտալ ծախսերի (հիմնականում ենթակառուցվածքներում ներդրումների) և բնակարանային շինարարության աճերով), իսկ գյուղատնտեսությունը՝ 3.2%-ով (պետական օժանդակության ծրագրերով պայմանավորված ոլորտի աճով):



Համախառն պահանջարկի կանխատեսում. 2026 թվականին վերջնական սպառումը կաճի 7.0%-ով, իսկ ներդրումները՝ 5.2%-ով: Սպառման և ներդրումների աճին կնպաստեն տնօրինվող եկամտի և բնակարանային շինարարության հետագա աճերը, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված պետական քաղաքականությունը: Միջնաժամկետում՝ սպառումը միջինում կաճի 6.1%-ով, իսկ ներդրումները՝ 6.9%-ով: Միջնաժամկետում ներդրումների վրա դրական ազդեցություն կունենա ՀՀ կառավարության կողմից ենթակառուցվածքներում ներդրումների շարունակական աճը, ինչպես նաև մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված միջոցառումները, իսկ սպառումը պայմանավորված կլինի տնօրինվող եկամտի աճով:

2026 թվականին արտահանումը և ներմուծումը կնվազեն, համապատասխանաբար՝ 8.4%-ով և 9.3%-ով: ՀՀ և համաշխարհային տնտեսական աճերի, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումների, տնօրինվող եկամտի և զբոսաշրջության աճի, ինչպես նաև արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության պայմաններում 2027-2031 թվականներին արտահանումն ու ներմուծումը կաճեն միջինում 2.8% և 1.8%-ով:

1.3.2. Աշխատանքի շուկա

2023-2025 թվականներին գործազրկությունը (բացառությամբ 2024 թվականի) նվազել է՝ ուղեկցվելով զբաղվածության և վարձու աշխատողների թվաքանակի շարունակական աճով: 2025 թվականին գործազուրկների թվաքանակը 2024 թվականի համեմատ նվազել է 4.9%-ով (8,900 մարդ), իսկ գործազրկության մակարդակը՝ 0.6%-ով կազմելով 12.8%:


2023-2025 թվականներին զբաղվածների թվաքանակը միջինում աճել է 1.2%-ով, իսկ վարձու աշխատողներինը՝ 5.1%-ով՝ կրելով տնտեսական աճի, նոր կազմակերպությունների ստեղծման, ինչպես նաև ստվերի կրճատման ազդեցությունները: Միաժամանակ, աշխատուժի մասնակցության մակարդակը 2023 թվաքանակի 60.3%-ից 2025 թվականին նվազել է մինչև 58.0%-ի:

Աշխատանքի շուկայի դրական զարգացումները շարունակվել են նաև 2026 թվականին: Տնտեսական ակտիվության պայմաններում հունվար-մարտին վարձու աշխատողների թվաքանակը և աշխատավարձերն աճել են: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 23.9%-ով՝ կազմելով 28,281 մարդ, իսկ վարձու աշխատողների թվաքանակն աճել է 2.9%-ով՝ կազմելով 798,334 մարդ: Վարձու աշխատողների թվաքանակի աճին հիմնականում նպաստել են մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտներում աշխատողների թվաքանակի աճերը:

2023-2025 թվականներին տնտեսական աճն ուղեկցվել է աշխատավարձերի աճով: Վերջին երեք տարիներին գրանցվել է անվանական աշխատավարձերի միջինում 8.8% աճ, իսկ իրական աշխատավարձերը միջինում աճել են 6.9%-ով:


2026 թվականի հունվար-մարտին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.9%-ով՝ կազմելով 307,574 դրամ: Ընդ որում՝ 4.2% գնաճի պայմաններում իրական աշխատավարձը նվազել է 1.3%-ով: Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել են մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտներում աշխատավարձերի ֆոնդերի աճը: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 6.9%-ով՝ կազմելով 234,785 դրամ, իսկ ոչ պետականում՝ 1.7%-ով և կազմել՝ 335,801 դրամ:

Աշխատանքի շուկայի կանխատեսումներ. 2026 թվականին և միջնաժամկետում տնտեսական աճի պայմաններում աշխատանքի շուկայում կդրսևորվեն դրական զարգացումներ, գործազրկությունը կնվազի՝ ուղեկցվելով զբաղվածության աճով: Միաժամանակ կաճեն վարձու աշխատողների թվաքանակը և միջին ամսական անվանական աշխատավարձերը: 2026 թվականին գործազրկությունը կնվազի 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 12.4%: Գործազրկության նվազումը կուղեկցվի զբաղվածների թվաքանակի շուրջ 0.7% աճով: Միջնաժամկետում գործազրկության մակարդակը կշարունակի նվազել՝ 2031 թվականին հասնելով 10.1%-ի, իսկ զբաղվածության միջին տարեկան աճը կկազմի շուրջ 0.6%:




2026 թվականին վարձու աշխատողների թվաքանակի աճը կկազմի 3.1%, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձի աճը՝ 6.6%: Միջնաժամկետում վարձու աշխատողների թվաքանակի և միջին ամսական անվանական աշխատավարձի աճերը կդանդաղեն՝ միջինում կազմելով 2.9% և 5.8%:

Գծապատկեր 1.20. Վարձու աշխատողներ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Գծապատկեր 1.21. Միջին ամսական անվանական աշխատավարձ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսումներ


1.3.3. ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտահանում և ներմուծում

2023-2025թթ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ երեք տարիների նկատմամբ վատթարացել է միջինում կազմելով ՀՆԱ-ի 4.8%-ը: 2023թ. ընթացիկ հաշիվը հիմնականում բնութագրվել է դրամական փոխանցումների ծավալների կրճատմամբ և ապրանքների հաշվեկշռի որոշակի վատթարացմամբ: 2024թ. ընթացիկ հաշվի վատթարացումը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև դրամական փոխանցումների նվազմամբ:

2025թ. ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ վատթարացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 7.2%-ը: Ընթացիկ հաշվի վատթարացումը հիմնականում պայմանավորված է եղել ապրանքների հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև ծառայությունների հաշվեկշռի և զուտ դրամական փոխանցումների դերի նվազմամբ: Դուրսային արտահայտությամբ ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ-ի 5.4%-ը՝ նախորդ տարվա համեմատ վատթարանալով 2.6 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է ապրանքների հաշվեկշռի՝ ՀՆԱ-ում 2 տոկոսային կետ վատթարացմամբ (հիմնականում պայմանավորված վերաարտահանման ծավալների նվազմամբ): Տնտեսություն ներհոսող դրամական զուտ փոխանցումները 2025թ. աճել են շուրջ 4.3%-ով՝ պայմանավորված հատկապես ՌԴ-ից ներհոսքի աճով: Նշված զարգացումների արդյունքում 2025թ. նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը վատթարացել է 2.6 տոկոսային կետով:


2026 թվականի առաջին երեք ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը, պայմանավորված ներմուծման ծավալների առաջանցիկ աճով, նախորդ տարվա համադրելի ցուցանիշի նկատմամբ վատթարացել է: Միաժամանակ, նշված ժամանակահատվածում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը աճել է, մինչդեռ ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել՝ թողնելով դրական ազդեցություն ծառայությունների հաշվեկշռի վրա: Իսկ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումներն աճել են:

Գծապատկեր 1.22. Ընթացիկ հաշվի և դրա բաղադրատարրերի դինամիկան, % ՀՆԱ-ում




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.24. Ծառայությունների արտահանում, ներմուծում և հաշվեկշռի դինամիկան, մլն ԱՄՆ դոլար




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.23. Ապրանքների արտահանման, ներմուծման և առևտրային հաշվի դինամիկան, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.25. Զուտ դրամական փոխանցումների դինամիկան, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ


Կանխատեսում: Պայմանավորված առևտրային հաշվեկշռի բարելավմամբ, ինչպես նաև դրամական փոխանցումների ավելացմամբ՝ 2026թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի՝ հասնելով ՀՆԱ-ում 5.6% մակարդակի: Միջնաժամկետում 2022-2025թթ. գործոնների ազդեցությունների չեզոքացման (մասնավորապես, վերաարտահանման գործոնի չեզոքացման, ՌԴ-ից զբոսաշրջիկների հոսքերի կայունացման) պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կկայունանա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակի շուրջ:

Արտահանում: 2023-2025թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային արտահանման 16.2% աճ: Ապրանքների արտահանումը 2023-25թթ. միջինում աճել է 21.2%-ով, որը հիմնականում պայմանավորվել է արտաքին որոշ շուկաներում (հատկապես՝ ՌԴ-ում և ԱՄԷ-ում) ՀՀ ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ և վերաարտահանմամբ: Իսկ 2023-2025թթ. ծառայությունների արտահանումը միջինում աճել է 12.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի աճով, որին մեծ նպաստում է ունեցել ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում ռուս զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ աճը: Ծառայությունների

արտահանմանը նպաստել են նաև տեղեկատվական և ֆինանսական ծառայությունների արտահանման աճերը:

2025թ. ապրանքների¹⁰ արտահանումը նվազել է 36.1%-ով՝ պայմանավորված վերաարտահանման ծավալների կրճատմամբ: Սակայն ապրանքների արտահանման՝ նախորդ տարվա տարեվերջից սկիզբ առած նվազման միտումներից հետո 2025թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին արձանագրվել է ապրանքների արտահանման աճ, որը պայմանավորված էր հիմնականում ոսկերչական իրերի, հանքահումքային ապրանքատեսակների արտահանման աճերով: 2025թ. ծառայությունների արտահանումն աճել է 4.6 %-ով: Ծառայությունների արտահանման աճին հիմնականում նպաստել են «Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ», «Ճանապարհորդություն» և «Ֆինանսական ծառայություններ» ծառայությունների աճերը (11.1 տոկոսային կետ):

Ապրանքների արտահանումը, 2025թ. նվազման միտումներից հետո, 2026թ. հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 4.5%-ով: Հունվար-մարտ ամիսների արտահանման աճը պայմանավորվել է բացառապես փետրվար ամսին արձանագրված կտրուկ աճով, մինչդեռ հունվար և մարտ ամիսներին արտահանումը նվազել է՝ պայմանավորված վերաարտահանման նվազմամբ: Ապրանքների արտահանման աճը հիմնականում պայմանավորված է հանքահումքային ապրանքատեսակների արտահանման աճով: Հայկական ծագման ապրանքների արտահանումն ընթացիկ տարվա երեք ամիսներին գրանցել է երկնիշ աճ:



2026թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է: 2026 թվականի առաջին եռամսյակում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 17.2%-ով (շուրջ 66 հազար մարդով), որին հիմնականում նպաստել է ՌԴ-ից, Վրաստանից, Չինաստանից, Իտալիայից, Իրանից և այլ երկրներից զբոսաշրջիկների թվաքանակի աճը:

Կանխատեսում: Առանց վերաարտահանման գործոնի ազդեցության 2026թ. ապրանքների արտահանումը կաճի շուրջ 10%-ով և միջնաժամկետում սպասվում են միջինում շուրջ 7.6% ապրանքների արտահանման աճեր: Մինչդեռ վերաարտահանման գործոնի նվազման պայմաններում 2026թ. սպասվում է ապրանքների արտահանման անկում, իսկ միջնաժամկետում՝ միջինում 2.7%-ը արտահանման աճ: Այսպիսով, պայմանավորված որոշ ապրանքների վերաարտահանման (հատկապես՝


¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական զեկույցներ:

ոսկու, մեքենա սարքավորումների) կրճատմամբ, 2026թ. սպասվում է շուրջ 12.8% ապրանքների արտահանման անկում: Միջնաժամկետում, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով 2022-25թթ. առաջացած դրական գործոնների թուլացման, մասնավորապես վերաարտահանման գործոնի չեզոքացման, ոսկու նոր հանքավայրի՝ Ամուլսարի շահագործման և զբոսաշրջիկների հոսքերի կայունացման պայմաններում, 2027թ. սպասվում է ապրանք-ծառայությունների աճ շուրջ 1.7%-ով, իսկ 2028-31թթ.՝ արտահանումը կաճի՝ միջինում շուրջ 4.6%-ով:

Ներմուծում: 2023-25թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման **դոլարային 19.3% աճ:** 2023-25թթ. գրանցվել է ապրանքների ներմուծման աճ՝ պայմանավորված ներքին պահանջարկով, տնտեսական ակտիվությամբ և վերաարտահանման նպատակով իրականացված ներմուծմամբ: Նշված ժամանակահատվածում ծառայությունների ներմուծման աճի բարձր տեմպը պայմանավորվել է բնակչության տնօրինվող եկամտի ավելացման արդյունքում՝ զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճով:

2025թ. արձանագրվել է ապրանքների ներմուծման ծավալների նվազում (23.6%)՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման նպատակով ներմուծվող թանկարժեք մետաղների ներմուծման ծավալների կտրուկ անկմամբ: 2025թ. սեպտեմբեր ամսից արձանագրվել է ներմուծման նվազման տեմպերի կտրուկ դանդաղում՝ պայմանավորված վերը նշված վերաարտահանման գործոններով: Սակայն հատկանշական է այն հանգամանքը, որ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դեպքում նոյեմբեր ամսից նկատվել է ներմուծման կտրուկ աճ: Իսկ 2025թ. ծառայությունների ներմուծումն աճել է 5.9%-ով, որին ամենամեծ նպաստումն են ունեցել ճանապարհորդության և ֆինանսական ծառայությունների աճերը (6.2 տոկոսային կետ):

2026թ. հունվար-մարտ ամիսներին արձանագրվել է ապրանքների ներմուծման ծավալների 4.6% աճ՝ հիմնականում պայմանավորված ներքին պահանջարկի ընդլայնմամբ: Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման առաջին եռամսյակի աճը պայմանավորվել է միայն փետրվարին արձանագրված կտրուկ աճով: 2026թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է:



Կանխատեսում: Փաստացի և կանխատեսվող հորիզոնում վերաարտահանման գործոնի ազդեցության բացառման պայմաններում միջնաժամկետում սպասվում են ներքին պահանջարկին և տնտեսական ակտիվությանը համահունչ ներմուծման աճեր: Իսկ ընդհանուր առմամբ, սպասվող տնտեսական աճի և վերաարտահանման գործոնների նվազումով պայմանավորված, 2026թ. սպասվում

է շուրջ 11.2% ներմուծման անկում: 2027թ. վերաարտահանման գործոնի զգալի չեզոքացման արդյունքում կարձանագրվի ներմուծման շուրջ 4.7% անկում: 2028-31թթ. պայմանավորված ներքին պահանջարկի աճով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից նախատեսվող պետական ներդրումների իրականացման և մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների ազդեցությամբ պայմանավորված ներմուծման աճը միջինում կկազմի մոտ 5.2%: 2026թ. ապրանք-ծառայությունների ներմուծումը կնվազի 6.4%-ով, իսկ 2027-31թթ. միջինում կաճի 3.7%-ով:


1.3.4. Արժուքային շուկա և փոխարժեքներ

Ֆիզիկական անձանց փոխանցումներ: 2023-24թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակով փոխանցումների զուտ ներհոսքը նվազել է: **Իսկ 2025թ. վերականգնվել է և սկսել աճել:** 2023թ. առաջին եռամսյակում զուտ ներհոսքը աճել է բարձր տեմպով, այնուհետև մինչ 2024թ. երրորդ եռամսյակ նվազել է, իսկ 2024թ. վերջին եռամսյակում կրկին աճ է արձանագրվել:

2025թ. դրամական փոխանցումների զուտ ներհոսքը աճել է 8.6%-ով՝ հասնելով 1.6 մլրդ դոլարի: Ընդ որում, ՌԴ-ից զուտ փոխանցումները 2025թ. կազմել են 3.1 մլրդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով շուրջ 0.2%-ով: Արդյունքում, 2025թ. ՀՀ-ում արտարժույթի ծավալները մնացել են բարձր մակարդակի վրա: 2022 թվականի երկրորդ կիսամյակից ի վեր այլ երկրներ (բացառությամբ ՌԴ) արտահոսքի ծավալը գերազանցել է ներհոսքին, ինչի հետևանքով դեպի այլ երկրներ կատարված փոխանցումների զուտ ներհոսքը դարձել է բացասական:

Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը 2026թ. առաջին եռամսյակում աճել է: Փոխանցումների զուտ ներհոսքը 2026թ. առաջին եռամսյակի դրությամբ կազմել է 458. 2 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 3.2 անգամ: Ընդ որում, ՌԴ-ից զուտ ներհոսքը 2026թ. առաջին եռամսյակում կազմել են 813.8 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով շուրջ 22.3%-ով: 2026թ. դեպի այլ երկրներ փոխանցումների արտահոսքը կազմել է 882,5 մլն դոլար, իսկ այլ երկրներից ներհոսքը՝ 526,9 մլն դոլար, որը կազմում է արտահոսքի 59.7 տոկոսը:

Գծապատկեր 1.28. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված զուտ փոխանցումներ, մլն ԱՄՆ դոլար




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Արժուքային շուկա: 2023-2025թթ. ՀՀ արժուքային շուկայի շրջանառության ծավալները դեռևս մնում են բարձր մակարդակում: Արժուքային շուկայի նման մեծ շրջանառությունը պայմանավորված է 2022թ. սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՀՀ ներհոսած ռուբլու մեծ

ծավալներով, որի հետևանքով դոլարի և եվրոյի նկատմամբ ձևավորվել է մեծ պահանջարկ: Այս մասին են փաստում ՀՀ ներբանկային շուկայում ռուբլու զուտ առքի բարձր ծավալները, որին զուգընթաց կտրուկ ավելացել են դոլարի և եվրոյի զուտ վաճառքի ծավալները: ՀՀ արժույթային շուկայում դոլարի և եվրոյի շրջանառության ծավալները 2024թ. ծավալների համեմատ 2025թ. նվազել են, իսկ ռուբլու ծավալները՝ ավելացել: Արժույթային զուտ առքն էապես ավելացել է: 2025թ.-ին բացի փետրվար ամսից, արտարժույթի ներբանկային առքի ծավալները գերազանցել են վաճառքի ծավալները և հասել են գագաթնակետին 2025թ. հուլիսին՝ պայմանավորված ռուբլու առքով և դոլարի վաճառքով, այնուհետև ծավալները սկսել են կրճատվել և կտրուկ ավելացել են դեկտեմբեր ամսին: Այս ժամանակահատվածում ՀՀ ԿԲ-ն արժույթային շուկայում իրականացրել է միջամտություններ՝ ավելորդ տատանողականությունը մեղմելու նպատակով:

2026թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ արժույթային շուկայի շրջանառության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են: 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին արտարժույթի ներբանկային առքը գերազանցել է վաճառքի ծավալները: Թեև դոլարի և եվրոյի վաճառքը գերազանցել է առքի ծավալները, ռուբլու առքը շուրջ 2.4 անգամ գերազանցել է վաճառքի ծավալները: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածի համար ձևավորվել է զուտ առքի դրական ցուցանիշ 220.1 մլրդ դրամի չափով: ՀՀ կենտրոնական բանկն արժույթային շուկայում մարտի դրությամբ իրականացրել է միջամտություններ շուրջ 603.1 մլն ԱՄՆ դոլարի չափով (զուտ առք)՝ ավելորդ տատանողականությունը մեղմելու նպատակով:





Երկկողմանի փոխարժեքներ: 2023թ. ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է: 2024թ. գրեթե մնացել է նույն մակարդակում, իսկ 2025թ. արժևորվել է՝ հիմնականում պայմանավորված արտարժույթի ներհոսքով: ՀՀ փոխարժեքի շուկայում 2023թ. արձանագրվել է ՀՀ դրամի արժևորում երեք հիմնական արժույթների՝ դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ: 2024թ. ընթացքում դրամը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրսևորել է թույլ արժեզրկման միտումներ (մնալով գրեթե նույն մակարդակում), մինչդեռ ռուբլու նկատմամբ արժևորման տեմպերը շարունակվել են:

2025թ. ՀՀ դրամն արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ, իսկ եվրոյի և ռուբլու նկատմամբ արժեզրկվել է: ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորման առավելագույն մակարդակը գրանցվել է 381.1 դրամ 2025թ. նոյեմբերի 27-ին: Միջին փոխարժեքը կազմել է 387 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա միջին փոխարժեքի՝ 392.7-ի նկատմամբ արժևորվելով 1.5%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժեզրկվել է 2.7%-ով, արժեզրկման առավելագույն 455.1 դրամ մեկ եվրոյի դիմաց մակարդակին հասնելով 2025թ. հուլիսի 1-ին: ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ 2025թ. արժեզրկվել է 8.6%-ով նախորդ տարվա 9.6% արժևորման դիմաց:

2026թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակել է նույն արժևորման միտումները, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժեզրկվել է: Այսպես, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժևորման չափը կազմել է 4.5%, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամն արժեզրկվել է համապատասխանաբար 4.5 և 9.5%:

Արդյունավետ փոխարժեքներ: ՀՀ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած զամբյուղի նկատմամբ ՀՀ ազգային արժույթն իրական արտահայտությամբ 2023-2025թթ. միջինում արժևորվել է 12.8%-ով: Իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեսակը 2025թ. հունվարից դանդաղել է և պահպանել այդ միտումը մինչև տարեվերջ:

2026թ. սկզբից դրամը ՀՀ հիմնական գործընկեր երկրների արժույթների նկատմամբ դրսևորել է արժեզրկման վարքագիծ. 2026թ. առաջին եռամսյակում ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկումը կազմել է 1.7%, իսկ անվանականը՝ 2.2%, ինչը դրական ազդեցություն է թողնում արտահանման մրցունակության վրա:



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ


1.3.5. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն

2023-2024 թվականներին ՀՀ ԿԲ-ն մեղմացրել է քաղաքականության դիրքը՝ արձագանքելով գնաճի կտրուկ դանդաղմանը: 2025թ. գնաճն արագացել է և տարեվերջին հաստատվել ԿԲ թիրախային ցուցանիշի շուրջ. դրամավարկային պայմանների մեղմման գործընթացը շարունակվել է: 2023թ.-ին, պայմանավորված արտաքին հատվածից և աշխատաշուկայից փոխանցվող գնաճային ճնշումների թուլացմամբ, իսկ տարեվերջին՝ գնանկումային ազդեցություններով, գնաճային սպասումների նվազմամբ, ինչպես նաև իրականացված հետևողական զսպող դրամավարկային քաղաքականության

ազդեցությամբ գնաճի տեմպերը զգալիորեն դանդաղել են, ապա՝ փոխարինվել գնանկումային միտումներով, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը դեկտեմբերին կազմել է -0.6%, իսկ միջին գնաճը՝ 2.0%: 2024թ. սկզբին առկա գնանկումային ճնշումները ձևավորվել են համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնանկումային ազդեցությունների, գնաճային սպասումների դեպի ներքև ճշգրտման, փոխարժեքի արժևորման հետաձգված ազդեցությունների, ինչպես նաև 2020-2022թթ. իրականացված հետևողական զսպող դրամավարկային քաղաքականության հետաձգված ազդեցությամբ: Այս ազդեցությունների որոշակի թուլացման պայմաններում գնաճը մայիսից սկսել է վերականգնվել: 2024 թ.-ի ընթացքում ՀՀ ԿԲ-ն զգալիորեն մեղմել է դրամավարկային պայմանները՝ նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2.25 տոկոսային կետով՝ տարեվերջին սահմանելով այն 7% մակարդակում: Արդյունքում 12-ամսյա գնաճը տարեվերջին կազմել է 1.5%, միջին գնաճը՝ 0.3%: 2025 թվականին, ներքին բարձր պահանջարկի ու համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումների պայմաններում, գնաճն արագացել է՝ հիմնականում արտացոլելով սննդամթերքի գների վերականգնումը: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.5%:

2026թ. հունվար-ապրիլ ամիսներին գնաճն արագացել է: ԿԲ-ն անփոփոխ է թողել քաղաքականության տոկոսադրույքը՝ պահելով այն 6.5% մակարդակում:


12-ամսյա գնաճը ապրիլին կազմել է 5.3%, բնականոն գնաճը, որի կազմում չեն ներառվում սեզոնային պարենային ապրանքների գներն ու կարգավորվող ծառայությունների սակագները, կազմել է 4.9%, իսկ միջին գնաճը հունվարից ապրիլ ամիսներին՝ 4.5%:



Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմն ինչպես քաղաքականության խստացման, այնպես էլ մեղմացման շրջափուլերում համեմատաբար արդյունավետ է գործել պետական պարտատոմսերի և պակաս արդյունավետ՝ վարկավորման և ավանդների տոկոսադրույքների ձևավորման գործընթացում՝ հիմնականում պայմանավորված վարկերի նկատմամբ բարձր պահանջարկով: 2023-2025թթ. վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցման շրջափուլում վարկային և ավանդային տոկոսադրույքների արձագանքը եղել է անհամաչափ՝ համեմատաձ միջբանկային ռեպոյի և կարճաժամկետ պետական պարտատոմսերի շուկաների հետ, որոնք առավել զգայուն են դրամավարկային քաղաքականության որոշումների նկատմամբ:

2026 թվականի առաջին ամիսներին, պայմանավորված դրամավարկային պայմանների մեղմացման հետաձգված ազդեցություններով, պետական պարտատոմսերի տոկոսադրույքները եկամտաբերության կորի ամբողջ երկայնքով նվազել են, ավանդների տոկոսադրույքները տատանվել են իրենց միջին մակարդակների շուրջ, իսկ վարկերի տոկոսադրույքները՝ առանձին դեպքերում պահանջարկի ազդեցությամբ, աճել են: Միաժամանակ, հիփոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները պահպանվել են հարաբերականորեն կայուն մակարդակներում:

Գծապատկեր 1.34. Գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, ըստ եռամսյակների, փոկոսային կերպ




- Ծառայություններ
- Ավկոհոլային խմիչքներ, ծխախոտ
- 12-ամսյա գնաճ
- Ոչ պարենային ապրանքներ
- Սննդամթերք և ոչ ավկոհոլային խմիչքներ

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ

Կանխատեսում: 2026թ. գնաճը մոտ կլինի թիրախային ցուցանիշին և միջնաժամկետում կկայունանա դրա շուրջ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ն պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 3% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար¹¹:

¹¹ https://www.cba.am/AM/News/Pages/news_11062024_01.aspx#sthash.c7caMicL.dpbs

Գծապատկեր 1.35. Դրամավարկային քաղաքականության ազդեցությունները ֆինանսական շուկայում և գնաճի կանխատեսումները




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ և ՀՀ ՖՆ կանխատեսումներ

1.4. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

2020-2021 թվականներին տնտեսությունը գտնվել է իր ներուժային մակարդակից ավելի ցածր դիրքում, ինչը պայմանավորված էր համավարակի և տարածաշրջանային զարգացումների հետևանքով առաջացած բացասական շուկերով: Սակայն, 2022-2023 թվականներին, արտաքին միջավայրում տեղի ունեցած փոփոխությունների, մասնավորապես՝ ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում Հայաստանի տնտեսությունում ձևավորված լրացուցիչ արտաքին պահանջարկի և կապիտալի ներհոսքերի ազդեցությամբ, տնտեսությունը թևակոխել է իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակից ավելի բարձր դիրք: 2024 թվականին արտաքին գործոնների ազդեցության աստիճանական թուլացման և իրականացված մակրոտնտեսական քաղաքականությունների արդյունքում ՀՆԱ ճեղքը զգալիորեն կրճատվել է, և տնտեսությունը մոտեցել է իր ներուժային մակարդակին: Միաժամանակ, վերջին տարիներին արձանագրված ներդրումային ակտիվությունը, աշխատաշուկայի ընդլայնումը, արտադրողականության աճը և տնտեսության կառուցվածքային վերափոխումները նպաստել են ներուժային տնտեսական աճի բարձրացմանը, ինչի արդյունքում տնտեսության հավասարակշռումը տեղի է ունեցել ավելի բարձր ներուժային մակարդակում:

2025 թվականին տնտեսությունում պահպանվել են չափավոր դրական պարբերաշրջանային պայմաններ: Ներքին պահանջարկի բարձր մակարդակին նպաստել են մասնավոր հատվածի վարկավորման շարունակական աճը, տնային տնտեսությունների եկամուտների բարձրացումը, այդ թվում՝ դրամական փոխանցումների աճը, ինչպես նաև պետական և մասնավոր ներդրումների աճերը: Տնտեսական ակտիվության պահպանման գործում էական դեր են ունեցել նաև շինարարության ոլորտի բարձր աճի տեմպերը: Միաժամանակ, արտաքին պահանջարկի աստիճանական ճշգրտումը սահմանափակել է տնտեսական ակտիվության հետագա արագացումը՝ նպաստելով տնտեսության վերադարձին ավելի հավասարակշռված աճի ուղի:


Գծապատկեր 1.36. ՀՆԱ ճեղք (%), ըստ ծախսային բաղադրիչների, տրոսային կերպ¹²



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և գնահատումներ


Արտաքին հաշվեկշռվածության տեսանկյունից վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունում արձանագրվել են ինչպես ցիկլային, այնպես էլ կառուցվածքային բնույթի փոփոխություններ: 2022-2023 թվականներին արտաքին հատվածի ցուցանիշների զգալի բարելավումը պայմանավորված էր ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ձևավորված լրացուցիչ արտաքին պահանջարկով, ծառայությունների արտահանման արագ աճով, դրամական փոխանցումների և կապիտալի ներհոսքերի էական ընդլայնմամբ: Այդ պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը զգալիորեն կրճատվել էր, իսկ իրական արդյունավետ փոխարժեքը՝ արժևորվել: Հետագա տարիներին, արտաքին միջավայրի աստիճանական նորմալացման և ժամանակավոր գործոնների ազդեցության թուլացման պայմաններում, արտաքին դիրք սկսել է վերադառնալ առավել հիմնարար գործոններով պայմանավորված հավասարակշռային մակարդակների:

Գծապատկեր 1.37. Իրական փոխարժեք*, (ըզարիթմական մակարդակ)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և գնահատումներ
*Հաշվարկված է դոլարի, եվրոյի, ռուբլու նկատմամբ:

Գծապատկեր 1.38. Ընթացիկ հաշիվ, % ՀՆԱ-ում



2025 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդի որոշակի ընդլայնումը հիմնականում արտացոլում է արտաքին հատվածի բնական ճշգրտման գործընթացը և չի գնահատվում որպես արտաքին կայունության վատթարացման դրսևորում: Տարբեր մեթոդաբանություններով իրականացված

¹² Գնահատումներն իրականացվել են ԱՄՀ հետ համագործակցությամբ կառուցված QPM մոդելի օգնությամբ: Տե՛ս «ՀՀ կառավարության 2026 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր», էջ՝ 50, Ներդիր 1, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2026

գնահատականները ցույց են տալիս, որ ընթացիկ հաշվի փաստացի մակարդակը շարունակում է մնալ տնտեսության հիմնարարներով պայմանավորված կայուն մակարդակին մոտ միջակայքում: Ընդ որում, վերջին տարիներին տնտեսության արտադրողականության աճը, տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսական ծառայությունների արտահանման ընդլայնումը, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավումը նպաստել են տնտեսության արտաքին հաշվեկշռվածությունը բնութագրող պարամետրերի փոփոխությանը: Արդյունքում, ՀՀ տնտեսությունը ներկայումս կարող է պահպանել նախկին ժամանակահատվածների համեմատ ավելի բարձր ընթացիկ հաշվի պակասուրդ՝ առանց արտաքին կայունության էական ռիսկերի ձևավորման:

Փոխարժեքի զարգացումները ևս վկայում են արտաքին հատվածի ընդհանուր կայունության մասին: Վերջին տարիներին արձանագրված իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը միայն կարճաժամկետ ֆինանսական հոսքերի հետևանք չի եղել, այլ նաև արտացոլել է տնտեսության հիմնարարների բարելավումը: Մասնավորապես, արտադրողականության աճը, աշխատաշուկայի դրական զարգացումները, արտահանելի ծառայությունների ընդլայնումը և եկամուտների աճը նպաստել են իրական հավասարակշռային փոխարժեքի որոշակի բարձրացմանը: Միաժամանակ, արտաքին հատվածի ֆինանսավորումը շարունակում է իրականացվել գերազանցապես կայուն աղբյուրների հաշվին, իսկ միջազգային պահուստների բավարար մակարդակը և արտաքին պարտքի չափավոր ցուցանիշները լրացուցիչ ամրապնդում են արտաքին կայունությունը: Ընդհանուր առմամբ, ընթացիկ հաշվի, փոխարժեքի և արտաքին ֆինանսավորման ցուցանիշների համակցված գնահատականը վկայում է, որ 2025 թվականին Հայաստանի տնտեսությունը պահպանել է արտաքին հաշվեկշռվածության ընդունելի մակարդակ:

1.5. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴԻՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2027-2029թթ. ՄԺԾԾ մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներն իրականացվել են ՀՀ ՖՆ կողմից՝ կիրառելով տնտեսաչափական մոդելներ, առանձին շուկերի և հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունների գնահատման համար՝ ՀՀ ՖՆ Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (Ararat Fiscal Strategy Model) մոդելը¹³ և մակրոտնտեսական ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսման կիսակառուցվածքային մոդելը (QPM)¹⁴, որոնց համար տեղեկատվական հիմք են հանդիսացել 2026թ. ապրիլ ամսվա դրությամբ հասանելի ներքին և արտաքին ընթացիկ տնտեսական և ֆինանսական զարգացումները, ինչպես նաև ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումների և հումքային ապրանքների համաշխարհային գների միջազգային կառույցների կողմից արված կանխատեսումները: Մասնավորապես՝

1. Արտաքին գործոններ.

- 2026թ. ապրիլ ամսվա ԱՄՀ կանխատեսումների համաձայն՝ գործընկեր երկրների աճի միտումները տարբեր ուղղվածություն ունեն: ԱՄՆ-ում և ՌԴ-ում սպասվում է աճի տեմպերի արագացում՝ 2026թ. կազմելով համապատասխանաբար 2.3% և 1.1%, իսկ Եվրագոտում և Չինաստանում՝ դանդաղում՝

¹³ ՀՀ ֆինանսների նախարարության Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը մշակվել է 2018-2020 թվականների ընթացքում՝ ԱՄՀ կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակներում: Առավել մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2021 թվականի բյուջետային ուղերձ, Երևան 2020, էջ՝ 84, ներդիր 2: Մոդելը և կիրառությունները նկարագրող ամբողջական աշխատանքային փաստաթուղթը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/06/10/The-Ararat-Fiscal-Strategy-Model-A-Structural-Framework-for-Fiscal-Policy-Analysis-in-519522>:

¹⁴ Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների հետ համագործակցությամբ, 2023-2025թթ. ընթացքում մշակված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման միասնական համակարգ:

կազմելով, համապատասխանաբար, 1.1% և 4.4%: Հատկանշական է, որ ՀՀ հիմնական գործընկեր երկրների 2026թ. տնտեսական աճերի վերջին կանխատեսումները հունվար ամսվա կանխատեսումների համեմատ վերանայվել են դեպի ներքև (բացառությամբ ՌԴ-ի)՝ հիմնականում պայմանավորված Մերձավոր Արևելքում ծավալվող հակամարտությամբ և դրա հետևանքով առաջացած աշխարհաքաղաքական անորոշություններով: Հակամարտության ազդեցություններով պայմանավորված էներգակիրների գների աճը նպաստել է ՌԴ-ի՝ հունվարի կանխատեսման համեմատ 0.3 տոկոսային կետով դեպի վեր վերանայմանը:

- ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների համար 2026թ. և միջնաժամկետում կանխատեսվում է իրենց ներուժային աճերից ցածր տնտեսական աճեր: Հատկանշական է այն փաստը, որ Չինաստանի համար սպասվում է պատմական միջին աճից շուրջ երկու անգամ դանդաղ տնտեսական աճի տեմպ:
- Ըստ «Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպության կանխատեսումների 2026թ. նավթի միջազգային գինը կաճի 22.7%-ով, իսկ միջնաժամկետում միջինում կնվազի 5.9%-ով: Պղնձի միջազգային գինը 2026թ. կաճի 21.6%-ով և միջնաժամկետում կկայունանա մեկ տոննայի դիմաց 12,000 ԱՄՆ դոլարի շուրջ:
- Ենթադրվում է, որ ՀՀ ծառայությունների արտահանման տեմպը միջնաժամկետում կկայունանա՝ պայմանավորված նախորդ տարիների գործոնների չեզոքացմամբ:
- 2026թ. սպասվում է դրամական փոխանցումների շուրջ 13.4% աճ, որին հիմնականում նպաստելու են ՌԴ-ից, ԱՄՆ-ից և այլ երկրներից դեպի Հայաստան դրամական փոխանցումների ավելացումը: Կանխատեսումների համաձայն 2027-2031թթ. դրամական փոխանցումները միջինում կաճեն շուրջ 3.3%-ով:
- ՌԴ դեմ կիրառված պատժամիջոցների արդյունքում ՌԴ-ից դեպի Հայաստան տեղափոխված ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների որոշ մասը 2026թ. ընթացքում և միջնաժամկետում կմնան Հայաստանում:

2. **Կառուցվածքային բարեփոխումներ.**

- Կառուցվածքային բարեփոխումների ազդեցության չափի գնահատման համար հիմք է հանդիսացել աշխարհի 90 երկրների պանելային տվյալների հիման վրա Արժույթի միջազգային հիմնադրամի կատարած գնահատականները, որոնք հուշում են, որ կառուցվածքային բարեփոխումների (աշխատանքի շուկա, ֆինանսական համակարգ, կապիտալի հաշվի բացություն, արտաքին առևտրի բացություն, ապրանքային շուկաներ և պետական կառավարում) էական ջանքը կարող է 6 տարում ՀՆԱ-ի շուրջ 7% աճ ապահովել¹⁵: Համադրելով ԱՄՀ գնահատականներում կիրառված կառուցվածքային բարեփոխումների ուղղությունները, և ՀՀ կառավարության ծրագրով ուղենշված՝ գործարար միջավայրը և պետական կառավարման արդյունավետությունը բարելավող միջոցառումները, ՀՀ համար կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունը գնահատվել է տարեկան 0.5%-ային կետ միջնաժամկետ հատվածի համար:

3. **Տնտեսության ներուժ և պարբերաշրջաններ.**

- 2022-2023թ. դրական զարգացումների պայմաններում ՀՀ տնտեսությունը գտնվել է ներուժային մակարդակից ավելի բարձր դիրքում՝ մտնելով տնտեսական պարբերաշրջանի վերելքի փուլ: 2024թ.-ին տնտեսությունը մոտեցել է իր ներուժային մակարդակին, իսկ 2025թ.-ին գրանցել դրական ճեղք:

¹⁵ (տե՛ս IMF (2019). WEO October 2019, Chapter 3: Reigniting Growth in Emerging Market and Low-Income Economies: What Role for Structural Reforms? <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2019/10/01/world-economic-outlook-october-2019>):

Կանխատեսված տնտեսական զարգացումների պայմաններում 2026թ. ավարտին դրական ճեղքը կփակվի և միջնաժամկետ հատվածի սկզբից տնտեսությունը կմոտենա իր ներուժային մակարդակին: Հատկանշական է, որ վերջին տարիների դրական զարգացումները, մասնավորապես, դեպի ՀՀ զբոսաշրջային մեծ հոսքերը, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխվելը, զբաղվածների թվաքանակի ավելացումը, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացումը հանգեցրել են տնտեսության ներուժի և ներուժային աճի բարձրացման: Այժմ, ըստ գնահատումների ներուժային տնտեսական աճը 4-4.5% միջակայքից աճել է՝ հասնելով 5-5.5% միջակայք. այս հանգամանքն իր դրական ազդեցությունը կթողնի միջնաժամկետ հատվածում:

4. **Հարկաբյուջետային քաղաքականություն.**

- Միջնաժամկետ հատվածի սկզբում՝ կառուցվածքային բարեփոխումների համար հարկաբյուջետային տարածքի առաջանցիկ ընդլայնման պայմաններում պետական բյուջեի պակասուրդի համեմատաբար բարձր մակարդակի ձևավորումից հետո հարկաբյուջետային քաղաքականությունը ուղղված կլինի ծախսերի կառուցվածքի բարելավմամբ ուղեկցվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացմանը: Կառավարության պարտքի բեռը 2027-2029 թվականներին կգտնվի 49-50%-ի մակարդակում, որից հետո, բյուջեի պակասուրդի շարունակական նվազման արդյունքում կմոտենա 43.4%-ին մինչև 2031 թվականը: Հարկաբյուջետային կոնսոլիդացիան կիրականացվի ընթացիկ ծախսերի օպտիմալացման և արդյունավետության բարձրացման պայմաններում ՀՆԱ-ում դերի որոշակի նվազմամբ, ինչը կզուգորդվի զսպող հարկաբյուջետային ազդակով միջնաժամկետի սկզբում, իսկ միջնաժամկետի վերջում հարկաբյուջետային քաղաքականության դիրքը ամբողջական պահանջարկի վրա ազդեցության տեսանկյունից կվերադառնա չեզոքի՝ միաժամանակ ամբողջ հորիզոնում դրական ազդեցություն ունենալով տնտեսության ներուժի վրա: Հարկաբյուջետային քաղաքականության համար, ընդհանուր առմամբ, առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, տնտեսական աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:

- Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, սովերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ 2026թ.-ին՝ 0.4, 2027թ.-ին՝ 0.5, իսկ հաջորդող տարիներին՝ միջինում 0.25 տոկոսային կետի շրջանակներում, որով միջնաժամկետի վերջում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մոտենում է ներկա օրենսդրության և տնտեսական կառուցվածքի պայմաններում արդյունավետ հնարավորությունների սահմանագծին՝ ՀՆԱ-ում 25-26%-ի:

- Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ում կնվազեն հարկաբյուջետային կոնսոլիդացիա իրականացնելու նպատակադրումից ելնելով, իսկ կապիտալ ծախսերը կկայունանան պատմական միջինից զգալիորեն բարձր մակարդակում՝ նպաստելով տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների զարգացմանը: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում կայունանում է ՀՆԱ 6.3%-ի շրջանակներում մինչև 2031թ. , իսկ ընթացիկ ծախսերը 2026թ.-ի համար ակնկալվող 23.8% ցուցանիշից աստիճանաբար նվազելով 2031թ. -ին կհասնեն ՀՆԱ 21.3%-ի:

5. **Գնաճ և դրամավարկային քաղաքականություն.**

- 2026թ. գնաճը մոտ կլինի թիրախային ցուցանիշին և միջնաժամկետում կկայունանա դրա շուրջ:
- Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ն կձեռնարկի համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 3% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:

1.6. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ: Ռիսկերի տեղի ունենալու դեպքում շեղումներ կարձանագրվեն սույն փաստաթղթի 1.4 բաժնում ներկայացված ենթադրություններից՝ հանգեցնելով մակրոտնտեսական կանխատեսումներից շեղումների և դրա հետևանքով էլ հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների շեղման այս ՄԺԾժ շրջանակից:

COVID-19 համավարակի հետևանքները դեռ չհաղթահարած տարածաշրջանը բախվեց ռուս-ուկրաինական հակամարտության առաջացրած աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներին, ինչի բացասական հետևանքներն արդեն տեսանելի են ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ՀՀ համար Ռուսաստանից հետո երկրորդ ամենամեծ առևտրային գործընկեր՝ Եվրագոտու երկրներում: Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն:

Վերոնշյալ իրողությունների պայմաններում տնտեսական աճի կանխատեսումների շուրջ ինչպես կարճաժամկետում, այնպես էլ միջնաժամկետում առկա են անորոշություններ:

1.6.1. ՀՀ տնտեսական աճի դեպի ներքև ուղղությամբ ռիսկեր

Արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական գործոնների (ՌԴ-ից զբոսաշրջային հոսքերի, դրամական փոխանցումների, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների դեպի ՀՀ տեղափոխման) չեզոքացմամբ և հոսքերի հետշրջմամբ,
- ՌԴ-ում ՀՀ ապրանքների արտահանման՝ վերջին տարիների վերափոխումների արդյունքում ընդլայնված շուկայի նեղացմամբ,
- ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացմամբ,
- Աշխարհաքաղաքական իրավիճակով, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունների առկայությամբ,
- Տարածաշրջանային հակամարտությունների (մերձավորարևելյան և ռուս-ուկրաինական հակամարտություններ) արդյունքում պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճով,
- Առևտրային պայմանների սրացման և առևտրային քաղաքականության անորոշությունների պահպանման արդյունքում գործընկեր երկրների տնտեսական աճերի, հետևաբար և ՀՀ արտաքին պահանջարկի դանդաղմամբ:

Ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- Պետական կապիտալ ծախսերի հնարավոր թերակատարմամբ,
- Սոթքի հանքավայրի ստորգետնյա եղանակով շահագործման հետ կապված խոչընդոտներ ի հայտ գալու հետևանքով հանքավայրի արդյունահանման դանդաղմամբ,
- Ամուլսարի շահագործման հնարավոր հետաձգմամբ կամ սպասվածից ավելի քիչ հանքարդյունահանմամբ,
- ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և արտահանման ու ներդրումների խթանման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտմամբ,

- Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի դանդաղ ինտեգրմամբ,
- Բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր բացասական զարգացումներով:

1.6.2. Տնտեսական աճի դեպի վերև ուղղությամբ ռիսկեր


Արտաքին գործոններից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- Գլոբալ և տարածաշրջանային տնտեսական և աշխարհաքաղաքական վերափոխումների արդյունքում Հայաստանը՝ որպես առևտրային, լոգիստիկ և ֆինանսական հանգույց ծառայելու հնարավորությամբ,
- Միջազգային ֆինանսական պայմանների հնարավոր մեղմացմամբ և տոկոսադրույքների հետագա նվազմամբ,
- Պղնձի և այլ մետաղների միջազգային գների սպասվածից ավելի բարձրացմամբ,
- Բարձր տեխնոլոգիական ծառայությունների համաշխարհային պահանջարկի սպասվածից ավելի արագ աճով,
- Արհեստական բանականության, տվյալների մշակման կենտրոնների և բարձր տեխնոլոգիական ներդրումների սպասվածից արագ ընդլայնում ՀՀ-ում:

Ներքին միջավայրից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- Ավելի բարձր կայուն տնտեսական աճին հասնելու համար անհրաժեշտ լրացուցիչ ջանքերի, մասնավորապես, մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների, ինչպես նաև մասնավոր ներդրումների, զբաղվածության, արտահանման խթանման և տնտեսության արտադրողականության բարձրացմանն ուղղված միջոցառումների սպասվածից առավել արագ և արդյունավետ իրականացմամբ,
- Ամուլսարի հանքավայրի սպասվածից ավելի շատ արդյունահանմամբ,
- Հայաստանի տարանցիկ և լոգիստիկ դերակատարության ընդլայնմամբ՝ լրացուցիչ տնտեսական ակտիվություն ստեղծելով,
- Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի արագ ինտեգրմամբ:

Գծապատկեր 1.39. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը (Fan Chart)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատումներ և կանխատեսումներ

Աղյուսակ 1.3. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը¹⁶

| Տնտեսական աճի միջակայքը, % | Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը, % | | | | | |
|----------------------------|---|-------|-------|-------|-------|-------|
| | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
| 1-2.5 | 0.112 | 0.110 | 0.102 | 0.093 | 0.082 | 0.082 |
| 2.5-4 | 0.178 | 0.166 | 0.157 | 0.148 | 0.136 | 0.136 |
| 4-5.5 | 0.224 | 0.205 | 0.198 | 0.193 | 0.185 | 0.185 |
| 5.5-7 | 0.211 | 0.199 | 0.200 | 0.203 | 0.205 | 0.205 |
| 7-8.5 | 0.129 | 0.136 | 0.146 | 0.158 | 0.172 | 0.172 |

Ինչպես երևում է Գծապատկեր 1.36-ից, իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերը դեպի ներքև են: 2026-2031թթ. տնտեսական աճի ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է կենտրոնական կանխատեսումները պարունակող համապատասխան միջակայքում (Գծապատկեր 1.36-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 1.3-ում՝ հոծ նշումով), իսկ դեպի ներքև ռիսկերը ավելի բարձր են:

1.7. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Աղյուսակ 1.4. ՀՆԱ-ի կանխատեսումները

| Ցուցանիշներ | Ծրագիր | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|--------------------------------|---------------------|-------------|----------|----------|----------|----------|----------|----------|
| | | փաստ*/կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. |
| Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ | 2027-2031 ՄԺԾԾ | 11,342.7 | 12,333.2 | 13,415.8 | 14,614.7 | 15,964.1 | 17,495.4 | 19,173.5 |
| | 2026 Պեղական բյուջե | 10,997.1 | 11,933.7 | 12,952.8 | 14,050.8 | - | - | - |
| | 2026-2030 ՄԺԾԾ | 10,976 | 11,887 | 12,893 | 13,976 | 15,181 | 16,489 | - |
| Տնտեսական (իրական ՀՆԱ-ի) աճ, % | 2027-2031 ՄԺԾԾ | 7.1 | 5.4 | 5.6 | 5.8 | 6.1 | 6.4 | 6.4 |
| | 2026 Պեղական բյուջե | 5.2 | 5.4 | 5.4 | 5.3 | - | - | - |
| | 2026-2030 ՄԺԾԾ | 5.1 | 5.1 | 5.3 | 5.2 | 5.5 | 5.5 | - |
| ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ, % | 2027-2031 ՄԺԾԾ | 3.3 | 3.2 | 3.1 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| | 2026 Պեղական բյուջե | 2.6 | 3.0 | 3.0 | 3.0 | - | - | - |
| | 2026-2030 ՄԺԾԾ | 2.5 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | - |

* 2027-2031 ՄԺԾԾ համար 2025թ. ցուցանիշները փաստացի են Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Աղյուսակ 1.5. Ընթացիկ հաշվի կանխատեսումները

| Ցուցանիշներ | Ծրագիր | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|-------------|--------|-------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| | | փաստ*/կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. |

¹⁶ Աղյուսակի 1-ին սյունը իրենից ներկայացնում է տնտեսական աճի հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերում միջնաժամկետում տնտեսական աճի գտնվելու հավանականությունները: Աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 80%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 1.0%-ից 8.5% միջակայքում, կազմում է մոտ 80%:

| | | | | | | | | |
|-------------------------------------|----------------------------|----------|----------|----------|----------|----------|----------|--------|
| Ընթացիկ հաշիվ, մլն ԱՄՆ դոլար | <i>2027-2031 ՄԺԾԾ</i> | -2,111 | -1,779 | -1,308 | -1,665 | -1,798 | -1,729 | -1,915 |
| | <i>2026 Պետական բյուջե</i> | -1,512 | -1,345 | -1,352 | -1,357 | | | |
| | <i>2026-2030 ՄԺԾԾ</i> | -1,036.2 | -1,117.0 | -1,196.9 | -1,236.6 | -1,277.6 | -1,340.2 | - |
| Ընթացիկ հաշիվ, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | <i>2027-2031 ՄԺԾԾ</i> | -7.2 | -5.6 | -3.9 | -4.7 | -4.7 | -4.2 | -4.3 |
| | <i>2026 Պետական բյուջե</i> | -5.4 | -4.6 | -4.4 | -4.2 | | - | - |
| | <i>2026-2030 ՄԺԾԾ</i> | -5.0 | -4.7 | -4.7 | -4.7 | -4.5 | -4.4 | - |

* 2027-2031 ՄԺԾԾ համար 2025թ. ցուցանիշները փաստացի են Ադրբայջանը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- 2023-2025թթ. հարկաբյուջետային քաղաքականությունը վերականգնել է բնականոն իրավիճակների համար նախատեսված հարկաբյուջետային կանոններին համապատասխանությունը՝ աստիճանաբար կրճատելով տնտեսական ցնցումների արդյունքում բարձրացած պակասուրդի և պարտքի մակարդակները և զուգահեռ հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների միջոցով ընդլայնելով եկամտային կարողությունը: 2024-2025թթ.-ին, կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու, ֆիզիկական ու մարդկային կապիտալի մեջ անհրաժեշտ ծավալի ներդրումներ իրականացնելու և անհետաձգելի կարիքների համար անհրաժեշտ ֆինանսավորման պահանջի աճի արդյունքում բյուջեի պակասուրդն աճել է մինչև ՀՆԱ 3.7%-ի, սակայն կառավարության պարտքի բեռը պահպանվել է պարտքի կայունության տեսակետից անվտանգ 40-50%-ի միջակայքում: Հետևողական հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում տեղի է ունեցել պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի բարելավում՝ ֆիզիկական և մարդկային կապիտալին ուղղված ծախսերի աճի տեսքով:

- Միջնաժամկետ հատվածի սկզբում՝ կառուցվածքային բարեփոխումների համար հարկաբյուջետային տարածքի առաջանցիկ ընդլայնման պայմաններում պետական բյուջեի պակասուրդի համեմատաբար բարձր մակարդակի ձևավորումից հետո հարկաբյուջետային քաղաքականությունը ուղղված կլինի ծախսերի կառուցվածքի բարելավմամբ ուղեկցվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացմանը: Կառավարության պարտքի բեռը 2027-2029 թվականներին կգտնվի 49-50%-ի մակարդակում, որից հետո, բյուջեի պակասուրդի շարունակական նվազման արդյունքում կմոտենա 43.4%-ին մինչև 2031 թվականը: Հարկաբյուջետային կոնսոլիդացիան կիրականացվի ընթացիկ ծախսերի օպտիմալացման և արդյունավետության բարձրացման պայմաններում ՀՆԱ-ում դերի որոշակի նվազմամբ, ինչը կզուգորդվի զսպող հարկաբյուջետային ազդակով միջնաժամկետի սկզբում, իսկ միջնաժամկետի վերջում հարկաբյուջետային քաղաքականության դիրքը ամբողջական պահանջարկի վրա ազդեցության տեսանկյունից կվերադառնա չեզոքի՝ միաժամանակ ամբողջ հորիզոնում դրական ազդեցություն ունենալով տնտեսության ներուժի վրա: Հարկաբյուջետային քաղաքականության համար, ընդհանուր առմամբ, առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:

- Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, սուվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ 2026թ.՝ 0.4, 2027թ.՝ 0.5, իսկ հաջորդող տարիներին՝ 0.25 տոկոսային կետի շրջանակներում, որով միջնաժամկետի վերջին հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մոտենում է ներկա օրենսդրության և տնտեսական կառուցվածքի պայմաններում արդյունավետ հնարավորությունների սահմանագծին՝ ՀՆԱ-ում 25-26%-ի:

- Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ում կնվազեն հարկաբյուջետային կոնսոլիդացիա իրականացնելու նպատակադրումից ելնելով, իսկ կապիտալ ծախսերը կկայունանան պատմական միջինից զգալիորեն բարձր մակարդակում՝ նպաստելով տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների զարգացմանը: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-

ում կայունանում է ՀՆԱ 6.3%-ի շրջանակներում մինչև 2031թ. , իսկ ընթացիկ ծախսերը 2026թ-ի համար ակնկալվող 23.8% ցուցանիշից աստիճանաբար նվազելով 2031թ. -ին կհասնեն ՀՆԱ 21.3%-ի:

• 2027-2029 թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի հիմնական ռիսկերը վերաբերում են մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումներին, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը, միջազգային ֆինանսական շուկաների իրավիճակի վատթարացմանը և ՀՀ կառավարության փոխառության հնարավորությունների սահմանափակմանը, լրացուցիչ ծախսային կարիքների առաջացմանը, և ծախսերի թերակատարմանը և ավելի թույլ հարկաբյուջետային ազդակի ձևավորմանը: Ացնարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ պահուստային ֆոնդերի ձևավորման և գանձապետական կայունացման հաշվում առնվազն ՀՆԱ 1% չափով «իրացվելիության բարձիկի» ստեղծման ճանապարհով: Միաժամանակ, տարբեր ռիսկերի առարկայացման պարագայում կառավարությունը կկիրառի հասանելի գործիքները եկամտային ներուժի բարձրացման նպատակով (այդ թվում՝ հարկային վարչարարության լրացուցիչ գործիքների կիրառում), կճշգրտվեն ծախսային առաջնահերթություններն ու շրջանակը, իսկ հարկաբյուջետային կայունության ռիսկերի առարկայացման դեպքում՝ կվերանայվի նաև հարկաբյուջետային շրջանակը: Բացի այդ, առաջացող ռիսկերին դիմագրավելու տեսակետից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում ըստ անհրաժեշտության կամրագրվեն նաև լրացուցիչ «բարձիկներ» պահուստային ֆոնդերում:

Աղյուսակ 2.1. 2027-2029թթ. ՄԺԾԾ (ներառյալ 2027թ. պետական բյուջեի) հարկաբյուջետային շրջանակը՝ ներառյալ կանխադրեցումները մինչև 2031թ. , մլրդ դրամ կամ % ՀՆԱ-ում

| | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|---|---------|---------|---------|---------|---------|---------|----------------|---------|---------|---------|
| | Փաստացի | | | | Սպ. | Ծր. | ՄԺԾԾ 2027-2031 | | | |
| Մլրդ դրամ | | | | | | | | | | |
| Պետական բյուջեի եկամուտներ | 2,099.6 | 2,410.7 | 2,579.2 | 2,886.5 | 3,140.7 | 3,475.3 | 3,794.2 | 4,174.5 | 4,608.8 | 5,107.1 |
| Հարկային եկամուտներ և տուրքեր | 1,962.5 | 2,273.9 | 2,390.9 | 2,725.2 | 3,016.2 | 3,349.9 | 3,685.9 | 4,063.6 | 4,488.9 | 4,975.7 |
| Պետական բյուջեի ծախսեր | 2,279.1 | 2,599.6 | 2,955.3 | 3,305.3 | 3,636.0 | 3,917.1 | 4,201.0 | 4,461.0 | 4,852.9 | 5,289.2 |
| Ընթացիկ ծախսեր | 1,898.7 | 2,127.0 | 2,413.6 | 2,612.6 | 2,938.3 | 3,147.7 | 3,328.8 | 3,490.8 | 3,782.3 | 4,080.8 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 380.4 | 472.6 | 541.7 | 692.7 | 697.7 | 769.5 | 872.2 | 970.2 | 1,070.6 | 1,208.4 |
| Պետական բյուջեի հաշվեկշիռ | -179.5 | -188.9 | -376.1 | -418.8 | -495.3 | -441.8 | -406.9 | -286.5 | -244.1 | -182.2 |
| Կառավարության պարտք | 3,969.7 | 4,571.9 | 4,892.8 | 5,354.5 | 6,010.0 | 6,648.7 | 7,161.5 | 7,688.6 | 8,037.3 | 8,312.2 |
| կշիռը ՀՆԱ-ում, % | | | | | | | | | | |
| Պետական բյուջեի եկամուտներ | 24.7 | 25.4 | 25.2 | 25.4 | 25.5 | 25.9 | 26.0 | 26.1 | 26.3 | 26.6 |

| | | | | | | | | | | |
|---|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| Հարկային եկամուտներ և տուրքեր | 23.1 | 24.0 | 23.3 | 24.0 | 24.5 | 25.0 | 25.2 | 25.5 | 25.7 | 26.0 |
| Պետական բյուջեի ծախսեր | 26.8 | 27.4 | 28.8 | 29.1 | 29.5 | 29.2 | 28.7 | 27.9 | 27.7 | 27.6 |
| Ընթացիկ ծախսեր | 22.3 | 22.4 | 23.5 | 23.0 | 23.8 | 23.5 | 22.8 | 21.9 | 21.6 | 21.3 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 4.5 | 5.0 | 5.3 | 6.1 | 5.7 | 5.7 | 6.0 | 6.1 | 6.1 | 6.3 |
| Պետական բյուջեի հաշվեկշիռ | -2.1 | -2.0 | -3.7 | -3.7 | -4.0 | -3.3 | -2.8 | -1.8 | -1.4 | -1.0 |
| Կառավարության պարտք | 46.7 | 48.2 | 47.7 | 47.2 | 48.7 | 49.6 | 49.0 | 48.2 | 45.9 | 43.4 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2.2. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության առաջնահերթությունները և նպատակները արտացոլված են ՀՀ կառավարության ծրագրում ու ըստ անհրաժեշտության առանձին կարգավորումներով սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ՝

Տնտեսական աճի մոդել: ՀՀ տնտեսական աճի և, ըստ այդմ, հնարավորությունների ընդլայնումը պայմանավորված է լինելու միջազգային մրցունակության աճով: Իսկ միջազգային մրցունակության աճն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը նպատակադրել է զարգացնել այնպիսի տնտեսություն, որը մի կողմից աշխարհին կառաջարկի տեխնոլոգիական և նորարարական արտադրանք, իսկ մյուս կողմից իր մեծ թափով կառուցվող և արդիականացվող ենթակառուցվածքներով զգալիորեն կնպաստի տարածաշրջանի՝ առևտրային ու մարդկային հոսքեր սպասարկելու կարողությունների բարձրացմանը: Այս տեսանկյունից ՀՀ կառավարությունը գիտելիքն ու նորարարությունը հռչակել է որպես տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ:

Հարկային քաղաքականություն: Հարկային քաղաքականությունը ուղղվում է տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: Այս նպատակների իրականացման ուղղությամբ հարկային օրենսդրության բարելավման միջոցով կարևորվելու է ներդրողների համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ձևավորումը: ՀՀ կառավարությունը հարկային քաղաքականության միջոցառումներով, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և սովերային տնտեսության կրճատման ճանապարհով նախատեսում է միջնաժամկետ հորիզոնում ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ՝ միջնաժամկետում մոտեցնելով այն ներկա օրենսդրության և տնտեսական կառուցվածքի պայմաններում արդյունավետ հնարավորությունների սահմանագծին՝ ՀՆԱ-ում 25-26%-ի:

Ծախսային քաղաքականություն: Ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը: Ծախսերի նպատակայնության բարձրացման առումով անցում է կատարվելու ռազմավարական պլանավորման, իսկ ծախսային ծրագրերի արդյունավետության և օգտավետության

բարձրացման նպատակով ներդրվելու է բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթաց: Ծախսային քաղաքականությունը կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության լրացուցիչ նախաձեռնություններով և համակարգային բարեփոխումներով ուղղված է լինելու մարդկային կապիտալի առավել արդյունավետ զարգացմանը և իրացմանը, իսկ պետական ենթակառուցվածքներում (մասնավորապես՝ կրթական և նախակրթական հաստատություններ, ճանապարհներ, ջրամաբարներ և այլն) ներդրումներ իրականացնելու միջոցով ֆիզիկական կապիտալի կուտակմանը: Ծախսային քաղաքականությունը միտված է լինելու նաև պաշտպանական համակարգի ամրապնդմանը՝ բարձրացնելով երկրի դիմադրողականությունը հնարավոր ռիսկերի հանդեպ: Արդյունքում բյուջեի ծախսերի կառուցվածքում միջնաժամկետում կավելանան մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի դերը, ինչը կխթանի տնտեսության ներուժը, արտադրողականությունը, դիմադրողականությունը, ներառական աճը և տարածքային հավասարաչափ զարգացումը՝ հիմքեր ստեղծելով որդեգրած տնտեսական զարգացման մոդելի կայացման համար:

Հարկաբյուջետային կանոններ: ՀՀ հարկաբյուջետային կանոնների համակարգին համահունչ¹⁷ կառավարությունը կիրականացնի հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որը պետական ծախսերի աճը կամրագրի եկամուտ գեներացնելու կարողություններին և պարտքի բեռը կպահի ՀՀ տնտեսության համար ապահով մակարդակում, իսկ պարտքի երկարաժամկետ կայունությունը կերաշխավորվի կառավարության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռված աճով, որը կխթանի տնտեսության ներուժը: Դրա ապահովման համար հարկաբյուջետային քաղաքականության հիմքում լինելու են հետևյալ սկզբունքները.

- **Հարկաբյուջետային կայունության պահպանում պարտքի բեռի պահպանմամբ կառավարելի մակարդակում:** Միջնաժամկետ հատվածում, հաշվի առնելով կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու, ֆիզիկական ու մարդկային կապիտալի մեջ անհրաժեշտ ծավալի ներդրումներ իրականացնելու անհրաժեշտությունը, բյուջեի պակասուրդի մակարդակը բարձր կմնա միջնաժամկետի սկզբում և կճշգրտվի պարտքը նվազեցնող մակարդակի վերջում, ինչի արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, հասնելով ՀՆԱ 49-50% մակարդակների, կսկսի նվազել դեպի 40%-ի մակարդակ: Պարտքի բեռի կայունացումը և նվազում հնարավորություն կտա ստեղծել էական հարկաբյուջետային «բարձիկ» հնարավոր ցնցումները կլանելու համար, իսկ տնտեսական ներուժի խթանման արդյունքում երկարաժամկետում նվազող վարքագիծ կունենա:

- **Տնտեսության ներուժի բարձրացում՝ ծախսերի կառուցվածքում էլ ավելի բարձրացնելով կապիտալ ծախսերի դերը:** 2022թ.-ից հարկաբյուջետային քաղաքականությունը վերադարձել է պետական ֆինանսների «ոսկե կանոնի» ամբողջական պահպանմանը, ինչը էլ ավելի կամրապնդվի նաև միջնաժամկետում: Այդ համատեքստում կապահովվի պետական կապիտալ ծախսերի կայունացում պատմականին զգալիորեն գերազանցող մակարդակում՝ թույլ տալով խթանել երկարաժամկետ տնտեսական աճը և ՀՆԱ աճի հաշվին երկարաժամկետ հեռանկարում ապահովել պետական պարտքի կայունությունը:

- **Տնտեսական պարբերաշրջանին համարժեք հարկաբյուջետային քաղաքականության իրականացում:** Մակրոտնտեսական կայունությանը և կայուն տնտեսական աճի ապահովմանը նպաստելու նպատակով հարկաբյուջետային քաղաքականությունը զսպող դիրք է ունեցել տնտեսական վերելքի փուլում, և տնտեսական պարբերաշրջանի կայունացման հետ մոտեցել չեզոք դիրքի: Միջնաժամկետ հատվածի սկզբում այն կունենա զսպող դիրք ամբողջական պահանջարկի

¹⁷ Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերը, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ 2018 թ. օգոստոսի 23-ի N 942-Ն որոշումը:

տեսանկյունից՝ ապահովելու հարկաբյուջետային կոնսոլիդացիա, միաժամանակ ծախսերի կառուցվածքի բարելավմամբ խթանելու տնտեսական ներուժը, իսկ միջնաժամկետի վերջում հարկաբյուջետային քաղաքականությունը կրկին կունենա չեզոք ազդեցություն ամբողջական պահանջարկի վրա:

- **Հարկաբյուջետային «բարձիկների» ձևավորում:** Տնտեսական պարբերաշրջանի վերելքի փուլում զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը հնարավորություն է տվել ապահովել էական հարկաբյուջետային տարածք ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդնելու և կառուցվածքային բարեփոխումներին օժանդակելու, ինչպես նաև ձևավորելու հարկաբյուջետային բուֆերներ պարտքի ցածր մակարդակի տեսքով՝ հնարավոր ցնցումները կլանելու համար: Վերջինս, զուգակցվելով ներքին և միջազգային ֆինանսական շուկաներին մշտական հասանելիության երաշխավորմամբ, ձևավորում է կարևոր «հարկաբյուջետային բարձիկ» ռիսկերի հնարավոր առարկայացմանը դիմագրավելու համար: Միաժամանակ, կառավարությունը, գործող կարգավորումների համաձայն, իրացվելիության անհրաժեշտ մակարդակ երաշխավորելու համար գանձապետական կայունացման հաշվում կապահովի առնվազն ՀՆԱ 1%-ի չափով միջոցներ:

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Վերջին երեք տարիների զարգացումներ

2023-2025թթ. նախորդ տարիների տնտեսական ցնցումների հաղթահարումից հետո հարկաբյուջետային քաղաքականությունը վերականգնել է բնականոն իրավիճակների համար նախատեսված հարկաբյուջետային կանոններին համապատասխանությունը՝ աստիճանաբար կրճատելով տնտեսական ցնցումների արդյունքում բարձրացած պակասուրդի և պարտքի մակարդակները՝ զուգահեռ հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների միջոցով ընդլայնելով եկամտային կարողությունը: 2024-2025թթ.-ին կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու, ֆիզիկական ու մարդկային կապիտալի մեջ անհրաժեշտ ծավալի ներդրումներ իրականացնելու և անհետաձգելի կարիքների համար անհրաժեշտ ֆինանսավորման պահանջի աճի արդյունքում բյուջեի պակասուրդն աճել է մինչև ՀՆԱ 3.7%-ի, սակայն կառավարության պարտքի բեռը պահպանվել է պարտքի կայունության տեսակետից անվտանգ 40-50%-ի միջակայքում: Հետևողական հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում տեղի է ունեցել պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի բարելավում՝ ֆիզիկական և մարդկային կապիտալին ուղղված ծախսերի աճի տեսքով:

Պետական բյուջեի եկամուտները: 2023-2025 թվականներին պետական բյուջեի եկամուտների կշիռը ՀՆԱ-ում աճել է՝ 2025թ.-ին 2022թ. նկատմամբ աճը կազմել է 0.8%-ային կետ, իսկ անվանական արտահայտությամբ աճը կազմել է 787.0 մլրդ դրամ: Հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում աճել է 0.9%-ային կետով, իսկ անվանական արտահայտությամբ աճը կազմել է 762.8 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճը պայմանավորվել է տնտեսական աճին զուգահեռ հարկման բազաների ընդլայնմամբ, հարկային վարչարարության բարելավմամբ և դրա հետևանքով հարկային ճեղքի փոքրացմամբ:

Պետական բյուջեի ծախսերը: 2023-2025 թթ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում աճել է 2.3%-ային կետով, իսկ ծավալն աճել է 1,026 մլրդ դրամով: Ընդ որում, ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ.-ին 2022թ. նկատմամբ աճել է 0.7%-ային կետով (բացարձակ ծավալն աճել է 713.9 մլրդ դրամով), մինչդեռ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում աճել է 1.6%-ային կետով (բացարձակ ծավալի աճը՝ 312.3 մլրդ դրամ): Հաշվետու ժամանակահատվածում տեսանելի է ծախսերի կառուցվածքի զգալի բարելավումն ի օգուտ կապիտալ ծախսերի, որոնց դեպքում, համահունչ ենթակառուցվածքային ներդրումների դերի մեծացման նպատակադրմանը, գրանցվել են ինչպես ծրագրային մակարդակների բարձրացումներ, այնպես էլ կատարողականի բարելավումներ:

Պետական բյուջեի պակասուրդը, պարտքը և հարկաբյուջետային ազդակը: 2023-2025 թթ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը աճել է՝ 2022թ. 2.1% ցուցանիշի դիմաց 2024 և 2025 թվականներին կազմելով ՀՆԱ 3.7%-ը:

2022-2023 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը, ներուժայինից բարձր տնտեսական աճի պայմաններում, ունեցել է զսպող ազդեցություն՝ տնտեսական պարբերաշրջանը կայունացնելու տրամաբանությամբ: 2024թ. -ին հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է թույլ խթանող, իսկ 2025թ.-ին՝ զսպող ազդեցություն:

2023-2025թթ. պետական բյուջեի պակասուրդի չափավոր աճի, բարձր տնտեսական աճի, ինչպես նաև փոխարժեքի արժևորման պայմաններում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը պահպանվել է ցածր մակարդակում՝ 2025թ.-ին կազմելով 47.2%:

2026թ. ընթացիկ զարգացումներ


2026թ. հունվար-ապրիլ ամիսներին արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների առաջանցիկ աճ ծախսերի նկատմամբ՝ հանգեցնելով բյուջեի հավելուրդի ձևավորման:

Պետական բյուջեի եկամուտները: 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտներն աճել են բարձր տեմպերով՝ պայմանավորված հարկային վարչարարության արդյունավետության և թիրախայնության բարձրացմամբ, ինչպես նաև հարկային օրենսդրության բարեփոխումներով:


2026թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,128 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 13.7%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 1,086 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.4%-ով: Հարկային եկամուտների աճի հիմնական աղբյուր են հանդիսացել շահութահարկը, եկամտային հարկը, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը:

Պետական բյուջեի ծախսերը: 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի ծախսերը և աճել են: Պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,002 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 7.6%-ով: Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 932.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.7%-ով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 69.6 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 69.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 41.1%-ով (49 մլրդ դրամով):

Գծապատկեր 2.1. Պետական բյուջեի հարկային եկամուտները և դրանց աճի տեմպը 2025-2026 թթ., ըստ ամիսների, կուտակային



Գծապատկեր 2.2. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրան նպաստումները 2025-2026 թթ., ըստ ամիսների, կուտակային



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Պետական բյուջեի հաշվեկշիռը: Վերոնշյալ զարգացումների արդյունքում հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեն հավելուրդային է եղել: 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի 125.8 մլրդ դրամ հավելուրդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 60.9 մլրդ դրամ հավելուրդի դիմաց:

Կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումներ

2026թ. -ի պետական բյուջեի և միջնաժամկետ հատվածի հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Հարկաբյուջետային քաղաքականությունը 2026թ. -ին, պայմանավորված 2022թ. -ից գրանցված կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի՝ 50%-ից ցածր մակարդակով, գործում է սահմանափակման առավել մեղմ ռեժիմում՝ թույլ տալով վարել առավել ճկուն հարկաբյուջետային քաղաքականություն ընթացիկ ծախսերի մասով, սակայն պահպանելով «ոսկե կանոնին» համապատասխանությունը:

2026թ. -ին հարկային վարչարարության բարելավման և օրենսդրության փոփոխությունների արդյունքում հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կբարելավվեն շուրջ 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 24.5% կամ 3,016 մլրդ դրամ: 2026թ. -ի պետական բյուջեի ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան շուրջ 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 29.5%: Ընդհանուր ծախսերում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան 0.8 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերը կնվազեն 0.5 տոկոսային կետով: Ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատ կաճի շուրջ 10%-ով՝ կազմելով 3,363 մլրդ դրամ:

2026 թվականին, պետական բյուջեի պակասուրդը կավելանա՝ կազմելով ՀՆԱ-ի 4.0%-ը կամ 495.3 մլրդ դրամ՝ 2025թ. նկատմամբ ավելանալով շուրջ 76.5 մլրդ դրամով, կամ ՀՆԱ-ում շուրջ 0.3 տոկոսային կետով:

Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը 2026թ. -ին մոտ կլինի թույլ խթանողի՝ հաշվի առնելով տնտեսական աճի կայունացումը ներուժային մակարդակի շուրջ, ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի աճի կառուցվածքը, որն ապահովում է երկարաժամկետ կառուցվածքային բարեփոխումների իրականացումը:

Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում տարեկան միջինում 0.3%-ային կետով՝ 2031թ. -ին հասցնելով 26%-ի: Ակնկալվում է, որ հարկային եկամուտների բարելավումը կապահովվի բոլոր հիմնական հարկատեսակների գծով՝ բխելով ինչպես հարկման բազաների, այնպես էլ օրենսդրության և վարչարարության միջոցառումների ազդեցությունից: Հարկային վարչարարության մասնակցությունը 2026-2029 թվականներին հարկեր/ՀՆԱ բարելավմանը կկազմի 0. 3%-ային կետ, իսկ հարկային քաղաքականության բարեփոխումները սպասվում է, որ 2026-2029 թվականներին կունենան միջինում 0. 1%-ային կետ դրական ազդեցություն: Միաժամանակ, տնտեսական գործոնները, այդ թվում՝ տնտեսական պարբերաշրջանի կայունացումը և տնտեսության կառուցվածքի փոփոխությունները բացասական կամ չեզոք ազդեցություն կունենան հարկեր/ՀՆԱ բարելավումների վրա:

Աղյուսակ 2.2. Հարկային եկամուտների կանխատեսումներն ըստ առանձին հարկատեսակների¹⁸


| | Մլրդ դրամ | | | | | % ՀՆԱ-ում | | | | |
|--|-----------|---------|-------------|------|------|-----------|---------|-------------|------|------|
| | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 |
| | փաստ | սպասում | կանխատեսում | | | փաստ | սպասում | կանխատեսում | | |

¹⁸Առանձին հարկատեսակների գծով ներկայացված են ուղենշային կանխատեսումները (հիմնված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների վրա), որոնք պլանային ցուցանիշներ չեն հանդիսանում:

| | | | | | | | | | | |
|---------------------------|---------|---------|---------|---------|---------|------|------|------|------|------|
| Ընդամենը հարկեր և տուրքեր | 2,725.2 | 3,016.2 | 3,349.9 | 3,685.9 | 4,063.6 | 24.0 | 24.5 | 25.0 | 25.2 | 25.5 |
| Ավելացված արժեքի հարկ | 914.3 | 989.2 | 1,077.9 | 1,183.4 | 1,302.9 | 8.1 | 8.0 | 8.0 | 8.1 | 8.2 |
| Եկամտային հարկ | 726.9 | 795.0 | 876.4 | 964.2 | 1,058.5 | 6.4 | 6.4 | 6.5 | 6.6 | 6.6 |
| Սոցիալական վճարումներ | 116.5 | 127.4 | 139.6 | 155.7 | 175.2 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.1 | 1.1 |
| Շահութահարկ | 401.5 | 448.8 | 488.9 | 540.1 | 595.7 | 3.5 | 3.6 | 3.6 | 3.7 | 3.7 |
| Ակցիզային հարկ | 164.3 | 182.3 | 200.5 | 222.2 | 247.2 | 1.4 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.6 |
| Մաքսատուրք | 75.2 | 75.7 | 80.9 | 86.7 | 91.0 | 0.7 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.6 |
| Շրջանառության հարկ | 79.2 | 91.7 | 99.9 | 111.3 | 126.0 | 0.7 | 0.7 | 0.7 | 0.8 | 0.8 |
| Այլ հարկեր | 247.3 | 306.1 | 385.7 | 422.2 | 467.1 | 2.2 | 2.5 | 2.9 | 2.9 | 2.9 |

Միջնաժամկետ հատվածում ընթացիկ ծախսերի դերը ՀՆԱ-ում նվազում է՝ արտացոլելով հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ազդեցությունը, իսկ կապիտալ ծախսերը կայունանում են պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման նպատակադրմամբ պայմանավորված: Հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը պահպանվելու է հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ապահովման տրամաբանության մեջ, մասնավորապես՝ 2026թ.-ի նախատեսված 4.0% մակարդակից հետո հաջորդող տարիներին ծրագրվում է պետական բյուջեի պակասուրդը նվազեցնել մինչև 1.0% մակարդակի 2031թ.-ին: Արդյունքում, կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճը նախ՝ կայունանում, ապա նվազում է՝ 2031թ.-ին արձանագրելով 43.4% կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշ: Միջնաժամկետ հատվածում պարտքի բեռի նվազումն ապահովվում է տնտեսական աճի և զգալի առաջնային հավելվորդի ձևավորման պայմաններում, որը 2031թ.-ին հասնում է ՀՆԱ 1.6%-ին: Միաժամանակ, պարտքի իրական տոկոսադրույքի աճը (արտացոլված տոկոսային ծախսերի աճով) հակազդում է պարտքը նվազեցնող գործոնների ազդեցությանը, և հնարավորության չի տալիս ապահովել պարտքի բեռի ավելի արագ նվազում:


Գծապատկեր 2.3. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և հաշվեկշիռը (մլրդ դրամով) և պետական բյուջեի պակասուրդի մակարդակները (կշիռը ՀՆԱ-ում, %)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Պայմանավորված միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային կոնսոլիդացիա ապահովելու նպատակադրմամբ, հարկաբյուջետային քաղաքականությունը միջնաժամկետի սկզբում հիմնականում զսպող ազդեցություն կունենա ամբողջական պահանջարկի վրա: Վերջինս հնարավորություն է տալիս պետական բյուջեի պակասուրդը պարտքը կայունացնող մակարդակ նվազեցնելուց հետո ապահովել հարկաբյուջետային քաղաքականության չեզոք դիրք ամբողջական պահանջարկի տեսանկյունից արդեն միջնաժամկետի վերջում: Միաժամանակ, ծախսերի կառուցվածքի բարելավման և արդյունավետության բարձրացմամբ կառավարությունը ակնկալում է դրական ազդեցություն ունենալ տնտեսական ներուժի վրա՝ այդ կերպ չեզոքացնելով պակասուրդի ճշգրտումից բխող զսպող հարկաբյուջետային ազդակի ազդեցությունը:

Գծապատկեր 2.4. Հարկաբյուջետային ազդակը¹⁹




Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատականներ

Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակն ամրապնդում է «ոսկե կանոնների» տրամաբանությունը: Մասնավորապես, ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի բարձր մասնաբաժնի ապահովմամբ և ծրագրված հարկաբյուջետային կոնսոլիդացիայով կապիտալ ծախսերի ծավալը միջնաժամկետ ժամանակահատվածում զգալիորեն կգերազանցի պետական բյուջեի պակասուրդի մեծությանը: Միաժամանակ, թեպետ կառավարության պարտք/ՀՆԱ՝ 60%-ից ցածր մակարդակի պայմաններում «ակտիվ չէ» ընթացիկ ծախսերի գծով «ոսկե կանոնը», հարկաբյուջետային շրջանակը ապահովում է կառավարության սեփական հնարավորությունների և ընթացիկ ծախսերի մեծացող դրական ճեղքվածք՝ ապահովելով հարկաբյուջետային քաղաքականության երկարաժամկետ կայունությունը:


Գծապատկեր 2.5. Ոսկե կանոնների պահպանմանը միջնաժամկետում

¹⁹ Հարկաբյուջետային ազդակի հաշվարկներում օգտագործված եկամուտների և ծախսերի ցուցանիշներում կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ՝ արտացոլելու կառավարության կողմից իրականացված այն բոլոր գործառնությունները, որոնք չեն ներառվել ծախսերում, սակայն կարող են ազդեցություն ունեցած լինել ամբողջական պահանջարկի վրա, կամ հակառակը:



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Գծապատկեր 2.6. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան և այն պայմանավորող գործոնները²⁰



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2.4. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Երկարաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակն արձանագրում է տնտեսության զուգամիտումը իր երկարաժամկետ հաշվեկշռված դինամիկային՝ ներուժային տնտեսական աճին և թիրախավորված գնաճին, պետական բյուջեի հարկեր/ՀՆԱ ցուցանիշի աստիճանական աճին և կայունացմանը երկարաժամկետ հատվածում: Միաժամանակ, ընթացիկ առաջնային ծախսերը միջնաժամկետում նվազում և կայունանում են, իսկ կապիտալ ծախսերի մակարդակն ավելանում է մինչև երկարաժամկետ բարձր աճ երաշխավորող 7% մակարդակի: Միաժամանակ, բյուջեի պակասուրդը երկարաժամկետում նվազում է ՀՆԱ 1% մակարդակի՝ գեներացնելով առաջնային հավելուրդ և ապահովելով պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազումը դեպի իր

²⁰ ՀՀ կառավարության պարտքի բեռի փոփոխության տրոհումը ըստ գործոնների հաշվարկվել է բաց տնտեսությունում «պարտքի շարժման» բանաձևի օգնությամբ, որտեղ պարտքի փոփոխությունը ֆունկցիա է տնտեսական աճից, բյուջեի առաջնային հաշվեկշռից, փոխարժեքից, իրական տոկոսադրույքից և պարտք առաջացնող այլ հոսքերից (ՀՀ համար՝ զուտ վարկավորում պետական բյուջեից): Հաշվարկման ընթացքում այս գործոններով չբացատրված պարտքի փոփոխության չափը արտացոլվում է որպես «մնացորդ», և, կարող է բնութագրել քրոս (արժույթների միմյանց նկատմամբ) փոխարժեքների փոփոխությամբ պայմանավորված վերագնահատման ազդեցությունները:


Երկարաժամկետ թիրախին՝ 40% մակարդակին: Վերջինս ապահովում է տոկոսավճարների մակարդակի զգալի նվազումը և երկարաժամկետ կայունությունը:

Աղյուսակ 2.3. Երկարաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակը (2027-2036թթ.)

| | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 | 2032 | 2033 | 2034 | 2035 | 2036 |
|---|--------|---------|----------------------------|--------|--------|--------|--------|-----------------------------|--------|--------|--------|--------|
| | Փաստ | Սպասում | Միջնաժամկետ կանխատեսումներ | | | | | Երկարաժամկետ կանխատեսումներ | | | | |
| Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ | 11,343 | 12,333 | 13,416 | 14,615 | 15,964 | 17,495 | 19,174 | 20,894 | 22,726 | 24,695 | 26,835 | 29,161 |
| Տնտեսական աճ, % | 7.1 | 5.4 | 5.6 | 5.8 | 6.1 | 6.4 | 6.4 | 5.8 | 5.6 | 5.5 | 5.5 | 5.5 |
| ՀՆԱ դեֆլյատորի աճ, % | 3.3 | 3.2 | 3.1 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| Կշիռը ՀՆԱ-ում, % | | | | | | | | | | | | |
| Պետական բյուջեի եկամուտներ | 25.4 | 25.5 | 25.9 | 26.0 | 26.1 | 26.3 | 26.6 | 26.7 | 26.8 | 26.8 | 26.9 | 26.9 |
| Հարկային եկամուտներ և տուրքեր | 24.0 | 24.5 | 25.0 | 25.2 | 25.5 | 25.7 | 26.0 | 26.2 | 26.3 | 26.4 | 26.5 | 26.5 |
| Պետական բյուջեի ծախսեր | 29.1 | 29.5 | 29.2 | 28.7 | 27.9 | 27.7 | 27.6 | 27.6 | 27.7 | 27.8 | 27.9 | 27.8 |
| Ընթացիկ ծախսեր | 23.0 | 23.8 | 23.5 | 22.8 | 21.9 | 21.6 | 21.2 | 21.2 | 21.0 | 20.9 | 20.8 | 20.8 |
| Տոկոսավճարներ | 3.1 | 3.1 | 3.2 | 3.1 | 3.1 | 2.8 | 2.6 | 2.4 | 2.3 | 2.2 | 2.1 | 2.1 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 6.1 | 5.7 | 5.7 | 6.0 | 6.1 | 6.1 | 6.3 | 6.5 | 6.7 | 6.9 | 7.0 | 7.1 |
| Պետական բյուջեի պակասուրդ | -3.7 | -4.0 | -3.3 | -2.8 | -1.8 | -1.4 | -1.0 | -1.0 | -1.0 | -1.0 | -1.0 | -1.0 |
| Կառավարության պարտք | 47.2 | 48.7 | 49.6 | 49.0 | 48.2 | 45.9 | 43.4 | 41.3 | 39.5 | 37.9 | 36.4 | 35.0 |
| Մլրդ դրամ | | | | | | | | | | | | |
| Պետական բյուջեի եկամուտներ | 2,887 | 3,141 | 3,475 | 3,794 | 4,174 | 4,609 | 5,107 | 5,574 | 6,088 | 6,630 | 7,222 | 7,838 |
| Հարկային եկամուտներ և տուրքեր | 2,725 | 3,016 | 3,350 | 3,686 | 4,064 | 4,489 | 4,976 | 5,464 | 5,977 | 6,520 | 7,112 | 7,728 |


| | | | | | | | | | | | | |
|---|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|--------|
| Պետական բյուջեի ծախսեր | 3,305 | 3,636 | 3,917 | 4,201 | 4,461 | 4,853 | 5,289 | 5,773 | 6,304 | 6,865 | 7,477 | 8,115 |
| Ընթացիկ ծախսեր | 2,613 | 2,938 | 3,148 | 3,329 | 3,491 | 3,782 | 4,081 | 4,419 | 4,782 | 5,171 | 5,595 | 6,054 |
| Տոկոսավճարներ | 349 | 388 | 426 | 457 | 493 | 487 | 495 | 511 | 531 | 552 | 575 | 600 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 693 | 698 | 769 | 872 | 970 | 1,071 | 1,208 | 1,354 | 1,522 | 1,694 | 1,882 | 2,061 |
| Պետական բյուջեի պակասուրդ | -419 | -495 | -442 | -407 | -287 | -244 | -182 | -199 | -216 | -235 | -255 | -277 |
| Կառավարության պարտք | 5,355 | 6,010 | 6,649 | 7,161 | 7,689 | 8,037 | 8,312 | 8,632 | 8,978 | 9,353 | 9,758 | 10,197 |

Տնտեսական աճը միջնաժամկետ հատվածում որոշակի արագացումից հետո կմոտենա իր ներուժային մակարդակին: 2032թ. տնտեսական աճը կկազմի 5. 8%, 2033թ. կհասնի 5. 6%-ի, ապա կկայունանա 5. 5%-ի շուրջ: Տնտեսական աճի այս մակարդակն արտացոլում է 2022-2025 թվականների բարձր տնտեսական աճի արդյունքում աճի ներուժի բարձրացումը՝ կապիտալի, աշխատուժի և արտադրողականության ընդլայնման ազդեցությամբ: ՀՆԱ դեֆլյատորի աճը ակնկալվում է ԿԲ գնաճի 3% թիրախի շրջանակներում: Արդյունքում 2036 թվականին անվանական ՀՆԱ-ն կկազմի 29,161 մլրդ դրամ, որը 2025 թվականի ցուցանիշը կգերազանցի շուրջ 2.6 անգամ:



2021-2025 թվականներին ներուժային տնտեսական աճը արագացել է՝ 2025 թվականին կազմելով 7.0%, որին դրական են նպաստել բոլոր արտադրական գործոնները: 2026 թվականից ներուժային աճը աստիճանաբար կմոտենա իր երկարաժամկետ՝ 5.5% մակարդակին:


Գծապատկեր 2.8. ՀՆԱ (մլրդ դրամ) և տնտեսական աճ (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Երկարաժամկետում ՀՀ տնտեսության կառուցվածքը բնութագրվում է ծառայությունների ոլորտի բարձր և կայուն զերակայությամբ, արդյունաբերության մասնաբաժնի աստիճանական վերականգնմամբ, գյուղատնտեսության տեսակարար կշռի շարունակական նվազմամբ և շինարարության կայունությամբ: Արդյունքում մեծանում են արտադրողականության ավելի բարձր ներուժ ունեցող ճյուղերի տեսակարար կշիռները:


Գծապատկեր 2.9. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը ավելանում է հիմնական հարկային վարչարարական ճեղքի զգալի կրճատման արդյունքում: Միջնաժամկետ հատվածում (2026-2031թթ.) հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը միջինում աճում է 0. 3, իսկ երկարաժամկետ հատվածում (2032-3036թթ.)՝ 0.1%-ային կետով՝ հասնելով 26. 5%-ային կետի: Միջնաժամկետ հատվածում այն ընդգրկում է հարկային օրենսդրության փոփոխությունների ազդեցությունը, սակայն երկարաժամկետ հատվածում արտացոլում է հարկային վարչարարության թիրախայնության և արդյունավետության արդյունքում հարկային վարչարարության ճեղքի (ՀՆԱ 4%՝ ըստ 2024թ. տվյալներով գնահատման)՝ մինչև իր արդյունավետ սահմանի կրճատման ազդեցությունը:


Գծապատկեր 2.10. Հարկեր/ՀՆԱ-ն և հարկային եկամուտների մակարդակը



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

Պետական բյուջեի ծախսերի մակարդակը աստիճանաբար կայունանում է՝ ապահովելով շարունակվող կառուցվածքային բարելավում դեպի կապիտալ ծախսեր: Միջնաժամկետ հատվածում ընթացիկ առաջնային ծախսերը (առանց տոկոսավճարների) նվազում են, ապա կայունանում երկարաժամկետ հատվածում: Ընթացիկ ծախսերի մակարդակի հետագա նվազեցումը պայմանավորում է պարտքի տոկոսավճարների մակարդակի նվազումը, որը տեղի է ունենում պարտքի մակարդակի նվազման արդյունքում: Ընթացիկ ծախսերի նվազմանը զուգահեռ աճում է կապիտալ ծախսերի մակարդակը մինչև ՀՆԱ 7.1%՝ արտացոլելով երկարաժամկետ աճին միտված ենթակառուցվածքային ներդրումների մակարդակի ավելացումը:


Գծապատկեր 2.11. Պետական բյուջեի ծախսերը, % ՀՆԱ-ում




Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

Կառավարության պարտքը բյուջեի պակասուրդի զգալի ճզգրտման և առաջնային հավելուրդի ձևավորման ազդեցությամբ նվազում է դեպի երկարաժամկետ թիրախը: Բյուջեի պակասուրդը 2026թ. համար ակնկալվող 4% մակարդակից նվազում է մինչև 1%-ի 2031 թ. , ինչի արդյունքում առաջնային հաշվեկշիռը հավելուրդային է դառնում՝ 1.6% ՀՆԱ-ում: Երկարաժամկետ հատվածում առաջնային հավելուրդի նվազումը տեղի է ունենում պարտքի տոկոսավճարների հաշվին: Միաժամանակ, հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ազդեցությամբ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազում է մինչև 40%-ի երկարաժամկետ հատվածում (2033 թ.)՝ ՀՀ հարկաբյուջետային կանոններով սահմանված երկարաժամկետ թիրախ: Կառավարության պարտքը երկարաժամկետ հորիզոնում գտնվում է այդ թիրախի շրջանակներում:

Գծապատկեր 2.12. Կառավարության պարտքը և բյուջեի պակասուրդը, % ՀՆԱ-ում



Պարտքի մակարդակի զգալի նվազումը և բարձր տնտեսական աճը հնարավորություն են տալիս զգալիորեն ամրապնդել պարտքի կայունությունը: Կառավարության պարտքի տոկոսավճարների հարաբերակցությունը եկամուտներին, պարտքի մակարդակի նվազման և եկամուտների բարելավման արդյունքում զգալիորեն նվազում են երկարաժամկետ հատվածում: Միաժամանակ, տնտեսական աճի բարձր ներուժային մակարդակի պայմաններում անվանական ՀՆԱ աճը ակնկալվում է որ զգալիորեն կգերազանցի պարտքի տոկոսադրույքին՝ ապահովելով պարտքի կայունությունը անգամ բյուջեի պակասուրդի վրա դեպի վերև ճնշումների պարագայում:



2.5. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է տվյալ պահի դրությամբ առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը: Ինչպես ցանկացած կանխատեսում, հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր կապված նրա հետ, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2027-2029թթ. ՄԺԾԾ հիմնական մակրոտնտեսական բնույթի հարկաբյուջետային ռիսկերը հետևյալն են.

- **Ներքին կամ արտաքին ցնցումների ներքո մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների ռիսկ:** «1.5. Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը» բաժնում քննարկված՝ արտաքին կամ ներքին միջավայրից բխող ռիսկերը, ինչպես, օրինակ ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական գործոնների չեզոքացումը և մարդկանց ու կապիտալի գրանցված հոսքերի հետշրջումը, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական լարվածությունների սրման պայմաններում

ներմուծվող ռազմավարական ապրանքների գների հնարավոր բարձրացումը, ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացումը բացասաբար կանդրադառնան ֆինանսավորման պահանջի վրա՝ մի կողմից հանգեցնելով սպասվածից փոքր հարկման բազաների ձևավորման, մյուս կողմից՝ ծախսային ճնշումների մեծացման:

- **Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի՝ հարկային վարչարարության ազդեցությամբ սպասվողից ավելի դանդաղ բարելավման ռիսկ:** Միջնաժամկետ հատվածի համար պլանավորված է հարկեր/ՀՆԱ բարելավումներում հարկային վարչարարության 0.3%-ային կետ մասնակցություն 2026-2029 թվականներին: Հարկային վարչարարության արդյունքում հարկեր/ՀՆԱ բարելավումները պետք է տեղի ունենան հարկային վարչարարության առկա ճեղքի նվազեցման հաշվին, որի վրա հարկային վարչարարության միջոցառումների ազդեցությունը ոչ գծային է, և այդ թվում՝ զգայուն տնտեսական պարբերաշրջանից:

- **Միջազգային ֆինանսական շուկաների անկայունության և ֆինանսավորման պայմանների վատթարացման ռիսկ:** Համաշխարհային տնտեսության հեռանկարների շուրջ անորոշությունը, այդ թվում՝ ԱՄՆ կողմից մաքսատուրքերի քաղաքականության շուրջ անորոշություններով, ռուս-ուկրաինական պատերազմի երկարումից և Իրանում ռազմական գործողություններից բխող բացասական ազդեցություններով, իր արտացոլումն է գտնում համաշխարհային ֆինանսական շուկայի պայմաններում, հանգեցնելով տոկոսադրույքների ավելի բարձր հետագծի: Զարգացած երկրներում տոկոսադրույքների բարձր մակարդակի պահպանումը կամ հետագա աճը, ցածր եկամտային և զարգացող երկրներում պարտքային հիմնախնդիրների սրումը, համաշխարհային ֆինանսական շուկայում այլ ռիսկերի առարկայացումը կարող է վատթարացնել միջազգային ֆինանսական շուկաներից փոխառությունների պայմանները ՀՀ կառավարության համար և դժվարեցնել բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը:

- **Լրացուցիչ ֆինանսավորման պահանջ առաջացնող այլ ներքին ռիսկեր:** Նման ռիսկերի շարքում են Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ՀՀ տնտեսությանը ինտեգրման դանդաղումը և աջակցության ծրագրերի երկարաձգումը, տարածաշրջանային անվտանգային միջավայրի վատթարացման պայմաններում անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղվող միջոցների ծավալի աճի լրացուցիչ կարիքի առաջացումը, արտահանելի հատվածի համար տնտեսական աջակցության լրացուցիչ ծրագրերի իրականացումը և այլ հնարավոր ծախսային ճնշումները:

- **Ծախսերի թերակատարում և ավելի թույլ հարկաբյուջետային ազդակի ձևավորում:** 2027-2029թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային սցենարում նախատեսվել է կապիտալ ծախսերի կայունացում բարձր՝ ՀՆԱ շուրջ 6.3%-ի շրջանակներում: Սակայն հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները (չնայած այն հանգամանքին, որ առկա է եղել կատարողականների բարելավման միտում), առկա է ծրագրավորված ցուցանիշների թերակատարման ռիսկ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես ամբողջական պահանջարկի և ընթացիկ տնտեսական ցուցանիշների վրա, այնպես էլ ունենալ երկարաժամկետ ազդեցություններ տնտեսության ներուժի վրա:

Հարկաբյուջետային շրջանակի հնարավոր փոփոխությունները մակրոտնտեսական կանխատեսումների շեղումների դեպքում և սթրես թեստերի ներքո²¹.

- **Հարկային եկամուտներ:** 2027թ. և միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա գնահատվել է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը, ինչպես նաև հարկային եկամուտների վարչարարության բարելավման ռիսկեր: Հարկային եկամուտների վրա

²¹ Այս հատվածում նկարագրված ռիսկերի առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է այս փաստաթղթի ՄԱՍ IV-ի «Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատում» և «ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն» բաժիններում:

ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից առավելագույն շեղումը 2027-ի համար կկազմի շուրջ 55.7 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2028 և 2029 թթ-ի համար համապատասխանաբար 83.2 մլրդ ՀՀ դրամ և 107.9 մլրդ ՀՀ դրամ

• **Պետական բյուջեի ծախսեր:** Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա գնահատված են մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման, կանխատեսումներից շեղման, ինչպես նաև՝ հարկային քաղաքականության և վարչարարության պլանավորված ուղեգծից ավելի դանդաղ իրականացման ռիսկերի ազդեցության չափերը: Մասնավորապես, ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2027 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը առավելագույնը կկազմի շուրջ 36.8 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.3%-ը, իսկ 2028 և 2029 թթ-ին կկազմի համապատասխանաբար 70.7 և 111.1 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.5-0.7%-ը: Պետք է նշել, որ գնահատված ռիսկի չափը, առարկայացման դեպքում մասնակիորեն կկլանվի կառավարության պահուստային ֆոնդով, որը նույն ժամանակահատվածի համար նախատեսված է 0.3-0.7%, իսկ լրացուցիչ մասը՝ կկլանվի ՀՀ կառավարության կողմից ապահովվող՝ նվազագույնը ՀՆԱ 1%-ի չափով իրացվելիության «բարձիկի» միջոցով:

• **ՀՀ կառավարության պարտք:** Միջնաժամկետ հատվածի համար նախանշած հարկաբյուջետային սցենարի վրա հիմնված պարտքի ռիսկերի գնահատումը ցույց է տվել, որ պարտքը հիմնականում զգայուն է տնտեսական աճի ցնցումների նկատմամբ, քանի որ պարտքի կառուցվածքի զգալի բարելավման արդյունքում դրամային և արտարժույթային պարտքի մասնաբաժինները կայունացել են համարժեք մակարդակներում (50%-ի շրջակայքում): Այնուամենայնիվ, պատմությունից բխող անորոշությունների պայմաններում կարևոր է պարտքի բեռի պահպանումը ուղենշված ցածր և կայուն մակարդակներում և հարկաբյուջետային «բարձիկների» ամրապնդումը:

Ամփոփելով հարկաբյուջետային ռիսկերի նկարագրությունը կարող ենք նշել, որ 2027-2029 թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի հիմնական ռիսկերը վերաբերում են մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումներին, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը, միջազգային ֆինանսական շուկաների իրավիճակի վատթարացմանը և ՀՀ կառավարության փոխառության հնարավորությունների սահմանափակմանը, լրացուցիչ ծախսային կարիքների առաջացմանը, ծախսերի թերակատարմանը և ավելի թույլ հարկաբյուջետային ազդակի ձևավորմանը: Սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ ՀՆԱ 0.3-0.7%-ի շրջանակներում պահուստային ֆոնդերի նախատեսման և գանձապետական կայունացման հաշվում առնվազն ՀՆԱ 1% չափով «իրացվելիության բարձիկի» ստեղծման ճանապարհով: Միաժամանակ, տարբեր ռիսկերի առարկայացման պարագայում կառավարությունը կկիրառի հասանելի գործիքները եկամտային ներուժի բարձրացման նպատակով (այդ թվում՝ հարկային վարչարարության լրացուցիչ գործիքների կիրառում), կճշգրտվեն ծախսային առաջնահերթություններն ու շրջանակը, իսկ հարկաբյուջետային կայունության ռիսկերի առարկայացման դեպքում՝ կվերանայվի հարկաբյուջետային շրջանակը: Բացի այդ, առաջացող ռիսկերին դիմագրավելու տեսակետից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում կնախատեսվեն լրացուցիչ «բարձիկներ» պահուստային ֆոնդերում:

2.6. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

ՀՀ հարկաբյուջետային կանոնների ներկա համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պատքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների, ինչպես նաև են ՀՀ Կառավարության՝ 2018 թ. օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

- Երբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ՀՀ կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ ՀՀ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:
- Երբ ՀՀ կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ ՀՀ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնաժին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների պարագայում:

2021-2023 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը աստիճանաբար վերադարձել է բնականոն իրավիճակների համար գործող կանոններին համապատասխանության տիրույթ՝ COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի տնտեսական և հարկաբյուջետային հետևանքների ազդեցությամբ «բացառիկ դեպքի» կարգավորումների ակտիվացումից հետո: Ընդ որում, 2021թ. - ին, այդ հետևանքների ոչ ամբողջական հաղթահարման պայմաններում «բացառիկ դեպքի» կարգավորումները պահպանվել են, սակայն կառավարությունը կրճատել է կանոններից շեղման չափերը: 2022 թ. -ին արդեն կապիտալ ծախսերի կանոնին համապատասխանությունը վերականգնվել է, և պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը շուրջ 201 մլրդ դրամով, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի շեղման չափը կանոնից կրճատվել է 30 մլրդ դրամի: 2023 թվականին պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը շուրջ 283.7 մլրդ դրամով, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի շեղման չափը կանոնից կազմել է 42.6 մլրդ դրամ: Կարևոր է նշել, որ ընթացիկ ծախսերի մասով շեղումները գրանցվել են տարվա ընթացքում պետական բյուջեի եկամուտների պլանի բարձրացման պայմաններում՝ համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքի դրույթներին (ինչը թույլ է տալիս ավելացնել ծախսերը հարկային եկամուտների ավելացման պարագայում), բացի այդ՝ պլանավորված մակարդակից ծախսերի

ավելացումները հիմնականում միանգամյա ծախսերի բնույթ են կրել և չեն ենթադրել երկարաժամկետ ծախսային պարտավորությունների բեռի ավելացում (օրինակ՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական կարիքների ուղղությամբ կատարված ծախսերը), ինչի արդյունքում հաշվարկված շեղումը գնահատվում է որպես երկարաժամկետ ճնշումներ չառաջացնող և հարկաբյուջետային կայունության տեսակետից վտանգներ չի ստեղծում:

Միաժամանակ, կառավարությունը վերականգնել է համապատասխանությունը նաև պարտքի կանոնին, հաշվի առնելով, որ 2022թ.-ի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 46.7%, և ցածր եղել 50%-ի շեմից մինչև 2025 թվականը՝ այդպիսով ոչ միայն ապահովելով ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026թթ. վերանայված ծրագրի թիրախը, այլ նաև նվազեցնելով պարտքը դեպի ապահով մակարդակներ:

2025 թվականից հարկաբյուջետային քաղաքականությունը մուտք է գործել կանոններով սահմանափակման առավել մեղմ տիրույթ: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ցածր մակարդակը հարկաբյուջետային քաղաքականությունը տեղափոխել է կանոններով սահմանափակման առավել մեղմ ռեժիմների՝ թույլ տալով վարել առավել ճկուն հարկաբյուջետային քաղաքականություն ընթացիկ ծախսերի մասով, սակայն պահպանելով «ոսկե կանոններին» համապատասխանությունը:

Աղյուսակ 2.4 Փաստացի և ծրագրավորված հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին

| Կանոնի ցուցանիշ | | Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր | Պետական բյուջեի ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպ | Պետական բյուջեի ընթացիկ ծախսեր | Կառավարության պարտք/ՀՆԱ, % |
|----------------------|--------|---|---|--|----------------------------|
| Ուղենիշային ցուցանիշ | | >/= պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ | </= նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ աճի միջին տեմպ, % | </= հարկային եկամուտների և փոփոխությունների ծավալ, մլրդ դրամ | |
| 2021 | Սահմ. | 321.0 | 6.3 | - | 60.2 |
| | Փաստ. | 216.0 | 12.8 | 1810.7 | |
| 2022 | Սահմ. | 180.0 | 4.1 | 1926.0 | 46.7 |
| | Փաստ. | 380.0 | 5.3 | 1898.7 | |
| 2023 | Սահմ. | 274.0 | 5.1 | 2235.0 | 48.2 |
| | Փաստ. | 494.4 | 5.9 | 2127.0 | |
| 2024 | Սահմ. | 376.1 | - | - | 47.7 |
| | Փաստ. | 557.8 | 13.1 | 2413.6 | |
| 2025 | Սահմ. | 418.8 | - | - | 47.2 |
| | Փաստ. | 702.5 | 12.1 | 2612.6 | |
| 2026 | Սահմ. | 495.3 | - | - | 48.7 |
| | Ծրագիր | 707.7 | 10.7 | 2938.3 | |
| 2027 | Սահմ. | 441.8 | - | - | 49.6 |

| | | | | | |
|------|--------|-------|-----|--------|------|
| | Ծրագիր | 779.5 | 6.7 | 3147.7 | |
| 2028 | Սահմ. | 406.9 | - | - | 49.0 |
| | Ծրագիր | 882.2 | 5.5 | 3328.8 | |
| 2029 | Սահմ. | 286.5 | - | - | 48.2 |
| | Ծրագիր | 980.2 | 4.4 | 3490.8 | |

«-»-ը նշանակում է, որ պետական պարտքի առկա չափի դեպքում կիրառելի չէ

2.7. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ²²

Աղյուսակ 2.5. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ծրագիր | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|-----------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Փաստացի | 2579.2 | 2886.5 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.2% | 25.4% | | | | | | |
| ՄԺԾԾ 2023-2025 | 2609.6 | 2940.6 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.8% | 26.1% | | | | | | |
| 2023թ. Պետական բյուջե | | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | | | | | | |
| ՄԺԾԾ 2024-2026 | 2671.1 | 2986.4 | 3367.4 | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.2% | 25.3% | 25.6% | | | | | |
| 2024թ. Պետական բյուջե | 2663.1 | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.3% | | | | | | | |
| ՄԺԾԾ 2025-2027 | 2634.7 | 2897.6 | 3258.2 | 3614.1 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.7% | 25.9% | 26.5% | 26.8% | | | | |
| 2025թ. Պետական բյուջե | 2593.6 | 2873.1 | 3123.2 | 3458.6 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.7% | 26.0% | 26.2% | 26.5% | | | | |
| ՄԺԾԾ 2026-2028 | | 2773.2 | 3049.3 | 3308.4 | 3603.2 | 3939.5 | 4311.9 | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 25.3% | 25.7% | 25.7% | 25.8% | 26.0% | 26.2% | |
| 2026թ. Պետական բյուջե | | 2832.8 | 3090.9 | 3352.6 | 3638.2 | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 25.8% | 25.9% | 25.9% | 25.9% | | | |
| ՄԺԾԾ 2027-2029 | | | 3140.7 | 3475.3 | 3794.2 | 4174.5 | 4608.8 | 5107.1 |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | 25.5% | 25.9% | 26.0% | 26.1% | 26.3% | 26.6% |

²² Պետական բյուջեի եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում նախորդ տարիների կանխատեսումներում համադրելիության նպատակով ներառված է հիվորթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես կանխատեսվող, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների ցուցանիշների համար: Միաժամանակ, 2024-2026թթ. ՄԺԾԾ և 2024թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են պահուստային ֆոնդի չափով, բացի այդ՝ փաստացի ցուցանիշները, 2023-2025 թթ. և 2024-2026 թթ. ՄԺԾ-ները և 2023 թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են ԼՂ զուտ վարկավորման չափով:

Աղյուսակ 2.6. Պեղական բյուջեի հարկային եկամուտների կանխապետումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ծրագիր | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|-----------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Փաստացի | 2390.9 | 2725.2 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 23.3% | 24.0% | | | | | | |
| ՄԺԾԾ 2023-2025 | 2539.0 | 2874.4 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.1% | 25.5% | | | | | | |
| 2023թ. Պետական բյուջե | | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | | | | | | |
| ՄԺԾԾ 2024-2026 | 2573.1 | 2896.9 | 3281.2 | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.3% | 24.5% | 25.0% | | | | | |
| 2024թ. Պետական բյուջե | 2553.1 | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.3% | | | | | | | |
| ՄԺԾԾ 2025-2027 | 2496.9 | 2812.3 | 3182.0 | 3541.2 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.4% | 25.1% | 25.9% | 26.2% | | | | |
| 2025թ. Պետական բյուջե | 2455.8 | 2720.3 | 3047.0 | 3385.8 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.3% | 25.0% | 25.6% | 26.0% | | | | |
| ՄԺԾԾ 2026-2028 | | 2655.9 | 2934.9 | 3206.1 | 3503.3 | 3835.5 | 4198.9 | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 24.2% | 24.7% | 24.9% | 25.1% | 25.3% | 25.5% | |
| 2026թ. Պետական բյուջե | | 2690.4 | 2972.9 | 3244.9 | 3533.9 | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 24.5% | 24.9% | 25.1% | 25.2% | | | |
| ՄԺԾԾ 2027-2029 | | | 3016.2 | 3349.9 | 3685.9 | 4063.6 | 4488.9 | 4975.7 |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | 24.5% | 25.0% | 25.2% | 25.5% | 25.7% | 26.0% |

Աղյուսակ 2.7. Պեղական բյուջեի ծախսերի կանխապետումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ծրագիր | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|-----------------------|--------|--------|--------|--------|------|------|------|------|
| Փաստացի | 2955.3 | 3305.3 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 28.8% | 29.1% | | | | | | |
| ՄԺԾԾ 2023-2025 | 2882.9 | 3223.0 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 28.5% | 28.6% | | | | | | |
| 2023թ. Պետական բյուջե | | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | | | | | | |
| ՄԺԾԾ 2024-2026 | 2973.6 | 3306.1 | 3701.9 | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 28.0% | 28.0% | 28.2% | | | | | |
| 2024թ. Պետական բյուջե | 3146.0 | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 29.9% | | | | | | | |
| ՄԺԾԾ 2025-2027 | 3117.6 | 3513.4 | 3812.1 | 4086.8 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 30.5% | 31.4% | 31.0% | 30.3% | | | | |
| 2025թ. Պետական բյուջե | 3076.5 | 3441.6 | 3629.5 | 3849.8 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 30.4% | 31.6% | 30.5% | 29.5% | | | | |

| | | | | | | | | |
|-----------------------|--|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| ՄԺԾԾ 2026-2028 | | 3376.9 | 3584.7 | 3755.4 | 3994.6 | 4213.1 | 4480.7 | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 30.8% | 30.2% | 29.1% | 28.6% | 27.8% | 27.2% | |
| 2026թ. Պետական բյուջե | | 3432.6 | 3627.6 | 3801.0 | 4030.6 | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 31.2% | 30.4% | 29.3% | 28.7% | | | |
| ՄԺԾԾ 2027-2029 | | | 3636.0 | 3917.1 | 4201.0 | 4461.0 | 4852.9 | 5289.2 |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | 29.5% | 29.2% | 28.7% | 27.9% | 27.7% | 27.6% |

Աղյուսակ 2.8. Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ծրագիր | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|-----------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Փաստացի | 2413.6 | 2612.6 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 23.5% | 23.0% | | | | | | |
| ՄԺԾԾ 2023-2025 | 2293.2 | 2512.2 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 22.7% | 22.3% | | | | | | |
| 2023թ. Պետական բյուջե | | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | | | | | | |
| ՄԺԾԾ 2024-2026 | 2308.3 | 2537.2 | 2839.1 | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 21.8% | 21.5% | 21.6% | | | | | |
| 2024թ. Պետական բյուջե | 2450.7 | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 23.3% | | | | | | | |
| ՄԺԾԾ 2025-2027 | 2451.2 | 2728.5 | 2938.2 | 3228.1 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 23.9% | 24.4% | 23.9% | 23.9% | | | | |
| 2025թ. Պետական բյուջե | 2437.2 | 2706.8 | 2807.5 | 2988.1 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.1% | 24.9% | 23.6% | 22.9% | | | | |
| ՄԺԾԾ 2026-2028 | | 2688.6 | 2883.4 | 3001.2 | 3169.9 | 3302.3 | 3474.9 | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 24.5% | 24.3% | 23.3% | 22.7% | 21.8% | 21.1% | |
| 2026թ. Պետական բյուջե | | 2702.8 | 2923.5 | 3082.0 | 3227.6 | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 24.6% | 24.5% | 23.8% | 23.0% | | | |
| ՄԺԾԾ 2027-2029 | | | 2938.3 | 3147.7 | 3328.8 | 3490.8 | 3782.3 | 4080.8 |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | 23.8% | 23.5% | 22.8% | 21.9% | 21.6% | 21.3% |

Աղյուսակ 2.9. Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ծրագիր | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|----------------------|-------|-------|------|------|------|------|------|------|
| Փաստացի | 541.7 | 692.7 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 5.3% | 6.1% | | | | | | |
| ՄԺԾԾ 2023-2025 | 589.7 | 710.8 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 5.8% | 6.3% | | | | | | |

| | | | | | | | | |
|-----------------------|-------|-------|-------|-------|-------|-------|--------|--------|
| 2023թ. Պետական բյուջե | | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | | | | | | |
| ՄԺԾԾ 2024-2026 | 665.3 | 768.9 | 862.9 | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 6.3% | 6.5% | 6.6% | | | | | |
| 2024թ. Պետական բյուջե | 695.3 | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 6.6% | | | | | | | |
| ՄԺԾԾ 2025-2027 | 666.4 | 784.9 | 873.9 | 858.6 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 6.5% | 7.0% | 7.1% | 6.4% | | | | |
| 2025թ. Պետական բյուջե | 639.3 | 734.9 | 822.0 | 861.7 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 6.3% | 6.7% | 6.9% | 6.6% | | | | |
| ՄԺԾԾ 2026-2028 | | 688.3 | 701.3 | 754.2 | 824.6 | 910.8 | 1005.8 | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 6.3% | 5.9% | 5.9% | 5.9% | 6.0% | 6.1% | |
| 2026թ. Պետական բյուջե | | 729.9 | 704.1 | 719.1 | 803.1 | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 6.6% | 5.9% | 5.6% | 5.7% | | | |
| ՄԺԾԾ 2027-2029 | | | 697.7 | 769.5 | 872.2 | 970.2 | 1070.6 | 1208.4 |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | 5.7% | 5.7% | 6.0% | 6.1% | 6.1% | 6.3% |

Աղյուսակ 2.10. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ծրագիր | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 |
|-----------------------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Փաստացի | 376.1 | 418.8 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 3.7% | 3.7% | | | | | | |
| ՄԺԾԾ 2023-2025 | 417.3 | 426.4 | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.1% | 3.8% | | | | | | |
| 2023թ. Պետական բյուջե | | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | | | | | | |
| ՄԺԾԾ 2024-2026 | 446.5 | 463.7 | 478.5 | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.2% | 3.9% | 3.6% | | | | | |
| 2024թ. Պետական բյուջե | 482.9 | | | | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.6% | | | | | | | |
| ՄԺԾԾ 2025-2027 | 482.9 | 615.8 | 553.9 | 472.7 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.7% | 5.5% | 4.5% | 3.5% | | | | |
| 2025թ. Պետական բյուջե | 482.9 | 604.0 | 506.2 | 391.1 | | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.8% | 5.5% | 4.2% | 3.0% | | | | |
| ՄԺԾԾ 2026-2028 | | 603.7 | 535.4 | 447.1 | 391.3 | 273.6 | 168.8 | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 5.5% | 4.5% | 3.5% | 2.8% | 1.8% | 1.0% | |
| 2026թ. Պետական բյուջե | | 599.8 | 536.8 | 448.4 | 392.4 | | | |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 5.5% | 4.5% | 3.5% | 2.8% | | | |
| ՄԺԾԾ 2027-2029 | | | 495.3 | 441.8 | 406.9 | 286.5 | 244.1 | 182.2 |
| %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | | 4.0% | 3.3% | 2.8% | 1.8% | 1.4% | 1.0% |

ԳԼՈՒԽ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

2027-2029թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 3,475.3, 3,794.2 և 4,174.5 մլրդ դրամի չափով: Միջնաժամկետ հատվածում ընդամենը եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը միջնաժամկետ ժամանակահատվածում կկազմի համապատասխանաբար՝ 25.9, 26.0 և 26.1 տոկոս: Պետական բյուջեի դեֆիցիտը միջնաժամկետ հատվածում կկազմի 441.8, 406.9 և 286.5 մլրդ դրամ, վերջիններիս հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2027-2029 թվականին կնվազի կազմելով համապատասխանաբար՝ ՀՆԱ-ի 3.3%, 2.8% և 1.8%-ը: 2027-2029թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում ծախսերը կանխատեսվել են համապատասխանաբար 3,917.1, 4,201.0 և 4,461.0 մլրդ դրամ: Միջնաժամկետ հատվածում ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կնվազի կազմելով համապատասխանաբար՝ 29.2, 28.7 և 27.9 տոկոս:

Աղյուսակ 3. 2023-2029թթ. պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | Բյուջե | | | ՄԺԾԾ | |
|---|---------|---------|---------|---------|---------|---------|---------|
| | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 |
| 1. Պետական բյուջեի եկամուտներ | 2,358.8 | 2,579.2 | 2,886.4 | 3,140.7 | 3,475.3 | 3,794.2 | 4,174.5 |
| Հարկային եկամուտներ և պետական տուրքեր | 2,221.9 | 2,390.9 | 2,725.2 | 3,016.2 | 3,349.9 | 3,685.9 | 4,063.6 |
| Այլ եկամուտներ | 123.7 | 161.6 | 150.5 | 104.7 | 111.7 | 103.5 | 104.1 |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 13.1 | 26.7 | 10.7 | 19.7 | 13.7 | 4.8 | 6.8 |
| 2. Պետական բյուջեի ծախսեր | 2,547.6 | 2,955.3 | 3,305.3 | 3,636.0 | 3,917.1 | 4,201.0 | 4,461.0 |
| Ընթացիկ ծախսեր | 2,075.1 | 2,413.6 | 2,612.6 | 2,938.3 | 3,147.7 | 3,328.8 | 3,490.8 |
| Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր | 494.4 | 557.8 | 702.5 | 714.1 | 779.5 | 882.2 | 980.2 |
| Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր | (21.8) | (16.1) | (9.8) | (10.0) | (10.0) | (10.0) | (10.0) |
| 3. Պետական բյուջեի դեֆիցիտ | 188.9 | 376.1 | 418.7 | 537.2 | 441.8 | 406.9 | 286.5 |
| Ներքին աղբյուրներ | 412.4 | 359.1 | 280.8 | 210.5 | 172.1 | 176.6 | 125.1 |
| Արտաքին աղբյուրներ | (223.5) | 17.0 | 137.9 | 326.7 | 269.7 | 230.2 | 161.4 |

3.1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պետության հարկային և մաքսային համակարգի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է հարկային և մաքսային վարչարարության արդյունավետ մեթոդների, գործիքների, հմուտ և բանիմաց կադրային ռեսուրսների առկայությունից, ինչպես նաև տնտեսական զարգացումներին և օրենսդրական փոփոխություններին համահունչ ճկուն, արագ արձագանքող մեխանիզմների ու մոտեցումների

կիրառումից: Հարկային և մաքսային վարչարարության իրականացումն արդյունավետ է այնքանով, որքանով որ բարձր է հարկային ու մաքսային կարգապահության մակարդակը: Մյուս կողմից որքան բարձր է ՊԵԿ գործունեության նկատմամբ հանրային վստահության աստիճանը, այնքան արդյունավետ է հարկային և մաքսային վարչարարությունը, իսկ պետական բյուջեով ծրագրավորված հարկային եկամուտների ապահովումը՝ նվազ ռիսկային:

Հարկային և մաքսային համակարգի հարկաբյուջետային գործառույթն առանցքային նշանակություն ունի տնտեսության զարգացման համար, որի արդյունավետ իրականացումը առավել հրատապ է դառնում հատկապես տնտեսական ու գործարար միջավայրի փոփոխությունների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների պայմաններում:

ՀՀ կառավարության 25.02.2021թ. թիվ 252-Լ որոշմամբ հաստատված Ռազմավարական կառավարման աշխատակարգի հիման վրա՝ ՀՀ ՊԵԿ նախագահի 30.12.2025թ. թիվ 1833-Լ հրամանով հաստատվել են հարկային վարչարարության բարեփոխումների և մաքսային ծառայության առաջիկա տարիների զարգացման ռազմավարական ծրագրերը:

Նշված ռազմավարական ծրագրերով սահմանվել են ՊԵԿ միասնական առաքելությունն ու տեսլականը.

ՊԵԿ առաքելությունը՝ ապահովել արդար և թափանցիկ հարկային և մաքսային միջավայր, խթանել կամավոր կարգապահությունը և ծառայել քաղաքացիներին ու բիզնեսին՝ հանուն Հայաստանի առաջանցիկ զարգացման:

ՊԵԿ փեսլականը՝ ՊԵԿ-ը դինամիկ զարգացող և առաջատար կառույց է, որը հայտնի է տեխնոլոգիական համարձակ նորարարությամբ և մարդակենտրոն մոտեցմամբ:

Նշված առաքելությանն ու տեսլականին հասնելու համար սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

Հարկային կարգապահության ամրապնդմանն ուղղված օրենսդրության կադրերլազորում

Այս նպատակը սահմանվել է՝ հաշվի առնելով, որ հարկային օրենսդրությունն ու վարչարարությունը փոխկապակցված են, դրանք պետք է ուղղված լինեն տնտեսավարողների համար բարենպաստ, կանխատեսելի ու կայուն պայմանների ստեղծմանը, առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը, կամավոր կարգապահության խթանմանը: Ուստի, այս նպատակի շրջանակներում նախատեսվում է կարգապահության բարելավման միջոցառումների արդյունքներով վերհանել կամավոր կարգապահությանը խոչընդոտող իրավական կարգավորումները և հանդես գալ դրանց փոփոխման վերաբերյալ առաջարկություններով:

Հարկ վճարողների կարիքների գնահատման վրա հիմնված ծառայությունների մատուցում ու դրանց շրջանակի ընդլայնում

Ռազմավարական այս նպատակն ուղղված է հարկ վճարողներին մատուցվող սպասարկման ծառայությունների որակի շարունակական բարելավմանը, կարգապահության բեռի կրճատմանը միտված՝ պարզ, հասանելի ու ժամանակակից լուծումների ապահովմանը: Ծառայությունների թվայնացումն ու պարզեցումը, հաղորդակցման նոր գործիքների ներդրումը և հարկ վճարողի՝ տվյալ իրավիճակին բնորոշ սպասարկման մոտեցումների ներդրումը նպաստելու են այն միջավայրի ձևավորմանը, որտեղ յուրաքանչյուր հարկ վճարող կարող է հեշտությամբ կողմնորոշվել, ստանալ իր կարիքներից բխող աջակցություն, լինել լաված և կատարել իր պարտավորությունները նվազագույն վարչարարական բեռով, հարկային մարմնին ընկալել ոչ թե որպես վերահսկող և պատժող, այլ գործընկեր, որն աջակցում է համատեղ վերհանելու առկա խնդիրներն ու տալ դրանց լուծումներ:

Հսկողության կազմակերպում՝ ռիսկերի կառավարման համակարգի միջոցով

Այս ուղղությունը նպատակ ունի ընդլայնել հարկային և մաքսային վարչարարական կարողությունները՝ հիմնված ռիսկերի կառավարման տվյալաբան և ժամանակակից արհեստական բանականության գործիքների վրա, որոնք կօգնեն վարչարարությունը դարձնել առավել թիրախային և հասցեական: Դա հնարավորություն կտա կենտրոնանալ առավել ռիսկային ոլորտների վրա՝ թեթևացնելով տնտեսավարողների վարչարարական բեռը, միաժամանակ՝ խնայելով պետության ռեսուրսները: Վարչարարությունն իրականացվելու է կարգապահության բարելավման թիրախային ծրագրերի շրջանակներում. ընտրվելու են առավել ռիսկային ոլորտները կամ հարկ վճարողների խմբերը, որոնց շրջանակներում հարկ վճարողները դասակարգվելու են՝ ըստ կարգապահության ռիսկայնության մակարդակների ու իրականացվելու են կարգապահության յուրաքանչյուր մակարդակին բնորոշ հասցեական միջոցառումներ:

էլեկտրոնային կառավարման համակարգերի կադրերի ձևավորում

Այս նպատակի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել մեծ ծավալի տվյալների (Big Data), մեքենայական ուսուցման (Machine Learning), արհեստական բանականության (Artificial intelligence) և այլ նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումների կիրառման հնարավորությունները՝ հաշվի առնելով ոլորտում շարունակաբար իրականացվող փոփոխությունները և ներդրվող նոր մեխանիզմները: Կարևոր է ոչ միայն տվյալների հավաքագրման և մշակման կարողությունների ընդլայնումը, այլև վերլուծական գործիքակազմի զարգացումը՝ կանխատեսող վերլուծությունների, ռիսկերի գնահատման և որոշումների ընդունման արդյունավետության բարձրացման նպատակով:

3.2. ՀՀ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ²³

Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 3.2.1. 2023-2029թթ. փաստացի և ծրագրված եկամուտները, մլրդ դրամ

| Եկամտատեսակ | Փաստ | | | Սպասում 2026թ. | ՄԺԾԾ | | |
|--|---------|---------|---------|-------------------|---------|---------|---------|
| | 2023թ. | 2024թ. | 2025թ. | | 2027թ. | 2028թ. | 2029թ. |
| Պետական բյուջեի եկամուտներ | 2,410.7 | 2,579.2 | 2,886.4 | 3,140.7 | 3,475.3 | 3,794.2 | 4,174.5 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 25.4% | 25.2% | 25.4% | 25.5% | 25.9% | 26.0% | 26.1% |
| 1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր | 2,273.9 | 2,390.9 | 2,725.2 | 3,016.2 | 3,349.9 | 3,685.9 | 4,063.6 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 24% | 23.3% | 24.0% | 24.5% | 25.0 % | 25.2% | 25.5% |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 94.3% | 92.7% | 94.4% | 96.0% | 96.4% | 97.1% | 97.3% |
| 2. Այլ եկամուտներ | 123.7 | 161.6 | 150.5 | 104.7 | 111.7 | 103.5 | 104.1 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.3% | 1.6% | 1.3% | 0.8% | 0.8% | 0.7% | 0.7% |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 5.2% | 6.3% | 5.2% | 3.3% | 3.2% | 2.7% | 2.5% |

²³ Հայաստանի Հանրապետության հարկային համակարգում փոփոխությունների իրականացման հիմնական նպատակները, սկզբունքները, ժամկետները, ուղղություններն ու ակնկալվող արդյունքները ներկայացված են սույն փաստաթղթի Վերլուծությունների 3-րդ բաժնում:


| | | | | | | | |
|-----------------------------|------|------|------|------|------|-------|-------|
| 3. Պաշտոնական դրամաշնորհներ | 13.1 | 26.7 | 10.7 | 19.7 | 13.7 | 4.8 | 6.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1% | 0.3% | 0.1% | 0.2% | 0.1% | 0.03% | 0.04% |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 0.6% | 1.0% | 0.4% | 0.6% | 0.4% | 0.1% | 0.2% |

ՀՀ 2027-2029 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

Հարկային եկամուտները միջնաժամկետ հատվածում ապահովվելու են հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի շարունակական բարելավում՝ 2026թ. 0.5, 2027թ կպահպանվի՝ 0.5, իսկ հաջորդող տարիներին համապատասխանաբար՝ 0.2 և 0.3 տոկոսային կետի շրջանակներում: Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի սպասողական մակարդակը ապահովվելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները:

Նշվածով պայմանավորված 2027-2029թթ. հարկային եկամուտների աճերը 2027 թվականին 2026 թվականի սպասվող ցուցանիշի նկատմամբ կկազմի 333.7 մլրդ դրամ, 2028 թվականին 2027 թվականի ծրագրված ցուցանիշի նկատմամբ՝ 336.0 մլրդ դրամ և 2029 թվականին 2028 թվականի ծրագրված ցուցանիշի նկատմամբ՝ 377.7 մլրդ դրամ:

Գծապատկեր 3.2.1. ՀՀ 2023-2028թթ. հարկային եկամուտները մլրդ դրամով և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ



Պաշտոնական դրամաշնորհները 2027-2029թթ. համար ծրագրվել են հաշվի առնելով առկա պայմանագրերը և դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները: Պաշտոնական դրամաշնորհները 2027-2029թթ. համար ծրագրվել են համապատասխանաբար 13.7 մլրդ դրամի, 4.8 մլրդ դրամի և 6.8 մլրդ դրամ:

Աղյուսակ 3.2.2. 2026-2028թթ. ծրագրված պաշտոնական դրամաշնորհները, մլն դրամ

| Դոնորներ | ՄԺԾԾ | | |
|---|----------|---------|---------|
| | 2027թ. | 2028թ. | 2029թ. |
| Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | | | |
| ԵՄ (ԵՄ և ԵՄ անդամ երկրների կողմից) | 13,736.9 | 4,777.3 | 6,811.4 |
| Համաշխարհային բանկ | 1,159.9 | 751.7 | 0.0 |
| Եվրասիական զարգացման բանկ (այդ թվում ՌԴ աջակցություն) | 1,574.6 | 850.1 | 566.8 |
| Ասիական զարգացման բանկ | 385.9 | 0.0 | 0.0 |
| Այլ | 1,045.4 | 0.0 | (0.0) |

Դրամաշնորհների ընդհանուր գումարի զգալի մասը՝ կեսից ավելին, ակնկալվում է ստանալ ԵՄ-ից: Դոնորներ են հանդիսանում նաև Համաշխարհային բանկը, Եվրասիական զարգացման բանկը, ՌԴ-ն, Ասիական զարգացման բանկը, Գլոբալ հիմնադրամը՝ առողջապահության ոլորտում, Կանաչ կլիմայի հիմնադրամը:

Այլ եկամուտները 2027-2029թթ. համար ծրագրվել են համապատասխանաբար 111.7 մլրդ դրամի, 103.5 մլրդ դրամի և 104.1 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2027 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված միտումները:

Այլ եկամուտների ՄԺԾԾ կանխատեսումների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 3.2.3 Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2027-2029թթ. ՄԺԾԾ շրջանակներում կատարված կանխատեսումները, մլրդ դրամ

| Այլ եկամուտներ | Փաստ | | | Սպասում 2026թ. | ՄԺԾԾ | | |
|--|--------|--------|--------|-------------------|--------|--------|--------|
| | 2023թ. | 2024թ. | 2025թ. | | 2027թ. | 2028թ. | 2029թ. |
| Ընդամենը, այդ թվում՝ | 123.7 | 161.6 | 150.5 | 104.7 | 111.7 | 103.5 | 104.1 |
| 1. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ | 3.6 | 1.0 | 4.2 | 8.5 | 11.4 | 10.2 | 11.3 |
| 2. Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ | 52.3 | 76.6 | 60.8 | 36.0 | 38.3 | 31.2 | 31.0 |
| 3. Պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարներ | 12.4 | 11.7 | 11.9 | 10.8 | 9.9 | 7.9 | 6.8 |
| 4. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր | 25.1 | 27.1 | 28.9 | 23.9 | 27.0 | 27.3 | 27.4 |
| 5. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ | 24.3 | 23.4 | 23.2 | 23.2 | 23.4 | 23.5 | 23.6 |
| 6. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ | 5.9 | 21.8 | 21.5 | 2.4 | 1.7 | 3.4 | 4.0 |

3.3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Պետական բյուջեի ձևավորումը առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Ստորև ներկայացվում են ՀՀ 2027-2029 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տես Աղյուսակ 4.1.1):

Աղյուսակ 3.3.1. ՀՀ 2023-2029 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

| Ցուցանիշ | Փաստ | | | Բյուջե | | ՄԺԾԾ | |
|--|---------|--------|--------|---------|--------|--------|---------|
| | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 |
| Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները | 188.9 | 376.1 | 418.8 | 536.8 | 441.8 | 406.9 | 286.5 |
| 1. Ներքին աղբյուրներ | 412.4 | 359.1 | 280.8 | 210.0 | 172.1 | 176.6 | 125.1 |
| 1.1. Փոխառու զուտ միջոցներ | 360.3 | 369.0 | 297.0 | 315.0 | 250.0 | 244.0 | 230.0 |
| 1.2. Ֆինանսական զուտ ակտիվներ | 52.1 | (9.9) | (16.1) | (104.9) | (77.9) | (67.4) | (104.9) |
| 2. Արտաքին աղբյուրներ | (223.5) | 17.0 | 137.9 | 326.7 | 269.7 | 230.2 | 161.4 |
| 2.1. Փոխառու զուտ միջոցներ | (73.3) | 30.9 | 141.7 | 334.7 | 277.4 | 231.4 | 162.5 |
| 2.2. Ֆինանսական զուտ ակտիվներ | (150.2) | (13.9) | (3.8) | (8.0) | (7.7) | (1.2) | (1.1) |

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2027-2029 թվականին կնվազի և կկազմի համապատասխանաբար՝ ՀՆԱ-ի 3.3%, 2.8% և 1.8%-ը:


Աղյուսակ 3.3.2. Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները 2027-2029թթ (% ՀՆԱ-ի նկատմամբ)

| Ցուցանիշ | ՄԺԾԾ | | |
|---|-------|-------|-------|
| | 2027 | 2028 | 2029 |
| Ընդհանուր դեֆիցիտ (ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը) | (3.3) | (2.8) | (1.8) |
| Առաջնային դեֆիցիտ (ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը) | (0.1) | (0.4) | (1.2) |

3.4. 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Մակրոտնտեսական կայունությանը և կայուն տնտեսական աճի ապահովմանը նպաստելու նպատակով հարկաբյուջետային քաղաքականությունը զսպող դիրք է ունեցել տնտեսական վերելքի փուլում, և տնտեսական պարբերաշրջանի կայունացման հետ մոտեցել չեզոք դիրքի: Միջնաժամկետ հատվածի սկզբում այն կունենա զսպող դիրք ամբողջական պահանջարկի տեսանկյունից՝ ապահովելու հարկաբյուջետային կոնսոլիդացիա, միաժամանակ ծախսերի կառուցվածքի բարելավմամբ խթանելու տնտեսական ներուժը: Վերոգրյալով պայմանավորված միջնաժամկետ հատվածում ընդհանուր ծախսային շրջանակները նախորդ 2026-2028թթ ՄԺԾԾ ընդհանուր ծախսային շրջանակների համեմատ ունեն աճման միտում:

Գծապատկեր 3.4. 1. Միջնաժամկետ ծախսերի շրջանակների համեմատականը




ՀՀ 2027-2029 թվականների պետական բյուջեների ծախսերի շրջանակներն ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված ցուցանիշներով:

Աղյուսակ 3.4.1. ՀՀ 2023-2029թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների, մլրդ դրամ

| Ցուցանիշ | Փաստ | | | Բյուջե | ՄԺԾԾ | | |
|---|----------|----------|---------|---------|---------|---------|---------|
| | 2023 | 2024 | 2025 | | 2026 | 2027 | 2028 |
| Ընդամենը | 2,547.60 | 2,955.30 | 3,305.3 | 3,627.6 | 3,917.1 | 4,201.0 | 4,461.0 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 26.8% | 28.8% | 29.1% | 29.4% | 29.2% | 28.7% | 27.9% |
| 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ և պահուստային ֆոնդեր | 522.5 | 671.3 | 739.3 | 917.8 | 997.4 | 1,113.9 | 1,326.7 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 5.5% | 6.5% | 6.5% | 7.4% | 7.4% | 7.6% | 8.3% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 20.5% | 22.7% | 22.4% | 25.3% | 25.5% | 26.5% | 29.7% |
| 2. Պաշտպանություն, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 733.4 | 776.9 | 925.5 | 814.4 | 848.8 | 892.3 | 897.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 7.7% | 7.6% | 8.2% | 6.6% | 6.3% | 6.1% | 5.6% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 28.8% | 26.3% | 28.0% | 22.5% | 21.7% | 21.2% | 20.1% |
| 3. Տնտեսական ոլորտ | 217.8 | 228.9 | 238.6 | 281.3 | 289.7 | 303.6 | 310.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.3% | 2.2% | 2.1% | 2.3% | 2.2% | 2.1% | 1.9% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 8.5% | 7.7% | 7.2% | 7.8% | 7.4% | 7.2% | 7.0% |
| 4. Սոցիալական ոլորտ | 1,073.9 | 1,278.2 | 1,401.9 | 1,609.9 | 1,781.6 | 1,891.3 | 1,925.5 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 11.3% | 12.5% | 12.4% | 13.1% | 13.3% | 12.9% | 12.1% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 42.2% | 43.3% | 42.4% | 44.4% | 45.5% | 45.0% | 43.2% |

Գծապատկեր 3.4.2. ՀՀ 2023-2028թթ. թվականների ոլորտային ծախսերի մասնաբաժինը ընդհանուր ծախսերում



Աղյուսակ 3.4.2. 2023-2029թթ սոցիալական ոլորտի բյուջեպային ծախսերը, մլրդ դրամ

| Ցուցանիշ | Փաստ | | | Բյուջե | | ՄԺԾԾ | |
|------------------------------|---------|---------|---------|---------|---------|---------|---------|
| | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 |
| Սոցիալական ոլորտ ընդամենը | 1,073.9 | 1,278.2 | 1,401.9 | 1,609.9 | 1,781.6 | 1,891.3 | 1,925.5 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 11.3% | 12.5% | 12.4% | 13.1% | 13.3% | 12.9% | 12.1% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 42.2% | 43.3% | 42.4% | 44.4% | 45.5% | 45.0% | 43.2% |
| 1. Կրթություն | 183.6 | 231.0 | 319.6 | 357.7 | 355.0 | 363.7 | 371.2 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.9% | 2.3% | 2.8% | 2.9% | 2.6% | 2.5% | 2.3% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 7.2% | 7.8% | 9.7% | 9.9% | 9.1% | 8.7% | 8.3% |
| 2. Սոցիալական պաշտպանություն | 705.8 | 851.9 | 873.7 | 992.9 | 1,058.0 | 1,159.5 | 1,197.4 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 7.4% | 8.3% | 7.7% | 8.1% | 7.9% | 7.9% | 7.5% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 27.7% | 28.8% | 26.4% | 27.4% | 27.0% | 27.6% | 26.8% |
| 3. Առողջապահություն | 141.3 | 154.8 | 165.8 | 213.1 | 319.5 | 325.8 | 312.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.5% | 1.5% | 1.5% | 1.7% | 2.4% | 2.2% | 2.0% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 5.5% | 5.2% | 5.0% | 5.9% | 8.2% | 7.8% | 7.0% |
| 4. Հանգիստ, մշակույթ և կրոն | 43.3 | 40.5 | 42.8 | 46.2 | 49.1 | 42.2 | 44.1 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.5% | 0.4% | 0.4% | 0.4% | 0.4% | 0.3% | 0.3% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 1.7% | 1.4% | 1.3% | 1.3% | 1.3% | 1.0% | 1.0% |

Միջնաժամկետ կտրվածքում կրթության ոլորտին հատկացվող միջոցները նախատեսվում է ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, միջնակարգ, նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն, հետբուհական կրթությանը տրամադրվող ծախսերի ֆինանսավորմանը:

Առողջապահության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվել է 2027-2029թթ համապատասխանաբար՝ 319.5, 325.8 և 312.9 մլրդ.դրամ: Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի փուլային ներդրման շարունակական իրականացումը, իսկ 2029թ.-ից նախատեսվում է առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ամբողջական ներդրում՝ գրեթե ամբողջ բնակչության ընդգրկմամբ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը 2027-2029թթ միջնաժամկետ կտրվածքում նկատելիորեն աճել է՝ կազմելով 1,058.0, 1,159.5 և 1,197.4 մլրդ. դրամ:

Աղյուսակ 3.4.3. Տնտեսական ոլորտի 2023-2029թթ բյուջեդային ծախսերը, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | ՄԺԾԾ | | |
|---|-------|-------|-------|--------|-------|-------|-------|
| | 2023 | 2024 | 2025 | | 2026 | 2027 | 2028 |
| Տնտեսական ոլորտ ընդամենը | 217.8 | 228.9 | 238.6 | 281.3 | 289.7 | 303.6 | 310.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.3% | 2.2% | 2.1% | 2.3% | 2.2% | 2.1% | 1.9% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 8.5% | 7.7% | 7.2% | 7.8% | 7.4% | 7.2% | 7.0% |
| 1. Տնտեսական հարաբերություններ | 199.2 | 203.7 | 212.5 | 255.9 | 261.9 | 279.1 | 282.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.1% | 2.0% | 1.9% | 2.1% | 2.0% | 1.9% | 1.8% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 7.8% | 6.9% | 6.4% | 7.1% | 6.7% | 6.6% | 6.3% |
| 2. Շրջակա միջավայրի պաշտպանություն | 7.7 | 10.7 | 14.3 | 11.9 | 14.9 | 17.4 | 18.0 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 0.3% | 0.4% | 0.4% | 0.3% | 0.4% | 0.4% | 0.4% |
| 3. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ | 11.0 | 14.5 | 11.8 | 13.3 | 12.9 | 7.1 | 10.0 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.05% | 0.1% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 0.4% | 0.5% | 0.4% | 0.4% | 0.3% | 0.2% | 0.2% |

Տնտեսության ճյուղերի 2027-2029 թվականների ծախսերը նպատակաուղղված են լինելու ենթակառուցվածքների, տնտեսության իրական հատվածի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող՝ արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

2027-2029թթ. ժամանակահատվածում պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալը որոշ կախվածության մեջ կլինի նաև արտաքին հոսքերից:

Աղյուսակ 3.4.4. Արտաքին աղբյուրներից 2023-2029թթ միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | ՄԺԾԾ | | |
|--|------|------|------|--------|------|-------|-------|
| | 2023 | 2024 | 2025 | | 2026 | 2027 | 2028 |
| Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլն դրամ) | 65.1 | 66.5 | 46.9 | 104.0 | 99.9 | 111.2 | 103.6 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.7% | 0.6% | 0.4% | 0.8% | 0.7% | 0.8% | 0.7% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 2.6% | 2.3% | 1.4% | 2.9% | 2.6% | 2.6% | 2.3% |
| 1. Վարկային ծրագրերի և միջոցառումներ | 56.2 | 59.1 | 41.1 | 85.1 | 86.1 | 106.4 | 96.7 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.6% | 0.6% | 0.4% | 0.7% | 0.6% | 0.7% | 0.6% |

| | | | | | | | |
|--|-------|-------|-------|------|------|-------|-------|
| Ընդհանուր ծախսերում (%) | 2.2% | 2.0% | 1.2% | 2.3% | 2.2% | 2.5% | 2.2% |
| 2. Դրամաշնորհային ծրագրերի և միջոցառումներ | 8.9 | 7.4 | 5.8 | 18.9 | 13.7 | 4.8 | 6.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.09% | 0.07% | 0.05% | 0.2% | 0.1% | 0.03% | 0.04% |
| Ընդհանուր ծախսերում (%) | 0.3% | 0.3% | 0.2% | 0.5% | 0.4% | 0.1% | 0.2% |

3.5. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ


2027-2029թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կնվազեն 23.5%-ից 21.9%-ը: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կաճի 5.7%-ից 6.1%-ը:

Աղյուսակ 3.5.1. 2023-2029թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե 2026 | ՄԺԾԾ | | |
|--|---------|---------|---------|----------------|---------|---------|---------|
| | 2023 | 2024 | 2025 | | 2027 | 2028 | 2029 |
| Ընդամենը ծախսեր | 2,547.6 | 2,955.3 | 3,305.3 | 3,627.6 | 3,917.1 | 4,201.0 | 4,461.0 |
| 1. Ընթացիկ ծախսեր | 2,075.1 | 2,413.6 | 2,612.6 | 2,923.5 | 3,147.6 | 3,328.8 | 3,490.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 21.9% | 23.5% | 23.0% | 23.7% | 23.5% | 22.8% | 21.9% |
| 2. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր ²⁴ | 472.5 | 541.7 | 692.7 | 704.1 | 769.5 | 872.2 | 970.2 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 5.0% | 5.3% | 6.1% | 5.9% | 5.8% | 6.0% | 6.1% |

Գծապատկեր 3.5.1. 2023-2029թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ

²⁴ ոչ ֆինանսական ակտիվների գծով 2023-2029թթ. ծախսերում ներառված են նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի գծով ծախսերը, 2027-2029թթ յուրաքանչյուր տարի կազմում է համապատասխանաբար (-10 մլրդ դրամ), ՀՀ 2026թ. պետական բյուջեին համապատասխան:




2027-2029թթ. ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 79.2%-ը կկազմեն **ընթացիկ ծախսերը** (2026թ. այդ ցուցանիշը ծրագրվել է 80.6%):

Դիտարկվող ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն ուղղված կլինեն ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման միջոցառումներին:

2027-2029թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ներկայացված է ստորև:

Գծապատկեր 3.5.2. 2023-2029թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %




Աղյուսակ 3.5.2. 2023-2029թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | Բյուջե | | ԱԺԾԾ | | |
|---|---------|---------|---------|---------|---------|---------|---------|
| | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 |
| Ընթացիկ ծախսեր | 2,075.1 | 2,413.6 | 2,612.5 | 2,923.5 | 3,147.7 | 3,328.8 | 3,490.8 |
| 1. Աշխատանքի վարձատրություն | 218.0 | 242.7 | 258.1 | 268.4 | 274.5 | 281.0 | 283.5 |
| 2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | 191.1 | 108.7 | 105.1 | 92.1 | 87.1 | 87.9 | 88.5 |
| 3. Տնկոսավճարներ | 253.4 | 313.6 | 349.1 | 419.9 | 426.0 | 457.0 | 493.1 |
| 4. Սուբսիդիաներ | 164.0 | 187.7 | 210.7 | 212.1 | 239.8 | 236.9 | 227.3 |
| 5. Դրամաշնորհներ | 281.0 | 303.4 | 318.2 | 314.3 | 293.8 | 301.4 | 338.3 |
| 6. Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 710.2 | 1026.2 | 1,092.8 | 1,285.1 | 1,496.3 | 1,618.0 | 1,650.6 |
| 7. Այլ ծախսեր | 257.2 | 231.3 | 278.5 | 331.6 | 330.1 | 346.7 | 409.6 |

Միջնաժամկետ հատվածում ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 20.7%-ը կկազմեն **ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը**: Միջնաժամկետ հատվածում ոչ ֆինանսական ակտիվների

գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում արձանագրվում է ներքին աղբյուրների ծավալի ավելացում:

Գծապատկեր 3.5.3. 2023-2029թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը, մլրդ դրամ



Ընդ որում միջնաժամկետ հատվածում ընդհանուր ծավալի (2027-2029թթ) կանխատեսվող 2,641.9 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շուրջ 14.7%-ը (389.2 մլրդ դրամ) նախատեսվում է ֆինանսավորել արտաքին աղբյուրների, իսկ 85.3%-ը (2,252.7 մլրդ դրամ)՝ ներքին աղբյուրների հաշվին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները հանդիսանալու են ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ սոցիալական և անվտանգության ոլորտներում ներդրումները:

Աղյուսակ 3.5.3 2023-2029թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ արտաքին և ներքին աղբյուրների, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | 2023թ. | 2024թ. | 2025թ. | 2026թ. | 2027թ. | 2028թ. | 2029թ. |
|--|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Ընդամենը | 494.3 | 557.8 | 749.8 | 714.1 | 779.5 | 882.2 | 980.2 |
| -արտաքին աղբյուրներ | 73.4 | 77.1 | 204.2 | 120 | 123.1 | 138.1 | 128.0 |
| - ներքին աղբյուրներ | 420.9 | 480.7 | 545.6 | 594.1 | 656.4 | 744.1 | 852.2 |
| Տրանսպորտ, այդ թվում | 96.5 | 92.7 | 97.3 | 126.1 | 137.3 | 161.4 | 162.1 |
| -արտաքին աղբյուրներ | 27 | 29.5 | 25.3 | 65 | 77.7 | 97.7 | 95.4 |
| - ներքին աղբյուրներ | 69.5 | 63.2 | 72 | 61.1 | 59.6 | 63.7 | 66.7 |
| Էներգետիկա, այդ թվում | 2.2 | 0.7 | 4 | 9.5 | 10.2 | 6.9 | 7.6 |
| -արտաքին աղբյուրներ | 1.8 | 0.7 | 4 | 9.5 | 10.2 | 6.9 | 7.6 |
| - ներքին աղբյուրներ | 0.4 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շրջակա միջավայր և գյուղատնտեսություն | 2.7 | 2.7 | 1.7 | 1.2 | 1.4 | 3.4 | 4.9 |
| -արտաքին աղբյուրներ | 0.5 | 1.7 | 0 | 0.3 | 0.3 | 1.0 | 2.6 |
| - ներքին աղբյուրներ | 2.2 | 1 | 1.7 | 0.8 | 1.0 | 2.3 | 2.3 |
| Ջրային տնտեսություն | 17.8 | 16.1 | 30.4 | 22.6 | 15.2 | 12.7 | 15.4 |
| -արտաքին աղբյուրներ | 13.1 | 12.1 | 19 | 17.7 | 7.7 | 5.9 | 6.6 |
| - ներքին աղբյուրներ | 4.7 | 4 | 11.4 | 4.9 | 7.5 | 6.8 | 8.8 |
| Առողջապահություն | 7.5 | 5.5 | 12.7 | 13 | 17.9 | 11.8 | 6.5 |
| -արտաքին աղբյուրներ | 3 | 1 | 0.5 | 0.7 | 3.9 | 1.3 | 0.0 |
| - ներքին աղբյուրներ | 4.5 | 4.5 | 12.2 | 12.3 | 14.0 | 10.5 | 6.5 |
| Կրթություն, գիտություն մշակույթ և սպորտ | 29.6 | 62.9 | 125.1 | 164.9 | 175.7 | 194.7 | 196.2 |
| -արտաքին աղբյուրներ | 14.2 | 17.8 | 14.2 | 8.8 | 2.9 | 0.0 | 0.0 |
| - ներքին աղբյուրներ | 15.4 | 45.1 | 110.9 | 156.1 | 172.8 | 194.7 | 196.2 |
| Սոցիալական | 1.4 | 1 | 2.1 | 2.4 | 2.2 | 4.4 | 6.1 |
| -արտաքին աղբյուրներ | 1.3 | 0.6 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| - ներքին աղբյուրներ | 0.1 | 0.4 | 2.1 | 2.4 | 2.2 | 4.4 | 6.1 |
| Ուժային | 296 | 339.7 | 417.5 | 308.5 | 335.6 | 360.7 | 358.1 |
| -արտաքին աղբյուրներ | 0 | 0 | 116.2 | 0 | 0 | 0 | 0 |
| - ներքին աղբյուրներ | 296 | 339.7 | 301.3 | 308.5 | 335.6 | 360.7 | 358.1 |
| Այլ | 40.6 | 36.5 | 59 | 65.8 | 84.0 | 126.2 | 223.4 |
| -արտաքին աղբյուրներ | 12.5 | 13.7 | 25 | 17.8 | 20.3 | 25.2 | 15.8 |
| - ներքին աղբյուրներ | 28.1 | 22.8 | 34 | 48 | 63.7 | 101.0 | 207.5 |

3.6. 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐԿՈՂ ՀԱՏՎԱՑՈՒՄՆԵՐԸ

2027-2029 թվականներին պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել հատկացումներ ՀՀ համայնքներին, մասնավորապես՝ 2027 թվականին՝ շուրջ 186.4 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 4.8 և ՀՆԱ-ի 1.4 տոկոսը, 2028 թվականին՝ 177.9 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 4.2 և ՀՆԱ-ի 1.2 տոկոսը, իսկ 2029 թվականին՝ 190.1 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 4.3 և ՀՆԱ-ի 1.2 տոկոսը:

Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման նպատակով նախատեսվում է հատկացնել՝ 2027 թվականին շուրջ 121.5 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3.1 և ՀՆԱ-ի 0.9 տոկոսը, 2028 թվականին՝ 133.2 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3.2 և ՀՆԱ-ի 0.9 տոկոսը, իսկ 2029 թվականին՝ 148.3 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3.3 և ՀՆԱ-ի 0.9 տոկոսը:

Համայնքներին սուբվենցիաների տրամադրման համար նախատեսվել է հատկացնել՝ 2027 թվականին շուրջ 22.1 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.6 տոկոսը, 2028 թվականին՝ 26.2 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.6 տոկոսը, իսկ 2029 թվականին՝ 26.1 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.6 տոկոսը:

Պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով համայնքներին նախատեսվում է տրամադրել՝ 2027 թվականին շուրջ 42.6 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 1.1 տոկոսը, 2028 թվականին՝ 18.5 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.4 տոկոսը, իսկ 2029 թվականին՝ 15.7 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.4 տոկոսը:

2027-2029 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված նախատեսվել է պետական աջակցություն տրամադրել սահմանամերձ համայնքներին՝ յուրաքանչյուր տարվա համար շուրջ 1.0 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 3.6.1. ՀՀ պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրվող հատկացումները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | Մ Ճ Ծ Ծ | | |
|--|--------|--------|---------|--------|--------|
| | 2025թ. | 2026թ. | 2027թ. | 2028թ. | 2029թ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 177.3 | 177.0 | 186.4 | 177.9 | 190.1 |
| Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ | 98.2 | 107.9 | 121.5 | 133.2 | 148.3 |
| Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին | 3.1 | 0.2 | 0.2 | 0.0 | 0.0 |
| Սուբվենցիաներ համայնքներին | 38.6 | 23.3 | 22.1 | 26.2 | 26.1 |
| ընթացիկ սուբվենցիաներ | 1.0 | 2.1 | 2.1 | 2.1 | 2.1 |
| կապիտալ սուբվենցիաներ | 37.6 | 21.2 | 20.0 | 24.1 | 24.0 |
| Պատվիրակված լիազորությունների ֆինանսավորում | 37.4 | 45.6 | 42.6 | 18.5 | 15.7 |

ՄԱՍ II. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ 2027-2029ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մասում ընդհանուր գծերով ներկայացվում են 2027-2029թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ բնագավառների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից (տարբեր ոլորտներում ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և այլն) և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2027 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ինչպես արդեն վերը նշվել է ՀՀ կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

- սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,
- հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և անվտանգությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,
- տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտ

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է՝ որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը:

Այս գաղափարախոսությունը ամրագրված է նաև ՀՀ կառավարության 2026 թվականի հունվարի 8-ի N 16-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինում, որը կառուցված է տնտեսական զարգացման նոր պարադիգմի վրա: Պարադիգմի առաջին և առանցքային հիմքը կրթությունն է: Դոկտրինում կրթությունը սահմանվում է՝ որպես «ռազմավարությունների ռազմավարություն»: Այն այլևս պարզապես մեկ ճյուղային քաղաքականություն չէ, այլ դոկտրինի առանցքը, որը կանխորոշում է տնտեսական զարգացման ծավալն ու բովանդակությունը, պետական կառավարման արդյունավետությունն ու ճկունությունը, ազգային ինքնության ամրությունը և պետականության հարատևության օրակարգի հաջողությունը:

Ոլորտի զարգացման համար սահմանվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները՝

- համընդհանուր ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող և քաղաքացիական

համագործակցությանը նպաստող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում,

- կրթության արդյունավետության բարձրացում, որը կապահովի ռեսուրսի (ներառյալ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում՝ հիմնվելով կրթական համակարգի սոցիալական արդարության ապահովման սկզբունքի վրա,
- կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում, որը խարսխված է լինելու միջազգային կրթական տիրույթում և համակարգերում հայկական կրթական համակարգի ամբողջական և բովանդակային ինտեգրման, ինչպես նաև հայկական կրթական ծառայությունների և արտադրանքի արտահանման վրա՝ շահեկանորեն նպաստելով ներքին կրթական ռեսուրսների առաջնահերթ զարգացմանն ու փոխակերպելով Հայաստանի դերը գլոբալ կրթական համակարգում:

Կրթության ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության առաջնահերթություններին համապատասխան ապահովել դպրոցական արդիական ու հագեցված ենթակառուցվածքի, ներառական ու զարգացնող միջավայրի, կրթական որակյալ բովանդակության, բարձրորակ ուսուցչական համակազմի և դպրոցների թափանցիկ ու արդյունավետ կառավարման ամբողջություն:

Միջնաժամկետ հատվածում ոլորտում բարեփոխումների իրականացման նպատակով պետական հատկացումների զգալի մասն ուղղվելու է ներքոհիշյալ ուղղությունների իրականացմանը՝

- «Հանրակրթություն», որի գլխավոր նպատակն է ապահովել անվճար և որակյալ հանրակրթություն: Դպրոցահասակ երեխաների պարտադիր կրթության ապահովումն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և ծրագրի թիրախներից մեկը միջնաժամկետ հատվածում առկա բնակչության գծով սովորողների համախառն ընդգրկվածության 100% ցուցանիշի ապահովումն է,
- «Նախադպրոցական կրթություն» ծրագրի նպատակն է ապահովել հասանելի և որակյալ նախադպրոցական կրթություն,
- «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում կշարունակվի դպրոցների և մանկապարտեզների կառուցումը, վերակառուցումն ու հիմնանորոգումը:

2029 թվականի համար սահմանվել են նաև հետևյալ թիրախները՝

- շարունակել հանրապետության պետական դպրոցներում ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաների հիմնումը՝ էապես բարելավելով կրթության որակը (հատկապես ԲՏՃՄ ուղղություններով),
- արդիականացնել ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ համակարգը, այն համապատասխանեցնելով մարզերի զարգացման գերակայություններին,
- դպրոցների և մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում ապահովել վերջիններիս ամբողջական հագեցումն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով,
- կատարելագործել ուսումնական հաստատությունների մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացման համակարգը՝ ապահովելով վարձատրության և մասնագիտական առաջընթացի փոխկապակցվածությունը,
- կրթության բոլոր մակարդակներում մշակել և գործարկել թվայնացման նոր գործիքներ՝ դյուրացնելով կրթության մի մակարդակից անցումը մյուսին:

Կրթության ոլորտը հատվում է Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր այլ ոլորտների հետ, քանի որ հանդիսանում է ցանկացած ոլորտի զարգացումն ապահովող հիմնասյուններից մեկը: Այլ ոլորտներին առնչությունն արտահայտվում է հիմնականում աշխատաշուկայի համար մասնագետների պատրաստման, լրացուցիչ և շարունակական կրթության համակարգում տարբեր բնագավառների ընդգրկմամբ:

Մասնագիտական կրթության և ուսուցման գծով կշարունակվի մատչելի և որակյալ կրթության իրականացման ապահովումը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության գծով գլխավոր նպատակն է՝ ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: Միաժամանակ խրախուսվելու է խոցելի խմբերի համար բարձրագույն կրթության մատչելիությունը և աջակցությունը լավագույն առաջադիմություն ցուցաբերող ուսանողներին:

2027-2029 թվականներին կրթության ոլորտի ծախսային գերակայություններն են.

- բոլոր դպրոցահասակ երեխաների ընդգրկվածության ապահովում պարտադիր կրթության մեջ,
- կապիտալ ներդրումներ ուսումնական հաստատությունների կառուցման, հիմնանորոգման, վերանորոգման և անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով հագեցման համար,
- ուսումնական հաստատությունները որակյալ մանկավարժական համակազմով ապահովում՝ խրախուսելով մանկավարժների մասնագիտական առաջխաղացումը և արձագանքելով նրանց կարիքներին,
- կրթության կազմակերպական և բովանդակային արդիականացում՝ ապահովելով արդյունավետ կապը հասարակության և տնտեսության պահանջներին, ինչպես նաև միջազգային զարգացման միտումներին:

Գիտության ոլորտ

ՀՀ գիտատեխնոլոգիական գործունեության ոլորտում պետական քաղաքականության 2027-2029 թվականների հիմնական նպատակները սահմանված են ՀՀ կառավարության 2026 թվականի հունվարի 29-ի N 113-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագրում: Դրանք են՝

- հետազոտությունների գերազանցության խթանումը,
- տնտեսական ազդեցության մեծացումը,
- սոցիալական պատասխանատվության բարձրացումը,
- գիտության կառավարման գործընթացների վերակազմավորումը և առաջխաղացումը:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար սահմանվել են հետևյալ գերակա ուղղությունները՝

- գերազանցության սկզբունքների վրա հիմնված բաց և կանխատեսելի ընթացակարգերով իրականացված գիտատեխնոլոգիական հավակնոտ ծրագրերի առկայություն և դրանց հաջող իրականացում,
- գիտատեխնոլոգիական ոլորտում տաղանդավոր երիտասարդների ներգրավում, նրանց մասնագիտական առաջխաղացման և հնարավորությունների առավելագույն իրացման համակարգված մեխանիզմների առկայություն,
- բարձր հավելյալ արժեք ստեղծող և գիտատար ձեռնարկությունների խթանում,
- որակյալ հայագիտական, այդ թվում՝ միջոլորտային, հետազոտությունների իրականացում և դրանց արդյունքների տարածման արդյունավետ մեխանիզմների առկայություն,
- համաշխարհային մակարդակի հետազոտական ենթակառուցվածքներին հասանելիություն,

- սոցիալական ազդեցության իրականացված հետազոտությունների առկայություն և քաղաքացիների ներգրավվածության առկայություն հետազոտական գործընթացներում,
- գիտության ոլորտում ներքին և գլոբալ շարժունակության ապահովում, միջգիտակարգայնության զարգացում, ինչպես նաև ենթակառուցվածքների և ռեսուրսների լայն հասանելիություն:

Մշակույթի ոլորտ

ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան մշակույթի ոլորտում իրականացվող ծրագրերը միտված են մշակութային ժառանգության պահպանությանը և տարածմանը, մշակութային և ստեղծարար ոլորտների խթանմանը և երկրի կայուն զարգացման գործընթացներում վերջիններիս դերի ընդլայնմանը, թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրմանը և գործարկմանը, մշակույթի հասանելիությանը և սոցիալական ներառականությանը, բարեկեցիկ հասարակության ձևավորմանը, հայկական մշակույթի միջազգային ինտեգրմանը և միջազգային շուկաներում մրցունակության ապահովմանը, մշակույթի ոլորտում կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ թվայնացման մի շարք գործիքների ներդրմամբ:

Ոլորտում իրականացվող ծրագրերը բխում են ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 09-ի N 1951-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությունից:

Սպորտի ոլորտ

Սպորտի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանը, ոլորտի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորմանը և ֆիզիկական առողջ ակտիվության խթանմանը, սպորտում պետության միջազգային հեղինակության բարձրացմանը և մարզական ենթակառուցվածքների ստեղծմանը/բարելավմանը: ՀՀ կառավարությունը խրախուսում է նաև մարզական բարձր արդյունքները միջազգային մրցասպարեզներում, աջակցում է մարզական ֆեդերացիաների գործունեությանը:

Ոլորտում իրականացվող ծրագրերը բխում են ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 2145-Լ որոշմամբ հաստատված՝ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարությունից:

Երիտասարդության ոլորտ

Երիտասարդական պետական քաղաքականությունն ուղղված է երիտասարդության մասնակցության, սոցիալականացման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, երիտասարդության ներուժի ներգրավմանն ու դրա զարգացմանը՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ամրապնդմանը, սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացմանը:

2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտը, որպես սոցիալական կարևոր ոլորտ, շարունակում է մնալ ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Միջնաժամկետ հատվածում առողջապահության ոլորտում պետության քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ապահովելով հասանելի, արդիական, բարձր որակի առողջապահական ծառայությունների մատուցումը:

Քաղաքացիների համար առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով 2027–2029թթ. ընթացքում կիրականացվի առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի փուլային ներդրման շարունակական իրականացում՝ բնակչության նոր խմբերի ներառմամբ, որի արդյունքում կապահովվի առողջապահական ծառայությունների մատչելիության, հասանելիության և որակի բարձրացում, ինչպես նաև համակարգի ամբողջական ներդրում և համընդհանուր ընդգրկման ապահովում:

Մինչև առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ամբողջական ներդրումը կշարունակվի չապահովագրված անձանց բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը՝ առողջության ապահովման և բարելավման ծրագրերի շրջանակներում՝ 2024 թվականի հունվարից ներդրված օֆերտայի (չսահմանափակված բյուջեի) մեխանիզմի կիրառմամբ: Ծրագրի շրջանակներում կապահովվեն հիվանդանոցային և արտահիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնությունը, վերակենդանացման, վարակիչ, հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների բուժումը, ծննդօգնությունը, հեմոդիալիզը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական բժշկական ծառայությունները, այդ թվում՝ սրտի և գլխուղեղի սուր վիճակների բուժումը, չարորակ նորագոյացությունների վիրահատական, ճառագայթային և քիմիաթերապևտիկ բուժումը, առանձին լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները և համավճարային բուժական ծառայությունները:

Բնակչության առողջության պահպանման նպատակով որպես գերակա խնդիր շարունակվելու է դիտարկվել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վաղ հայտնաբերման ուղղությունների զարգացումը, որոնց շրջանակներում առողջապահության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման համար իրականացվող բարեփոխումներն ուղղված են լինելու առողջության առաջնային պահպանման օղակի արդիականացմանը, շարունակական զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը՝ պայմանավորված բնակչությանը հասանելի որակյալ բժշկական ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:

Մոր և մանկան առողջության պահպանման քաղաքականությունը կշարունակի մնալ առաջնահերթ՝ ապահովելով հղիների, ծննդկանների, նորածինների և երեխաների համար որակյալ բժշկական օգնության մատուցումը: Կշարունակվեն մայրական (վերարտադրողական), մանկական և նորածնային առողջության բարելավմանն ուղղված միջոցառումները և սկրինինգային ծրագրերի իրականացումը՝ նպատակ ունենալով բարելավել վերարտադրողական առողջությունը, խթանել ծնելիությունը, նվազեցնել մայրական և մանկական մահացությունը, պերինատալ կորուստները և կանխարգելել հաշմանդամությունը:

Առողջապահության ոլորտի հիմնական խնդիրներից է հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը՝ ապահովելով բուժման հասանելիության և արդյունավետության բարձրացում՝ դեղերի հասանելիության բարելավման և պալիատիվ ծառայությունների զարգացման միջոցով:

Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովման ոլորտում աշխատանքները կուղղվեն հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղերի հասանելիության ապահովմանը՝ դեղերի ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, պետական վերահսկողության կատարելագործման, ինչպես նաև հայրենական դեղարտադրության մրցունակության բարձրացման և զարգացման խթանման միջոցով:

Առողջապահական կադրային ներուժի զարգացման նպատակով կշարունակվեն բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանն ուղղված միջոցառումները: Միաժամանակ կներդրվեն մեխանիզմներ առողջապահական կադրերի տարածքային

հավասարակշռված բաշխման, մարզային առողջապահական կազմակերպությունների որակյալ մասնագետներով համալրման և մարզերում բժշկական գործունեության խրախուսման համար:

Առողջ ապրելակերպի խթանման ծրագրերը միտված կլինեն բնակչության առողջության ամրապնդմանը, անառողջ սնվելու սահմանափակմանը, ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև երեխաների և դեռահասների շրջանում առողջ վարքագծի ձևավորմանը:

Շարունակվելու են առողջապահության ոլորտի կապիտալ ներդրումները՝ մարզային առողջապահական կազմակերպությունների շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման, ինչպես նաև բժշկական հաստատությունների արդիականացման նպատակով:

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն:

Միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտի պետական քաղաքականության հիմնական թիրախներն են.

- Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներն են, որոնց նպատակը սոցիալապես անապահով ընտանիքների և առանձին խմբերի ներկայացուցիչների թիրախային դրամական աջակցության տրամադրումն է: Շարունակվելու է անապահովության գնահատման նոր համակարգի կիրառությունը ողջ հանրապետությունում,
- Ժողովրդագրական իրավիճակի բարելավում: Այդ նպատակով նախատեսվում է շարունակել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության ծրագրերը,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացում՝ հնարավորինս բացառելով խտրականության դրսևորումը նրանց հանդեպ: Այդ նպատակով միջոցառումներն ուղղված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացմանը,
- Խրախուսել մասնավոր կազմակերպությունների մուտքը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտ՝ ձևավորել մրցակցային միջավայր, ներդնել ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ, խթանել սոցիալական ծառայությունների բազմազանությունը,
- Բնակչության խոցելի խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերում, գործարարությունը խթանող միջոցառումների իրականացում, զբաղվածության կարգավորում, հասցեականության բարձրացում, աշխատաշուկայում տարբեր սոցիալական խմբերի անձանց մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, գործազրկության մակարդակի նվազում: Զբաղվածության շրջանակներում առաջնահերթության կարգով կիրականացվեն զբաղվածության ապահովման միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց համար՝ պատերազմի մասնակիցների, 2020 թվականի պատերազմական գործողությունների արդյունքում և 2023 թվականից Ղարաբաղից տեղահանված գործազուրկների, ինչպես նաև այլ խմբերի համար: Կյանքի

դժվարին իրավիճակում հայտնված անձանց համար կիրականացվեն Կառավարության ծրագրից և զբաղվածության ռազմավարությունից բխող միջոցառումներ,

- Կշարունակվեն բնակարանային ապահովման, այդ թվում նաև Ղարաբաղից առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների, սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրումը,
- Կիրականացվեն նաև Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցության միջոցառումներ, որոնց հիմնական նպատակն է տեղահանված անձանց սոցիալական և տնտեսական ներառումը՝ Հայաստանի Հանրապետությունում երկարաժամկետ բնակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու միջոցով,
- Հետևողականորեն կանխարգելել երեխաների մուտքը մանկատներ, ապահովել նրանց ընտանիք վերադարձը, ինչպես նաև սահուն կերպով կազմակերպել մանկատնից դուրս եկող երիտասարդների անկախ կյանքի կազմակերպման գործընթացը,
- Խնամքի ծառայությունների գծով շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների շարունակականության ապահովումը՝ խրախուսելով ծառայությունների պատվիրակումը մրցութային եղանակով ընտրված կազմակերպություններին, շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը և խնամքի ծառայությունների ապահիստիտուցիոնալացման գործընթացի համատեքստում այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը՝ ներգրավելով համայնքի ներուժը:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Շրջակա միջավայրի պետական քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով այն սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ:

Շրջակա միջավայրի կառավարման հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը: Ելնելով նշվածից՝ շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններն են՝

- ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը և ջրախնայող ժամանակակից մեթոդների կիրառումը՝ բացառելով ռեսուրսի գերշահագործումը,
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և պահպանությունը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունը և կառավարումը,
- անտառների կայուն կառավարումը, անտառածածկ տարածքների ընդլայնումը, անտառվերականգնումը և անատառապատումը, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացումը,
- կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացումը՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների,
- բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը,

- կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացի արդյունավետ իրականացումը,
- կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը,
- շրջակա միջավայրի կառավարման ոլորտում գործող միջազգային կառույցների հետ շարունակական համագործակցության ապահովումը, մասնակցությունը նոր նախաձեռնություններին,
- շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրմանը, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների հաշվանցման մեխանիզմի) մշակման և ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցումը ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դիրեկտիվներին և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնումը՝ ճանապարհային քարտեզով նախանշված գործողությունների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով,
- անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացումը,
- էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, էկոլոգիական գիտության դերի բարձրացումը:

5. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր:

ՀՀ կառավարությունը ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը սահմանում է որպես զինված ուժերի մարտունակության ապահովման և բարձրացման, տնտեսական աճի, գիտական և տեխնոլոգիական առաջընթացի առանցքային գործոններից մեկը:

Բարձր տեխնոլոգիաների, կապի և հեռահաղորդակցության, թվայնացման, ռազմարդյունաբերության և տիեզերական բնագավառի զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակներում նախատեսվում է.

- Նպաստել բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության որակական և քանակական բարելավում, տեխնոլոգիական ներուժի ներգաղթի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Չարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը, ինչպես նաև միջազգային հայտնի արքեթրացիոն ծրագրերին մասնակցելու համար տրամադրվող աջակցության ապահովումը,
- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տարբեր ձևաչափերով շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների միջև, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի օգտագործել

ինչպես սիյուռքի մասնագիտական ներուժն ու կարողությունները, այնպես էլ ունեցած հնարավորություններն ու կապերը,

- Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի առնվազն 80 %-ում լայնաշերտ (օպտիկամանրաթելային) կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ ապահովում,
- Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ռադիոէթերի շուրջօրյա վերահսկում և մինչև 100 % էթերի մաքրության ապահովում. այդ նպատակով շարժական և բազային ռադիոմոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրում,
- Միասնական թվային միջավայրի ձևավորում՝ թվային համակարգերի ներդրման և կայքերի արդիականացման միջոցով,
- Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, քաղաքացիների կյանքի որակի բարձրացման և պետական մարմինների հետ առնչվելու դյուրացման, ինչպես նաև միջազգային տնտեսական գործընթացներին արդյունավետ մասնակցելու նպատակով, զանգվածաբար կիրառել և զարգացնել թվային տեխնոլոգիաներ՝ բարձրացնելով կիրեռանվտանգության և ինտերնետ հասանելիության մակարդակը Հայաստանում,
- Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ շարունակվում է ավելացնել նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել արտադրական կարողությունների զարգացումը,
- Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից սեփական միջոցներով ստեղծած, արտադրած ապրանքի որոշակի սահմանափակ չափով փորձանմուշների արտադրության ապահովում՝ համալիր փորձարկումների անցկացման նպատակով,

Ոլորտի հիմնական թիրախներն են.

- Տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ կայուն աճի շարժիչ ուժը պետք է հանդիսանա նորարարությունը և առաջադեմ տեխնոլոգիաների ստեղծումն ու կիրառումը: Միաժամանակ Հայաստանի զարգացման հենասյունը կրթված, ստեղծագործ և ազատ քաղաքացին է, ուստի գիտելիքահենք տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է խրախուսել նորարարությունը և նախաձեռնողականությունը:
- Ապահովել տեխնոլոգիական ընկերությունների կողմից ստեղծված բարձրորակ կրթական ծրագրերի լայն կիրառումը, ինչպես նաև Հայաստանի տարբեր քաղաքներում գտնվող տեխնոլոգիական կենտրոններում և կրթական այլ հաստատություններում,
- Խրախուսել գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը, գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը՝ դրամաշնորհային ծրագրերի իրագործման և ներդրողների ներգրավման միջոցով,
- Ստարտափ էկոհամակարգի զարգացման և միջազգային շուկաներում հայկական ընկերությունների առաջխաղացման և ամրապնդման նպատակով օժանդակել ընկերություններին մասնակցել միջազգային հեղինակավոր արժեքերացիոն կազմակերպությունների ուսուցողական ծրագրերին,
- Աջակցել միջազգային շուկաներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների, նրանց ստեղծած արտադրանքի և ծառայությունների պատշաճ ներկայացմանը և միջազգային G2G (կառավարություն-կառավարության) և B2B (բիզնես-բիզնես) համագործակցության պլատֆորմների զարգացմանը,

- Տրամադրել պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին,
- Հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգում ու բարելավումը, ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմում, ռադիոէթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացում,
- Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում,
- տեղական, տարածաշրջանային կամ գլոբալ մասշտաբներով էլեկտրամագնիսական ռադիոհաճախականային խանգարումներին առնչվող խնդիրների լուծում:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մշակում և իրականացնում է՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացման, բնակչության տեղաշարժերի ընթացքում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման և պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման ոլորտներում պետական քաղաքականությունը: Մասնավորապես նախանշվել են ոլորտի հետևյալ հիմնական թիրախները.

- Երկրի ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տնտեսության և ազգաբնակչության պահանջների բավարարման որակի բարձրացման միջոցով՝ անվտանգ և արդյունավետ տրանսպորտային ծառայությունների ապահովումը: Այս ուղղությամբ կշարունակվեն ռազմավարական ուղենիշների և թիրախների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես կշարունակվեն ռազմավարական նշանակություն ունեցող Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի Քաջարան-Ագարակ, Քաջարանի թունելի մոտեցումների կառուցման և հիմնանորոգման աշխատանքները: Կմեկնարկեն ռազմավարական նշանակություն ունեցող Սիսիան-Քաջարան 60 կմ ճանապարհի՝ 27.1 կմ հյուսիսային հատվածի, Բարգուշատի թունելի (8.65 կմ) և 24.3 կմ հարավային հատվածի: Ներքին աղբյուրների հաշվին կիրականացվեն միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, միջին նորոգման, տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները, ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող կառույցների պահպանվածությունը:
- Քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղությամբ նախատեսվում է իրականացնել Երևանի մետրոպոլիտենի նորոգման, Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի Իսակով-Արշակունյաց ճանապարհի կառուցմանն ուղղվող աշխատանքները,
- Կշարունակվի համաֆինանսավորման սկզբունքով համայնքներին սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար միջոցների հատկացման գործընթացը, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից մասնակցային բյուջետավորման ընթացակարգով ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով հատկացումները համայնքներին (կընդգրկվեն բոլոր համայնքները),
- Կշարունակվեն ավիացիայի ոլորտում քաղաքականության իրականացումը: Կշարունակվի 2026 թվականից մեկնարկած ավիացիայի աջակցության հաստատված ծրագրով ֆինանսական

օժանդակության տրամադրումը այն ավիաընկերություններին, որոնք կփոխադրեն օդային ուղևորներին նոր ուղղություններից Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայաններ,

- Կշարունակվեն Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման 2026-2036թթ. կրկնակի երկարաձգման աշխատանքները: Տարածաշրջանային համագործակցության զարգացմանն ուղղված Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի և համապատասխան ենթակայանների գործարկմամբ լիովին նոր մակարդակի է բարձրանալու էլեկտրաէներգետիկական համակարգը: Հայաստանը դառնալու է տարածաշրջանում էլեկտրաէներգետիկ հանգույց՝ կապելով Իրանի, Վրաստանի և ԵԱՏՄ շուկաները: Կշարունակվեն Երևան քաղաքի թվով 36 հանրային շենքերում էներգաարդյունավետության բարձրացման և սեյսմիկ ամրացման աշխատանքները,

- Պետական քաղաքականությունը հանքարդյունաբերության ոլորտում ուղղված է թափանցիկության, հանրության առջև բարձր հաշվետվողականության ապահովմանը: Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման դեպքում երկիրը կարող է ստանալ տնտեսական արդյունքներ, որոնք կօգնեն ապահովել տնտեսական աճ,

- ՀՀ կառավարության կողմից կշարունակվի ոռոգման ոլորտում առկա խնդիրների լուծումը և վիճակի բարելավման նպատակով անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումների նախապատրաստումը և իրականացումը: Մասնավորապես կշարունակվի ոռոգման ջրի կայուն մատակարարումը, ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը: Բացի այդ, գործուն միջոցներ կծեռնարկվեն ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման այլ հնարավորությունների ստեղծման (ինքնահոս համակարգերի, օրվա կարգավորման ջրավազանների նախագծում, վերակառուցում և շինարարություն), ինչպես նաև գործող ջրամբարների պատշաճ շահագործման ուղղությամբ,

- ՀՀ կառավարությունը կշարունակի կոլեկտորադրենաժային ծառայությունների մատուցումը՝ խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացումը, «Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովումը, հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի, ռիսկի և կառավարման քարտեզների ու պլանների կազմում,

- Զրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծումը, մասնավորապես՝ խմելու ջրի որակի բարձրացումը, յուրաքանչյուր սոցիալական խմբի և շահառուի համար ծառայությունների հասանելիության ապահովումը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավումը և պահանջների բավարարումը,

- ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության ներքո կշարունակվի նաև պետական գույքի կառավարման ապահովումը, պետական գույքի մասնավորեցման, օտարման գործընթացներում հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, վաճառքի կազմակերպման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառումը, վարձակալության գործընթացի մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ իրականացումը, վարչարարության պարզեցումը և կրճատումը, ինչպես նաև անհատույց օգտագործման տրամադրման գործընթացում մրցակցային դաշտի ապահովումը:

7. ԷԿՈՆՈՄԻԿԱ

Առաջիկա տարիների տնտեսական զարգացման քաղաքականության հիմնական նպատակն է լինելու տնտեսական աճի շարունակական ապահովումը, Հայաստանի քաղաքացիների բարեկեցության շարունակական բարձրացումը՝ վերջիններիս տնտեսական կյանքում առավել ներառականության ապահովմամբ՝ զուգակցելով այն քաղաքացիների աշխատանքային եկամուտների բարձրացմամբ և ունակությունների ու հնարավորությունների կիրառման համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ:

Տնտեսական քաղաքականությունը միտված է լինելու տնտեսության ոլորտներում արտադրողականության աճի ապահովմանը՝ տնտեսության տեխնոլոգիական մոդեռնիզացիայի և թվային տնտեսության ձևավորման, ինչպես նաև գործարար միջավայրի շարունակական բարելավման ու օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործման միջոցով: Տնտեսական քաղաքականության վերջնարդյունքների ապահովումը հիմնված է լինելու ռազմավարական փաստաթղթերով նախատեսված միջոցառումների և գործիքակազմի ամբողջական կիրառման վրա՝ նպատակաուղղված օտարերկրյա և մասնավոր ներդրումների խրախուսմանը, գործարար միջավայրի և ձեռներեցության զարգացմանը, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտների դիվերսիֆիկացմանն ու զարգացմանը:

Արդյունաբերություն

Արդյունաբերական քաղաքականությունը միտված է լինելու արտադրողականության աճի և միջազգային մրցունակության բարձրացման ապահովմանը՝ տեխնոլոգիաների վերազինման, գիտելիքի կլանման, արտահանման կարողությունների զարգացման, լոգիստիկ խնդիրների մեղմման, ներքին և միջազգային շուկաների հասանելիության, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության բարձրացման միջոցով:

Միջնաժամկետ հատվածում շարունակվելու են տնտեսության տեխնոլոգիական արդիականացմանն ուղղված միջոցառումները՝ նպատակ ունենալով խթանել բարձր ավելացված արժեք ստեղծող արտադրությունների զարգացումը, արտադրական կարողությունների ընդլայնումը և նոր աշխատատեղերի ստեղծումը: Կարևորվելու է նաև արտադրական համագործակցության և ճյուղային զարգացման խթանումը՝ նպաստելով տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Առեվտուր և արտահանում

Արտաքին տնտեսական գործունեության զարգացումը շարունակում է մնալ պետության առաջնահերթ ուղղություններից մեկը: Այս համատեքստում իրականացվելու է արտահանման խրախուսման և դիվերսիֆիկացման քաղաքականություն, որի նպատակն է ընդլայնել ինչպես արտահանվող ապրանքների տեսականին, այնպես էլ նոր շուկաները:

Արտահանման խթանումը և շուկաների դիվերսիֆիկացումը ուղղված են հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, արտահանման ծավալների կայուն աճի ապահովմանը, ինչպես նաև թիրախային շուկաներում առկա խոչընդոտների վերացմանը, ինչի արդյունքում հնարավոր կլինի հասնել ՀՆԱ-ի տեսակարար կշռում ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալի աճին:

Ռազմավարական փաստաթղթերով նախատեսված միջոցառումները նպատակ ունեն ստեղծել առավել բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքների, ծառայությունների և մտավոր գործունեության արդյունքների արտահանման համար: Այս քաղաքականությունը կնպաստի արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների արդյունավետության բարձրացմանը և դրանց դիրքերի ամրապնդմանը միջազգային շուկաներում:

Փոքր և միջին ձեռնարկավորություն

Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և կայուն զարգացման ապահովման կարևորագույն մասն են կազմելու փոքր և միջին ձեռնարկությունները: Քաղաքականությունն ուղղված է լինելու ՓՄՁ սուբյեկտների արտադրողականության բարձրացմանը, ֆինանսների հասանելիության ապահովմանը, նորարարական և միջազգայնացման կարողությունների զարգացմանը, թվային և տեխնոլոգիական վերափոխմանը:

Նախատեսվում է շարունակել ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, վարկային երաշխավորությունների տրամադրման, նորարարության խթանման և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտների աջակցության ծրագրերը՝ առանձնահատուկ շեշտադրելով կանանց և երիտասարդների ձեռներեցության խթանումը:

Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և կայուն զարգացման ապահովման կարևորագույն մասն են կազմելու ՓՄՁ սուբյեկտները: Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է ՓՄՁ սուբյեկտների մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնել 55%-ի, իսկ տնտեսվարողների մոտ արտադրողականությունը բարձրացնել՝ հասցնելով 12% ՀՆԱ/ժամ մարդ:

Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության ոլորտի ուժեղացման, կազմակերպությունների մրցունակության աճի, ներքին և միջազգային թիրախային շուկաներում ներկայացվածության բարձրացման նպատակով նախատեսվում է նպաստել ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրական հմտությունների, նորարարական և միջազգայնացման կարողությունների զարգացման, թվային և տեխնոլոգիական վերափոխման, վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով ֆինանսների հասանելիության ապահովմանը՝ առանձնապես շեշտադրելով նորարար և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին, ինչպես նաև կանանց և երիտասարդների ձեռներեցության խթանումը:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության՝ որպես տնտեսության գերակա ճյուղի պետական քաղաքականությունն ուղղված է լինելու զբոսաշրջության զարգացման տեսլականի իրագործմանը, կայուն, համաչափ և ներառական տարածքային տնտեսական զարգացման ապահովմանը, ազգային եկամտի ավելացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և Հայաստանի միջազգային ճանաչելիության բարձրացմանը:

Քաղաքականությունը միտված է լինելու հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանը և Հայաստանի դիրքավորմանը որպես որակյալ զբոսաշրջային ծառայություններ առաջարկող երկրի՝ զարգացնելով մշակութային, գաստրոնոմիական, գինու, արկածային և ձմեռային զբոսաշրջության ուղղությունները:

Գյուղատնտեսություն

Տնտեսական քաղաքականությունը միտված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանն ու ազգաբնակչությանն անվտանգ սննդամթերքով ապահովմանը, ինչպես նաև անասնապահության և բուսաբուծության ոլորտների զարգացմանը:

Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման նպատակով շեշտադրվելու է գյուղատնտեսության ոլորտում նոր, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումն ու տեխնոլոգիական լուծումների կիրառումը: Կարևորվելու են գյուղատնտեսական արտադրանքի իրացմանն ու արտահանման խթանումը, վերամշակողների գործունեության զարգացումը և եկամուտների ավելացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Նշված քաղաքականության իրագործման արդյունքում նախատեսվում է ավելացնել ինտենսիվ այգիների տարածքները, շարունակել գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրավճարների սուբսիդավորումը, գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների արդիականացումը, ժամանակակից պահվածքի պայմաններին համապատասխան «խելացի» անասնաշենքերի կառուցման և այդ պահվածքի պայմաններին հարմարված բարձր մթերատու տոհմային կենդանիների ձեռքբերման աջակցությունը, ջրի խնայող համակարգերի ներդրմամբ աջակցել արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացմանը:

Ներդրումներ և կապիտալի շուկա

Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից է ներդրումային միջավայրի բարելավումը, արտահանման շուկաների դիվերսիֆիկացումը և կապիտալի շուկայի զարգացումը: Չնայած վերջին տարիներին արձանագրված դրական միտումներին՝ Հայաստանի կապիտալի շուկան շարունակում է գտնվել ձևավորման փուլում, և այս շրջանակում շարունակվելու են կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված պետական նախաձեռնությունները:

Մասնավորապես, շարունակվելու են թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագրերը՝ պարտատոմսերի և բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման, ինչպես նաև միջազգային վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման խթանման նպատակով:

Որակի ենթակառուցվածք

Որակի ենթակառուցվածքի բարելավումն իրականացվելու է չափագիտական կարողությունների զարգացման, փորձարկման կարողությունների ընդլայնման նպատակով լաբորատորիաների վերազինման, բացակայող անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան արդյունաբերական չափագիտական կարողությունների ստեղծման միջոցով (ազգային էտալոններ, տրամաչափարկման լաբորատորիաներ և այլն)՝ վերջնարդյունքում ունենալով միջազգայնորեն ճանաչելի համակարգ:

Շարունակվելու են նաև հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքները՝ տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ ճանաչման համաձայնագրերի կնքման միջոցով, ինչը կնպաստի հայկական արտադրանքի մրցունակության բարձրացմանը և արտադրողների ու ներմուծողների ծախսերի կրճատմանը:

8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՄԺԾԾ ժամանակահատվածում արդարադատության ոլորտում շարունակաբար իրականացվելու է պետական քաղաքականությունը, մասնավորապես՝ հարկադիր կատարման, հակակոռուպցիոն, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, արբիտրաժի և հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում:

Մասնավորապես, միջնաժամկետ հատվածում դատաիրավական ոլորտում աշխատանքներն ուղղված են լինելու էլեկտրոնային արդարադատության, ժողովրդավարական ինստիտուտների (մասնավորապես՝ սահմանադրական, ընտրական) և դատական համակարգի բարեփոխումների, քրեաիրավական,

քաղաքացիական և քաղաքացիական դատավարության, վարչական և վարչական դատավարության, սնանկության, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների, փաստաբանության, հարկադիր կատարման, նոտարիատի և արդարադատության համակարգի ընդհանուր զարգացմանը:

Սահմանադրական բարեփոխումների համատեքստում նախատեսվում է ապահովել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի, դրա քարտուղարության և մասնագիտական հանձնաժողովի կամ առանձին մասնագետների գործունեությունը՝ նոր Սահմանադրության նախագծի մշակումն իրագործելու համար: Դատական համակարգի բարեփոխումները ուղղված են լինելու դատական իշխանության անկախության գործիքակազմերի կատարելագործմանը, իսկ դատավարական ոլորտի բարեփոխումները՝ արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

Հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտի առաջնահերթություն շարունակելու են մնալ կոռուպցիայի կանխարգելումը, հակակոռուպցիոն իրավապահ մարմինների անկախությունն ու հաշվետվողականությունը, գործարար բարեվարքությունը, ինչպես նաև իրազեկման արշավների միջոցով հանրային վստահության ամրապնդումը: Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է բարելավել հակակոռուպցիոն ոլորտի օրենսդրությունը և կատարելագործել բարեվարքության համակարգի տարրերի խախտման համար նախատեսված պատասխանատվության մեխանիզմները: Նախատեսվում է ապահովել ռիսկահեն կառավարման համակարգի առկայություն՝ ոլորտային կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց նվազեցման միջոցով, հակակոռուպցիոն իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների և ռեսուրսների ամրապնդում, ազդարարների պաշտպանության համակարգի ամրապնդում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և ակտիվների կառավարման համակարգի առկայություն, հանրային ծառայողի օրինավոր և բարեվարք կերպարի առկայություն, Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) շարունակական աճ:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվելու են մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանվածության և մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, բոլորի՝ օրենքի առջև հավասարության երաշխավորում, խտրականության դրսևորումների կանխում, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործում Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն, օրենսդրական երաշխիքների ամրագրում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակների ընդլայնում:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում բարեփոխումների իրականացման հիմնական ուղենիշներն են Պրոբացիայի ծառայության կողմից արդյունավետ հաշտարարություն իրականացման ապահովումը, Պրոբացիայի ծառայության էլեկտրոնային հսկողության սարքավորումների ձեռքբերումը, քրեակատարողական հիմնարկներում պատժի կրման պայմանների բարելավումը, այդ թվում՝ շենքային պայմանների բարելավումը, խոցելի խմբերի ազատազրկման պայմանների կարիքների լուծման ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, ոլորտային աշխատողների ուսուցումն և վերապատրաստումը, սոցիալական պայմանների բարելավումը, քրեակատարողական հիմնարկների կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, ազատությունից զրկված անձանց և պրոբացիայի շահառուների զբաղվածության, կրթության, վերասոցիալականացման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, պատժի և վերահսկողության անհատական պլանավորումը, ազատությունից զրկված անչափահասների կրթություն ստանալու իրավունքի շարունակականության ապահովումը, ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացման շարունակականության ապահովում:

9. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և պետական շահերի պաշտպանությանն ու ամրապնդմանը, Հայաստանի շուրջ անվտանգային միջավայրի բարելավմանը, այլ պետությունների հետ երկկողմ հարաբերություններում փոխշահավետ համագործակցության խորացմանը՝ բալանսավորված ու բալանսավորման քաղաքականության մոտեցումների համատեքստում, միջազգային կազմակերպությունների օրակարգում ՀՀ առաջնահերթությունների ներառումը, առաջնորդը և հետագա սպասարկումը:

Հիմնական թիրախներն են՝ տարածաշրջանային խաղաղության և անվտանգության շարունակական ամրապնդումը, Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորումը և խաղաղության ինստիտուցիոնալացումը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ամբողջական կարգավորումը, տարածաշրջանային փոխկապակցվածության խորացումը, տնտեսական ենթակառուցվածքների ապաշրջափակումը և դրանց գործունեության ապահովումը, ժողովրդավարական արժեքների, օրենքի գերակայության և մարդու իրավունքների շարունակական ամրապնդումը, երկկողմ քաղաքական, տնտեսական և այլ ոլորտային համագործակցության ամրապնդումը, առևտրի ծավալների ավելացումը, ՀՀ տեխնոլոգիական զարգացումը, նորարարական և ռազմավարական գործընկերությունների հաստատումը, շարունակական զարգացումը, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությունը, միջազգային կազմակերպություններում դրական օրակարգի ձևավորումը և դրա շրջանակներում արտաքին քաղաքական, անվտանգային, մարդու իրավունքների, կայուն զարգացման, մշակութային և այլ ոլորտներին առնչվող ՀՀ շահերի առաջնորդումը:

10. ՖԻՆԱՆՍՆԵՐ

Առաջիկա տարիներին ֆինանսների ոլորտում հիմնական նպատակը լինելու է հանրային ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության միասնական պետական քաղաքականության մշակումը, համակարգումը և մոնիտորինգի ապահովումը, մասնավորապես.

- հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, ներառյալ՝ բյուջետային գործընթացի և հանրային ներդրումների կառավարումը, բյուջետային ծրագրերի գնահատումը, հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների շարունակական վերապատրաստումը,
- պետական ֆինանսների և պետական պարտքի արդյունավետ կառավարումը, որի նպատակն է ՀՀ կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը, որի արդյունքում կապահովվի ՀՀ կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը,
- պետական գնումների արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացումը, ապահովելով հանրային միջոցների ծախսման արդյունավետությունը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:

11. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության ոլորտն իր մեջ ընդգրկում է ՀՀ զինված ուժերի ռազմավարական ծավալման ապահովող մարտական պատրաստականության պահպանման, արտաքին թշնամուց ՀՀ պետական սահմանների պաշտպանության ապահովման, արդիական պահանջներին համապատասխանող ճկուն

և ժամանակակից ռազմական առողջապահական համակարգի ապահովման, զինված ուժերի պատրաստության մակարդակի բարձրացման, միջազգային կայուն և բազմակողմ ռազմաքաղաքական հարաբերությունների ամրապնդման շրջանակներում իրականացվող միջոցառումները (հույժ գաղտնի):

12. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացություն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության նպատակներն են հետախուզական գործունեությունը, հակահետախուզական գործունեությունը, ռազմական հակահետախուզական գործունեությունը, պետական սահմանի պահպանությունը և պայքարը հանցագործությունների դեմ: Այս առումով վերջնական արդյունքներն են ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկությունների ստացումը և կանխարգելիչ միջոցառումների անցկացումը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտումը, կանխումը և խափանումը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտումը, կանխումը և խափանումը, ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության ապահովումը, սահմանախախտումների կանխումը և խափանումը:

13. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական պահպանության ծառայությունը իրականացնում է պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ՝ կիրառելով իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումներ:

Իր իրավասությունների շրջանակում ծառայությունը մասնակցում է ահաբեկչության դեմ պայքարին, պաշտպանում է պահպանվող օբյեկտները, կանխում և խափանում է դրանցում հանցագործություններն ու այլ իրավախախտումները, ինչպես նաև ապահովում է սահմանված անցագրային ռեժիմն ու կարգը: Վերջնական արդյունքն է հատուկ պետական պաշտպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովումը:

14. ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայության առաքելությունն է Հայաստանի Հանրապետությանն ու հասարակությանը սպառնացող արտաքին վտանգների կանխատեսումը, կանխարգելումը, հակազդումը ու պաշտպանությունը՝ քաղաքական որոշումներ կայացնողներին վստահելի, արժանահավատ և կիրարկելի հետախուզական տեղեկությունների տրամադրման ու հատուկ միջոցառումների իրականացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զարգացման համար անհրաժեշտ քաղաքական, ռազմական, տնտեսական, բնապահպանական բնույթի արտաքին հետախուզական տեղեկությունների հավաքումն ու վերլուծությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենսական շահերին սպառնացող արտաքին վտանգները խափանող գործողություններ:

15. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

ՀՀ ներքին գործերի նախարարությունը ներառում է երեք ենթակա խոշոր ծառայություններ՝ ոստիկանություն, փրկարար ծառայություն, միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կարևորագույն հայեցակարգային խնդիրը, ոստիկանությունում մեկնարկած բարեփոխումների նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է:

Նշված նպատակադրումների իրականացմանն ուղղված միջոցառումները, որոնք ներառված են ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունում, հանդիսանալու են ոստիկանության գործունեության ոլորտում առաջիկա տարիներին նախատեսվող բոլոր բարեփոխումների հիմքը:

Վերափմաստավորվել են քրեական և համայնքային ոստիկանության տարածքային մարմինների կազմակերպական ձևն ու գործառույթները:

Պարեկային ծառայությունում կին ծառայողների թվաքանակը նախատեսվում է ավելացնել՝ կարևորելով ոստիկանությունում գենդերային հավասարության ապահովման խնդիրը, որի նպատակով անցկացվում են կին ծառայողների թիրախային ընդունելություններ:

Ձևավորվել է մեկ միասնական կրթահամալիրը, որի նպատակն է կրթահամալիրի կրթական ծրագրերի իրականացումը նպատակաուղղել ոստիկանության գվարդիայի, պարեկային ծառայության, քրեական ոստիկանության, համայնքային ոստիկանության, փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման կենտրոնի կադրային պահանջարկը բավարարելուն, սկսած նշված համակարգեր առաջին անգամ ծառայության անցնելուց, մինչև ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացում:

16. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների ռազմավարական ծրագրերով սահմանված ՊԵԿ առաքելությունն է ապահովել արդար և թափանցիկ հարկային և մաքսային միջավայր, խթանել կամավոր կարգապահությունը և ծառայել քաղաքացիներին ու բիզնեսին՝ հանուն Հայաստանի կայուն և առաջանցիկ զարգացման: Այս առաքելությանը հասնելու համար սահմանված ռազմավարական նպատակներն են՝

- Մատուցվող ծառայությունների որակի բարելավումն ու ծառայությունների շրջանակի ընդլայնումը, հարկային և մաքսային վարչարարության թվայնացումն ու դրանց կատարելագործումը, հարկային և մաքսային կարգապահության բարելավման ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինստիտուցիոնալ կարողությունների կատարելագործումը, որոնք իրենց հերթին կնպաստեն կամավոր կարգապահության

մակարդակի բարձրացմանը, հետևաբար՝ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի ապահովման կայունությանը:

- Հարկային և մաքսային ծառայությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովումը նպաստում է ՊԵԿ բնականոն գործունեության անխափան ընթացքին և որակյալ ծառայությունների մատուցմանը, հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը,
- Փորձաքննության ծառայությունները հնարավորություն են ընձեռնում ապրանքների ճշգրիտ դասակարգման, ինչն ապահովում է հսկողության օբյեկտիվությունը և արդյունավետությունը, նպաստում հարկային և մաքսային պարտավորությունների կատարումից խուսափման դեպքերի կանխարգելմանը,
- Յուրաքանչյուր տարի հարկային և մաքսային ծառայողները վերապատրաստվում են: ՊԵԿ-ի առջև դրված խնդիրների արդյունավետ իրագործման տեսանկյունից կարևոր է անձնակազմի մասնագիտական կարողությունների պարբերաբար բարելավումը, թիրախային և արդիական ծրագրերով մասնագիտական որակավորման բարձրացումը,
- ՀՀ ՊԵԿ-ի նոր շենքերի և շինությունների շինարարությունը (նախագծումը) նպաստում է համակարգի գործունեության արդյունավետությանը, բարելավում է աշխատակիցների աշխատանքային պայմանները: Իր կարևոր դերն ունի սահմանային անցակետերում վերափոխված շենքային պայմանների բարելավումը և տեխնիկական հագեցվածության ապահովումը, ինչը հնարավորություն կտա արդյունավետ մաքսային հսկողության՝ ի շնորհիվ կենտրոնացված կառավարման և թիրախավորման գործիքների, մաքսային վարչարարության պարզեցմամբ կնպաստի սահմանահատման գործընթացի դյուրինացմանն ու այդ մասով պահանջվող ժամանակի կրճատմանը: Մեղրիի անցակետի արդիականացման շրջանակներում մաքսային հսկողության ժամանակակից ընթացակարգերի ներդրման միջոցով կապահովվի սահմանահատման դյուրինացված ու միաժամանակ վերահսկելի գործընթացը, կընդլայնվի միջպետական տնտեսական համագործակցությունը: Բացի այդ, նախատեսվում է Սյունիքի մարզում և Երևան քաղաքում կառուցել նոր մաքսային և լոգիստիկ կենտրոններ:

17. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

Անշարժ գույքի ոլորտում իրականացվում է գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցումը, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրումը, գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում՝ պետական կառավարման և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքների, գեոդեզիական և քարտեզագրական գործունեության վերահսկողության, պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների, ՀՀ և Երկրագնդի մնացած տարածքների գեոդեզիական, տեղագրական և քարտեզագրական տվյալների բանկի կառավարման իրականացում, գեոդեզիական և քարտեզագրական գործունեության սուբյեկտներին ամբողջական տեղեկությունների տրամադրում իրենց առնչվող տարածքների գեոդեզիական և քարտեզագրական ուսումնասիրվածության մասին:

Հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կոմիտեն 2027-2029 թվականներին ամբողջապես կփորձի անցնելու առցանց ծառայությունների հիմնականում ինքնաշխատ համակարգի՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջանառությունից: Համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով կշարունակվեն իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ, որի ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքներն առցանց,

ինքնաշխատ, անթուղթ անշարժ գույքի կադաստրի ստեղծումն է: Նախատեսվում է իրականացնել թվային արխիվի ամբողջականացում և ընթեռնելիության բաժրացում:

Անշարժ գույքի շուկայի բարելավման և զարգացման նպատակով անշարժ գույքի գործակալների (բրոքերների) գործունեությունը կարգավորող ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորումից բխող ոլորտին անհրաժեշտ գործիքակազմի ներդրում՝ ծրագրային ապահովում անշարժ գույքի գործակալների համար տեղեկատվական բազային համակարգի ստեղծում, ավտոմատացված համակարգի ներդրում:

Աշխատանքները շարունակվում են նաև հանրապետության հասցեների վերջնական բազան ամբողջական և ավարտուն տեսքի բերելու ուղղությամբ:

Ռազմավարության պահանջների խթանումը գեոդեզիական, քարտեզագրական և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա ՀՀ ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումն է, որի կապակցությամբ աշխատանքները շարունակվում է:

18. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Վարչապետի աշխատակազմի ռազմավարական նպատակն է կառավարության, վարչապետի և փոխվարչապետերի գործունեության աջակցությունը՝ ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների ու հանձնարարականների կատարման վերահսկողության ապահովումը, աշխատակազմին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը՝ աշխատակազմի խնդիրների և գործառույթների անվերապահորեն կատարման, դրանց կատարման արդյունավետության բարձրացման և աշխատանքների կատարման կանոնակարգերի կատարելագործման ճանապարհով:

Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվում է նաև ՀՀ կառավարությանը ենթակա տեսչական մարմինների գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված կազմակերպչական բնույթի գործառույթները:

Վարչապետի աշխատակազմի գործունեության ուղղություններից են նաև՝

- Քաղաքական կյանքում հասարակության ընդգրկվածության ապահովման նպատակով աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների շրջանակներում հասարակական կազմակերպություններին աջակցություն, այդ թվում՝ թվով 12 ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին, որոնք իրականացնում են՝ կրթական, մշակութային միջոցառումներ, տոնախմբություններ, զանազան քննարկումներ,
- Քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ապահովում, մասնավորապես քաղաքացիական ծառայողների վերապատրաստման իրականացում՝ պետական համակարգում պատրաստված և մրցունակ մասնագետներ ունենալու համար,
- Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի պահպանման, արդիականացման և զարգացմանն աջակցություն,
- Մեծ կարևորություն տալով Ազգային ինքնության պահպանմանը՝ տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացման ապահովում,

- Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացման և պաշտպանության, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովման գործընթացում Արբիտրաժային և այլ վեճերի շրջանակներում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական, փորձագիտական ծառայությունների, վեճը լուծող հաշտարարի ծառայությունների, ՀՀ շահերից բխող խորհրդատվական բնույթի ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարման ապահովում:

ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը, որը նպատակաուղղված է լինելու հայ ինքնության պահպանմանը, հայրենադարձությանն ու Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրմանը, սփյուռքի մարդկային ներուժի վերհանմանն ու քարտեզագրմանը, աշխարհասփյուռ հայության մարդկային, մտավոր, տնտեսական ներուժի՝ հայրենիքի կայուն զարգացման նպատակի շուրջ համախմբմանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման համար կարևորվում է ամուր կապերի հաստատումը՝ սփյուռքի հետ գործընկերության, ծրագրերի և միջոցառումների շնորհիվ:

Այսօր սփյուռքում հայության առջև ծառայած հիմնական մարտահրավերներից մեկը հայ երիտասարդների մեջ ազգային ինքնության պահպանումն է, նրանց ընդգրկմամբ համահայկական միասնական օրակարգի ձևավորումը:

Հայաստան-Սփյուռք կապերի ընդլայնման և բարելավման համատեքստում անհրաժեշտ է խթանել համայնքային կառույցների գործունեությունը, դրանցում սփյուռքահայ երիտասարդների ներգրավվածությունը:

Համահայկական օրակարգերի ստեղծման հարցում կենսական է համայնքային գործիչների պատրաստումը՝ նրանցում առաջնորդի, համայնքների ղեկավարման կարողությունների և հմտությունների զարգացումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում կարևորվում է սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավումը Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացմանն ու հզորացմանը, որը կնպաստի նաև մասնագիտական հայրենադարձությանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության մեջ առանցքային նշանակություն ունեն նաև հանրային կապերն ու աշխարհասփյուռ հայության իրազեկվածության ապահովումը: Այս համագործակցության հանրայնացումն ունի թիրախային երկու լսարան՝ ներքին կամ ներհայաստանյան և արտաքին կամ նպատակաուղղված Սփյուռքին՝ հայ համայնքներին, ինչպես նաև միջազգային հանրությանը:

Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առաջնահերթություններից է հանդիսանում հայրենադարձության խթանումը, որը լուծում է պետության առջև ծառայած անվտանգային, տարածքային համաչափ զարգացման, տնտեսական առաջադիմության, ժողովրդագրական, ազգային ինքնության պահպանման, համազգային ներուժի համախմբման և այլ ռազմավարական խնդիրներ: Այս համատեքստում կարևորվում է Հայրենիք տեղափոխվող սփյուռքահայերի համար արդյունավետ ինտեգրման կազմակերպումը:

Սփյուռքի հետ գործակցության կարևոր ուղղություն է վտանգված համայնքների խնդիրներին արագ արձագանքելու կարողությունների զարգացումը, համազգային խնդիրների լուծման գործում սփյուռքահայերի մասնակցությունն ապահովելու համար բարենպաստ պայմանների ձևավորումը:

19. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ոլորտը կարգավորվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինը:

Հանրային հեռարձակողի խորհրդի հիմնական թիրախներն են՝

- Ստեղծել և տարածել հանրային նշանակության վստահելի տեսալսողական (մեդիա) բովանդակություն,
- Ապահովել տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային մեդիաբովանդակության բազմազանությունը,
- Տրամադրել հավաստի, անաչառ, բազմակողմանի լրատվություն և որակյալ վերլուծություն՝ Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ:
- Ապահովել խոսքի ազատության, բազմակարծության, այլընտրանքային կարծիքի արտահայտման հարթակ:

20. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության ոլորտում իրականացվող ծախսային գերակայությունները ուղղված են մարդու կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծմանը: Ոլորտում առաջնահերթ ռազմավարական նպատակներից են՝

- միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ շինարարական նորմերի, տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների, շինարարական նորմերի կանոնների հավաքածուների և այլ նորմատիվ փաստաթղթերի մշակումն ու բազայի ընդլայնումը՝ նպատակ ունենալով խթանել տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանն ու անվտանգության պահանջների ապահովմանը,
- քաղաքաշինական քաղաքականության բարեփոխումների հետևողական իրականացումը՝ բնակավայրերի կառուցապատմանն ու տարածական զարգացմանն առնչվող հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ, երկրի կայուն տարածական զարգացման ռազմավարության մշակումն ու իրագործումը, սոցիալ-տնտեսական գործոնների, ինժեներատեխնիկական, ինժեներատրանսպորտային, բնական պայմանների ու պաշարների, էկոլոգիական իրավիճակի, մշակութային ժառանգության, աշխարհագրական ու տարածաշրջանային այլ առանձնահատկությունների հաշվառմամբ,
- քաղաքաշինության բնագավառում պետական ծրագրերի իրականացման ապահովումը, որը միտված կլինի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի փոխարեն նոր բնակելի ֆոնդի շարունակական ձևավորմանը:

21. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վիճակագրական կոմիտեն ՀՀ պաշտոնական վիճակագրության գլխավոր արտադրողն է և համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության

մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ողջ գործունեությունը, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի:

Պաշտոնական վիճակագրությունը հնարավորության սահմաններում առավելագույնս ճշգրիտ, ոչ հակասական, արժանահավատորեն արտացոլում է առկա իրողությունը և աղբյուրների, մեթոդների ու ընթացակարգերի ընտրության հարցերում հիմնվում է գիտական չափանիշների վրա:

Արմատատի տվյալները միտված են նպաստելու ամուր ժողովրդավարություն և գործունակ տնտեսություն կառուցելու ու հանրային կյանքում տեղի ունեցող փոփոխություններին հանրությանն իրազեկելու ջանքերին:

Ոլորտի քաղաքականության հիմնական թիրախն է՝ ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում՝ միջազգային վիճակագրական ստանդարտների (ներառյալ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը) պահանջներին համապատասխան:

22. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22.1. ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱՉՄ

Հանրապետության նախագահի աշխատակազմի միջնաժամկետ նպատակներն են.

- Հանրության կողմից Հանրապետության նախագահի և նրա աշխատակազմի գործառույթների հստակ ընկալում, հանրության վստահության ձեռք բերում և ամրապնդում,
- Նոր գաղափարներ գեներացնող և ռազմավարական ծրագրեր մշակող լուկոմոտիվի դերի ստանձնում և այդ դերի ճանաչելիություն հանրության կողմից,
- ՀՀ-ի և սփյուռքի, ՀՀ-ի և այլ երկրների միջև առանձնահատուկ կամուրջի դերի ստանձնում և այդ դերի ճանաչելիություն հանրության կողմից:

22.2. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական կառավարման երկիր է, և Ազգային ժողովը ոչ միայն ժողովրդի ներկայացուցչական մարմինն ու Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունն է, այլև օժտված է իրականացնելու սահմանադրությամբ իրեն վերապահված գործադիր իշխանության գործունեության վերահսկողական գործառույթ: Որպես լեգիտիմ և ժողովրդավար խորհրդարան՝ Ազգային ժողովը ձգտում է հնարավորինս բաց և թափանցիկ լինել հանրության առջև՝ ապահովելով ՀՀ-ում արդյունավետ օրենսդրական դաշտ:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմն իր կառուցվածքով և գործառույթներով ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրականացնում է ՀՀ Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Ազգային

Ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովումը:

22.3. ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ոլորտում ՀՀ դատախազության կողմից միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ.

- կոռուպցիոն բնույթի և կազմակերպված հանցագործությունները ժամանակին հայտնաբերելու և բացահայտելու հարցում այլ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ,
- կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների, օրենսդրական թերի կարգավորումների հայտնաբերման ուղղությամբ,
- կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ուղղությամբ,
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ,

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- շարունակվելու են միջոցներ ձեռնարկվել՝ ուղղված ազատագրկման վայրերում կոռուպցիոն երևույթների հայտնաբերմանը և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուն,
- ուժեղացվելու է հսկողությունը ազատագրկման վայրերում պահվող անձանց հիմնարար իրավունքներն ապահովելու նկատմամբ,
- պարբերաբար ուսումնասիրվելու և ամփոփվելու է պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության ոլորտում դատախազական հսկողության պրակտիկան:

Դատարանում մեղադրանքի պաշտպանության և վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- բարձրացվելու է դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը,
- ապահովվելու է մեղադրանքի պաշտպանության գործառույթի ինքնուրույնությունը և ակտիվությունը՝ մինչդատական վարույթից դրա անբաժանելիությունը չափավոր բացառելու միջոցով,

- վեր են հանվելու մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գործառույթների իրականացման հետ կապված իրավակարգավորման խնդիրները,
- ապահովվելու է գործի ելքի վրա ազդող դատավարական գործողությունների՝ մեղադրանքը փոփոխելու և մեղադրանքից հրաժարվելու լիազորությունների օրինականությունը,
- ուժեղացվելու է վերահսկողությունը դատական ակտերի բողոքարկման ոլորտում:

Պետական շահերի պաշտպանության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ակտիվացվելու է պետության գույքային և ոչ գույքային շահերի և հանցագործությամբ պետությանը ուղղակի պատճառված գույքային վնասի հատուցման հայց հարուցելու համար անհրաժեշտ ուսումնասիրությունների կատարման պրակտիկան,
- բարձրացվելու է դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից պետությանը պատճառված վնասի հատուցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով իրականացվելու են հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություններ,
- ուսումնասիրության արդյունքներով դիմումներ են ներկայացվելու առաջին ատյանի դատարան՝ հայցի նախնական ապահովման միջոցներ, ինչպես նաև ապացույցների նախնական ապահովում կիրառելու մասին,
- ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա կազմվելու են ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություններ, հարուցվելու են գույքի քաղաքացիական բռնագանձման հայցեր, կնքվելու են հաշտության համաձայնություններ,
- նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով վերսկսվելու են ավարտված ուսումնասիրությունները:

22.4. ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՀ քննչական կոմիտեն՝ որպես նախաքննություն իրականացնող մարմին պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք հայտնաբերվի և ենթարկվի պատասխանատվության: ՀՀ քննչական կոմիտեի քննիչները քրեական վարույթներով միջդատական վարույթի իրականացումը պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են օրենքով իրենց վերապահված

բազմաթիվ քննչական գործողություններ՝ հարցաքննություններ, խուզարկություններ, զննություններ, առգրավումներ, անձանց կամ իրերի ճանաչումներ, քննչական փորձարարություններ, նշանակում են տարաբնույթ փորձաքննություններ և այլն: Գործունեության վերջնական արդյունքը՝ քննության բազմակողմանիության, լրիվության, օբյեկտիվության և արդյունավետության, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնարար ազատությունների, անձնական անձեռնմխելիության և մյուս իրավունքների պաշտպանության ապահովումն է, ինչպես նաև նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների բացառումը, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովումը, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերի լուծումը, կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների բացահայտմանն ու դրանց կանխմանն ուղղված գործողությունների իրականացումը:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է քրեական վարույթներով միջդատական վարույթի իրականացումը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնել թարգմանության, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով: Բացի այդ քննչական կոմիտեի գործունեության ընթացքում քննիչների վերապատրաստման և պատրաստման գործընթացն ապահովելու համար նրանց ներգրավվում են մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում:

22.5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության իրավակարգում ապահովելով Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, որպես ռազմավարական առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

Հիմնական գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներագրել, նրանց իրագործման ռազմավարությունով ՀՀ սահմանադրական դատարանը հետամուտ կլինի հետևյալ արդյունքներին, մասնավորապես՝

Օրենքով սահմանված կարգով որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև վավերացումը որոշել միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, լուծել հանրաքվեների հետ կապված վեճերը:

22.6. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես անկախ սահմանադրական ինստիտուտ, հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները.

- անհատական բողոքների և դիմումների քննարկում, մշտադիտարկման այցեր, դրանց արդյունքներով համակարգային խնդիրների վերհանում,
- մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավասու մարմին կարծիքների տրամադրում,
- մարդու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ուղղված օրենսդրական նախագծերի մշակում,
- Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում,
- մարդու իրավունքների կրթությանն ու իրազեկմանն ուղղված շարունակական միջոցառումների անցկացում,
- մարդու իրավունքների մանդատ ունեցող միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ աշխատանք՝ միտված Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի ներկայացմանն ու բարելավմանը:

22.7. ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ և «ՀՀ դատական օրենսգրիք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Բարձրագույն դատական խորհրդի գլխավոր նպատակն է նախադրյալներ ստեղծել Հայաստանում ձևավորելու արդարադատության անկախության, անաչառության, մատչելիության, թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության նոր մշակույթ: Բարձրագույն դատական խորհրդի կողմից որդեգրվել են փոխկապակցված ու փոխլրացնող ռազմավարական ուղղություններ, մոտեցումը

համակարգային է, հատվածական կամ այսրոպեական լուծումները չեն կարող ակնկալվող արդյունքներն ապահովել: Հստակ առանձնացվում են ճգնաժամային և ֆունկցիոնալ կառավարման խնդիրներ:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակված արդյունավետ արդարադատության արդյունավետության ռազմավարական առաջնահերթությունների շրջանակներում նախատեսվում են օրենսդրական և կազմակերպչական բնույթի այնպիսի քայլեր, ինչպիսիք են արդարադատության ծախսատարության կրճատումը, էլեկտրոնային արդարադատության փուլային ներդրումը, դատական գործերի կառավարման ժամանակակից թվայնացված համակարգի ներդրումը, արդարադատության համակարգային մշտադիտարկումը, դատական արխիվների և ընթացիկ գործերի ամբողջական թվայնացման համակարգի արմատավորումը, դատարանների շենքային ու նյութատեխնիկական պայմանների որակական բարելավումը, դատարանների ու դատավորների նյութական ու սոցիալական անկախության անհրաժեշտ ու բավարար երաշխիքների ապահովումը, դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովումը:

22.8. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Միջնաժամկետ հատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նպատակն է կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միասնական համակարգի արդյունավետ կիրառման ապահովումը:

Սույն միջնաժամկետ ծրագրի հիմնական թիրախներն են.

1. Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման գործող կառուցակարգերի կատարելագործումը.
2. Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման և կրթական ծրագրերի շարունակական իրականացումը.
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների շարունակական զարգացումը.
4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության բարձրացումը.
5. Կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքների թվայնացումը, արհեստական բանականության միջոցով տվյալների վերլուծությունը:

22.9. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի հիմնական ռազմավարական նպատակներն են պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության

զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում: Հանձնաժողովը տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության իրավիճակը գնահատելու համար իրականացնում է 150 հատ ուսումնասիրություններ:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի իրականացնելու է լայն սպառում ունեցող պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների 3 ոլորտի/ապրանքային շուկայի ուսումնասիրություն: Վերջիններիս նպատակն է բացահայտել ոլորտում մրցակցային իրավիճակը, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերը, մրցակցային իրավիճակի վրա ազդող այլ պայմանները: Ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, հատկորոշում է ապրանքային շուկայի սահմանները, որոշում է ապրանքային շուկայի սուբյեկտների կազմը, ապրանքային շուկայի ծավալները, տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը, ուսումնասիրում է համապատասխան իրավական ակտերը, պարզում է ապրանքային շուկա մուտքի խոչընդոտների առկայությունը, ինչպես նաև ուսումնասիրում է ոլորտին կամ ապրանքային շուկային առնչվող այլ հանգամանքներ, որոնք կարող են ընդհանուր մրցակցային իրավիճակի, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու հնարավորություն տալ:

22.10. ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, ցանցային և մուլտիպլեքս օպերատորների, ինչպես նաև տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

ՄԺԾԾ Ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվելիք հիմնական գերակա ծախսային ուղղություններն են՝

- Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների գործունեության վերահսկում և կարգավորում, ինչը կնպաստի ոլորտային նպատակների իրագործմանը,
- Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման և լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների անցկացում, ներառյալ մարզային սփռման մրցույթների, ինչը տեղեկատվություն ստանալու ավելի լայն ընտրության հնարավորություն կտա սպառողներին, իսկ մարզերի բնակչությանը՝ մշտապես իրազեկ լինելու տեղական նորություններին և մարզերին առնչվող խնդիրներին,
- Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացում, ինչը կնպաստի տեսալսողական ծրագրերի հեռարձակման թվայնացման համակարգի կայուն գործարկմանը, ինչպես նաև կապահովի նոր սուբյեկտների մուտքը տեսալսողական շուկա՝ նպաստելով մեդիաների միջև հավասարակշռված մրցակցային միջավայրի ստեղծմանը:

22.11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը, դրանց բարելավմանն ու կատարելագործմանը, ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ ուսուցումների և դասընթացների կազմակերպմանը, դասավանդման նոր մեթոդաբանության, ուսուցման նոր հարթակների մշակմանն ու ներդրմանը և ընտրական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովմանն ու ընդլայնմանը:

Վերոգրյալի ապահովման համար իրականացվում են վերլուծություններ, ուսումնասիրություններ, կազմակերպվում են Հանձնաժողովի անդամների և Հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստումներ, անցկացվում են սեմինարներ, կոնֆերանսներ, ապահովվում են շփումներ շահագրգիռ մասնակիցների հետ:

Հանձնաժողովը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացներն առավել մատչելի դարձնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով, որ քաղաքացիների իրազեկումը առաջնային է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար, Հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկելու իրազեկման աշխատանքները:

Միջնաժամկետ ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծախսային գերակայություններն են՝ Հանձնաժողովի գործունեության ապահովումը, ընտրական ծրագրերի համակարգումը, մոնիտորինգի իրականացումը, տեղական ինքնակառավարման մարմինների և Երևանի ավագանու ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը, ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպումը:

22.12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Միջնաժամկետ հատվածում ևս շարունակվելու են աշխատանքները սակագնային քաղաքականության իրականացմանն ու կատարելագործման, էներգետիկայի բնագավառում իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման, գնումների գործընթացի մոնիթորինգի և շուկայի ազատականացման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Աշխատանքներ կտարվեն նաև էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության մշտադիտարկման, հնարավոր խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ: Արդյունքում կանխատեսվում է էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային հատվածի սպառողների կողմից սպառվող էլեկտրական էներգիայի մասնաբաժինը 2027 թվականին հասցնել շուրջ 38%-ի: Կշարունակվեն աշխատանքները էլեկտրամատակարարման և գազամատակարարման համակարգի ընկերությունների խթանիչ սակագնային քաղաքականության

շրջանակում՝ սակագների հաշվարկներում ներառվող թիրախային ցուցանիշների կրճատման ուղղությամբ, ինչպես նաև հանձնաժողովի նախաձեռնությամբ կամ ներկայացվող հայտերի հիման վրա կիրականացվեն համապատասխան սակագների վրա ազդող գործոնների վերլուծության և սակագների վերանայման աշխատանքները:

Հաշվի առնելով ինքնավար էներգաարտադրության զարգացման անընդհատ աճող տեմպերի դինամիկան, ինչպես նաև դրա կարևորությունը վերականգնվող էներգետիկայի զարգացման բնագավառում՝ կշարունակվեն ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողների կողմից բարձրացված խնդիրների, ինչպես նաև ինքնավար էներգաարտադրության գործընթացի արդյունավետության գնահատման ուղղությամբ հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ինքնավար էներգաարտադրության կազմակերպմանը, հաշվառմանը և հատուցումներին առնչվող հարաբերությունների կատարելագործման աշխատանքները:

Նախատեսվում է իրականացնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի վարձակալության պայմանագրային հաշվետու տարիների համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) աշխատանքները:

Բաժանորդների կողմից բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքում՝ մատակարար-սպառող կարգավորվող իրավահարաբերությունների բարելավման նպատակով ևս ըստ անհրաժեշտության կլրամշակվեն էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները, էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները:

Հանձնաժողովը 2027-2029 թվականների ընթացքում կշարունակի աշխատանքները էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման, մրցակցության խթանման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների՝ ամրակցված և շարժական հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետի հասանելիության, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման և նոր տեխնոլոգիաների ներդրման ապահովման ուղղությամբ, որոնցով պայմանավորված ակնկալվում է ամրակցված լայնաշերտ օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի ինտերնետ ծառայությունների բաժանորդների թվաքանակի աճ՝ 5-10%, ինչպես նաև ամրակցված (լարային) և շարժական լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերի աճ՝ 5-30% միջակայքերի սահմաններում:

Հանձնաժողովի կողմից օպերատորների նկատմամբ սահմանված պարտավորությունների (ռադիոհաճախականությունների տրամադրման մրցույթներով և լիցենզիոն գործընթացներով) իրականացման արդյունքում 2-3 տարիների ընթացքում.

- Կապան, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան, Ծաղկաձոր քաղաքներում, յուրաքանչյուրի վարչական տարածքի ավելի քան 50%-ում, Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, սահմանային բոլոր գործող մաքսակետերի ամբողջ տարածքներում կապահովվի նաև «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 5G տեխնոլոգիայի բացօթյա ծածկույթի հասնելիությամբ,

- կապիտալ ներդրումների իրականացմամբ հանրապետության պաշտպանունակության ամրապնդման նպատակով կընդլայնվեն շարժական կապի բոլոր 3 օպերատորների կապի ենթակառուցվածքները, որոնց ծավալը պարտավորությունների կատարման համար ահմանված վերջնաժամկետում կկազմի ընդհանուր առնվազն 2 մլրդ դրամ,

- օպտիկամանրաթելային հասանելիություն չունեցող 302 բնակավայրերում «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից պետք է ապահովվի լարային օպտիկամանրաթելային և (կամ) դրան որակապես համարժեք անլար տեխնոլոգիայի ամրակցված լայնաշերտ կապի հասանելիությամբ՝ այսինքն, արդյունքում նշված տեխնոլոգիայի լայնաշերտ ինտերնետ կապը հասանելի կլինի հանրապետության բոլոր բնակավայրերում:

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրված թույլտվություններով ամրագրված պարտավորությունների համաձայն՝ ընկերության կողմից՝ ըստ ժամանակացույցի (3-ից 7 տարվա ընթացքում), 5G տեխնոլոգիայի ծառայությունների հասանելիությամբ (բացօթյա/outdoor ծածկույթ) պետք է ապահովվի հանրապետության քաղաքային յուրաքանչյուր բնակավայր՝ բնակավայրի վարչական տարածքի առնվազն 60%-ը, ներառյալ՝ «Ինժեներական քաղաքի», «Ակադեմիական քաղաքի», Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, սահմանային բոլոր գործող և նոր կառուցվող մաքսակետերի տարածքները, ինչպես նաև հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (ներառյալ նոր կառուցվող) ընդհանուր երկարության 98%-ը կապահովվի լայնաշերտ ինտերնետային բացօթյա (outdoor) ծածկույթով (որից առնվազն 10%-ը՝ 5G տեխնոլոգիայով):

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության (կարգավորող ենթաօրենսդրական ակտերի) լրամշակում՝ համաձայն ԵՄ և ՀՀ միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ/CEPA) ամրագրված հանձնառության, ինչպես նաև ԵՄ կարգավորումներին համահունչ ենթակառուցվածքների համատեղ օգտագործման օրենսդրության մշակում (լայնաշերտ կապի ենթակառուցվածքների զարգացման նպատակով կապի և այլ ենթակառուցվածքների օգտագործման հնարավորության ստեղծում, որը կնպաստի լայնաշերտ կապի ցանցերի ներդրման ծախսերի նվազեցմանը): Նշված աշխատանքները հանձնաժողովի կողմից իրականացվելու են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համագործակցությամբ՝ ԵՄ փորձագետների կողմից ՀԸԳՀ իրականացմանն ու մոնիթորինգին տեխնիկական աջակցությամբ, ինչպես նաև «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital)

նախաձեռնությամբ տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակում՝ Համաշխարհային բանկի փորձագիտական խմբի միջոցով:

22.13. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական վերահսկողական ծառայության քաղաքականության հիմնական թիրախներից է՝ ՀՀ պետական միջոցների կառավարման, ձևավորման և օգտագործման արդյունավետության և օրինականության բարձրացումը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից կատարվող աշխատանքների գերակայություններն են.

- պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ,
- Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով,
- Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով,
- Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով:

22.14. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

Կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում՝ միջուկային տեղակայանքների անվտանգ շահագործում, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում անվտանգ գործունեության իրականացում,
- Ճառագայթային և գեներացնող աղբյուրներ պարունակող ախտորոշիչ սարքերի օգտագործմամբ գործունեության լիցենզավորում,
- Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի իրականացում,

- Միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանություն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ,
- Սահմանային անցակետերում միջուկային նյութերի և ճառագայթային աղբյուրների չարտոնված տեղափոխման հսկողություն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ,
- Բնակչության և ՀԱԷԿ-ի անձնակազմի պաշտպանություն միջուկային և ճառագայթային վթարների ժամանակ, այդ թվում միջուկային տեղակայանքների հրդեհի առաջացման դեպքում՝ ՀՀ ներքին գործերի նախարարության հետ,
- Համագործակցություն ԱՄՆ միջուկային կարգավորման հանձնաժողովի հետ: (1.1 Արտաքին քաղաքականություն «Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության հետևողական զարգացման ուղղությամբ: Կառավարությունը նպատակադրված է խորացնելու գործակցությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ),
- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվների՝ այդ թվում Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին, «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, պահանջների, ուղեցույցների, անվտանգության գնահատման մեթոդների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերվող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը:

22.15. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հաշվեքննությունների իրականացմամբ հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում օրինականության և արդյունավետության պահպանման վերաբերյալ հանրությանն ու Ազգային ժողով ժամանակին մասնագիտական ու անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Նշված նպատակի ապահովման համար Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հիմնարկների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ պետական գործառույթներով օժտված այլ իրավաբանական անձանց նկատմամբ՝ անկախ դրանց գործունեությունն արտահայտող ֆինանսական գործառնությունների՝ պետական և համայնքային բյուջեներում արտացոլված լինելու հանգամանքից կամ եղանակից:

Հաշվեքննիչ պալատը իր ռազմավարական զարգացման ծրագրի շրջանակներում ձգտում է հասնել վերջնական արդյունքներին հետևյալ ուղղություններով՝

- Հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում:
- Ազգային ժողովի, կառավարության և այլ շահառուների հետ հաղորդակցության ուղիների և համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները՝ follow-up գործընթաց:

Իր նպատակների հասնելու համար Հաշվեքննիչ պալատը իրականացնում է գործառույթներ, որոնց վերջնական արդյունքի վերաբերյալ գնահատական կարող է հանդիսանալ Հաշվեքննիչ պալատի կատարողականի ինքնագնահատումը:

Համաձայն INTOSAI կողմից սահմանված պահանջների, Աուդիտի բարձրագույն մարմինների կատարողականի գնահատումն իրականացվում է 3-5 տարին մեկ: Հաշվեքննիչ պալատը նախատեսում է ռազմավարության իրագործման առաջին տարիների՝ 2026 և 2027 թվականների կատարողականի նկատմամբ 2028 թվականին իրականացնել կատարողականի ինքնագնահատում INTOSAI կողմից հաստատված SAI PMF մեթոդաբանության հիման վրա:

22.16. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

Հակակոռուպցիոն կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

Կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտումն ու քննությունը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով, ծառայողներին վերապատրաստելու և հատուկ ուսուցումը կազմակերպելու համար նրանց ներգրավել մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում և այլն: Կոմիտեի ծառայողները քրեական վարույթի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են մի շարք քննչական, օպերատիվ-հետախուզական և դատավարական գործողություններ, այդ թվում՝ դատավարական փաստաթղթերի ներկայացում թարգմանության և այլն:

Կոմիտեն ձեռնարկում է բոլոր միջոցառումները, որպեսզի իր գործունեության արդյունքում քրեական օրենսգրքով արգելված կոռուպցիոն բնույթի արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի:

Կոմիտեն առաջնորդվում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի դրույթներով, ինչպես նաև ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով ամրագրված կարգավորումներով, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Անդրազգային հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիայով, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի և Քիշնևի կոնվենցիաներով և այլն:

Կոմիտեի ծառայողների հանձնարարությամբ կամ խնդրանքով օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին համապատասխան:

22.17. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Միջնաժամկետ հատվածում կմեկնարկի «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մասին» 2025 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-444-Ն օրենքով ստեղծված Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի աշխատանքների իրականացումը: Մասնավորապես օրենսդրության համաձայն Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակներում նախատեսվում է.

- իրականացնել վերահսկողություն տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության պահպանման նկատմամբ,
- ձեռնարկել տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ,
- իրականացնել կիբեռանվտանգությանը սպառնացող ռիսկերի գնահատում, վերլուծություն և պետական ու օրենքով նախատեսված այլ տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովում,
- իրականացնել ազգային նույնականացման շերտի մշակման, կառավարման, զարգացման և անխափան հասանելիության ապահովման աշխատանքներ,
- որպես միասնական կոնտակտային կետ կարգավորել, կառավարել և հսկել կիբեռմիջադեպերի գրանցմանը, կանխարգելմանը, լուծմանը և հետևանքների վերացմանն ուղղված գործողությունները, իրականացնում օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ մշտադիտարկում և վերահսկողություն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման և պարտքի վերաֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի կառավարման ռազմավարությունը: Այն եռամյա ծրագիր է, որը վերանայվում և հրապարակվում է տարեկան պարբերականությամբ՝ նպաստելով կառավարության պարտքի կանխատեսելի և թափանցիկ կառավարման ապահովմանը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը պարզաբանում է պարտք ներգրավելու քաղաքականությունը՝ ներառելով կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները, բացահայտում և գնահատում է կառավարության պարտքի պորտֆելի կառավարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև նախանշում է միջնաժամկետ հատվածում պարտքային քաղաքականության սկզբունքները, նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը մշակվում է Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախանշված հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակադրումների ներքո, որոնք ենթադրում են, որ պետական բյուջեն միջնաժամկետ հորիզոնում շարունակելու է ձևավորվել պակասուրդով, սակայն վերջինս, հարկաբյուջետային կանոնների ներքո, ծրագրավորվում է այնպիսի մակարդակում, որ երաշխավորի կառավարության պարտքի կայունությունն ու կառավարելիությունը:

ՀՀ կառավարության պարտքի ընդունելի պորտֆելի ձևավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում են ծախսերի և ռիսկերի վերլուծություններ: Վերլուծությունները հնարավորություն են ընձեռում գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի ցուցանիշները և դրանց վրա հնարավոր շոկերի ազդեցությունները: ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունում ներկայացվում և վերլուծվում են ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի շուկայական՝ փոխարժեքի և տոկոսադրույքի ռիսկերը, ինչպես նաև վերաֆինանսավորման ռիսկը: Ռազմավարությունը կազմելիս հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության պարտքի կառավարման այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են ներքին շուկայի կարողությունը կամ արտաքին վարկերից օգտվելու հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ծախսերի և ռիսկերի համադրման հնարավոր տարբերակներից նախընտրելին, որի ընտրության հիմքում ընկած է ընդունելի ծախսերով և ռիսկերով ֆինանսական կարիքի բավարարումը:

1.1. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության նպատակները և ընդգրկման շրջանակը

2025 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նոր խմբագրությամբ, որի դրույթներին համապատասխան էլ մշակվում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակը միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում կառավարության

Ֆինանսական կարիքի բավարարման մշտական հնարավորության և վճարային պարտավորությունների կատարման ապահովումն է՝ հնարավոր նվազագույն ծախսերով և պարտքի կառուցվածքի ռիսկերի խելամիտ մակարդակի պայմաններում: ՀՀ կառավարության պարտքի կառավարման նպատակներից է նաև Կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը և Կառավարության պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականությունների համակարգումը, այդ թվում՝ դրա շրջանակում վճարային հաշվեկշռի աջակցությունը և պահուստների համալրումը: Այլ կերպ ասած, Կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում ապահովել կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորությունը և վճարային պարտավորությունների կատարումը՝ հնարավոր նվազագույն ծախսերով և պարտքի պորտֆելի ռիսկերի խելամիտ մակարդակի պայմաններում:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի՝ պետական պարտքի ներգրավման նպատակներն են՝ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը և ընթացիկ իրացվելիության ապահովումը կամ համայնքների բյուջեների ֆոնդային մասի դեֆիցիտի ֆինանսավորումը, պետական ներքին պարտքի շուկայի պահպանումը և զարգացումը, պետական պարտքի վերաֆինանսավորումը, պետական բյուջեից վարկավորումը, կայունացման հաշվի միջոցների համալրումը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունն ընդգրկում է միայն ՀՀ կառավարության պարտքը. կատարված վերլուծությունները չեն ներառում ՀՀ համայնքների պարտքը: Վերջինս ստանձնվում է ՀՀ համայնքների անունից և կողմից:

1.2. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում 2025 թվականի տարեսկզբից արձանագրված զարգացումները

2025 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության պարտքը կազմել է 5,354.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 47.2%-ը: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի փաստացի մակարդակը ցածր է 2025 թվականի պետական բյուջեով սահմանված ծրագրային մակարդակից 7.1 տոկոսային կետով, ինչպես նաև ցածր է նախորդ տարվա նույն ցուցանիշից 0.5 տոկոսային կետով:

Ինչպես 2024 թվականի տարեվերջին, «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշը ցածր է հարկաբյուջետային կանոններով սահմանված 50% շեմային մակարդակից և գտնվում է 40% շեմային մակարդակը գերազանցելու ծախսային սահմանափակումների կամ կանոնների համակարգի ավելի մեղմ տիրույթում:

2026-2028 թվականների ռազմավարությամբ սահմանված գրեթե բոլոր ուղենշային ցուցանիշները 2025 թվականի փաստացի արդյունքներով գտնվել են նախանշված նպատակային միջակայքերում: Փոքր-ինչ շեղվել է միայն մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը, որը կազմել է 6.9 տարի՝ ուղենշային նվազագույն 7 տարվա դիմաց: Վերջինս հիմնականում պայմանավորված է գանձապետական պարտատոմսերի՝ ծրագրավորված միջին ժամկետի նկատմամբ շուկայական պահանջարկի ազդեցությամբ ձևավորված ավելի ցածր փաստացի միջին ժամկետով:

Աղյուսակ 1. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2026-2028 թվականների ռազմավարությամբ սահմանված ուղենշային ցուցանիշների կատարողականը 2025 թվականին

| | Ուղենիշ | 31.12.2025 փաստացի |
|--|-------------------|-----------------------|
| Վերաֆինանսավորման ռիսկ | | |
| Մինչև մարում միջին ժամկետը | 7 – 10 տարի | 6.9 տարի |
| Առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ | առավելագույնը 35% | 27.0% |
| Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին) | առավելագույնը 20% | 14.1% |
| Տոկոսադրույքի ռիսկ | | |
| Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 80% | 86.2% |
| Փոխարժեքի ռիսկ | | |
| Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 40% | 53.4% |
| ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 40% | 52.9% |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

2025 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին կատարվել է 438.7 մլրդ դրամով, ընդ որում, ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների) ֆինանսավորումը կազմել է 297.0 մլրդ դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 67.7%-ը, իսկ արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին ֆինանսավորումը՝ 141.7 մլրդ դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 32.3%-ը: Դա նշանակում է, որ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը հիմնականում հիմնվել է ֆինանսավորման ներքին/դրամային աղբյուրների վրա:

2025 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պարտքի գծով իրականացված գործառնություններում զգալի կշիռ ունեն պետական գանձապետական պարտատոմսերը:

Աղյուսակ 2. ՀՀ կառավարության պարտքի գծով իրականացված գործառնություններն ըստ գործիքների

| 2025 | Տեղաբաշխված ծավալը | Տեղաբաշխումից մուտքը | Մարման և/կամ հետգնման ծավալը | Վճարված տոկոսագումարը |
|--|-----------------------|-------------------------|------------------------------------|--------------------------|
| Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ | 698.8 | 676.0 | 379.0 | 253.7 |
| Արտարժույթային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար | 750 | 731.4 | 313.2 | 83.3 |
| Արտարժույթային պետական պարտատոմսեր, մլրդ դրամ | - | 287.4 | 123.4 | 32.5 |
| Արտաքին վարկեր, մլն ԱՄՆ դոլար | | 371.6 | 421.4 | 162.0 |
| Արտաքին վարկեր, մլրդ դրամ | | 141.6 | 163.9 | 62.9 |

2025 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.22%՝ նախորդ տարվա 9.84%-ի համեմատությամբ նվազելով 0.62 տոկոսային կետով: 2025 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետը կազմել է 2007 օր կամ 5.5 տարի՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 1771 օրվա կամ 4.9 տարվա դիմաց: Դա նշանակում է, որ բարենպաստ դրամավարկային և ֆինանսական միջավայրը հնարավորություն է տվել տոկոսադրույքի նվազեցման պայմաններում միաժամանակ երկարացնել պարտատոմսերի միջին ժամկետայնությունը:

2025 թվականի առաջին եռամսյակում պետական պարտքի կառավարման ոլորտում նշանակալի իրադարձություն էր Հայաստանի Հանրապետության կողմից մարտի 12-ին միջազգային կապիտալի շուկայում 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 10 տարի մարման ժամկետով, 7.10% տեղաբաշխման եկամտաբերությամբ և 6.75% արժեկտրոնային եկամտաբերությամբ արտարժույթային պետական պարտատոմսերի հաջողությամբ տեղաբաշխումը: Սա Հայաստանի կողմից միջազգային կապիտալի շուկայում արտարժույթային պետական պարտատոմսերի հինգերորդ թողարկումն էր: Ընդ որում, ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի համաձայն, արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկումը նախատեսվել էր 500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով (193.6 մլրդ դրամ): Հավելյալ 250 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթային պարտատոմսերի թողարկումը նպատակ է ունեցել կառավարել 2025 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների ապահովման հնարավոր ռիսկերը՝ լրացուցիչ ճնշում չառաջացնելով ներքին պարտքի շուկայում, ինչպես նաև արտարժույթային մուտքերի ավելացման միջոցով աջակցել վճարային հաշվեկշռի կայունությանը և միջազգային պահուստների համալրմանը: 2025 թվականին փաստացի տեղաբաշխված 750 մլն ԱՄՆ դոլարի պարտատոմսերի գծով փաստացի մուտքը կազմել է 287.4 մլրդ դրամ (731.4 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար):

Ընդ որում, նախորդ 10 տարի մարման ժամկետով արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկումը տեղի է ունեցել 2021 թվականի փետրվարի 2-ին 3.875% տեղաբաշխման եկամտաբերությամբ, որում ուղենիշ հանդիսացող նույն ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 1.039%, իսկ շեղումը ուղենիշի նկատմամբ, որը ցույց է տալիս երկրի ռիսկը՝ 2.836%: Հատկանշական է, որ 2025 թվականին թողարկված պարտատոմսերի 7.1% եկամտաբերության մեջ ուղենիշ հանդիսացող նույն ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 4.24%, իսկ շեղումը ուղենիշի նկատմամբ՝ 2.86%: Այսինքն նախորդ թողարկման նկատմամբ արտարժույթային պետական պարտատոմսերի եկամտաբերության 3.2 տոկոսային աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության բարձրացմամբ, իսկ Հայաստանի երկրի ռիսկի հավելավճարը միջազգային շուկաներում գրեթե անփոփոխ է:

2025 թվականի մարտի 24-ին իրականացվեց նաև 2025 թվականին մարման ենթակա 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ արտարժույթային պետական պարտատոմսերի մարումը՝ շրջանառության մեջ եղած 313.166 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով:

1.3. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի նկարագիրը

2025 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության ծախսերի և ռիսկերի ցուցանիշներն ամբողջական պատկերացում են տալիս և որակապես բնութագրում են ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը:

Աղյուսակ 3. ՀՀ կառավարության պարտքի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները 31.12.2025 թվականի դրությամբ

| | | Արտարժույթային պարտք | Դրամային պարտք | Ընդամենը |
|--|---|----------------------|----------------|----------|
| ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլրդ դրամ) | | 2,519.8 | 2,834.7 | 5,354.5 |
| ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլն ԱՄՆ դոլար) | | 6,607.4 | 7,433.3 | 14,040.7 |
| ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ, (%) | | 22.2 | 25.0 | 47.2 |
| Ծախսի ցուցանիշներ | Տոկոսավճար/ՀՆԱ, (%) | 0.8 | 2.2 | 3.1 |
| | Միջին կշռված տոկոսադրույքը (%) | 3.8 | 10.2 | 7.2 |
| Վերաֆինանսավորման ռիսկ | Մինչև մարում միջին ժամկետը (տարի) | 7.1 | 6.7 | 6.9 |
| | Մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ) | 6.7 | 14.0 | 10.6 |
| Տոկոսադրույքի ռիսկ | Մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի) | 4.3 | 6.7 | 5.5 |
| | Առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ) | 36.6 | 14.0 | 24.7 |
| | Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը (% ընդամենի մեջ) | 70.7 | 100.0 | 86.2 |
| Փոխարժեքի ռիսկ | Արտարժույթային պարտքի կշիռը (% ընդամենի մեջ) | - | - | 47.1 |
| | Արտարժույթային կարճաժամկետ պարտք/միջազգային պահուստներ, (%) | - | - | 8.9 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

Կառավարության պարտքի ծախսերը բնութագրելու համար կիրառվել են հետևյալ ցուցանիշները՝ պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը, տոկոսավճարի կշիռը պետական բյուջեի եկամուտների մեջ և տոկոսավճարի կշիռը ՀՆԱ-ի մեջ:

2025 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 7.2%, ընդ որում՝ դրամային պարտքի համար այն կազմել է 10.2%, իսկ արտարժույթային պարտքի համար՝ 3.8%:

Արտաքին վարկերի տոկոսադրույքներն անմիջականորեն կրում են միջազգային ֆինանսական շուկաների զարգացումների ազդեցությունը, որովհետև միջին եկամուտ ունեցող երկրների շարքին

դասվելու արդյունքում Հայաստանին այլևս հասանելի չեն միջազգային կառույցների կողմից տրամադրվող արտոնյալության բարձր աստիճան ունեցող վարկերը:

2025 թվականի ընթացքում գործընկեր երկրների կենտրոնական բանկերն աստիճանաբար նվազեցրել են դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները. չնայած դրան՝ քաղաքականության դիրքը շարունակում է մնալ զսպող: ԱՄՆ ԴՊՀ-ն (Դաշնային պահուստային համակարգը) տարվա ընթացքում տոկոսադրույքը 4.25-4.5% միջակայքից աստիճանաբար նվազեցրել է մինչև 3.5-3.75%: Եվրոպական կենտրոնական բանկի կողմից տոկոսադրույքն ավելի արագ տեմպերով է նվազեցվել. տարեսկզբի 3.15% մակարդակից նվազեցվել է և հունիսից պահպանվել է 2.15% մակարդակում: ՌԴ կենտրոնական բանկի կողմից հատկապես տարվա երկրորդ կեսին իրականացված ավելի կտրուկ նվազեցումների արդյունքում տոկոսադրույքը տարեսկզբի 21% մակարդակից տարեվերջին հասել է 16%-ի: Նշված երկրների կենտրոնական բանկերի կողմից քաղաքականության աստիճանական մեղմացումն առավելապես պայմանավորված է եղել գնաճային ճնշումների թուլացմամբ: Տնտեսական ակտիվությունը խթանելու նպատակով Չինաստանի ազգային բանկը քաղաքականության տոկոսադրույքը հունիսին նվազեցրել է 0.1 տոկոսային կետով և մինչև տարեվերջ պահպանել սահմանված 3% մակարդակում:

Այս գործոնների ազդեցությամբ արտաքին վարկերի և փոխառությունների միջին կշռված տոկոսադրույքը տարեվերջին կազմել է 3.2%՝ նախորդ տարվա 3.5%-ի դիմաց: Ինչ վերաբերում է պետական գանձապետական պարտատոմսերի միջին եկամտաբերությանը, ապա 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՊԳՊ-երի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.3%՝ 2024 թվականի տարեվերջի 10.6% տոկոսի դիմաց:

Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ը մեղմել է դրամավարկային պայմանները և քաղաքականության տոկոսադրույքը նվազեցրել 0.5 տոկոսային կետով՝ դեկտեմբերին սահմանելով այն 6.5%-ի մակարդակում: Արդյունքում, 2025 թվականի ընթացքում նախորդ տարվա համեմատությամբ պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը նվազել է 0.6 տոկոսային կետով. 2024 թվականի 9.8%-ի դիմաց 2025 թվականին այն կազմել է 9.2%:

ՀՀ կառավարությունը 2025 թվականի ընթացքում պարտքի գծով վճարել է 349.1 մլրդ դրամ տոկոսավճար՝ նախորդ տարվա 313.6 մլրդ դրամի դիմաց: 2025 թվականին վճարված տոկոսագումարը կազմել է պետական բյուջեի եկամուտների 12.1%-ը, պետական բյուջեի ծախսերի 10.6%-ը և ՀՆԱ-ի 3.1%-ը՝ համապատասխանաբար նախորդ տարվա նույն ցուցանիշների 12.2%, 10.6% և 3.1%-ի դիմաց: Չնայած պարտքի կառուցվածքում դրամային՝ «առավել թանկ» պարտքի կշռի ավելացմանը, մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների բարելավումը 2025 թվականին թույլ է տվել կայունացնել, իսկ որոշ դեպքերում՝ նվազեցնել տոկոսավճարների բեռի ցուցանիշները:


Փոխարժեքի ռիսկ

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելում տարիներ շարունակ շուկայական ռիսկերից ամենաէականը հանդիսացել է փոխարժեքի ռիսկը: Փոխարժեքի ռիսկը հիմնականում չափվում է հետևյալ ցուցանիշներով՝ արտարժույթային պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ և արտարժույթային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ:

ՀՀ կառավարության պարտքի ներկայիս պորտֆելը դեռևս կրում է փոխարժեքի զգալի ռիսկ, քանի որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի 47.1%-ը ներգրավված է արտարժույթով: Այնուամենայնիվ, փոխարժեքի ռիսկի նվազեցման ուղղությամբ ՀՀ կառավարության պարտքի կառավարման քաղաքականության հետևողական իրականացման արդյունքում այս ցուցանիշը 2018 թվականից սկսած նվազման միտում է դրսևորել և վերջին հինգ տարիների ընթացքում նվազել է 24.1

տոկոսային կետով: 2025 թվականի տարեվերջի դրությամբ, ինչպես 2024 թվականի տարեվերջին դրամային պարտքի կշիռը գերազանցել է արտարժույթային պարտքի կշիռն: Վերջինս նախորդ տարվա համեմատ նվազել է 2.1 տոկոսային կետով:


Գծապատկեր 1. ՀՀ կառավարության արտարժույթային և դրամային պարտքերի հարաբերակցությունը 2020-2025 թվականներին (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2025 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի պորտֆելի կառուցվածքում գերակշռել է ԱՄՆ դոլարով պարտքը՝ 57.7%, որը SDR-ի համապատասխան արտարժույթների կշիռներով բաշխելուց հետո կազմել է 64.0%: ՀՀ կառավարության արտարժույթով ներգրավված պարտքի կառուցվածքը նախորդ տարվա վերջի համեմատությամբ դիվերսիֆիկացվել է, որն արտահայտվում է եվրոյով պարտքի մասնաբաժնի ավելացմամբ: Այսպես, նախորդ տարվա վերջի նկատմամբ SDR-ով ներգրավված պարտքի 3.7 տոկոսային կետով նվազումն ուղեկցվել է եվրոյով ներգրավված պարտքի 3.5 տոկոսային կետ աճով: Բավական է նշել, որ 2025 թվականին վարկերի մասհանումների 66%-ը կատարվել է եվրոյով:

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի պորտֆելի դինամիկան 2020-2025 թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ


Արտարժույթային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ կազմել է 8.9%, ինչը նշանակում է, որ արտարժույթային կարճաժամկետ պարտքի մարումների իրականացման համար առկա է արտարժույթային ակտիվների բավարար ծավալ: Նախորդ տարվա համեմատությամբ այս ցուցանիշը նվազել է 11.7 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված 2025 թվականին մարված արտարժույթային պարտատոմսերով:

Վերաֆինանսավորման ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկը գնահատվում է մինչև մարում միջին ժամկետի, առաջիկա մեկ և երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշռի ցուցանիշներով և կառավարության պարտքի պորտֆելի մարման գրաֆիկով:

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ մնացել է անփոփոխ և կազմել է 6.9 տարի: Ընդ որում, ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի մինչև մարում միջին ժամկետը կազմել է 7.1 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 6.6 տարվա դիմաց, իսկ դրամային պարտքինը՝ 6.7 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 7.2 տարվա դիմաց: Արտարժույթային պարտքի դեպքում մինչև մարում միջին ժամկետը երկարել է 10 տարի ժամկետայնությամբ արտարժույթային պարտատոմսերի թողարկման շնորհիվ, ինչ վերաբերում է դրամային պարտքին, ապա թեև նախորդ տարվա համեմատ առաջնային շուկայում թողարկված պարտատոմսերի ժամկետայնությունն ավելացել է, ամեն դեպքում դա բավարար չի եղել պարտատոմսերի ամբողջ պորտֆելի միջին ժամկետը երկարացնելու համար: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկի տեսակետից մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը էականորեն չի շեղվել ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2026-2028 թվականների ռազմավարությամբ սահմանված ուղենշային միջակայքից:

Գծապատկեր 3. ՀՀ կառավարության պարտքի մինչև մարումը մնացած ժամկետն ըստ պարտքային հիմնական գործիքների (փարի)




Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջիկա տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը կազմել է 10.6% և նախորդ տարվա նկատմամբ այն նվազել է մոտ 2.5 տոկոսային կետով: Այսպես, ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մեկ տարվա ընթացքում մարման կշիռը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 4.9 տոկոսային կետով և կազմել է 6.7%, միաժամանակ դրամային պարտքի նույն ցուցանիշը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել է 14.0%: Ինչ վերաբերում է առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշռի ցուցանիշին, ապա այն 2025 թվականի տարեվերջին կազմել է 27.0%, իսկ առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող արտարժութային և դրամային պարտքի կշիռները կազմել են համապատասխանաբար 16.7% և 36.1%: Առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող արտարժութային պարտքի կշիռը նախորդ տարեվերջի նկատմամբ նվազել է 6.8 տոկոսային կետով, իսկ դրամային պարտքի կշիռը նախորդ տարեվերջի նկատմամբ էականորեն չի փոխվել:

2025 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի, ինչպես նաև դրամային պարտատոմսերի մարումները սփռված են եղել մինչև 2054 թվականը, իսկ արտարժութային պարտատոմսերինը՝ մինչև 2035 թվականը:

Գծապատկեր 4. Կառավարության պարտքի մարումների գրաֆիկն ըստ գործիքակազմի 31.12.2025 թվականի դրությամբ (մլրդ դրամ)




Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Տոկոսադրույքի ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է հիմնականում հետևյալ ցուցանիշներով՝ ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ, առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ և մինչև վերաֆիքսում միջին ժամկետը:

ՀՀ կառավարության պարտքի 86.2%-ը ֆիքսված տոկոսադրույքով է: Դրամային պարտքն ամբողջությամբ ֆիքսված տոկոսադրույքով է, իսկ արտարժույթային պարտքի 70.7%-ն է ֆիքսված տոկոսադրույքով՝ նախորդ տարվա 68.4%-ի դիմաց: Կարելի է արձանագրել, որ նախորդ տարվա նկատմամբ արտարժույթային պարտքի տոկոսադրույքի ռիսկը որոշակիորեն նվազել է:

Գծապատկեր 5. Արտարժույթային պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

Ինչ վերաբերում է առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշռի ցուցանիշին, ապա 2025 թվականի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի 24.7%-ն է ենթակա վերաֆիքսման 2026 թվականին: Նախորդ տարվա վերջի դրությամբ այս ցուցանիշը կազմել է 26.3%, ինչը նշանակում է, որ վերաֆինանսավորման ռիսկը նվազել է:

Մինչև վերաֆիքսում միջին ժամկետի ցուցանիշը 2025 թվականի վերջին կազմել է 5.5 տարի, որը կարելի է գնահատել որպես պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի չափավոր մակարդակ: Այս ցուցանիշն ավելի փոքր է, քան մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը, քանի որ պարտքի 13.8%-ը լողացող տոկոսադրույքով է, որի տոկոսադրույքը ևս ենթակա է վերաֆիքսման 2026 թվականի ընթացքում:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները ցույց են տալիս, որ վերջին տարիներին պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկի էական նվազմանը զուգահեռ ավելացել է վերաֆինանսավորման ռիսկի ազդեցությունը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական ռիսկերը կառավարելիության շրջանակներում պահելու, և հատկապես փոխարժեքի բարձր ռիսկը նվազեցնելու նպատակով, որպես ռազմավարական նպատակադրում, դիտարկվում է ներքին պետական պարտքի շուկայի զարգացումը և կառավարության պարտքի մեջ ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշռի պահպանումը պատմական բարձր մակարդակների վրա:

1.4. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2027-2029 թվականների ռազմավարությունը

1.4.1. Մակրոտնտեսական զարգացումները և կանխատեսումները

- 2025 թվականի առևտրային լարվածության և քաղաքական անորոշությունների պայմաններում համաշխարհային տնտեսությունում և գործընկեր երկրներում հիմնականում դիտվել են տնտեսական աճի ավելի թույլ տեմպեր, գնաճի աստիճանական թուլացում և խոշոր տնտեսություններում շարունակվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ճշգրտումներ: Սակայն 2026 թվականի առաջին եռամսյակում ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումները ձևավորվել են աշխարհաքաղաքական անորոշության և փոփոխվող առևտրային հոսքերի պայմաններում՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում ընթացող ռազմական լարվածությամբ: Այս պայմաններում 2026 թվականի գործընկեր երկրներից ԱՄՆ-ում և ՌԴ-ում կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի արագացում, իսկ Եվրագոտում և Չինաստանում՝ դանդաղում: Միջնաժամկետ հորիզոնում գործընկեր երկրների համար կանխատեսվում են իրենց պատմական միջին աճերից ցածր տնտեսական աճեր:
- 2023-2025 թվականների ՀՀ տնտեսությունում գրանցվել է ՀՆԱ-ի միջինում 7.1% իրական աճ՝ իր վրա շարունակելով կրել դեռևս 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջերից Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց տնտեսական ազդեցությունները:
- Տնտեսական աճի տեմպերը 2026 թվականի առաջին եռամսյակում փոքր-ինչ դանդաղել են՝ գրանցելով 4.0% աճ: Աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և

արդյունաբերության ոլորտների աճով: Տնտեսական աճին նպաստել է նաև շինարարության բարձր աճը, մինչդեռ գյուղատնտեսության նվազումը հակազդել է տնտեսական աճին: Ապրիլ ամսին տնտեսական ակտիվությունը որոշակիորեն արագացել է՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճի տեմպերի արագացմամբ:

- Ընթացիկ տնտեսական զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի պահպանման, ինչպես նաև Անուսարի շահագործման և կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունների արդյունքում 2026 թվականի համար սպասվում է շուրջ 5.4% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում (2027-2031թթ.)՝ միջինում 6. 0% աճ: Հատկանշական է, որ վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%:

- Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղման և վերաարտահանման դերի նվազման պայմաններում 2026 թվականին սպասվում է արտահանման և ներմուծման որոշակի նվազում: Այնուամենայնիվ, նախորդ տարվա արտահանման կտրուկ անկումից հետո՝ 2026 թվականին չնայած արտահանման և ներմուծման նվազմանը, կգրանցվի առևտրային հաշվեկշռի բարելավում: Դրամական փոխանցումների աճի և ապրանքներ-ծառայությունների հաշվեկշռի բարելավման արդյունքում 2026 թվականի ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի՝ հասնելով ՀՆԱ-ում 5.6%-ի: Միջնաժամկետում, 2027-2029 թվականներին առաջացած բացասական գործոնների ազդեցությունների չեզոքացման պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կկայունանա երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակի շուրջ:

- Միջնաժամկետ հատվածի սկզբում՝ անհետաձգելի կարիքների և կառուցվածքային բարեփոխումների համար «առաջ ընկած» ռեսուրսների ձևավորման պայմաններում պետական բյուջեի պակասուրդի և պարտքի որոշակի աճից հետո հարկաբյուջետային քաղաքականությունը ուղղված կլինի ծախսերի կառուցվածքի բարելավմամբ ուղեկցվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացմանը: Կառավարության պարտքի բեռը 2027-2029 թվականներին կհասնի 48-49%-ի մակարդակի, որից հետո, բյուջեի պակասուրդի շարունակական նվազման արդյունքում կմոտենա 44%-ին մինչև 2030 թվականը: Հարկաբյուջետային կոնսոլիդացիան կիրականացվի ընթացիկ ծախսերի օպտիմալացման և արդյունավետության բարձրացման պայմաններում ՀՆԱ-ում դերի որոշակի նվազմամբ, ինչը կզուգորդվի զսպող հարկաբյուջետային ազդակով միջնաժամկետի սկզբում, իսկ միջնաժամկետի վերջում հարկաբյուջետային քաղաքականության դիրքը ամբողջական պահանջարկի վրա ազդեցության տեսանկյունից կվերադառնա չեզոքի՝ միաժամանակ ամբողջ հորիզոնում դրական ազդեցություն ունենալով տնտեսության ներուժի վրա: Հարկաբյուջետային քաղաքականության համար, ընդհանուր առմամբ, առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:

- 2026 թվականի գնաճը կլինի թիրախային մակարդակին մոտ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ն կձեռնարկի համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 3% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:

- Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցներն աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՄԺԾժ շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար առկա են երկկողմանի ռիսկեր, սակայն դեպի ներքև ռիսկերը համեմատաբար մեծ են:

Աղյուսակ 4. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած հիմնական ցուցանիշները 2023-2029 թվականներին

| | 2023 փաստ. | 2024 փաստ | 2025 փաստ | 2026 սպաս. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|--|---------------|--------------|--------------|---------------|---------------|---------------|---------------|
| Տնտեսական աճ (%) | 8.3 | 5.9 | 7.1 | 5.4 | 5.5 | 5.7 | 6.0 |
| ՍԳԻ (ժամկետի միջինը, %) | 2.0 | 0.3 | 3.3 | 3.7 | 3.3 | 3.1 | 3.0 |
| Հարկաբյուջետային հատված (% ՀՆԱ-ի նկատմամբ) | | | | | | | |
| Եկամուտներ և դրամաշնորհներ | 25.4 | 25.2 | 25.4 | 25.5 | 25.9 | 26.0 | 26.2 |
| Ծախսեր | 27.4 | 28.8 | 29.1 | 29.5 | 29.2 | 28.8 | 28.0 |
| Պակասուրդ (-) | -2.0 | -3.7 | -3.7 | -4.0 | -3.3 | -2.8 | -1.8 |
| ՀՀ կառավարության պարտք | 48.2 | 47.7 | 47.2 | 48.7 | 49.6 | 49.1 | 48.2 |
| Արտաքին հատված | | | | | | | |
| Ապրանքների և ծառայությունների արտահանում (մլն ԱՄՆ դոլար) | 14,718 | 19,072 | 14,649 | 13,748 | 13,976 | 14,488 | 15,134 |
| Ապրանքների և ծառայությունների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար) | 15,062 | 19,804 | 16,237 | 15,202 | 14,936 | 15,726 | 16,493 |
| Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (% ՀՆԱ-ի նկատմամբ) | -2.8 | -4.6 | -7.2 | -5.6 | -3.9 | -4.7 | -4.7 |
| ՀՀ կառավարության պարտք (մլրդ դրամ) | 4,572 | 4,893 | 5,355 | 6,010 | 6,649 | 7,161 | 7,689 |
| Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ) | 9,493 | 10,250 | 11,343 | 12,333 | 13,409 | 14,600 | 15,935 |

Աղբյուրը՝ 2027-2029 թվականների ՄԺԾԾ

1.4.2. Նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները

Պարտքի կառավարելի մակարդակում պահպանմանը զուգահեռ ՀՀ կառավարությունը կշարունակի պարտքի պորտֆելի բարելավման ջանքերը՝ նպատակ ունենալով պահպանել դիմակայունությունը հնարավոր ցնցումներին, ապահովել պետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և խորացումը, հասանելիությունը ներքին ու արտաքին ֆինանսական շուկաներին, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների ու գործիքների դիվերսիֆիկացումը:

Ընդ որում, հաշվի առնելով, որ վերջին տարիներին դրամային պարտքի կշռի շարունակական աճը և փոխարժեքի ռիսկի նշանակալի նվազեցումը անխուսափելիորեն հանգեցրել է տոկոսավճարների բեռի որոշակի աճի, հետագա տարիներին հարկաբյուջետային նշանակալի կոնսոլիդացիային զուգահեռ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները կսահմանվեն այնպես, որ թույլ կտա ֆինանսական շուկաների փոփոխվող պայմաններին համապատասխան երկարաժամկետ հատվածում նվազեցնել պարտքի գծով տոկոսավճարների բեռը: Այնուամենայնիվ ֆինանսավորման դրամային աղբյուրներից միջոցների ներգրավման ծավալները կսահմանվեն այն սկզբունքով, որ չխաթարվի ներքին պարտքի

շուկայի բնականոն զարգացումը և մրցակցային ու ակտիվ դրամային պարտատոմսերի շուկան մշտապես կմնա պարտքի կառավարման առաջնահերթությունների ցանկում:

Այս տեսանկյունից ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին արժույթով պարտքը կշարունակի պահպանվել պատմականորեն բարձր մակարդակներում, կշարունակվեն արտաքին ներդրողների մոտ պարտատոմսերի շուկայի բարձր գրավչության պահպանման ջանքերը, ինչպես նաև կընդլայնվի միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը՝ ավանդական գործիքներին զուգահեռ ներգրավելով նոր թիրախային ֆինանսավորման գործիքներ ՀՀ կառավարության տարբեր ոլորտների ռազմավարությունների արդյունավետ իրականացման համար:

Մասնավորապես.

- ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նվազեցնել վերաֆինանսավորման ռիսկը, ինչպես նաև բարձրացնել տեղաբաշխվող պարտատոմսերի իրացվելիությունը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:
- Պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության նվազման պայմաններում աստիճանաբար կավելացվի երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների ծավալը՝ դրանք կենտրոնացնելով 10 տարի մարման ժամկետի շուրջ՝ որպես հիմնական ուղենիշ:
- Փոխառությունների ծրագրի մշակման և իրականացման հիմքում հաշվի կառնվի շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կոնսոլիդացիայի կարևորությունը:
- Պարտքի գործիքների դիվերսիֆիկացման նպատակով, ներքին պարտքի շուկայական ենթակառուցվածքների ընձեռնած հնարավորություններին համահունչ, պարտատոմսերի ավանդական տեսակների տեղաբաշխմանը զուգահեռ, ըստ անհրաժեշտության, կիրականացվեն գնաճով ինդեքսավորվող պարտատոմսերի թողարկումներ:
- Պետական բյուջեով նախատեսված որոշակի ոլորտներում առանձին նախագծերի ֆինանսավորման նպատակով կդիտարկվի նպատակային պարտատոմսերի թողարկման հնարավորությունը: Ընդ որում, պարտքի կառավարման ժամանակակից առաջադեմ միտումներին համահունչ կուսումնասիրվեն կանաչ, կլիմային կապակցված, սոցիալական պարտատոմսերի նպատակահարմարությունը:
- Առանձնահատուկ նշանակություն տալով ֆիզիկական անձանց խնայողությունները պետության զարգացմանն ուղղելու և մասնակցային պետական պարտքի նախապատվությանը՝ քայլեր կձեռնարկվեն ֆիզիկական անձ ներդրողների քանակի ավելացման ուղղությամբ: Ուստի, կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կշարունակվեն հանրային իրազեկման աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում՝ նոր զարկ տալով պետական գանձապետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացմանը: Այդ շրջանակներում, Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս մանրածախ առցանց հարթակի (gp.minfin.am) հասանելիության ապահովման պայմաններում, միջոցներ կձեռնարկվեն նաև ժամանակակից թվային լուծումներով ենթակառուցվածքներ զարգացնելու, այդ թվում բանկային հավելվածների միջոցով ֆիզիկական անձ ներդրողներին պետական պարտատոմսեր առաջարկելու ուղղությամբ:
- Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կշարունակվի՝ նախապատվությունը տալով վարկավորման առավել բարենպաստ պայմաններով և ազատ փոխարկելի արժույթով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը: Արտաքին վարկատուների հետ

համագործակցության շրջանակներում կշարունակվեն «Ծրագիր արդյունքի դիմաց» ֆինանսավորման գործիքի կիրառմամբ նոր ծրագրերի իրականացումը ջրային, առողջապահության և այլ ոլորտներում:

- Ռազմավարության հիմնական սցենարի ներքո 2026-2028 թվականներին եվրապարտատոմսերի նոր թողարկում չի նախատեսվում: Սակայն, չկանխատեսված մակրոտնտեսական շոկերի, ֆինանսական ցնցումների կամ հարկաբյուջետային անկայուն իրավիճակների պայմաններում, եթե կառավարության ֆինանսական կարիքը հնարավոր չի լինի բավարարել միջազգային ֆինանսական կառույցներից կամ ներքին շուկայից, կդիտարկվի նաև եվրապարտատոմս թողարկելու նպատակահարմարությունը: Հիմնական սցենարում ենթադրվել է, որ 2029 թվականին մարվող 500 մլն ԱՄՆ դոլարի եվրապարտատոմսը կվերաֆինանսավորվի նոր եվրապարտատոմսի թողարկմամբ:
- ՀՀ կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի մշակման շրջանակներում կներդրվի ՀՀ կառավարության պարտքի հաշվառման, սպասարկման և այլ գործընթացների կազմակերպման նոր էլեկտրոնային համակարգ:
- Միջազգային լավագույն փորձին համապատասխան վերանայված «Պետական պարտքի մասին» նոր օրենքի ընդունումից հետո՝ կմշակվեն ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտեր:
- Կուսումնասիրվի պետական գանձապետական պարտատոմսերի շուկայում գործող առաջնային դիլերների համար լրացուցիչ խթաններ ներդնելու հնարավորությունները:
- Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից է թափանցիկության ու հասարակության հետ մշտական հաղորդակցության ապահովումը: Այդ նպատակով կառավարությունը կշարունակի ներդրողների և հանրության հետ բաց ու հրապարակային աշխատանքները և պարտքի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը:
- Պարբերաբար կիրականացվեն իրազեկման արշավներ՝ ներքին և արտաքին ներդրողներին ներկայացնելով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումների վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ:
- Կայունացման հաշվի օրենսդրական կարգավորումների համաձայն՝ կապահովվի Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա բյուջետային ուղերձում այդ տարվա համար կանխատեսված համախառն ներքին արդյունքի առնվազն մեկ տոկոսի չափով միջոցների առկայությունը: Ներքին և արտաքին շուկաներում անցանկալի գործընթացների դեպքում այն կապահովագրի կառավարության պարտքի գծով վճարումների անխափան իրականացումը և հարկ եղած դեպքերում կաջակցի ՀՀ պետական բյուջեի կատարմանը:

1.4.3. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության ընտրությունը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության մեջ կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշները համադրելի են 2027-2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակին: ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությամբ նախատեսվել է, որ «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշը միջնաժամկետ հատվածի վերջին տարիներին կնվազի՝ հասնելով 48.2%-ի: Տոկոսավճարների բեռը միջնաժամկետ հատվածում նվազեցնելու, ինչպես նաև պետական բյուջեի արտարժույթային մուտքերի կարիքն ապահովելու նպատակով, դրամային պարտքի մասնաբաժինը պարտքի կառուցվածքում միջնաժամկետ հատվածում 2025 թվականի տարեվերջի նկատմամբ կնվազի միջին տարեկան 0.5 տոկոսային կետով, սակայն կապահպանվի պատմականորեն բարձր միջակայքում:

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը հիմնականում իրականացվելու է մինչև մեկ տարի մարման ժամկետով պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր, 3 և 5 տարի մարման ժամկետով միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, 10 և 30 տարի մարման ժամկետով երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, ինչպես նաև 6 ամիս, 1, 2 և 3 տարի մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով:

Արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է երկկողմ և բազմակողմ միջազգային վարկատուներից նպատակային, բյուջետային աջակցության և արդյունքի վրա հիմնված ոլորտային թիրախային վարկեր ներգրավելու միջոցով, իսկ միջազգային կապիտալի շուկայում բարենպաստ պայմանների առկայության դեպքում 2029թ. մարման ենթակա եվրապարտատոմսերի վերաֆինանսավորման նպատակով կիրականացվի նոր եվրապարտատոմսի թողարկում:

Ռազմավարության ընտրությունը կատարվում է ծախսերի և ռիսկերի ցուցանիշների մի ամբողջ համակարգի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում: ՀՀ կառավարության պարտքը բնութագրող ծախսերի և ռիսկերի ցուցանիշների համալիր ուսումնասիրության արդյունքում ընտրվել է այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի ներքին պարտքի շուկայի զարգացմանը, կապահովի ՀՀ կառավարության պարտքի գծով ռիսկերի չափավոր մակարդակ, միաժամանակ, միջնաժամկետ հատվածում մակրոտնտեսական և հարկաբյուջետային հիմնական կանխատեսումների իրականացման ներքո՝ կնվազի պետական պարտքի գծով ծախսերի բեռը:


Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը նախատեսելիս հաշվի են առնվել տնտեսությունում մակրոմիջավայրի զարգացումներն ըստ կանխատեսումների բազային սցենարի, իրացվելիության առկա մակարդակը, պետական գանձապետական պարտատոմսերի նկատմամբ ձևավորված կայուն պահանջարկը և պարտքի սպասարկման մեծությունը:

2027 թվականին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին կիրականացվի ավելի մեծ ծավալներով, քան ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին, իսկ 2028-2029 թվականներին կանխատեսվում է հակառակը՝ ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը կգերազանցի արտաքին փոխառու զուտ միջոցների ծավալները:

Աղյուսակ 5. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին 2025-2029 թվականներին (մլրդ դրամ)

| | 2025 փաստ. | 2026 պետբյուջեի ծրագիր | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---|---------------|------------------------------|------------|---------------|------------|------------|
| Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին | 438.7 | 649.7 | 598.5 | 527.4 | 475.4 | 392.5 |
| որից՝ | | | | | | |
| Ներքին փոխառու զուտ միջոցներ (առանց մուրհակների) | 297.0 | 315.0 | 298.2 | 250.0 | 244.0 | 230.0 |
| Արտաքին փոխառու զուտ միջոցներ | 141.7 | 334.7 | 300.3 | 277.4 | 231.4 | 162.5 |

Գծապատկեր 6. Ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը 2025-2029 թվականներին



Միջնաժամկետ հատվածում, ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքում ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցները բաշխվել են այնպես, որ պահպանվի ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշռի նվազագույն 40% ուղենիշը, միաժամանակ, հաշվի են առնվել 2027-2029 թվականների հարկաբյուջետային շրջանակի առանձնահատկությունները, այդ թվում արտարժույթային ելքերի առկայության պայմաններում առաջացող արտարժույթի կարիքը և ներքին շուկայի հագեցվածություն չառաջացնելու մղումը: Վերջինիս պայմաններում, չնվազեցնելով ներքին պարտքի շուկայում ակտիվությունը, նախորդ ռազմավարության համեմատ, անհրաժեշտություն է առաջանում ճշգրտել տարեկան զուտ թողարկումների ծավալը:

Ֆինանսավորման կարիքը բավարարելու նպատակով միջնաժամկետ հատվածում նախատեսվում է միջոցներ ներգրավել ինչպես արտաքին վարկերով և փոխառություններով, այնպես էլ պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումների միջոցով: Միջազգային ֆինանսական շուկաներում բարենպաստ պայմանների առկայության դեպքում կիրականացվի արտարժույթային պարտատոմսերի թողարկում՝ 2029 թվականին մարվող պարտատոմսերի վերաֆինանսավորման նպատակով:

Աղյուսակ 6. Ֆինանսական կարիքի բավարարումը փոխառու միջոցների հաշվին 2025-2029 թվականներին (մլրդ դրամ)

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|------------------------|------------|------------|------------|------------|------------|
| Ընդամենը ֆինանսավորում | 1,105.0 | 1,179.1 | 1,106.6 | 1,088.2 | 1,340.0 |
| որից | | | | | |

| | | | | | |
|------------------------------------|-------|-------|-------|-------|-------|
| արտաքին վարկեր և փոխառություններ | 141.6 | 430.9 | 412.9 | 379.7 | 317.7 |
| պետական գանձապետական պարտատոմսեր | 676.0 | 748.2 | 693.7 | 708.5 | 817.7 |
| արտարժույթային պետական պարտատոմսեր | 287.4 | - | - | - | 204.7 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Աղյուսակ 7. Ֆինանսական կարիքի բավարարումը արտարժույթային փոխառու միջոցների հաշվին 2025-2029 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Ընդամենը ֆինանսավորում | 1,103.0 | 1,244.8 | 1,089.2 | 1,001.7 | 1,338.1 |
| որից | | | | | |
| արտաքին նպատակային վարկեր և փոխառություններ | 127.4 | 344.8 | 386.7 | 413.3 | 491.2 |
| բյուջետային աջակցության վարկեր | 244.1 | 900.0 | 702.5 | 588.3 | 346.9 |
| արտարժույթային պետական պարտատոմսեր | 731.4 | - | - | - | 500.0 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

1.4.4. Ընտրված ռազմավարության ծախսերի և ռիսկերի վերլուծությունը

2027-2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախանշված հիմնական մակրոտնտեսական սցենարի պայմաններում, որտեղ հաշվի են առնվել կանխատեսվող ներքին ու արտաքին պարտքային շուկաների վարքագիծը, իսկ ՀՀ կառավարության ֆինանսական կարիքը 2027 թվականին նվազում է 2026 թվականի նկատմամբ շուրջ 10%-ով, հիմնականում պայմանավորված անվանական պակասուրդի նվազմամբ, ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարների բեռը միջնաժամկետ հատվածի վերջում կայունանում է ՀՆԱ-ի նկատմամբ և նվազում պետական բյուջեի ծախսերի և եկամուտների կառուցվածքում: Ռազմավարության տարբեր սցենարների վերլուծության ժամանակ որոշիչ գործոն է հանդիսացել երկարաժամկետ հատվածում կառավարության պարտքի տոկոսավճարները պետական բյուջեի եկամուտների 10% մակարդակում թիրախավորելու նպատակը:

Աղյուսակ 8. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ցուցանիշների կանխատեսումները

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|--|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Տոկոսավճար/ՀՆԱ (%) | 3.1 | 3.1 | 3.2 | 3.1 | 3.1 |
| Տոկոսավճար/պետական բյուջեի եկամուտներ(%) | 12.1 | 12.3 | 12.3 | 12.0 | 11.8 |

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---------------------------------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%) | 10.6 | 10.7 | 10.9 | 10.9 | 11.1 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Ընդհանուր առմամբ, կանխատեսվում է, որ միջնաժամկետ հատվածում՝ հիմնական մակրոտնտեսական սցենարի դեպքում, «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշը 2027 թվականին նախորդ տարվա նկատմամբ կավելանա 0.9 տոկոսային կետով, իսկ հետագա տարիներին կնվազի և 2029 թվականի տարեվերջին կկազմի 48.2%: ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/ՀՆԱ, ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/պետական բյուջեի եկամուտներ և ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր ցուցանիշները միջնաժամկետ ժամանակահատվածի վերջում կանխատեսվում են համապատասխանաբար 3.1%, 11.8% և 11.1%: Ընտրված պարտքի ռազմավարությունը, մակրոտնտեսական հիմնական սցենարի պայմաններում, հաշվի է առել ֆինանսավորման պոտենցիալ աղբյուրների հնարավորությունները, ծախսերի և ռիսկերի ցուցանիշների համախումբը՝ ձգտելով ֆինանսավորման աճող կարիքները բավարարելիս, ռիսկերի ընդունելի մակարդակի պայմաններում, հնարավորինս նվազեցնել պարտքի տոկոսավճարների բեռը:

Ռիսկերի կառավարման տեսակետից կարևորվել են փոխարժեքի, վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկերը:

Փոխարժեքի ռիսկ

«Դրամային պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշի մակարդակը միջնաժամկետ հատվածում կնվազի չափավոր տեմպով՝ տարեկան միջինում 0.5 տոկոսային կետով, և կգտնվի սահմանված ուղենշային տիրույթում ժամանակահատվածի վերջում կազմելով 49.9%: Ներքին պարտքի մասնաբաժնի նվազման այս տեմպը համապատասխանում է ֆինանսական շուկայում պետական պարտատոմսերի համար ակնկալվող պահանջարկին համահունչ տեղաբաշխումների ծավալի, ինչպես նաև՝ տոկոսավճարների բեռի աճը միջնաժամկետ հատվածում զսպող մակարդակի հետ:

Աղյուսակ 9. ՀՀ կառավարության ներքին պարտքի և ՀՀ դրամով ներգրավված պարտքի տեսակարար կշիռներն ընդամենը պարտքում

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| ՀՀ դրամով ներգրավված պարտք/Ընդամենը պարտք (%) | 52.9 | 51.5 | 50.4 | 50.3 | 49.9 |
| Ներքին պարտք/Ընդամենը պարտք (%) | 53.4 | 52.0 | 50.8 | 50.6 | 50.0 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Փոխարժեքի ռիսկի կառավարման և տոկոսավճարների աճը զսպելու նպատակով «Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշի մակարդակը միջնաժամկետ հատվածում կնվազի միջինում տարեկան 0.7 տոկոսային կետով:

2029 թվականի վերջին արտարժույթային պարտքի տեսակարար կշիռը 2025 թվականի տարեվերջի նկատմամբ ավելանում է 3.1 տոկոսային կետով և կազմում 50.1%, ուստի ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը առաջիկա տարիներին դեռևս կմնա որպես նշանակալի ռիսկ:

ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքում, կանխատեսվող ժամանակահատվածի վերջում, 2025 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ SDR-ի կշիռը նվազում է 5.7 տոկոսային կետով, քանի որ SDR-ով վարկերն աստիճանաբար մարվում են և նոր վարկեր չեն ներգրավվում, քանի որ միջազգային կազմակերպություններն այդ արժույթով վարկեր տրամադրում են եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներին: Կառավարությունը շարունակում է արտարժույթային պարտքի դիվերսիֆիկացման քաղաքականությունը, որի արդյունքում 2025թ. հետ համեմատությամբ հիմնական արժույթներից ԱՄՆ դոլարի կշիռը միջնաժամկետի վերջում կնվազի 1.3 տոկոսային կետով, իսկ եվրոյի կշիռը կավելանա 7.5 տոկոսային կետով:

Աղյուսակ 10. ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքը 2025-2029 թվականներին տարեվերջի դրությամբ (%)

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|-----|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| USD | 57.7 | 58.2 | 57.0 | 56.6 | 56.4 |
| SDR | 14.4 | 12.6 | 11.1 | 9.9 | 8.7 |
| EUR | 25.9 | 27.4 | 30.1 | 31.9 | 33.4 |
| JPY | 1.7 | 1.6 | 1.5 | 1.4 | 1.4 |
| AED | 0.0 | 0.0 | - | - | - |
| CNY | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.1 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքում SDR-ով արտահայտված պարտքն աստիճանաբար կնվազի: Եթե SDR-ը, որը կազմված է հինգ արժույթներից, տարանջատում ենք այդ արժույթների կշիռներին համապատասխան՝ USD – 43.38%, EUR – 29.31%, GBP – 7.44%, JPY – 7.59% և CNY – 12.28%, ապա միջնաժամկետ ժամանակահատվածի ավարտին ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքում ԱՄՆ դոլարով պարտքի կշիռը 64.0%-ի փոխարեն կկազմի 60.2%, իսկ եվրոյով պարտքի կշիռը 30.1%-ից կաճի և կկազմի 35.9%:

Աղյուսակ 11. ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքը 2025-2029 թվականների տարեվերջի դրությամբ՝ SDR-ի տարանջատմամբ (%)


| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|-----|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| USD | 64.0 | 63.6 | 61.9 | 60.9 | 60.2 |
| EUR | 30.1 | 31.1 | 33.4 | 34.8 | 35.9 |
| GBP | 1.1 | 0.9 | 0.8 | 0.7 | 0.6 |
| JPY | 2.8 | 2.6 | 2.4 | 2.2 | 2.0 |
| AED | 0.0 | 0.0 | - | - | - |

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|-----|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| CNY | 2.0 | 1.7 | 1.5 | 1.4 | 1.2 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Փոխարժեքի ռիսկի նվազեցման և արդյունավետ կառավարման նպատակով արտարժույթային շուկայի զարգացմանը զուգահեռ կդիտարկվի հեջավորման տարբեր մոտեցումների կիրառման նպատակահարմարությունը (օրինակ՝ արտարժույթային սվոփներ):

Գծապատկեր 7. ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի մարումների և տոկոսավճարների կշիռը նախորդ տարվա վերջի դրությամբ ԿԲ պահուստներում 2024-2029 թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ, ԿԲ և ԱՄՀ

ՀՀ կառավարության տվյալ տարվա արտարժույթային պարտքի մարումների և տոկոսավճարների կշիռը նախորդ տարվա վերջի դրությամբ ՀՀ ԿԲ պահուստներում ցուցանիշը 2025 թվականին էապես աճել է և կազմել 27.0%՝ պայմանավորված 2025 թվականին կատարված եվրապարտատոմսերի մարմամբ: 2028 թվականների վերջի դրությամբ այս ցուցանիշը նվազում է մինչև 13.0%, իսկ 2029 թվականին կազմում է 22.3%: Դա նշանակում է, որ միջնաժամկետ հատվածի վերջին արտարժույթային պահուստների ավելի քան մեկ հինգերորդն ուղղվում է ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի մարումներին և տոկոսավճարներին, ինչն էական գործոն է հանդիսացել ՀՀ կառավարության նոր պարտքի ներգրավման արժույթների սցենարը մշակելիս:

Վերաֆինանսավորման ռիսկ

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է՝ պայմանավորված առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի մարումների ծավալներով և միջազգային ու ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր բացասական զարգացումներով: Նոր պարտքի ներգրավման ֆինանսական պայմանների բանակցման և որոշումների կայացման ժամանակ ՀՀ կառավարությունը ձգտում է հարթեցնել պարտքի մարումների գրաֆիկը՝ մեղմելով վերաֆինանսավորման ռիսկը: Վերաֆինանսավորման ռիսկի նվազեցման նպատակով կիրառվում են նաև հետզնումներ:

Աղյուսակ 12. ՀՀ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի ցուցանիշները 2025-2029 թվականներին

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի) | 6.9 | 7.1 | 6.9 | 6.8 | 6.8 |
| ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի) | 7.1 | 7.4 | 7.2 | 6.9 | 7.0 |
| ՀՀ կառավարության դրամային պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի) | 6.7 | 6.8 | 6.6 | 6.7 | 6.7 |
| Առաջիկա երեք տարվա ընթացքում մարման ենթակա պարտքի տեսակարար կշիռ, (%) | 27.0 | 28.9 | 27.4 | 33.5 | 30.1 |
| Առաջիկա երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կշիռը արտարժույթային պարտքի մեջ, (%) | 16.7 | 20.4 | 19.5 | 28.9 | 25.2 |
| Առաջիկա երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքի մեջ, (%) | 36.1 | 36.9 | 35.2 | 38.0 | 34.8 |
| Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%) | 10.6 | 8.7 | 8.4 | 12.5 | 8.3 |
| Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կշիռը արտարժույթային պարտքի մեջ (%) | 6.7 | 4.5 | 4.5 | 10.1 | 4.6 |
| Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքի մեջ (%) | 14.0 | 12.6 | 12.2 | 15.0 | 11.9 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Կանխատեսվում է, որ «ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի մինչև մարում միջին ժամկետի» ցուցանիշը 2029 թվականի վերջին կկազմի 6.8 տարի՝ ուղենիշով սահմանված միջակայքի ստորին շեմից 0.2 տարով ցածր: Այնուամենայնիվ, առնվազն 7 տարի ժամկետի սահմանումը հանդիսանում է ձգտումային ցուցանիշ և 30 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի վերականգնմանը զուգահեռ միջնաժամկետ հատվածում կավելանա նաև պարտքի միջին ժամկետը: «Դրամային պարտքի մինչև մարում միջին ժամկետի» ցուցանիշը 2029 թվականի վերջին կկազմի 6.7 տարի՝ մնալով նույն մակարդակում:


«Երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշը 2029 թվականի տարեվերջին կկազմի 30.1%, ընդ որում, երեք տարվա ընթացքում մարվող

ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կշիռը արտարժույթային պարտքում կկազմի 25.2%, իսկ երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքում՝ 34.8%: 2028 թվականի վերջին «Երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կշիռն ընդամենը արտարժույթային պարտքի մեջ» ցուցանիշի կտրուկ ավելացումը պայմանավորված է 2031 թվականին մարման ենթակա 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով արտարժույթային պարտատոմսերով: Առաջիկա երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքի մեջ պայմանավորվում է նախկինում թողարկված ուղենշային պարտատոմսերի մարման տարիներով:

Վերաֆինանսավորման ռիսկի կառավարման շրջանակներում «Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշը կավելանա 2028 թվականի վերջի դրությամբ և կկազմի 12.5%: 2028 թվականի վերջին «Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կշիռն ընդամենը արտարժույթային պարտքի մեջ» ցուցանիշի կտրուկ ավելացումը ևս պայմանավորված է 2029 թվականին մարման ենթակա 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով արտարժույթային պարտատոմսերով: Ընդ որում, մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կշիռը արտարժույթային պարտքում միջնաժամկետ հատվածի վերջում կկազմի 4.6%, իսկ մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքում՝ 11.9%:

Ստորև ներկայացվում է նաև ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների կանխատեսումային ցուցանիշները, որոնք իրենցից ներկայացնում են տարվա ընթացքում մարումների և տոկոսավճարների հանրագումարը:

Գծապատկեր 8. ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումները 2024-2029 թվականների ընթացքում (մլրդ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների ցուցանիշը միջնաժամկետ հատվածում կտրուկ աճում է՝ 2029 թվականին կազմելով 1,441 մլրդ դրամ:

Աղյուսակ 13. ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի (մլրդ դրամ)

| | 2025 փաստ. | 2026 պետբյուջեի ծրագիր | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|--|---------------|------------------------------|---------------|---------------|---------------|---------------|
| ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի, որից՝ | 1,015.4 | 1,049.7 | 1,017.6 | 1,005.2 | 1,069.7 | 1,440.6 |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 226.8 | 276.7 | 246.1 | 217.8 | 242.1 | 258.0 |
| տոկոսավճար | 62.9 | 97.0 | 66.3 | 82.4 | 93.8 | 102.9 |
| մարում | 163.9 | 179.8 | 179.8 | 135.5 | 148.3 | 155.2 |
| պետական գանձապետական պարտատոմսեր | 632.7 | 733.1 | 733.1 | 748.6 | 788.9 | 939.2 |
| տոկոսավճար | 253.7 | 283.1 | 283.1 | 304.9 | 324.4 | 351.5 |
| մարում | 379.0 | 450.0 | 450.0 | 443.7 | 464.5 | 587.7 |
| արտարժույթային պետական պարտատոմսեր | 155.9 | 39.9 | 38.4 | 38.8 | 38.8 | 243.4 |
| տոկոսավճար | 32.5 | 39.9 | 38.4 | 38.8 | 38.8 | 38.8 |
| մարում | 123.4 | - | - | - | - | 204.7 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

ՀՀ կառավարությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման գործիքների (հետգնումներ, փոխանակումներ, ՀՀ կենտրոնական բանկում միջոցների ավանդադրում և այլն) կիրառմամբ վերահսկում է վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի հետ կապված ռիսկերը արժանի են մեծ ուշադրության, քանի որ շուկայական պայմաններով ներգրավվող փոխառու միջոցների կշիռը գնալով աճում է: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակն է ապահովել կառավարության պարտքի այնպիսի կառուցվածք, որի դեպքում ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների փոփոխությունը հնարավորինս քիչ ազդեցություն կունենա կանխատեսվող տոկոսագումարների մակարդակի վրա: ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները կանխատեսվող ժամանակահատվածում մնում են կառավարելի:

Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը 2029 թվականի տարեվերջին, ըստ կանխատեսման, կկազմի 84.1%: Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը ուղենշային միջակայքում պահպանելուն կնպաստեն ինչպես կանխատեսվող ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից տեղաբաշխվող ֆիքսված տոկոսադրույքով պետական գանձապետական պարտատոմսերը, այնպես էլ արտաքին ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների հնարավոր նվազմանը զուգահեռ՝ ֆիքսված տոկոսադրույքով արտաքին վարկերի ներգրավումը: Անհրաժեշտության դեպքում, տոկոսադրույքի ռիսկը կառավարելու նպատակով, արտաքին վարկատուների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:

Աղյուսակ 14. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված և լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը 2025-2029 թվականներին

(տոկոս)

| | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| ՀՀ կառավարության պարտք, այդ թվում | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Ֆիքսված տոկոսադրույքով | 86.2 | 84.7 | 84.9 | 85.1 | 84.1 |
| Լողացող տոկոսադրույքով | 13.8 | 15.3 | 15.1 | 14.9 | 15.9 |
| ՀՀ կառավարության արտարժույթային պարտք այդ թվում | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Ֆիքսված տոկոսադրույքով | 70.7 | 68.6 | 69.7 | 70.0 | 67.8 |
| Լողացող տոկոսադրույքով | 29.3 | 31.4 | 30.3 | 30.0 | 32.2 |
| ՀՀ կառավարության դրամային պարտք այդ թվում | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Ֆիքսված տոկոսադրույքով | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Լողացող տոկոսադրույքով | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

«ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետի» ցուցանիշը ժամանակահատվածի վերջում կկազմի 5.7 տարի, իսկ մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի մասնաբաժինը՝ 23.2%:

Աղյուսակ 15. ՀՀ կառավարության պարտքի տրոստադրույքի ռիսկի ցուցանիշները 2025-2029 թվականներին

| | 2025 վաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի) | 5.5 | 5.9 | 5.7 | 5.6 | 5.7 |
| ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի) | 4.3 | 4.9 | 4.8 | 4.6 | 4.6 |
| ՀՀ կառավարության դրամային պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի) | 6.7 | 6.8 | 6.6 | 6.7 | 6.7 |
| Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%) | 24.7 | 23.3 | 22.8 | 26.7 | 23.2 |
| Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կշիռը արտաքին պարտքի մեջ (%) | 36.6 | 34.5 | 33.4 | 38.6 | 34.9 |
| Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը ներքին պարտքի մեջ (%) | 14.0 | 12.6 | 12.2 | 15.0 | 11.9 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

1.4.5. Ուղենշային ցուցանիշները

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելին բնորոշ ռիսկերը: Այդ պատճառով ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը սահմանում է պարտքի պորտֆելի ռիսկերի ուղենշային ցուցանիշներ, որոնց նպատակն է որոշակի սահմանափակումների միջոցով պահպանել փոխարժեքի, տոկոսադրույքի և վերաֆինանսավորման ռիսկերը վերահսկելիության շրջանակներում: Ուղենշային ցուցանիշները սահմանվել են՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության պարտքի կառավարման միջավայրին բնորոշ առանձնահատկություններն ու սահմանափակումները:

Աղյուսակ 16. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի 2027-2029 թվականների ուղենշային ցուցանիշները (տարեվերջին)

| | Ուղենիշ |
|---|-------------------|
| Վերաֆինանսավորման ռիսկ | |
| Մինչև մարում միջին ժամկետը | 7– 10 տարի |
| Առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ | առավելագույնը 35% |
| Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ | առավելագույնը 20% |

| | Ուղենիշ |
|---|-------------|
| Տոկոսադրույքի ռիսկ | |
| Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 80% |
| Փոխարժեքի ռիսկ | |
| Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 40% |
| ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 40% |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2026-2028 թվականների ռազմավարության համեմատությամբ պարտքի պորտֆելի ուղենշային ցուցանիշներում փոփոխություն չի նախատեսվել: Դա նշանակում է, որ ՀՀ կառավարության պարտքի կառավարման քաղաքականության մոտեցումները և քանակական նպատակադրումները կայուն են միջնաժամկետ հատվածում: Այնուամենայնիվ, մակրոտնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական սցենարների ներքո «ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» և «Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշները էականորեն բարձր կլինեն ուղենշային մակարդակներից, իսկ «Մինչև մարում միջին ժամկետը» մոտ կլինի ուղենշային միջակայքի ստորին սահմանին:


1.4.6. Զգայունության վերլուծություններ

Մինչ այժմ կատարված ծախսերի և ռիսկերի վերլուծությունը հիմնված է եղել կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա և իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմնական սցենար: Ստորև ներկայացվում է շուկայական փոփոխականների նկատմամբ կիրառված տարբեր շոկերի արդյունքում ծախսերի և ռիսկերի ցուցանիշների շեղման չափը հիմնական սցենարի, այսինքն ընտրված ռազմավարության արդյունքներից:

Եթե 2027 թվականի վերջին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքն արժեզրկվի 23%-ով, որը պատմականորեն գրանցված ՀՀ դրամի ամենամեծ արժեզրկումն է, ապա ՀՀ կառավարության պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին 2027 թվականին բազային սցենարի կանխատեսման նկատմամբ կավելանա մոտ 5 տոկոսային կետով՝ կազմելով 54.5%, իսկ 2029 թվականի տարվերջին, նույնիսկ նվազող անվանական պակասուրդի պայմաններում, կգերազանցի 50%-ը՝ կազմելով 53.1%:

Եթե եռամյա ժամանակահատվածի առաջին տարվա վերջին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքն արժեզրկվի 30%-ով, որը Համաշխարհային բանկի կողմից մշակված պետական պարտքի ռազմավարության քանակական գործիքում սովորաբար կիրառվող ազգային արժույթի արժեզրկման տեմպն է, ապա ՀՀ կառավարության պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին 2027 թվականին բազային սցենարի կանխատեսման նկատմամբ կավելանա մոտ 7 տոկոսային կետով՝ կազմելով 56.2%, իսկ 2029 թվականի տարվերջին կկազմի 54.7%:

Գծապատկեր 9. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը (%) 2025-2029 թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Տոկոսադրույքի շուկա

Լողացող տոկոսադրույքների՝ SOFR-ի և 6-ամսյա եվրիբորի մեկ տոկոսային կետի փոփոխության դեպքում 2027-2029 թվականներին ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կփոփոխվեն տարեկան 17 մլրդ դրամով:

Աղյուսակ 17. Լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի տոկոսավճարների վրա

| | 2027 | 2028 | 2029 |
|---|------|------|------|
| ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ) | 13.6 | 17.2 | 20.2 |
| այդ թվում | | | |
| SOFR (մլրդ դրամ) | 4.7 | 4.5 | 4.2 |
| 6-ամսյա Euribor (մլրդ դրամ) | 8.9 | 12.7 | 15.9 |
| ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (%) | 16.5 | 18.3 | 19.6 |
| ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի տոկոսավճարի փոփոխության կշիռը պետբյուջեի սեփական եկամուտներում (առանց դրամաշնորհի) (%) | 0.4 | 0.5 | 0.5 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

Ներքին պարտքի շուկայում, միջնաժամկետ հատվածի սկզբում, եկամտաբերության կորի մեկ տոկոսային կետով աճը 2027-2029 թվականների ընթացքում կավելացնի պարտքի տոկոսավճարները միջինը շուրջ 17.2 մլրդ դրամով: 2027 թվականի տոկոսավճարների փոփոխության չափը համեմատաբար փոքր է, քանի որ եկամտաբերության կորի բարձրացումը ազդում է միայն նոր թողարկումների վրա:

Աղյուսակ 18. Միջնաժամկետ հատվածի սկզբում ՀՀ կառավարության դրամային պարտքի տոկոսադրույքի մեկ տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի վրա

| | 2027 | 2028 | 2029 |
|--|------|------|------|
| ՀՀ կառավարության դրամային պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ) | 1.3 | 6.1 | 9.8 |
| ՀՀ կառավարության դրամային պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (%) | 0.4 | 1.9 | 2.8 |
| ՀՀ կառավարության դրամային պարտքի տոկոսավճարի փոփոխության կշիռը պետբյուջեի սեփական եկամուտներում (առանց դրամաշնորհ) (%) | 0.04 | 0.16 | 0.23 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Իրականացված զգայունության վերլուծությունները ցույց են տալիս, որ միջնաժամկետ հատվածում տոկոսադրույքի շուկր էական դեր կարող է ունենալ պարտքի գծով տոկոսավճարների վրա՝ հանգեցնելով տոկոսավճարների բեռի ցուցանիշների էական աճի:

Եզրակացություններ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դրամային պարտքի շարունակական աճը էականորեն նվազեցրել է փոխարժեքի ռիսկի ազդեցությունը: Շուկայական պարտքի կշռի ավելացմանը զուգահեռ զգալի են դարձել նաև վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկերը, որոնց շարունակական մոնիտորինգը և հետևողական կառավարումը նույնպես առաջնային նշանակություն է ստանում: 2025 թվականի երկրորդ կիսամյակից սկսած պարտքի շուկայում տոկոսադրույքների աճի միտումը բեկվել է՝ ձևավորելով տոկոսադրույքների առումով դրական միջավայր: Այնուամենայնիվ, դրամային պարտքի կշռի շարունակական աճը հանգեցրել է տոկոսավճարների բեռի ավելացման, որի հետագա նվազման և կայունացման նպատակով, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման այնպիսի կառուցվածք է ընտրվել, որ միջնաժամկետում, կառավարելի պահելով փոխարժեքի, վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները, միաժամանակ սահմանափակվի պարտքի տոկոսավճարների բեռի հնարավոր աճը և նպատակադրվի տոկոսավճարների բեռի նվազումը:

ՀՀ կառավարությունն առաջնային է համարում պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը, հետևաբար, պարտատոմսերի ծավալներն այնպիսին պետք է լինեն, որ ներքին պարտքի շուկայի ակտիվությունը և պարտատոմսերի իրացվելիությունը չնվազի: Այդ պատճառով, ի թիվս այլ գործոնների պարտատոմսերի թողարկման զուտ ծավալների ծրագրավորման ժամանակ հաշվի են առնվել նաև հիմնական ներդրողների պահանջարկը և արձագանքները շուկայի զարգացումներին:

Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է առավել մատչելի դարձնել ոչ ռեզիդենտների մուտքը պետական գանձապետական պարտատոմսերի շուկա և ապահովել ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում դրամային պարտքի առնվազն 40% մասնաբաժին: Նախատեսվում է նաև կիրառել պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների կազմակերպման

էլեկտրոնային համակարգը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա պետական գանձապետական պարտատոմսերի իրացվելիության աճի համար:

Կարևոր է նշել, որ միայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները բավարար չեն ՀՀ կառավարության ներքին պարտքի շուկան էականորեն զարգացնելու համար: Ներքին պարտքի շուկայի զարգացման և ներդրողների բազայի ընդլայնման նախապայմաններից է նաև ֆինանսական շուկայի ոչ բանկային հատվածի հետագա զարգացումը:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրները սահմանելիս բացի ՀՀ կառավարության պարտքի պորտֆելին բնորոշ ծախսերի և ռիսկերի ցուցանիշների համախմբի վերլուծություններից, ֆինանսավորման աղբյուրների տարբերակման անհրաժեշտությունից, հաշվի են առնվել նաև ՀՀ պետական բյուջեի հոսքերում արտարժույթային մուտքերի և ելքերի դինամիկան:

Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կընդլայնվի, իսկ ֆինանսավորման գործիքները կդիվերսիֆիկացվեն: Այս համագործակցության շրջանակում ծրագրային վարկերն ուղղվելու են կարևոր ենթակառուցվածքների ձևավորմանը, իսկ մյուս վարկերի մեջ աստիճանաբար ընդլայնվելու է արդյունքի վրա հիմնված գործիքների կիրառումը, որոնք խթանելու են տնտեսական աճը և, հետևաբար, գեներացնելու են եկամուտներ, որոնք էլ իրենց հերթին ապահովելու են պարտքի կայունությունն ու պարտքի բեռի ցուցանիշների կառավարելի մակարդակում պահպանումը:

ՀՀ կառավարությունը միջնաժամկետ հատվածում շարունակելու է ՀՀ կառավարության պարտքի մարման գրաֆիկի հարթեցման և վերաֆինանսավորման ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները՝ կիրառելով իրացվելիության կառավարման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են կանխիկի բուֆերի ձևավորումը, հետգնումների ու փոխանակումների իրականացումը: Ըստ անհրաժեշտության և իրավիճակի՝ կիրականացվի նաև տոկոսադրույքի և փոխարժեքի ռիսկի ակտիվ կառավարում, ինչպես օգտվելով առկա վարկային պայմանագրերի հնարավորություններից և փոփոխելով գործող վարկերի պայմանները, այնպես էլ ածանցյալ գործիքների ներդրմամբ:

Հավելված

ՀՀ կառավարության պարտքը բնութագրող 2024-2025 թվականների փաստացի, 2026 թվականի պետական բյուջեի ծրագրային և 2026-2029 թվականների կանխատեսումային ցուցանիշները
Աղյուսակ 19. ՀՀ կառավարության պարտքի հիմնական ցուցանիշները 2024-2029 թվականներին (մլրդ դրամ)

| | 2024 փաստ. | 2025 փաստ. | 2026 պետբյուջեի ծրագիր | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|--|---------------|---------------|------------------------------|---------------|---------------|---------------|---------------|
| Կառավարության պարտք | 4,892.8 | 5,354.5 | 6,310.3 | 6,010.0 | 6,648.7 | 7,161.5 | 7,688.6 |
| % ՀՆԱ-ի նկատմամբ | 48.0 | 47.3 | 52.9 | 48.7 | 49.6 | 49.1 | 48.2 |
| Ըստ գործիքակազմի | | | | | | | |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 1,786.8 | 1,754.5 | 2,313.3 | 2,125.1 | 2,483.9 | 2,740.1 | 3,010.5 |
| պետական գանձապետական պարտատոմսեր | 2,474.0 | 2,782.7 | 3,098.2 | 3,092.3 | 3,351.8 | 3,605.1 | 3,835.5 |
| արտարժույթային պետական պարտատոմսեր | 619.9 | 762.7 | 832.9 | 792.6 | 813.0 | 816.2 | 842.5 |
| արտաքին երաշխիքներ | 2.6 | 2.5 | 2.3 | - | - | - | - |
| ներքին երաշխիքներ | 9.5 | 52.0 | 63.5 | - | - | - | - |
| Կառավարության պարտքի տոկոսավճար | 313.6 | 349.1 | 419.9 | 387.8 | 426.0 | 457.0 | 493.1 |
| Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%) | 10.6 | 10.6 | 11.6 | 10.7 | 10.9 | 10.9 | 11.1 |
| Տոկոսավճար/պետական բյուջեի սեփական (առանց դրամաշնորհների) եկամուտներ (%) | 12.2 | 12.1 | 13.6 | 12.3 | 12.3 | 12.0 | 11.8 |
| Տոկոսավճար/ՀՆԱ (%) | 3.1 | 3.1 | 3.5 | 3.1 | 3.2 | 3.1 | 3.1 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Աղյուսակ 20. Պետական պարտատոմսերի ցուցանիշները 2024-2029 թվականներին

| | 2024 փաստ. | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|---|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ | 2,474.0 | 2,782.7 | 3,092.3 | 3,351.8 | 3,605.1 | 3,835.5 |
| % ՀՆԱ-ի նկատմամբ | 24.1 | 24.5 | 25.1 | 25.0 | 24.7 | 24.1 |

| | | | | | | |
|---|---------|---------|---------|---------|---------|---------|
| Ըստ մարման մնացած օրերի, մլրդ դրամ | | | | | | |
| Մինչև 1 տարի | 354.0 | 391.6 | 387.0 | 407.8 | 537.1 | 461.7 |
| 1-5 տարի | 932.0 | 1,007.2 | 1,245.5 | 1,300.6 | 1,639.8 | 1,714.0 |
| 5-ից ավելի տարի | 1,188.0 | 1,384.0 | 1,459.8 | 1,643.5 | 1,428.3 | 1,659.7 |
| Ըստ մարման մնացած օրերի կշիռը (%) | | | | | | |
| Մինչև 1 տարի | 14.3 | 14.1 | 12.5 | 12.2 | 14.9 | 12.0 |
| 1-5 տարի | 37.7 | 36.2 | 40.3 | 38.8 | 45.5 | 44.7 |
| 5-ից ավելի տարի | 48.0 | 49.7 | 47.2 | 49.0 | 39.6 | 43.3 |
| Միջին տոկոսադրույք (%) | 10.6 | 10.3 | 10.2 | 10.1 | 10.0 | 10.0 |
| Միջին ժամկետայնություն (տարի) | 7.2 | 6.8 | 6.8 | 6.6 | 6.7 | 6.7 |
| Արտարժույթային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար | 1,563.2 | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 |
| % ՀՆԱ-ի նկատմամբ | 6.0 | 6.7 | 6.4 | 6.1 | 5.6 | 5.3 |
| Միջին տոկոսադրույք (%) | 4.7 | 5.2 | 5.2 | 5.2 | 5.2 | 5.2 |
| Միջին ժամկետայնություն (տարի) | 4.5 | 6.3 | 5.5 | 4.5 | 3.5 | 5.0 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Աղյուսակ 21. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների ցուցանիշները 2024-2029 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)

| | 2024 փաստ. | 2025 փաստ. | 2026 կանխ. | 2027 կանխ. | 2028 կանխ. | 2029 կանխ. |
|--|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Կառավարության վարկեր և փոխառություններ | 4,505.8 | 4,600.7 | 5,362.4 | 6,110.6 | 6,713.9 | 7,146.5 |
| % ՀՆԱ-ի նկատմամբ | 17.5 | 15.5 | 17.2 | 18.5 | 18.8 | 18.9 |
| Ըստ վարկատուի | | | | | | |
| միջազգային ֆինանսական կառույցներից | 3,607.1 | 3,621.4 | 4,356.7 | 5,044.3 | 5,654.5 | 5,997.6 |
| օտարերկրյա պետություններից | 889.4 | 971.1 | 999.0 | 1,061.2 | 1,055.1 | 1,145.0 |
| առևտրային բանկերից | 9.4 | 8.3 | 6.7 | 5.2 | 4.3 | 3.8 |
| Միջին տոկոսադրույք (%) | 3.5 | 3.2 | 3.2 | 3.6 | 3.7 | 3.7 |
| Միջին ժամկետայնություն (տարի) | 7.4 | 7.4 | 8.0 | 8.0 | 7.8 | 7.5 |

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1.1. 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԺԾԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **ՀՆԱ կանխատեսումներից շեղումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի վրա**: Ռիսկերի առարկայացման գնահատումն իրականացվել է Բայեսյան Վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելով, որի նախնական արժեքները նշանակվել են հիմք ընդունելով ՀՀ ՖՆ «AFSM DSGE» կառուցվածքային մոդելով²⁵ գնահատված զգայունության գործակիցները:

1. ՀՆԱ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿ

ՀՆԱ-ի կանխատեսումների ռիսկը գնահատվել է 2010-2025 թվականներին միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող ՀՆԱ-ի կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա, որոնք վերջին տարիների համար եղել են 3.1-ից 3.7 տոկոսային կետ: Ընդ որում, պետք է նշել, որ այս գնահատականներն ամփոփում են կանխատեսումներից ինչպես դրական, այնպես էլ բացասական շեղումները՝ ըստ էության արտացոլելով ՀՆԱ պատմական տատանողականության և ՀՆԱ կանխատեսումների շուրջ ձևավորվող անորոշության ազդեցությունը:

2027-2029թթ-ի համար որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ-ի իրական աճի հավանականությունների բաշխման գծապատկերի 40% հավանականությանը համապատասխանող մակարդակը, որ կլինի 1.4-1.5 տոկոսային կետով ավելի ցածր կանխատեսված մակարդակից, և 30% հավանականությանը համապատասխանող մակարդակը, որ կլինի 1.9 տոկոսային կետով ավելի ցածր (տե՛ս 1.5. Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը բաժինը):

Ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա տնտեսական աճի 1.4-1.5 տոկոսային կետով ցածր լինելու հավանականությունը 2027 թվականին գնահատվում է 24.4 մլրդ դրամ, իսկ 2028 և 2029 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 30.5 և 33.7 մլրդ ՀՀ դրամ: Տնտեսական աճի՝ 1.9 տոկոսային կետով ցածր լինելու սցենարի ազդեցությունը 2027 թվականին գնահատվում է 33.6 մլրդ դրամ, իսկ 2028 և 2029 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 38.6 և 42.7 մլրդ ՀՀ դրամ:

2. ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿ

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին կամ ներքին գործոններից: Սակայն միշտ չէ, որ այդ

²⁵ Տե՛ս Babajanyan, V., Baksa, D., Fukac, M. M., Hakobyan, E., Harutyunyan, A., Karapetyan, N., ... & Zanna, L. F. (2022). The ararat fiscal strategy model: a structural framework for fiscal policy analysis in Armenia. International Monetary Fund. <https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/06/10/The-Ararat-Fiscal-Strategy-Model-A-Structural-Framework-for-Fiscal-Policy-Analysis-in-519522>

Ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում է վերջին տասնամյակում միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող գնաճի կանխատեսումներից փաստացի շեղումների միջին չափը:

Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվում են միջինում դեպի ներքև՝ 1.6 տոկոսային կետի չափով:

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գնաճի դանդաղման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2027, 2028 և 2029 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 12.7, 14.6 և 21.3 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

Չնայած ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն մշակում են փոխարժեքի վերաբերյալ սցենարներ, որոնք արտացոլում են փոխարժեքի վարքագիծը տարբեր մակրոտնտեսական հիմնարարների ներքո, ՀՀ-ում իրականացվում է լողացող փոխարժեքի քաղաքականություն, իսկ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիների համար և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 6.0 տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 6.0 տոկոս արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 6.0 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2027, 2028 և 2029 թվականներին կարելի է սպասել հարկային եկամուտների համապատասխանաբար 38.0, 35.4 և 24.1 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք՝ պայմանավորված ներմուծման դրամային համարժեքի մեծացմամբ:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից զանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: ՄԺԾԾ-ում ներմուծման գծով վերջին շուրջ մեկ ու կես տասնամյակի ժամանակային հորիզոնում կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը գտնվում է 7.3-14.3%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2022-2025 թթ. գնահատականներում ներմուծման ցուցանիշները դիտարկվել են առանց վերաարտահանման ծավալների: 2027, 2028 և 2029 թվականների համար ծրագրվածից համապատասխանաբար 7.3, 12.3 և 14.3% պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվել է համապատասխանաբար՝ 28.5, 52.8 և 71.2 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 3.1.1 Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն, մլրդ դրամ²⁶

| | 2027 | 2028 | 2029 |
|---|--------------------------------|-------|--------|
| Ռիսկի տեսակը | Ազդեցության գնահատականը | | |
| Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում | | | |
| 1. Կանխատեսվածից ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ | | | |
| Կանխատեսումից 1.4-1.5 տոկոսային կետով ցածր աճ | -24.4 | -30.5 | -33.7 |
| Կանխատեսումից 1.9 տոկոսային կետով ցածր աճ | -33.6 | -38.6 | -42.7 |
| 2. Ավելի ցածր գնաճի ռիսկ, 1.6 տոկոսային կետ | -12.7 | -14.6 | -21.3 |
| 3. Փոխարժեքի 6.0 տոկոս արժեզրկման ռիսկ | 38.0 | 35.4 | 24.1 |
| 4. Ներմուծման նվազման ռիսկ, 7.3-14.3 տոկոսային կետ | -28.5 | -52.8 | -71.2 |
| Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում | | | |
| 1.4-1.5 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -47.6 | -76.0 | -99.9 |
| 1.9 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -55.7 | -83.2 | -107.9 |

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից առավելագույն շեղումը 2027-ի համար կկազմի շուրջ 55.7 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2028 և 2029 թթ-ի համար համապատասխանաբար 83.2 մլրդ ՀՀ դրամ և 107.9 մլրդ ՀՀ դրամ:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները:

Աղյուսակ 3.1.2 Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, %


| | ՀՆԱ | Գնաճ | Փոխարժեք | Ներմուծում |
|---|------|------|----------|------------|
| Տարեկան (շուկին հաջորդող 4 եռամսյակների) ազդեցություն | 0.99 | 0.66 | 0.26 | 0.13 |

²⁶ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և գնաճի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 3.1 և Աղյուսակ 3.1.3): Հավանականային բաշխման գրաֆիկի կառուցման ժամանակ օգտագործվել է աղյուսակ 3.1.1-ում գնահատված ամբողջական ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում ի հայտ եկող բացասական ռիսկերը, որոնք գծապատկերի դեպի ներքև շեղման են հանգեցրել:

Գծապատկեր 3.1. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը, %



Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 3.1.3 Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը

| | 2027 | 2028 | 2029 |
|---|--|-------------|-------------|
| Հարկային եկամուտների աճի միջակայքը | Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը | | |
| 2-7 տոկոս | 0.12 | 0.17 | 0.15 |
| 7-12 տոկոս | <u>0.63</u> | <u>0.68</u> | <u>0.68</u> |
| 12-17 տոկոս | 0.25 | 0.15 | 0.17 |

Աղյուսակ 3.1.3-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների: Համաձայն գնահատականների, 2027-2029 թվականներին

հարկային եկամուտների աճի տեմպի՝ 7-12% միջակայքում գտնվելու հավանականությունն ամենաբարձրն է՝ անգամ հաշվի առնելով դիտարկված համաժամանակյա շուկի հանդես գալու սցենարը (Գծապատկեր 3.1-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 3.1.3-ում՝ հոծ նշումով):

3.1.2. 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԺԾԾ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՂՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 3.2.1 ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը²⁷ (Ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ

| Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր | 2027 | 2028 | 2029 |
|---|-------|-------|--------|
| 1. Կանխատեսվածից ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ | | | |
| 1. 4-1.5 տոկոսային կետ | -24.4 | -30.5 | -33.7 |
| 1.9 տոկոսային կետ | -33.6 | -38.6 | -42.7 |
| 2. Ավելի ցածր գնաճի ռիսկ, 1.6 տոկոսային կետ | -12.7 | -14.6 | -21.3 |
| 3. Փոխարժեքի 6.0 տոկոս արժեզրկման ռիսկ | 38.0 | 35.4 | 24.1 |
| 4. Ներմուծման նվազման ռիսկ, 7.3-14.3 տոկոսային կետ | -28.5 | -52.8 | -71.2 |
| Ընդամենը | | | |
| 1.4-1.5 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -27.6 | -62.5 | -102.1 |
| 1.9 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -36.8 | -70.7 | -111.1 |

Աղյուսակ 3.2.1-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2027 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը առավելագույնը կկազմի շուրջ 36.8 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.3%-ը, իսկ 2028 և 2029 թթ-ին կկազմի համապատասխանաբար 70.7 և 111.1 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.5-0.7%-ը:

²⁷ Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

Պետք է նշել, որ գնահատված ռիսկի չափը, առարկայացման դեպքում մասնակիորեն կկանվի կառավարության պահուստային ֆոնդով, որը նույն ժամանակահատվածի համար նախատեսված է 0. 3-0.7%, իսկ լրացուցիչ մասը՝ կկանվի ՀՀ կառավարության կողմից ապահովվող՝ նվազագույնը ՀՆԱ 1%-ի չափով իրացվելիության «բարձիկի» միջոցով:

2.2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտքը գնահատվում է կայուն և կառավարելի, ինչը խարսխված է 2020թ. երկակի շոկերի պայմաններում պարտքի բեռի բարձր մակարդակի գրանցումից հետո 2021-2022թթ. մինչև հարկաբյուջետային կանոններով ընդունելի մակարդակի նվազման և 2023-2025թթ. -ին այդ մակարդակում պահպանման, պարտքի կառուցվածքի զգալի բարելավման, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում պարտքի դեպի երկարաժամկետ՝ 40% նվազեցման հանձնառության վրա: Պարտքը հիմնականում զգայուն է տնտեսական աճի ցնցումների նկատմամբ, քանի որ պարտքի կառուցվածքի զգալի բարելավման արդյունքում դրամային և արտարժույթային պարտքի մասնաբաժինները կայունացել են համարժեք մակարդակներում (50%-ի շրջակայքում): Այնուամենայնիվ, պատմությունից բխող անորոշությունների պայմաններում կարևոր է պարտքի բեռի պահպանումը ուղենշված ցածր և կայուն մակարդակներում և հարկաբյուջետային «բարձիկների» ամրապնդումը:

2021-2022 թթ. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը էապես նվազել է 2020 թ. գրանցված 60%-ը գերազանցող մակարդակից և կայունացել 50%-ից ցածր մակարդակում 2023-25 թվականներին՝ առաջանցիկ կերպով ապահովելով հարկաբյուջետային կանոններով պահանջված պարտքի բեռի նվազեցումը և ստեղծելով բարձիկ ապագա հնարավոր շոկերին դիմակայելու համար: 2020 թվականին տնտեսական շոկի և պատերազմական իրավիճակի գործոններով պայմանավորված, հարկաբյուջետային կանոնի՝ «բացառիկ դեպքի» կարգավորումների շրջանակում գրանցված պարտքի բեռը աճել էր մինչև ՀՆԱ 63.5%-ը, ինչը զուգորդվել է պարտքի սպասարկման բեռի բարձրացմամբ: Սակայն «բացառիկ դեպքի» ճանաչման գործոնների չեզոքացման հետ ՀՀ կառավարությունը պետք է հարկաբյուջետային քաղաքականությունը վերադարձնե բնականոն իրավիճակների համար սահմանված կանոնների համապատասխանության տիրույթ, և, ի թիվս կանոնների համակարգով պահանջվող այլ միջոցառումների, առաջիկա 5 տարվա ընթացքում ապահովեր պարտքի բեռի նվազեցում 60%-ից ներքև, որի հանձնառությունը սահմանվել էր ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թթ. ծրագրով: Սակայն, պայմանավորված իրականացվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի քաղաքականությամբ, սպասվածից ավելի դրական տնտեսական զարգացումներով և ՀՀ դրամի փոխարժեքի արժևորմամբ, հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ընթացքը առաջանցիկ եղավ նախանշված ուղեգծից, և ՀՀ կառավարությունը նախ 2021 թ. գրանցեց 60.3%, ապա 2022թ. -ին՝ 50%-ից ցածր՝ 46.7% ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշ, իսկ 2023-2025 թվականներին այն պահպանվեց 50%-ից ցածր մակարդակում՝ 2025 թ. կազմելով 47. 2%: Պարտքի բեռի պահպանումը ընդունելի ցածր մակարդակում հնարավորություն է տալիս կառավարելիության տիրույթում պահել պարտքի բեռից բխող ռիսկերը և տոկոսավճարների աճը, ինչպես նաև քաղաքականության «բարձիկ» ստեղծել հետագա հնարավոր ցնցումներին դիմակայելու համար:


Միջնաժամկետ հատվածի համար նախանշած հարկաբյուջետային շրջանակի վրա հիմնված պարտքի ռիսկերի գնահատումը ցույց է տվել, որ ինչպես ՀՀ կառավարության պարտքի, այնպես էլ պարտքի սպասարկման ռիսկերը գնահատվում են ցածր: Աթրես թեստերի շրջանակներում ՀՀ կառավարության պարտքը ամենաշատը զգայուն է տնտեսական աճի, և համեմատաբար զգայուն է՝ փոխարժեքի շոկի նկատմամբ: Տնտեսական աճի շոկի ի հայտ գալու պարագայում 2028թ. ՀՀ

կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասնում է 60.3% մակարդակին, այնուհետև նվազում է մինչև 54.5% մակարդակի: Փոխարժեքի շուկի ազդեցությունն անհամեմատ ավելի մեղմ է, և դրա ազդեցության ներքո պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, հասնելով 50%-ի, նվազում է մինչև 45%-ի: ՀՀ պետական բյուջեի համախառն ֆինանսավորման կարիքը կանխատեսվող ժամակահատվածում իրականացված սթրես թեստերից ոչ մեկի, և անգամ՝ դրանց համակցման դեպքում չի գերազանցում զարգացող երկրների համար ռիսկայնության համար ընդունված 15% սահմանաչափը, և հիմնականում ցածր է նաև ՀՆԱ 10%-ի մակարդակից:


ՀՀ կառավարության պարտքի պորտֆելից բխող ռիսկերը շարունակել են մեղմվել՝ պարտքի կառուցվածքի և շուկայի ընկալումների բարելավման շնորհիվ: ՀՀ երկրի ռիսկի հավելավճարը շարունակել է նվազել և 2026 թվականի ապրիլին կազմել է 190 բազիսային կետ, ինչը շուկայի ընկալումներից բխող ռիսկայնության գնահատականը առաջին անգամ տեղափոխել է «ցածր ռիսկայնության» մակարդակի: ՀՀ երկրի ռիսկի հավելավճարի նվազումը պայմանավորված է Հայաստանի շուրջ անվտանգային միջավայրի բարելավմամբ, տնտեսական կայուն միջավայրով և իրականացվող խելամիտ մակրոտնտեսական քաղաքականություններով, սուվերեն վարկանիշի բարելավման հնարավորություններով, ինչպես նաև ընդհանուր առմամբ զարգացող երկրների ռիսկի հավելավճարի շարունակվող նվազմամբ: Միաժամանակ, ներքին և դրամային պարտքի կշիռները շարունակել են բարելավվել, ինչի արդյունքում դրամային պարտքի կշիռը ներկայումս գնահատվում է միջին ռիսկային, իսկ արտաքին պարտքի կշիռը կտրուկ մոտեցել է միջին ռիսկայնության շեմին՝ հասնելով 48.3% կշռի կառավարության պարտքում:

Չնայած նրան, որ ՀՀ կառավարության պարտքի ռիսկերը ստանդարտ սթրես սցենարների շրջանակում ազդանշում են ցածր ռիսկեր, գնահատվող անորոշությունների մակարդակը շարունակում է բարձր մնալ: Հավանականությունների բաշխման գրաֆիկի վրա հիմնվող (այսինքն, ըստ էության, «պատմությանը նայող») գնահատումը ցույց է տալիս, որ պարտքի կանխատեսումները ընդհանրապես անորոշության էական աստիճան են պարունակում, քանի որ պարտք ձևավորող գործոնները պատմականորեն բարձր տատանողականություն են ունեցել: Այս նկարագիրը բացահայտվում է Գծապատկեր 2.1-ում ներկայացված հավանականությունների բաշխման գրաֆիկում, ըստ որի՝ 2027 թ. համար 10-ից 90% հավանականային միջակայքում ուրվագծում է ՀՆԱ-ում 41%-ից 60% միջակայք, իսկ 2031 թվականին՝ 29%-ից 61% միջակայք:

Գծապատկեր 2.1. ՀՀ կառավարության պարտքի կանխատեսումների հավանականությունների բաշխման գծապատկերը



Գծապատկեր 2.2. ՀՀ կառավարության պարտքի և համախառն ֆինանսավորման կարիքի սթրես թեստեր*



Աղյուսակ 2.3. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկայնության ցուցանիշներ

| | Շեմեր | | | ՀՀ ցուցանիշ | |
|--|-------|---------|-------|--------------|--------------|
| | Ցածր | Միջին | Բարձր | 2025թ. ապրիլ | 2026թ. ապրիլ |
| ՀՀ երկրի ռիսկի հավելավճար, բազիսային կես | <200 | 200-600 | >600 | 306.1 | 190. 0 |

| | | | | | |
|---|-----|-------|-----|------|------|
| Ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտքի կշիռ, % ընդհանուր պարտքում | <15 | 15-45 | >45 | 49.3 | 48.3 |
| Արտարժութային պարտքի կշիռ, % ընդհանուր պարտքում | <20 | 20-60 | >60 | 50.3 | 46.9 |

2.3 ՀԱՏՈՒԿ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարկաբյուջետային ռիսկերն այն կառուցվածքային և հատուկ գործոններն են, որոնք կարող են հանգեցնել հարկաբյուջետային արդյունքների շեղմանը՝ նախապես սպասված կամ կանխատեսված ցուցանիշներից: Հարկաբյուջետային արդյունքների շեղումը առավել հաճախ արտահայտվում է պետության ստանձնած պարտավորությունների նյութականացմամբ: Այդ պարտավորությունները կարող են լինել բացահայտ, երբ առկա է իրավական պարտավորություն (օրինակ՝ բյուջետային երաշխիքներ), կամ թաքնված՝ ակնհայտորեն չերևացող, երբ կա պետության պատասխանատվության հանրային ակնկալիք, որը սահմանված չէ օրենքով (օրինակ՝ բնական կամ մարդածին աղետներից առաջացող վնասների փոխհատուցումը):

Հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը հանրային ֆինանսների կառավարման կարևոր ուղղություններից է, քանի որ այդ ռիսկերը չբացահայտելը, դրանց չնախապատրաստվելը, դրանց նվազեցման/կառավարելի պահելուն ուղղված գործողությունների չձեռնարկումը կարող է հանգեցնել զգալի բացասական հետևանքների, ինչպիսիք են լրացուցիչ պետական պարտավորությունները, պետական պարտքի ավելացումը և ճգնաժամերը: Հարկաբյուջետային ռիսկերի արդյունավետ բացահայտումը, ազդեցության չափի գնահատումը և կառավարումը նպաստում է հարկաբյուջետային կայունության բարձրացմանը, փոխառությունների ծախսերի և հարկաբյուջետային ճգնաժամերի հավանականության նվազեցմանը, ինչպես նաև արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացմանը:

Սույն բաժնում վերլուծվել են հարկաբյուջետային հատուկ ռիսկերի այն աղբյուրները, որոնք պետական բյուջեի կայունության տեսանկյունից համարվում են էական, և դրանց ազդեցության գնահատումն ու կառավարմանն ուղղված քայլերը նշանակալի են ֆիսկալ կայունության տեսանկյունից: Դիտարկվել են այնպիսի ռիսկեր, որոնք բխում են պետական մասնակցությամբ ընկերություններից, բյուջետային վարկերից և երաշխիքներից, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերից, բնական և մարդածին աղետներից, բնապահպանական պարտավորություններից, շրջակա միջավայրի դեգրադացիայից, ինչպես նաև պետության դեմ դատական վարույթներից:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Այս բաժնում վերլուծվում է պետական մասնակցությամբ ընկերությունների (այսուհետ՝ ՊՄԸ) առկա վիճակից և գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի մակարդակը: Գնահատման շրջանակներում կիրառվել են Արժույթի միջազգային հիմնադրամի ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիքակազմի²⁸ «Ֆինանսական առողջության գնահատման» (SOE Health Check Tool), «Սթրես թեստավորման և կանխատեսման» (SOE Stress Testing And Forecasting Tool) գործիքները:

²⁸ IMF “Fiscal Risk Toolkit”

Նշենք, որ ֆիսկալ ռիսկը կարող է ի հայտ գալ/նյութականանալ այն ժամանակ, երբ ՊՄԸ-ների գործունեությունը կամ ֆինանսական վիճակը հանգեցնում է լրացուցիչ փոխառությունների, սուբսիդիաների, սեփական կապիտալի ներարկումների կամ պետական բյուջեից այլ վճարումների անհրաժեշտության: Բացի այդ, ֆինանսական դժվարություններ ունեցող ՊՄԸ-ներից ակնկալվող շահութաբաժինների կամ փոխառությունների սպասարկման վճարումների չկատարումը կարող է բացասաբար անդրադառնալ պետական եկամուտների վրա:

ՊՄԸ-ՆԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՊՄԸ է համարվում այն ընկերությունը, որում պետությունը սեփականության իրավունքով տիրապետում է քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասի) 50 և ավելի տոկոսի բաժնեմասնակցությանը, կամ որևէ այլ հիմքով հնարավորություն ունի կանխորոշել տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները կամ էապես ազդել նրանց որոշումների կայացման վրա²⁹:


2024 թվականի տվյալներով՝ ՀՀ-ում գործում է 184 պետական մասնակցությամբ և համայնքային մասնակցությամբ ընկերություն, որոնցից 32-ը գտնվում է Երևանի քաղաքապետարանի կառավարման ներքո: Առկա է նաև 19 ընկերություն, որտեղ պետությունն ունի մինչև 50 տոկոս (մինորիտար) բաժնեմասնակցություն (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների դասակարգումն՝ ըստ բաժնեմասնակցության

| 50 տոկոս և ավել | Երևանի Քաղաքապետարան | Մինչև 50 տոկոս | Ընդհանուր |
|-----------------|----------------------|----------------|-----------|
| 152 | 32 | 19 | 203 |

ՊՄԸ-ները հիմնականում գործում են այնպիսի ռազմավարական ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, առողջապահությունը, ջրային տնտեսությունը և այլն: Ընկերությունների ակտիվների և պարտավորությունների մեծ մասը կենտրոնացված է էներգետիկայի ոլորտում՝ կազմելով ՊՄԸ-ների ընդհանուր պորտֆելի, համապատասխանաբար, 48%-ը և 61%-ը (Գծապատկեր 1):


Գծապատկեր 1. Պետական մասնակցությամբ ընկերությունների ակտիվները և պարտավորությունները՝ ըստ ոլորտների



²⁹ Աղբյուր՝ ՀՀ կառավարության 14.11.2025թ. N 1617-Ն որոշում

2024թ.-ին ՊՄԸ-ների ակտիվների ծավալը կազմել է 876.1 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 2020թ.-ի նկատմամբ 10.1%-ով, իսկ պարտավորությունների ծավալը կազմել է 449.7 մլրդ ՀՀ դրամ՝ 2020թ.-ի նկատմամբ նվազելով 17.9%-ով (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՊՄԸ-ների ակտիվների և պարտավորությունների ծավալը 2020-2024թթ.³⁰



2025թ.-ին 20 ՊՄԸ-ների ֆինանսական հաշվետվությունների՝ առնվազն 3 տարիների հիման վրա, իրականացվել է ֆինանսական վիճակի գնահատում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի «Ֆինանսական առողջության գնահատման» և «z-score» գործիքակազմի կիրառմամբ: Առանձնացնելով ՊՄԸ-ների պորտֆելում ակտիվների մեծ տեսակարար կշիռ ունեցող 20 ընկերություն՝ կատարվել են մի շարք վերլուծություններ: Մասնավորապես՝ 2024թ.-ին 20 ընկերության ակտիվների ծավալը կազմել է ընդհանուր ակտիվների պորտֆելի 76.4%-ը, մինչդեռ նրանց պարտավորությունները կազմում են ընդհանուր պարտավորությունների պորտֆելի 82.1%-ը: Ուսումնասիրված ընկերություններն են՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն, «Ջրառ» ՓԲԸ-ն, «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ն, «Հայփոստ» ՓԲԸ-ն, ««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, «Վ. Ա. Ֆանարյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն, «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ն, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն և «Էներգաիմպլես» ՓԲԸ-ն: Հաշվի առնելով վերջիններիս ակտիվների գերակշռող մակարդակը և հետևաբար դրանց նշանակությունը թե՛ հանրային շահի, թե՛ ֆինանսական կայունության տեսանկյունից՝ ստորև վերլուծվել է 20 ՊՄԸ-ների ֆինանսական առողջության մակարդակը:

ՊՄԸ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

³⁰ Ներառված են նաև Երևան քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող համայնքային մասնակցությամբ ընկերությունների տվյալները:

Վերլուծությունը կատարվել է շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ցուցանիշների գնահատումների հիման վրա, որոնց արդյունքում ռիսկայնության մակարդակը դասակարգվել է ըստ կատեգորիաների: Ընդ որում, 1-ին կատեգորիան նշում է ռիսկի ցածր մակարդակ, իսկ 5-րդը՝ ռիսկի բարձր մակարդակ (Աղյուսակ 2): Վերլուծության համաձայն՝ ՊՄԸ-ների ռիսկի միջին կշռված մակարդակը 2024թ. դրությամբ 3-րդ կատեգորիայում է (Աղյուսակ 3): Ի թիվս այլ ֆինանսական ցուցանիշների՝ վերլուծված ընկերությունների պարտքի մակարդակը³¹ շարունակում է մնալ բարձր: Պարտքի բարձր մակարդակը կարող է հանգեցնել պետության կողմից աջակցության կարիքի առաջացման հավանականության բարձրացմանը՝ ֆինանսական անկայունության պայմաններում: ՊՄԸ-ների ֆինանսական առողջությունը հատկապես վատթարացել է 2020 և 2021 թվականներին, ինչը պայմանավորված է COVID-19-ի համավարակի ազդեցությամբ: 2023-2024թթ.-ին, չնայած պարտքի մակարդակի իջեցմանը, այն դեռևս մնում է էական:

2024թ. -ին դիտարկված ընկերություններից 11-ը շահութաբեր են եղել, իսկ 9-ը աշխատել են վնասով:

Աղյուսակ 2. Ռիսկի դասակարգումը



Աղյուսակ 3. ՊՄԸ-ների պորտֆելում ակտիվների մեծ տեսակարար կշիռ ունեցող 10 ընկերությունների ռիսկայնության մակարդակը


| Կազմակերպության անվանում | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 |
|--|----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| «Հայկական առումային էլեկտրակայան» ՓԲԸ | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա |
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ | 3-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա |
| «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ | 3-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 2-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա |
| «Ջրառ» ՓԲԸ | | | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա |
| «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա |
| «Հայփոստ» ՓԲԸ | 3-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա |
| «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ | | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 2-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա |
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | 3-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 2-րդ կատեգորիա | 2-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա |
| «Հայաստանի հեռուստատեսային և | | | 2-րդ կատեգորիա | 2-րդ կատեգորիա | 2-րդ կատեգորիա | 2-րդ կատեգորիա |

³¹ Պարտքի մակարդակը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշներն են պարտքը՝ ակտիվների նկատմամբ (debt to assets), պարտքը՝ սեփական կապիտալի նկատմամբ (debt to equity), պարտքը՝ ճշգրտված շահույթը նախքան տոկոսների վճարումը, հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի մասհանումների (debt to EBITDA) նկատմամբ:

| | | | | | | |
|---|----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ | | | | | | |
| «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ | 4-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա |
| Միջին ռիսկայնության մակարդակ | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 4-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա | 3-րդ կատեգորիա |

Չնայած նրան, որ ընկերությունների վճարունակությունը բարելավման միտումներ ունի, այնուամենայնիվ, պարտք/ակտիվներ հարաբերակցությունը (աջ առանցք)³², և պարտք/սեփական կապիտալ հարաբերակցությունը (ձախ առանցք)³³ 2023-2024թթ. նվազման միտում ունեն (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. ՊՄԸ-ների վճարունակությունը




Ըստ առանձին ՊՄԸ-ների պարտավորությունների չափի և ընդհանուր ռիսկի՝ փախկապվածությունը ներկայացված է Գծապատկեր 4-ում: Վերջինից երևում է, որ չնայած ընկերությունների պարտավորությունների բարձր չափի, նրանք գտնվում են ռիսկայնության ավելի ցածր մակարդակում, քան այն ընկերությունները, որոնց պարտավորությունները ավելի ցածր են:

Այս հանգամանքը հիմնավորվում է նրանով, որ մոդելի յուրաքանչյուր ցուցանիշին տրված է հավասար կշիռ, և մեկ ցուցանիշի բարձր ռիսկային արդյունքը կարող է փոխհատուցվել մեկ այլ ցուցանիշի ցածր ռիսկային արդյունքով:

³² Չափում է ընկերության ֆինանսավորման մասնաբաժինը, ինչը բխում է պարտավորություններից: Բարձր հարաբերակցությունը ցույց է տալիս ավելի մեծ կախվածություն պարտքի ֆինանսավորումից:
³³ Չափում է ընկերության ֆինանսավորման մասնաբաժինը, որը բխում է պարտավորություններից սեփական կապիտալի նկատմամբ: Բարձր հարաբերակցությունը ցույց է տալիս ավելի մեծ կախվածություն պարտքի ֆինանսավորումից և ավելի քիչ ֆինանսական ճկունություն:

Գծապատկեր 4. ՊՄԸ-ների պարտավորությունների չափի և ընդհանուր ռիսկի փոխկապվածությունը 2024թ., հազար ՀՀ դրամ




1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
3. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
4. «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ
5. «Հայփոստ» ՓԲԸ
6. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
7. ««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
8. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
9. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
10. «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ
11. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
12. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
13. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
14. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ
15. «Հայ-Ալմաստ» ՓԲԸ
16. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
17. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
18. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
19. «Էներգաիմպլես» ՓԲԸ
20. «Զրառ» ՓԲԸ

2017-2024թթ. ընդհանուր ՊՄԸ-ների կողմից պետական բյուջե փաստացի վճարված շահութաբաժինների գումարի առավելագույն չափը արձանագրվել է 2024թ.-ին՝ կազմելով 38.8 մլրդ ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, փաստացի վճարված շահութաբաժինների կշիռը պետական բյուջեի եկամուտներում կազմել է 1.5%: 2024թ.-ին վճարված շահութաբաժինների չափը (38.8 մլրդ ՀՀ դրամ) շուրջ 15 անգամ գերազանցել է 2023թ.-ի ցուցանիշը (2.3 մլրդ ՀՀ դրամ): Մասնավորապես, 2024թ.-ին ցուցանիշի բարձր մակարդակը պայմանավորված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից 2023թ.-ին հայտարարված և 2024թ.-ին պետական բյուջե փաստացի վճարված շահութաբաժինների գումարով, որը կազմել է շուրջ 33.3 մլրդ ՀՀ դրամ: Առանց «Զանգեզուրի

պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից վճարված շահութաբաժնի գումարի ընդհանուր շահութաբաժինների չափը կազմում է 5. 5 մլրդ ՀՀ դրամ, որը շուրջ 2. 4 անգամ գերազանցում է 2023թ. ցուցանիշը:

Գծապատկեր 5-ում ներկայացված են փաստացի վճարված շահութաբաժինների չափերը և դրանց կշիռները պետական բյուջեի եկամուտներում՝ 2017-2024թթ. -ին³⁴:

Գծապատկեր 5. Շահութաբաժինների գծով փաստացի բյուջետային մուտքերը և դրանց կշիռը պետական բյուջեի եկամուտներում



ՊՄԸ-ներից բխող հարկաբյուջետային ռիսկի վրա էական ազդեցություն ունեն նաև դրանց տրամադրված բյուջետային վարկերը (ենթավարկերը) և երաշխիքները, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններս արտահայտված են հիմնականում արտարժույթով: Վերջինիս մասով փոխարժեքի տատանումները կարող են բացասաբար ազդել պարտքի սպասարկման ծախսերի վրա և մեծացնել ՊՄԸ-ների կողմից դրանց վճարման ընդհանուր ֆինանսական բեռը: ՊՄԸ-ներին տրամադրված վարկերը և ենթավարկերը 2024թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի 74.6%՝ շուրջ 211,631 մլն ՀՀ դրամ: Այդ ընկերություններն են՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, «Ռադիոհիդրոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ն, «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ն, «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ն, «Հայփոստ» ՓԲԸ-ն, «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ն, «Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ-ն, «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ն, «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ-ն, «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ն և «Երքաղյուս» ՓԲԸ-ն: Միաժամանակ, վարկերի և ենթավարկերի հիմնական մասը կենտրոնացված է էներգետիկ ոլորտում («Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, «Երևան ԶԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ):

ՊՄԸ-ՆԵՐԻ ՍԹՐԵՍ ԹԵՍԱՎՈՐՈՒՄ

³⁴ Գծապատկերը ներառում է նաև այն ընկերությունները, որտեղ պետության մասնաբաժինը 50%-ից ցածր է:

ՊՄԸ-ների սթրես թեստավորման և կանխատեսման գործիքի (Stress Testing and Forecasting Tool) (Ներդիր 1) կիրառմամբ վերլուծության են ենթարկվել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն: Վերլուծությունը իրականացվել է 5 տարվա կտրվածքով՝ մակրոտնտեսական ցուցանիշների առավելագույն շոկային սցենար ընտրելով 2027թ.³⁵:

ՀՆԱ-ի շոկային սցենար

Ներդիր 1. ՊՄԸ-ների սթրես թեստավորման և կանխատեսման գործիք (Stress Testing and Forecasting Tool)

Հայաստանի ՊՄԸ-ների սթրես թեստավորման և կանխատեսման գործիքը (STFT) կիրառվում է ՊՄԸ-ների ֆինանսական ցուցանիշների կանխատեսման և մակրոտնտեսական շոկերին ենթարկվելու ռիսկերի և խոցելիության գնահատման նպատակով:

Գործիքում դիտարկում է Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի 5 սցենարներ՝

- **Սցենար 1 – բազային սցենար**, որը կառուցված է յուրաքանչյուր ՊՄԸ-ի ֆինանսական կանխատեսումների հիման վրա՝ ընթացիկ և հաջորդ տարիների համար:
- **Սցենար 2 – ՀՆԱ-ի շոկային սցենար**, որը ենթադրում է ՀՆԱ-ի շեղումները բազային ցուցանիշից՝ մյուս մակրոտնտեսական ցուցանիշները անփոփոխ թողնելով:
- **Սցենար 3 – Փոխարժեքի շոկային սցենար**, որը ենթադրում է հայկական դրամի արժեզրկում՝ մյուս մակրոտնտեսական ցուցանիշները անփոփոխ թողնելով:
- **Սցենար 4 – Տոկոսադրույքների շոկային սցենար**, որը ենթադրում է տոկոսադրույքի շեղումներ՝ մյուս մակրոտնտեսական ցուցանիշները անփոփոխ թողնելով:
- **Սցենար 5 – Համակցված շոկային սցենար**, որն ընդգրկում է միաժամանակ ՀՆԱ-ի, փոխարժեքի և տոկոսադրույքների շոկերը՝ 2-4 սցենարներում նկարագրված չափերի և տևողության շրջանակներում:

Տվյալ սցենարի համար ՀՆԱ-ի աճի տեմպի առավելագույն շեղումը բազային ցուցանիշից կազմում է 2.9%՝ մյուս մակրոտնտեսական ցուցանիշները թողնելով անփոփոխ: Ազդեցությունը զգալի է, բայց ոչ այնքան մեծ, որքան հաջորդիվ սցենարում նկարագրված փոխարժեքի շոկի ազդեցությունը:

Այս սցենարում ՀՆԱ-ի աճի տեմպի առավելագույն շեղման ժամանակահատվածում՝ 2027թ.-ին, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բազային ցուցանիշի համեմատ կանխատեսվող «Հարկումից հետո զուտ շահույթ/վնաս»-ը (NPAT) կրճատվում է 320.9 մլն ՀՀ դրամով, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի համապատասխան ցուցանիշը՝ 361.1 մլն ՀՀ դրամով:

Ցածր տնտեսական աճի պայմաններում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «Զուտ ակտիվների արժեք»-ը (Net Worth) 2027թ.-ին կնվազի շուրջ 166 մլն ՀՀ դրամով՝ համեմատած բազային սցենարի հետ, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի համապատասխան ցուցանիշը՝ 195.7 մլն ՀՀ դրամով:

Փոխարժեքի շոկային սցենար

Փոխարժեքի շոկային սցենարում փոխարժեքի առավելագույն շեղումը բազային ցուցանիշից կազմում է 13.2%՝ մյուս մակրոտնտեսական ցուցանիշները թողնելով անփոփոխ: Փոխարժեքի շոկի ազդեցությունը

³⁵ Գործիքում մակրոտնտեսական բազային ենթադրությունները հիմնված են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերլուծական նպատակներով պատրաստված սցենարների վրա: Շոկային սցենարներում կիրառվող ենթադրությունները տարբերվում են նախարարության կողմից պատրաստված շոկային սցենարներից՝ հնարավորություն տալով պատկերել այն ֆիսկալ հետևանքները, որոնք կարող են առաջանալ տնտեսության վրա շոկային առավելագույն ցնցումների ազդեցության հետևանքով:

Ֆինանսական արդյունքների վրա էական է, քանի որ ընկերությունների վարկային պորտֆելի զգալի մասը արտահայտված է արտարժույթով:

Փոխարժեքի շուկա զգալի ազդեցություն ունի ընկերությունների «Հարկումից հետո զուտ շահույթ/վնաս»-ի (NPAT) վրա: Նշված շուկի պայմաններում կանխատեսվում է, որ առավելագույն շեղման ժամանակահատվածում՝ 2027թ.-ին, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի մասով «Հարկումից հետո զուտ շահույթ/վնաս»-ը (NPAT) կնվազի 4,459.7 մլն ՀՀ դրամով՝ համեմատած բազային սցենարի հետ, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մասով՝ 9,409.0 մլն ՀՀ դրամով:

Փոխարժեքի շուկա հանգեցնում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «Ձուտ ակտիվների արժեք»-ի (Net Worth)՝ 4,807.9 մլն ՀՀ դրամով նվազմանը 2027թ.-ին՝ համեմատած բազային սցենարի հետ, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մասով՝ 12,130.9 մլն ՀՀ դրամով:

Տոկոսադրույքների շուկային սցենար

Տոկոսադրույքների շուկային սցենարում տոկոսադրույքի առավելագույն շեղումը բազային ցուցանիշից կազմում է 1.5%՝ մյուս մակրոտնտեսական ցուցանիշները թողնելով անփոփոխ: Առանձին ընկերությունների համար բացասական ազդեցությունը ակնհայտ է, սակայն փոխարժեքի շուկի առաջացրած ազդեցության հետևանքների համեմատ՝ այն աննշան է: «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի վարկային պորտֆելի զգալի մասնաբաժինը ֆիքսված տոկոսադրույքով է, ուստի տոկոսադրույքի աճի բացասական ազդեցությունը որոշ չափով մեղմվում է, և հետևաբար տոկոսադրույքի բարձրացման ռիսկը ընկերության համար զգալի չէ: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի վարկային պորտֆելի ավելի քան 40%-ը լողացող տոկոսադրույքով է, ուստի ընկերության կախվածությունը տոկոսադրույքների փոփոխություններից զգալի է:

Տվյալ սցենարում տոկոսադրույքի բարձրացումը առավելագույն շեղման ժամանակահատվածում՝ 2027թ.-ին, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կանխատեսվող «Հարկումից հետո զուտ շահույթ/վնաս» (NPAT) ցուցանիշը կրճատում է ավելի քան 37 մլն ՀՀ դրամով՝ համեմատած բազային սցենարի հետ, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մասով՝ 375.9 մլն ՀՀ դրամով:

Տոկոսադրույքի շուկի հետևանքով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «Ձուտ ակտիվների արժեք»-ի (Net Worth) նվազումը ընդգրկված ժամանակահատվածի համար դիտվում է 7-41 մլն ՀՀ դրամի միջակայքում՝ համեմատած բազային սցենարի հետ, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մոտ՝ 77-418 մլն ՀՀ դրամի միջակայքում:

Համակցված շուկային սցենար

Համակցված շուկի պայմաններում բոլոր երեք մակրոտնտեսական ցուցանիշները (ՀՆԱ, փոխարժեք, տոկոսադրույքներ) միաժամանակ ենթարկվում են շուկերի, որոնցից յուրաքանչյուրի միջակայքն ու տևողությունը նույնն են, ինչը նկարագրված է նախորդ սցենարներում: Համակցված շուկերի ազդեցությունը ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա նշանակալի է՝ առավելապես պայմանավորված արտարժույթային շուկի ազդեցությամբ:

Ցածր տնտեսական աճի, արժույթի արժեզրկման և տոկոսադրույքի բարձրացման համադրությունը զգալի ազդեցություն ունի ընկերությունների «Հարկումից հետո զուտ շահույթ/վնաս» (NPAT) ցուցանիշի վրա: Համակցված շուկերի առավելագույն շեղման ժամանակահատվածում՝ 2027թ.-ին, բազային ցուցանիշի համեմատ կանխատեսվող «Հարկումից հետո զուտ շահույթ/վնաս» ցուցանիշը «Հայկական

ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի համար կրճատվում է 4,841.73 մլն ՀՀ դրամով, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի համար՝ 10,394.5 մլն ՀՀ դրամով:

Համակցված շուկային սցենարի դեպքում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «Զուտ ակտիվների արժեք»-ը (Net Worth) 2027թ.-ին նվազում է 5,164.4 մլն ՀՀ դրամով՝ բազային սցենարի համեմատ, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մոտ՝ շուրջ 13,544.0 մլն ՀՀ դրամով:

Համակցված շուկի պայմաններում «Սեփական կապիտալի եկամտաբերություն» (ROE) ցուցանիշը առավելագույն շեղման տարում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի մոտ նվազում է 13.59%-ով՝ բազային սցենարի համեմատ, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մոտ՝ 23.72%-ով:

Եզրակացություններ

Ներկայացված վերլուծությունը ընդգծում է, որ արտարժույթային ռիսկը դիտարկվածներից ներկայումս ընկերությունների առջև ծառայած ամենաէական մակրոտնտեսական ռիսկն է՝ հաշվի առնելով, որ ընկերությունների վարկային պորտֆելի զգալի մասը արտահայտված է արտարժույթով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկված ընկերությունները շատ ավելի քիչ են արձագանքում տնտեսական անկումներին և տոկոսադրույքների բարձրացմանը, քան արժույթի արժեզրկմանը: Սակայն ենթադրվում է, որ տնտեսական անկումները և տոկոսադրույքների աճը կկապակցվեն և կհամակցվեն արժույթի արժեզրկման հետ:

2025թ. նոյեմբերի 14-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական մասնակցությամբ ընկերությունների և մինորիտար մասնակցությամբ ընկերությունների սեփականության քաղաքականության մասին» N 1617-Ն որոշումը: Քաղաքականության նպատակն է սահմանել ՊՄԸ-ների և ՄՄԸ-ների նկատմամբ պետության՝ որպես բաժնետիրոջ, սեփականության իրավունքի իրացման միասնական, հստակ և թափանցիկ քաղաքականություն, որն ուղղված է պետական մասնակցության դերի հիմնավորմանը, ռազմավարական նպատակների ձևակերպմանը, կառավարման կառուցվածքների ու գործառույթների հստակեցմանը: Քաղաքականության իրագործման գործողությունների ծրագրով սահմանված ժամանակացույցով իրականացվելու է քաղաքականության աստիճանական ներդրում:

Ֆինանսների նախարարությունում մշակվել է Պետական մասնակցությամբ ընկերությունների և Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հավաքագրման և հրապարակման էլեկտրոնային թվային հարթակը, որը նպատակ ունի բարձրացնելու ՊՄԸ-ների հաշվետվողականությունը և թափանցիկությունը՝ միաժամանակ կրճատելով հաշվետվությունների ներկայացման վարչարարությունը: Համակարգը՝ փորձնական կիրառումից հետո, ներկայումս գտնվում է լավարկման փուլում:

Ընթացքում է նաև «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի լուծարման գործընթացը: Նշենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը լուծարման գործընթացում ապահովում է անհրաժեշտ աջակցություն՝ ներկայացնելով առաջարկներ ֆիսկալ ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻՑ ԲԽՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Այս բաժնում վերլուծվում են տրամադրված բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ուղղակի ու անույնացված ֆիսկալ ռիսկերի մակարդակը, ներկայացվում՝ բյուջետային վարկերի և երաշխիքների պորտֆելների վերլուծական պատկերը:

Բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերն այն ռիսկերն են, որոնց ի հայտ գալը կհանգեցնի տարեկան բյուջեում և ՄԺԾ-ում իրականացված կանխատեսումների շեղումների՝ կապված վերոնշյալ վարկերի սպասարկման և մարման, ինչպես նաև վարկավորմամբ կամ երաշխիքի տրամադրմամբ պետության կողմից փաստացի փոխհատուցում տրամադրելու հնարավոր անհրաժեշտության հետ:


Վարկային պորտֆելի իրականացվելիք վերլուծության հիմնական նպատակը պորտֆելի՝ տարբեր ռիսկերից կախվածության աստիճանի գնահատումն է:

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի չմարված մասի ընդհանուր գումարը կազմել է 337.2 մլրդ, որը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է շուրջ 2.3%-ով, ինչը պայմանավորված է տրամադրված վարկերի մարմամբ: Հարկ է նշել, որ զուգահեռաբար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պորտֆելը համալրվել է նոր վարկերով՝ միաժամանակ կրելով փոխարժեքի տատանումները (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ դրամի փոքր-ինչ արժևորում):

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի գերակշիռ մասը բաժին է ընկել էներգետիկայի ոլորտին՝ կազմելով շուրջ 64.8%, իսկ հանրագումարային՝ 218.5 մլրդ ՀՀ դրամ:


2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկերը կազմել են ընդհանուր պորտֆելի 49.8%-ը, իսկ բյուջետային վարկերը՝ 50.2%-ը (գծապատկեր 6): Հատկանշական է, որ ՊՄԸ-ներին տրամադրված վարկերի մասնաբաժինը վարկային պորտֆելում կազմել է շուրջ 75.8%:

Գծապատկեր 6. Վարկային պորտֆելի տարանջատումը ըստ բյուջետային վարկերի և ենթավարկերի



Վարկային պորտֆելի դինամիկայի վերաբերյալ պատկերացում կազմելու համար ստորև՝ Գծապատկեր 7-ում, ներկայացնենք վերջինիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ վերջին տարիների կտրվածքով:


Գծապատկեր 7. Վարկային պորտֆելը և վերջինիս կշիռը ՀՆԱ-ում (մլրդ, %)



Ինչպես տեսանելի է գծապատկերից, դիտարկվող տարիներին առավելագույն վարկային պորտֆելի չափն արձանագրվել է 2020թ.-ին՝ 523.4 մլրդ ՀՀ դրամ, որը հետևանք է համավարակի ֆոնին տնտեսական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված նոր վարկերի, ինչպես նաև տվյալ տարում արտարժույթի փոխարժեքի դեպի վեր տատանման: Միևնույն ժամանակ, վերջինիս կշիռը ՀՆԱ-ում կազմել է 8.47%: Հարկ է նշել, որ վերջին տարիների վարկային պորտֆելի նվազումը մեծամասամբ պայմանավորված է դրամի արժևորմամբ, իսկ 2025թ.-ին՝ նաև տրամադրված որոշ վարկերի մարմամբ:

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 48.5% կամ 163.6 մլրդ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 23.2% կամ 78.2 մլրդ ՀՀ դրամ, եվրոյով՝ 13.3% կամ 44.9 մլրդ ՀՀ դրամ, ճապոնական իենով՝ 13% կամ 44 մլրդ ՀՀ դրամ, հատուկ փոխառության իրավունքով (ՀՓԻ) տրամադրված վարկերը՝ 2% կամ 6.6 մլրդ ՀՀ դրամ (Գծապատկեր 8):


Գծապատկեր 8. Վարկային պորտֆելի արժույթային կազմը



Վարկային պորտֆելի՝ արժույթային ռիսկին ենթարկվածության աստիճանը գնահատվում է բավականին բարձր, քանի որ տրամադրված վարկերի գերակշիռ մասը՝ 51.5%-ը, արտարժույթով են, իսկ վարկառուների եկամուտները՝ հիմնականում ՀՀ դրամով:

Վարկային պորտֆելի՝ տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության աստիճանը գնահատելու համար ներկայացվում է փոփոխվող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում՝ վերջին տարիների կտրվածքով (Գծապատկեր 9):

Գծապատկեր 9. Փոփոխվող տոկոսադրույքով վարկերը և վերջիններիս տեսակարար կշիռը վարկային պորտֆելում (մլրդ, %)




Գծապատկերից նկատելի է, որ վարկային պորտֆելի՝ տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության աստիճանը ցածր է: 2020թ. փոփոխվող տոկոսադրույքով վարկերի բացարձակ մեծությունը արձանագրվել է առավելագույնը դիտարկվող ժամանակահատվածում, սակայն, ի հակադրություն դրան, տեսակարար կշիռը նվազել է, ինչը հետևանք է վարկային պորտֆելի ավելի առաջանցիկ աճի տեմպի, որի հիմնական պատճառներ են հանդիսացել թե՛ համավարակի ֆոնին տրամադրված վարկերը, թե՛ արտարժույթի զգալի տատանումները: 2022-2023թթ. ցուցանիշի աճը պայմանավորված է վարկային պորտֆելի նվազմամբ (վարկերի մայր գումարի մարում) և միևնույն ժամանակ փոփոխվող տոկոսադրույքով վարկերի աճով (փոփոխվող տոկոսադրույքով վարկերի աճ, արտարժույթի արժևորում): 2024–2025թթ. փոփոխվող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում նվազել է՝ 22.9%-ից հասնելով 19.5%-ի: Նվազումը պայմանավորված է ինչպես փոփոխվող տոկոսադրույքով վարկերի ծավալի կրճատմամբ, այնպես էլ վարկային պորտֆելի ընդհանուր նվազմամբ:

Հաշվի առնելով, որ բյուջետային վարկերը տրամադրվել են փոփոխվող և ֆիքսված տոկոսադրույքներով՝ ստորև ներկայացվում է ֆիքսված տոկոսադրույքով տրամադրված բյուջետային վարկերի միջին տոկոսադրույքների (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար) դինամիկան՝ բանկային վարկերի միջին տոկոսադրույքների (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար)³⁶ համեմատությամբ և վերաֆինանսավորման տոկոսադրույքի համադրությամբ:

³⁶ «Ֆինանսական շուկայի 1 տարուց ավել ժամկետով իրավաբանական անձանց տրամադրված վարկերի միջին տոկոսադրույք (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար)», աղբյուրը՝ ԿԲ տեղեկագրեր


Գծապատկեր 10. Ֆիքսված տոկոսադրույքով տրամադրված վարկերի ընդհանուր պորտֆելի միջին տոկոսադրույքների դինամիկան՝ ֆինանսական համակարգի տոկոսադրույքների համադրությամբ (%)



Գծապատկերից նկատելի է, որ մինչև 2023թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեպի վեր փոփոխությանը համընթաց փոփոխվել են նաև ֆինանսական շուկայի միջին տոկոսադրույքները, իսկ բյուջետային վարկերի միջին տոկոսադրույքները դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխությունների չեն ենթարկվել:

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետության կողմից տրամադրված վարկերի 57%-ն ապահովված են գրավով (անշարժ և շարժական գույք, հասարակ մուրհակներ, ակտիվներ և այլն), իսկ 43%-ը կազմում են գրավով չապահովված վարկերը: Չապահովված վարկերի շուրջ 45.8%-ը բաժին է ընկնում ՊՄԸ-ներին:

Գծապատկեր 11. Բյուջետային վարկերի տարանջատումն՝ ըստ ապահովվածության



2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի կենտրոնացվածության մասին պատկերացում կազմելու նպատակով թվով 54 վարկառուներից առանձնացվել են 10 խոշոր վարկառուները (Աղյուսակ 4), որոնց տրամադրված վարկերի կշիռը վարկային պորտֆելում կազմում է 87.6%, ընդ որում՝ վերջիններիս 61%-ը ՊՄԸ-ներ են՝ թվով 5 վարկառու:

Աղյուսակ 4. Վարկային պորտֆելի 10 խոշոր վարկառուները, ՀՀ դրամ


| Վարկառու | | Վարկի չափ | Կշիռը պորտֆելում |
|--|-----|----------------|------------------|
| 1. «Հայկական ատոմային էլեկտրոկայան» ՓԲԸ | ՊՄԸ | 82,854,185,476 | 24.6% |
| 2. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ | ՊՄԸ | 57,703,795,888 | 17.1% |
| 3. ԱՅԼ | | 54,224,273,317 | 16.1% |
| 4. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ | ՊՄԸ | 51,056,842,161 | 15.1% |
| 5. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ | | 13,424,949,990 | 4.0% |
| 6. «Դի Էնդ Էյջ Գրուպ» ՍՊԸ | | 9,262,102,212 | 2.7% |
| 7. ՀՀ ԿԲ գերմանահայկական հիմնադրամին վարկավորում | | 9,001,341,250 | 2.7% |
| 8. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ | ՊՄԸ | 8,980,200,000 | 2.7% |
| 9. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ | ՊՄԸ | 5,015,931,740 | 1.5% |
| 10. ՀՀ կենտրոնական բանկ | | 3,797,795,061 | 1.1% |

Բյուջետային վարկերից բացի պետության կողմից տրամադրվում են նաև բյուջետային երաշխիքներ: Բյուջետային երաշխիքները հանդիսանում են պայմանական պարտավորություններ, ուստի դրանց հաշվառումն ու մոնիթորինգը միտված են դրանցից բխող ֆիսկալ ռիսկերի արդյունավետ կառավարմանը: Ըստ տեսակների՝ բյուջետային երաշխիքները տարանջատվում են ներքինի և արտաքինի: Ներքին բյուջետային երաշխիքները Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների

կառավարության տրամադրած բյուջետային երաշխիքներն են, իսկ արտաքին բյուջետային երաշխիքները՝ ոչ ռեզիդենտներին կառավարության տրամադրած բյուջետային երաշխիքներն են:

Բյուջետային երաշխիքների կառուցվածքում ժամանակի ընթացքում գերակշռել են արտաքին բյուջետային երաշխիքները, սակայն 2025թ.-ին տեղի է ունեցել էական տեղաշարժ դեպի ներքին բյուջետային երաշխիքներ՝ պայմանավորված նոր ներքին բյուջետային երաշխիքների տրամադրմամբ: Ստորև ներկայացվում է բյուջետային երաշխիքների տարանջատումը՝ արտաքինի և ներքինի՝ ըստ տարիների:

Գծապատկեր 12. Բյուջետային երաշխիքների տարանջատումը՝ արտաքինի և ներքինի, 2016-2025թթ.




Գծապատկերից նկատելի է, որ ներքին բյուջետային երաշխիքները կազմում են 65.7%, իսկ արտաքին բյուջետային երաշխիքները՝ 34.3%: Ներքին բյուջետային երաշխիքները մեծամասամբ տրամադրվել է արտարժույթով, ինչն էլ փաստում է փաթեթի՝ արտարժույթային դիսկի ենթարկվածության բարձր մակարդակի մասին: 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին բյուջետային երաշխիքների մեջ արտարժույթով տրամադրված բյուջետային երաշխիքները կազմում են 78.84% կամ 107.5 մլն դոլար:

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված բյուջետային երաշխիքները կազմել են հանրագումարային 79.1 մլրդ ՀՀ դրամ կամ նույն տարվա ՀՆԱ-ի 0.7%-ը:

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր բյուջետային երաշխիքների պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված բյուջետային երաշխիքները կազմել են 13.9% կամ 11 մլրդ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 66.2% կամ 52.4 մլրդ ՀՀ դրամ, եվրոյով՝ 15.2% կամ 12 մլրդ ՀՀ դրամ, հատուկ փոխառության իրավունքով (ՀՓԻ)՝ 4.7% կամ 3.7 մլրդ ՀՀ դրամ (Գծապատկեր 13):


Գծապատկեր 13. Բյուջետային երաշխիքների պորտֆելի արժույթային կազմը



Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի «ա» կետի՝ որոշակի պահի դրությամբ տրամադրված և չմարված բյուջետային երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա ՀՆԱ-ի 20 տոկոսը:

Հաշվի առնելով օրենսդրորեն սահմանված վերոնշյալ ֆիսկալ կանոնը՝ ստորև ներկայացվում է 2025թ. - ի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված և չմարված բյուջետային երաշխիքների դինամիկան և վերջիններիս տեսակարար կշիռը նախորդ տարվա ՀՆԱ-ում:

Գծապատկեր 14. Բյուջետային երաշխիքների դինամիկան և վերջիններիս տեսակարար կշիռը նախորդ տարվա ՀՆԱ-ում՝ 2016-2025թթ. (մլրդ ՀՀ դրամ, %)



Տվյալները ցույց են տալիս, որ որոշակի պահի դրությամբ տրամադրված և չմարված բյուջետային երաշխիքների հանրագումարը ցածր է եղել սահմանված՝ նախորդ տարվա ՀՆԱ-ի 20 տոկոս շեմից:

Ուսումնասիրելով բյուջետային երաշխիքների դինամիկան և դրանց տեսակարար կշիռը նախորդ տարվա ՀՆԱ-ում՝ կարող ենք ասել, որ այն ընդհանուր նվազման միտում է ունեցել 2017–2024թթ., սակայն 2025թ.-ին կրկին աճել է՝ պայմանավորված նոր տրամադրված բյուջետային երաշխիքներով:

Բյուջետային երաշխիքների առավելագույն չափը արձանագրվել է 2017թ.-ին՝ 84.7 մլրդ ՀՀ դրամ կամ նախորդ տարվա ՀՆԱ-ի 1.67%-ը:

Գծապատկերում ներկայացվում է նաև տրամադրված բյուջետային երաշխիքների դինամիկան և վերջիններիս տեսակարար կշիռը նախորդ տարվա ՀՆԱ-ում՝ ըստ տարիների:

Ինչպես նկատելի է գծապատկերից, 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին բյուջետային երաշխիքները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են շուրջ 5 անգամ՝ հիմնականում պայմանավորված ՀՀ կառավարության 27.02.2025թ.-ի N 220-Ա որոշման շրջանակներում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրված՝ 107.5 մլն ԱՄՆ դոլար կամ շուրջ 41 մլրդ ՀՀ դրամի չափով երաշխիքով և այլ նոր ներքին բյուջետային երաշխիքներով:

Ստորև ներկայացվում է երաշխավորվող կազմակերպությունների ցանկը, տրամադրված երաշխիքի չափը ՀՀ դրամով և վերջիններիս կշիռը համապատասխան պորտֆելում՝ 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Երաշխավորվող կազմակերպությունների ցանկ


| ԱՐՏԱՔԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ | | | |
|--|---|------------------------------------|--|
| Պրինցիպալ | Բենեֆիցիար | Բյուջետային երաշխիքի չափ (ՀՀ դրամ) | Կշիռը արտաքին բյուջետային երաշխիքների պորտֆելում |
| 1. ՀՀ կենտրոնական բանկ | ՎՋՄԲ, ԱՋԲ, Գերմանիա (ՎՎԲ) | 24,550,134,605 | 90.6% |
| 2. «ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ | Էոստե Բանկ (Ավստրիա) | 2,538,633,461 | 9.4% |
| Ընդամենը | | 27,088,768,066 | |
| ՆԵՐՔԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ | | | |
| Պրինցիպալ | Բենեֆիցիար | Բյուջետային երաշխիքի չափ (ՀՀ դրամ) | Կշիռը ներքին բյուջետային երաշխիքների պորտֆելում |
| 1. «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | 40,996,819,115 | 78.84% |
| 2.«ՎԵԴԻ ԱԼԿՈ» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ | 3,948,459,481 | 7.59% |
| 3. «ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ, ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 2,387,500,000 | 4.59% |
| 4. «ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | 2,312,927,196 | 4.45% |
| 5. «ՄԱՊ» ՓԲԸ | «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ | 1,135,362,771 | 2.18% |

| | | | |
|--|--|-----------------------|-------|
| 6. «ԲԱԳՐԱՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ | 469,729,975 | 0.90% |
| 7. «ԱՐՏԱՇԱՏ-ՎԻՆԿՈՆ» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 230,985,324 | 0.44% |
| 8. «ԳԵՏԱՓԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 209,179,687 | 0.40% |
| 9. «ՇԱՀՈՒՄՅԱՆ-ՎԻՆ» ՍՊԸ | «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 206,000,000 | 0.40% |
| 10. «ԱՐԱՐԱՏԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ | «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ | 103,707,021 | 0.20% |
| Ընդամենը | | 52,000,670,570 | |

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի «բ» կետի՝ տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը:

Հաշվի առնելով օրենսդրորեն սահմանված վերոնշյալ ֆիսկալ կանոնը՝ ստորև ներկայացնենք տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների կշիռը նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտներում՝ համեմատելով սահմանային շեմի հետ:

Գծապատկեր 15. Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների կշիռը նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտներում, 2016-2025թթ.



Տվյալները ցույց են տալիս, որ երաշխավորվող պարտավորությունների կշիռը դիտարկվող ժամանակահատվածում ցածր են եղել սահմանված 10 տոկոս շեմից: 2017թ.-ին արձանագրվել է ամենաբարձր մակարդակը՝ 8.57%: Այնուհետև 2018–2023 թվականներին ցուցանիշը դրսևորել է նվազման միտում, մինչդեռ 2024 և 2025 թվականներին կրկին գրանցվել է աճ՝ կազմելով

համապատասխանաբար 3.19% և 3.54%: Վերջինիս աճը պայմանավորված է նոր ներքին բյուջետային երաշխիքների տրամադրմամբ:

Հատկանշական է, որ 2025թ.-ին թվով 7 կազմակերպության տրամադրվել է 9 նոր ներքին բյուջետային երաշխիք՝ գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող աջակցության և ՀՀ կառավարության 27.02.2025թ. N 220-Ա որոշման շրջանակներում: Ներկայացնենք երաշխավորվող կազմակերպությունների ցանկը, տրամադրված նոր երաշխիքի չափը ՀՀ դրամով և վերջիններիս կշիռը համապատասխան պորտֆելում:

Աղյուսակ 6. 2025 թվականին տրամադրված բյուջետային երաշխիքների ցանկ

| Պրինցիպալ | Բենեֆիցիար | Բյուջետային երաշխիքի չափ (ՀՀ դրամ) | Կշիռը ներքին բյուջետային երաշխիքների պորտֆելում |
|--|--|------------------------------------|---|
| 1. «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | 40,996,819,115 | 78.84% |
| 2. «ՎԵԴԻ ԱԼԿՈ» ՓԲԸ | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ | 517,500,000 | 1.00% |
| | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ | 1,055,500,000 | 2.03% |
| 3. «ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ, ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ | «ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ | 350,000,000 | 0.67% |
| | «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 250,000,000 | 0.48% |
| 4. «ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | 1,200,000,000 | 2.31% |
| 5. «ՄԱՊ» ՓԲԸ | «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ | 872,751,450 | 1.68% |
| 6. «ՇԱՀՈՒՄՅԱՆ-ՎԻՆ» ՍՊԸ | «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 206,000,000 | 0.40% |
| 7. «ԳԵՏԱՓԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 136,467,020 | 0.26% |
| Ընդամենը | | 45,585,037,585 | 87.7% |

Ներքին բյուջետային երաշխիքների, ինչպես նաև ընդհանուր պորտֆելում գերակշռող դիրք է զբաղեցնում ՀՀ կառավարության 27.02.2025թ. N 220-Ա որոշման շրջանակներում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրված երաշխիքը, որի կշիռը կազմում է համապատասխանաբար 78.84% և 51.84%՝ ձևավորելով պորտֆելի հիմնական մասը: Մնացած ներքին բյուջետային երաշխիքները բաշխված են մի շարք կազմակերպությունների միջև՝ համեմատաբար փոքր մասնաբաժիններով: Մասնավորապես, գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտի ընկերություններին տրամադրված բյուջետային երաշխիքների կշիռները հիմնականում տատանվում են 0.20%–7.59% միջակայքում, ինչը վկայում է պորտֆելի սահմանափակ դիվերսիֆիկացման մասին:

Ֆիսկալ ռիսկերի տեսանկյունից առկա է արտահայտված կոնցենտրացիոն ռիսկ, քանի որ պորտֆելի զգալի մասը կապված է մեկ խոշոր շահառուի հետ: Նման կառուցվածքը մեծացնում է պայմանական պարտավորությունների նյութականացման հավանականության դեպքում բյուջեի վրա էական բեռի առաջացման ռիսկը:

Ընդհանուր առմամբ, նշված կազմակերպություններին 2025թ.-ին տրամադրված բյուջետային երաշխիքների ծավալը կազմել է 45.6 մլրդ ՀՀ դրամ՝ ձևավորելով ներքին բյուջետային երաշխիքների պորտֆելի շուրջ 87.7%-ը: Սա ցույց է տալիս, որ 2025թ.-ին պորտֆելի աճը պայմանավորված է ինչպես մեկ խոշոր գործարքով, այնպես էլ միաժամանակ մի շարք փոքրածավալ բյուջետային երաշխիքների տրամադրմամբ, ինչը պահանջում է շարունակական մոնիթորինգ և ռիսկերի արդյունավետ կառավարման գործիքների կիրառում:

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վարկերի տրամադրման դեպքում իրականացվող վերլուծությունների արդյունքում տրամադրվող եզրակացության բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող բյուջետային վարկերից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտման, գնահատման և զսպանն ուղղված առաջարկների ներկայացման նպատակով Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության կողմից իրականացվում է հայտատուի՝ բյուջետային վարկի տրամադրման փուլում նպատակայնության և հիմնավորվածության համապատասխանության ուսումնասիրություն (վարկի տրամադրման նպատակը և հիմնավորումը պետք է բխեն հանրային քաղաքականության նպատակներից), ինչպես նաև ֆինանսական վիճակի և վարկունակության գնահատման համապարփակ վերլուծություններ: Ուսումնասիրությունների և իրականացված վերլուծությունների արդյունքների հիման վրա ներկայացված բյուջետային հայտի վերաբերյալ տրամադրվում է եզրակացություն՝ նշելով պոտենցիալ ռիսկերը և դրանց զսպանն մեխանիզմների վերաբերյալ առաջարկները:

Հատկանշական է, որ 2025թ.-ին «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում նախաձեռնվել և ընդունվել են որոշ փոփոխություններ՝ սահմանելով նոր ֆիսկալ կանոններ, որոնք նպատակ ունեն պայմանագրային պայմանական պարտավորություններից և բյուջետային երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի զսպանն:

Ստորև ներկայացվում են բյուջետային երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի զսպանն նպատակով սահմանված օրենսդրական ֆիսկալ կանոնները («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 11-րդ, 21-րդ հոդվածներ).

- Բյուջետային երաշխիքի գումարը երաշխիքի տրամադրման համար դիմելու պահին չպետք է գերազանցի այն իրավաբանական անձի ակտիվների 20 տոկոսը, որի համար բյուջետային երաշխիքը տրամադրվում է (որոշակի բացառություններով):
- Այն անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար՝ երաշխիքային գումարի 1%-ի չափով: Բյուջետային երաշխիքների տրամադրման դիմաց, բացի միջնորդավճարից, պետական բյուջեի օգտին կարող են գանձվել այլ վճարներ: Պետական լիազորված մարմինն իրավասու է մինչև երաշխավորված պարտքային պարտավորությունը մարելը բյուջետային երաշխիքի տրամադրման պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով ստուգելու ստացողի ֆինանսական վիճակը:
- Որոշակի պահի դրությամբ տրամադրված և չմարված բյուջետային երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա ՀՆԱ-ի 20%-ը.
- Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10%-ը.
- Երաշխիքների վճարմամբ ՀՀ-ի մոտ ծագում է հետադարձ պահանջի իրավունք: Միաժամանակ, բյուջետային երաշխիքի վճարմամբ ծագող հետադարձ պահանջները համարվում են բյուջետային վարկեր:

- Եթե ԱԺ ներկայացվող առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում կառավարության պարտքը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցել է ՀՀ նախորդ տարվա ՀՆԱ-ի 60%-ը, ապա տվյալ տարվա ընթացքում կառավարությանն արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որևէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող որևէ նոր պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում:

- Եթե նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի, պայմանագրային պայմանական պարտավորությունների և բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների հանրագումարը ՀՀ նախորդ տարվա ՀՆԱ-ի նկատմամբ գերազանցել է 70%-ը, ապա տվյալ տարվա ընթացքում կառավարությանն արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որևէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող որևէ նոր պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում:

Նշենք, որ բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորությունների ստանձնում է համարվում նաև գործող պարտավորությունների այնպիսի փոփոխությունները, որոնք հանգեցնում են բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների աճի:

Միաժամանակ, վերոնշյալ 2 կետերի մասով սահմանված՝ բյուջետային երաշխիքների հաշվարկում չեն ներառվում առաջնային գրավով ապահովված այն բյուջետային երաշխիքները, որոնց առաջնային ապահովման առարկայի գնահատված շուկայական արժեքն առնվազն հավասար է բյուջետային երաշխիքի 120%-ի:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՄԳ) ԶԵՎԱԶԱՓՈՎ ԳՈՐԾՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԲԵՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից՝ սահմանելով, որ վերջինիս դրույթները վերաբերելի են միայն 2020 թվականից հետո կնքված պայմանագրերին: Այնուամենայնիվ, օրենսդրությանը նախորդող բազմաթիվ ՊՄԳ ձևաչափին համապատասխան պայմանագրեր են կնքվել, որոնք պարունակում են էական ֆիսկալ ռիսկերը և պայմանական պարտավորությունները:

Վերլուծության են ենթարկվել «Հարավկովկասյան երկաթուղի», «Վեոլիա ջուր», «Արմենիա» միջազգային օդանավակայաններ, «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ», «Արմփատեր» և «Էֆարվի Մասրիկ» և «Հասյփաս» պայմանագրերը, որոնք գործունեություն են ծավալում այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են տրանսպորտը, կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի տրամադրումը և էլեկտրոնային նույնականացման համակարգը, էներգետիկան և ջրամատակարարումը: Այս ՊՄԳ-ների համար պայմանական պարտավորությունների առավել մեծ ծավալ են կազմում վաղաժամկետ դադարեցման, տնտեսական կամ օրենսդրական փոփոխությունների հետևանքով պայմանավորված նոր բանակցությունների և յուրաքանչյուր ծրագրին հատուկ ռիսկի այլ գործոնների հետ կապված հնարավոր ծախսերը: Բացի այդ, ԱՅԳ 1 արևային կայանի ծրագիրը դեռևս չի անցել ներդրումային փուլ, և այդ պայմանագրի գծով տեղեկատվությունը ներկայացված է ի լրումն:

Աղյուսակ 7. Գործող ՊՄԳ և ԷԳՊ պայմանագրերը

| Անվանում | Ոլորտ | Սկիզբ | Ավարտ | Հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակի փոփոխությունները |
|--|--|---------|--------|---|
| «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ | Տրանսպորտ | 2008թ. | 2038թ. | Նշանակալի, Անփոփոխ |
| «Վեոլիա Ջուր» ՓԲԸ | Ջրամատակարարում և կեղտաջրերի հեռացում | 2016թ. | 2031թ. | Միջին, Անփոփոխ |
| «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ | Տրանսպորտ | 2002թ. | 2032թ. | Միջին, նվազում |
| «ՔոնթուրԳլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ (Որոտան ՀԷԿ), ԷԳՊ | Էներգետիկա | 2016թ.* | 2038թ. | Միջին, Անփոփոխ |
| «Արմփաուեր» ՓԲԸ, ԷԳՊ | Էներգետիկա | 2019թ.* | 2041թ. | Միջին, Անփոփոխ |
| «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ, Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայան, ԷԳՊ | Էներգետիկա | 2021թ.* | 2041թ. | Ցածր, Անփոփոխ |
| «Հասյիաս» ՓԲԸ | Կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի տրամադրում | 2025թ. | 2037թ. | Ցածր, Նոր պայմանագիր |

* գործարքի ֆինանսական պայմանների բավարարման տարի. ԷԳՊ պայմանագրերի փաստացի տևողությունը կազմում է մինչև 25 տարի՝ սկսած ստորագրման տարվանից:

ՊՄԳ պայմանագրերի վերլուծության արդյունքում նյութականացման ռիսկի աստիճանը նշանակալի է համարվել ՊՄԳ այն պայմանագրերի համար, որտեղ պայմանագրի վերաբանակցման կամ պայմանագրի վաղաժամ դադարեցման ռիսկերը բարձր են:

«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒԴԻ» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

Կոնցեսիոն պայմանագիրը ներառում է վնասի սուբսիդավորում որոշ ուղևորափոխադրումների երթուղիների համար, որոնք իրականացվել են պայմանագրի բոլոր տարիներին: Սակայն, ըստ պայմանագրի, վճարման ենթակա գումարների առավելագույն չափը սահմանափակվում է կոնցեսիոնների կողմից վճարման ենթակա տարեկան կոնցեսիոն վճարի չափով: Համաձայն առկա պատմական տեղեկատվության՝ կոնցեսիոն պայմանագրի սկզբից ի վեր որևէ այլ պայմանական պարտավորության նյութականացում տեղի չի ունեցել:

Կոնցեսիոն պայմանագիրը նախատեսում է նաև փոխհատուցումներ մի շարք դեպքերում: Այդպիսի դեպքերից են՝

Օրենսդրության անբարենպաստ փոփոխություն,

Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմման ծախսեր,

Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման հետ կապված վճարումներ,

Կոնցեսիոնների կողմից պարտավորությունների չկատարման հիմքով պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ,


Փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ:

Կոնցեսիոն պայմանագրի վաղաժամ դադարեցման մասով պայմանական պարտավորությունները հիմնականում չափելի են, և դրանց առավելագույն ազդեցությունը վատագույն սցենարի դեպքում գնահատվում է շուրջ 100 մլրդ ՀՀ դրամ³⁷: Ի լրումն, որպես ոչ բացահայտ պարտավորություն կարելի է դիտարկել շարժակազմի ձեռքբերումը, որի մնացորդային արժեքը 2025թ.-ի ավարտին կազմել է 27 մլրդ ՀՀ դրամ:

Կոնցեսիոն պայմանագրի ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը գնահատվում է նշանակալի՝ պայմանավորված զարգացող աշխարհաքաղաքական ճգնաժամով, ինչպես նաև ընթացող վերաբանակցություններով: 2025թ.-ի ընթացքում եկամուտների անկման տենդենցը դադարել է և գրեթե վերականգնվել է 2024թ.-ին արձանագրված 20% նվազումը նախորդ տարվա համեմատ: 2023թ.-ին ընկերությունը վերագնահատել է կոնցեսիոն պայմանագրի արժեքը՝ կիրառելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ արժեզրկելով ոչ նյութական ակտիվների մնացորդային արժեքը 61,5 մլրդ-ով, արձանագրելով 58,7 մլրդ դրամի զուտ վնաս: 2024թ.-ին ընկերության գործունեությունը եղել է վնասաբեր՝ 0.8 մլրդ դրամի չափով, 2025թ.-ին ընկերության շահույթը կազմել է 2.3 մլրդ ՀՀ դրամ: 2022-2024թթ.-ի ընթացքում նկատելի էր բեռնափոխադրումների ֆիզիկական ծավալների անկման միտում՝ մոտ 60% գումարային անկում, սակայն 2025թ.-ին տեղի է ունեցել որոշակի վերականգնում՝ 28% աճելով նախորդ տարվա նկատմամբ: Ուղևորափոխադրումների ծավալը 2025թ.-ի ընթացքում նվազել է գրեթե 10%:

³⁷ Կիրառվել է Ասիական Զարգացման Բանկի կողմից մշակված մեթոդաբանությունը՝ ինչպես և սույն ենթաբաժնում ներկայացվող այլ հաշվարկների դեպքում:

Գծապատկեր 16. Ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները 2021-2025թթ.



«ՎԵՈՒԽԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության, «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանագիր):

2025թ.-ի ֆինանսական հաշվետվությունները դեռևս հասանելի չեն, սակայն կարելի է արձանագրել, որ Ընկերությունը շահութաբեր է եղել 2021-2024թթ.-ին՝ պայմանավորված եկամուտների ավելացմամբ, ինչպես նաև բարելավվել են դեբիտորական պարտքերի հավաքագրման ցուցանիշները: 2024թ.-ին բաժանորդների թիվն ավելացել է 9,867-ով, իսկ 2025թ.-ին՝ 16,870-ով:

Վարձակալական պայմանագրի շրջանակներում առկա են մի շարք նշանակալի պայմանական պարտավորություններ, այդ թվում.

Վարձակալի կողմից պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակից դուրս այլ աշխատանքների իրականացման դեպքում Վարձատուի կողմից համապատասխան գումարի փոխհատուցում,

Վարձակալական պայմանագիրը պարունակում է վերաբանակցությունների և վաղաժամկետ դադարեցման բազմաթիվ դեպքեր: Առաջիկայում Վարձակալական պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ռիսկը համարվել է ցածր:

Պայմանագրի վաղաժամ դադարեցման գծով պայմանական պարտավորությունը մասնակի չափելի է և վերագնահատվել է պայմանագրի վերջին փոփոխությունից հետո՝ 44.8 մլրդ դրամ՝ միջանկյալ սցենարի դեպքում, որտեղ նման վճարումը չի կարող գերազանցել ապագա վարձակալական վճարների հանրագումարը:

Ենթակառուցվածքները հնացող են և մաշված: Վարձակալի կողմից, պայմանագրի պայմաններին համաձայն, 2018-2023 թթ.-ի համար ներկայացվել է Վարձատուի կողմից իրականացվելիք հնգամյա ներդրումային ծրագիր, որը լիովին չի իրականացվել: ՀՀ կառավարության կողմից կապիտալ ներդրումների պարտավորությունները չկատարելը թուլացնում է ենթակառուցվածքը և դանդաղեցնում արդիականացումը: Ի լրումն դրան՝ Երևան քաղաքում ակտիվ կառուցապատումներով պայմանավորված ավելացել է ջրապահանջարկը, և ընկերությունը ներկայացրել է իր մտահոգությունն առ այն, որ առկա պետական ներդրումային քաղաքականության պայմաններում առաջիկայում խնդրահարույց կլինի լրացուցիչ ջրապահանջարկի ապահովումը: Այս աշխատանքները ֆինանսավորվելու են պետական բյուջեի միջոցներից, այդպիսով՝ դրանք չեն հանդիսանում պայմանական պարտավորություններ, բայց

այս տեղեկատվության առկայությունը ավելի ամբողջական պատկերացում է տալիս այս նախագծի իրական ֆինակալ ազդեցության մասին:

2024թ.-ի ընթացքում ընկերության կողմից իրականացվել են 4.4 մլրդ ՀՀ դրամի գույքի պահպանման, վերանորոգման և ջրամատակարարման ծառայությունների բարելավմանն ուղղված աշխատանքներ՝ կապալառու կազմակերպությունների միջոցով և սեփական ուժերով, նախատեսված 2.75 մլրդ ՀՀ դրամից 60%-ով ավել՝ նպատակ ունենալով մարել նախորդ պայմանագրային տարիներից տեղափոխված պարտավորությունները: Պայմանագրի ողջ տևողության ընթացքում «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն իր 45 մլրդ դրամ ներդրումային պարտավորությունից իրականացրել է շուրջ 23 մլրդ ՀՀ դրամ՝ պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում: 2025թ.-ի ընթացքում պայմանագրի հերթական փոփոխության շրջանակներում կառավարությունը համաձայնվել է 4 մլրդ դրամով կրճատել ողջ ժամանակաշրջանի վարձակալական վճարի հանրագումարը, ինչը կարելի է համարել կորսված եկամուտ և ֆինակալ ռիսկի նյութականացում, կոնցեսիոն վճարի ժամանակացույցում փոփոխությունները բերել են նաև վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորության ավելացմանը:

Հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ ֆինանսական ցուցանիշների անհասանելիության պատճառով դեռևս հնարավոր չէ գնահատել և այն թողնվել է անփոփոխ:

«ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

Կոնցեսիոն պայմանագիրը գործում է 2002թ.-ից՝ Երևանի «Ջվարթնոց» օդանավակայանի համար, իսկ 2007թ.-ից ներառում է նաև Գյումրու «Շիրակ» օդանավակայանը: Մայր ընկերությունը՝ «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.»-ը, աշխարհի օդանավակայանների խոշորագույն օպերատորներից է, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում:

ՀՀ-ի դուստր ձեռնարկությունը շարունակում է լինել խմբի ամենաշահութաբերներից մեկը: Համավարակի ճգնաժամից հետո ֆինանսական վիճակը վերականգնվել է, և 2022թ.-ին «ԱՄՕ»-ն արձանագրել է 2019թ.-ի ցուցանիշները 50% գերազանցող զուտ շահույթի մակարդակ: Ելնելով ՀՀ ուղևորափոխադրումների վիճակագրությունից՝ ոլորտի վերականգնումը գրանցվել է 2021.-ի ընթացքում և թափ է առել 2022թ.-ին՝ շարունակվելով 2023թ.-ին, երբ արձանագրված ծավալները գերազանցել են նախահամավարակային մակարդակը: Ռուս-ուկրաինական ճգնաժամով պայմանավորված՝ ուղևորահոսքի մակարդակը 2024թ.-ին պահպանվել է, սակայն եկամուտների աճ նախորդ տարվա համեմատ չի արձանագրվել, ֆիզիկական ծավալներով ուղևորահոսքը չնչին նվազել է (0.4%), իսկ բեռնափոխադրումներն ավելացել են 24%-ով: 2025թ.-ի արդյունքներով՝ ուղևորափոխադրումները կրկին աճել են 13.8%-ով, իսկ բեռնափոխադրումները նվազել՝ 3.4%-ով նախորդ տարվա նկատմամբ:

2023 և 2024 թվականների զուտ շահույթի մարժան կազմում է 25%՝ ապահովելով տարեկան շահույթ շուրջ 63 մլն ԱՄՆ դոլարի չափով, 2025թ.-ին շահույթը աճել է մինչև 78.6 մլն ԱՄՆ դոլար (մարժան՝ 26.4%): Այդպիսով՝ Հայաստանը շարունակում է լինել խմբի ամենաշահութաբեր սեզմենտներից մեկը:

2026թ.-ի հունվարին կառավարության և «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» միջև ստորագրվել է պայմանագրի փոփոխություն, որի արդյունքներով պայմանագրի ժամկետը երկարաձգվել է 35 տարով (մինչև 2067թ.-ի ավարտ), վերաձևակերպվել են ներքին շահութաբերության թիրախային մակարդակին վերաբերող դրույթները և սահմանվել է 425 մլն դոլար ներդրումային պարտավորություն «ԱՄՕ»-ի համար:

Փոփոխությամբ նաև ամրագրվել է ուղևորահոսքի մակարդակի պահպանման երաշխիք, որը ենթադրում է երկու իրար հաջորդող տարիներում տարեկան 4.000.000 ուղևորահոսքի ծավալից նվազման պարագայում փոխհատուցում կամ սակագների բարձրացման, կամ ժամկետի երկարաձգման

եղանակով: Փոփոխությամբ նաև հստակեցվել է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վճարի հաշվարկման կարգը:

Հաշվի առնելով ընկերության բարձր շահութաբերությունը՝ պայմանագրի վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորությունը և ընկերության բիզնես ռիսկը համապատասխանաբար գնահատվում էին ցածր, սակայն աշխարհաքաղաքական ճգնաժամով պայմանավորված ոլորտը դրսևորում է չափազանց տատանողական վարքագիծ՝ ունենալով եզակիորեն շահութաբեր 2022-2025 թվականներ, որոնք սակայն կարող են կայուն չլինել:

Ընկերությունը 2025թ.-ի ավարտին չուներ վարկային պարտավորություններ և ուներ կուտակված դրամական միջոցներ, սակայն նոր ներդրումային ծրագրի իրականացման հետ կապված վարկերի ներգրավման հավանականությունը բարձրացել է:

Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը գնահատվել է՝ հաշվի առնելով «Զվարթնոց» օդանավակայանի ընդլայնման հավակնոտ ծրագիրը և դրա հիմքում դրված ուղևորահոսքի ենթադրությունը, որը հիմնվել է նախորդ տարիների արտասովոր ցուցանիշների վրա և, մյուս կողմից, այդ ցուցանիշների կայունության անորոշությունը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ինչը կարող է հազեցնել ՀՀ-ի համար պայմանական պարտավորությունների: Այս ՊՄԳ-ի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը գնահատվում է «միջին»:

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈՐԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ

Ընկերությունը հանդիսանում է հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության առանցքային համալիրներից մեկը: Այն նախկինում պետական մասնակցությամբ ընկերություն էր, որը մասնավորեցման արդյունքում վաճառվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «ՔոնտուրԳլոբալ» խոշոր միջազգային խմբին: Ընկերությունն արտադրված էլեկտրաէներգիան վաճառում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ՀԷՑ)՝ ՀԾԿԿ կողմից հաստատված սակագներով: ՀԷՑ ընկերությունը պարտավոր է գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան և կատարել հզորության դիմաց վճարներ: Ամենախոշոր պայմանական պարտավորությունը պետության կողմից հիմնական միջոցների հետգնման պարտավորությունն է, որի արժեքը 2024թ. ավարտին կազմում է 98 մլրդ դրամ, և ակնկալվում է դրա նվազում՝ պայմանավորված խոշոր ներդրումների պլանների բացակայությամբ:

2025թ.-ին ընկերությունը վերաֆինանսավորել է ՄՖՀ-ներից իր վարկերը 135 միլիոն ԱՄՆ դոլարի չափով Արդշինբանկի վարկային համաձայնագրի շրջանակներում: Բացի այդ, ընկերությունը մարում է Վերականգնման վարկերի բանկից (KfW) եվրոյով ստացված ենթավարկը: Հարկ է նկատել, որ ընկերության վարկերը (52.9 մլրդ դրամ) արտահայտված են արտարժույթով, և չնայած փոխարժեքի ռիսկի՝ սակագնին փոխանցմանը, ընկերությունը զգայուն է դրամի փոխարժեքի տատանումների նկատմամբ: Ընկերության պարտք/սեփական կապիտալ հարաբերակցությունը 2024թ.-ի ավարտին կազմում է 1.15, ինչը բավական բարձր է և արտահայտվում է ընկերության եկամուտներում տոկոսային ծախսերի մեծ կշռով (37%):

2023թ.-ին ընկերությունն արձանագրել էր 1.8 մլրդ դրամի վնաս՝ պայմանավորված եկամուտների անկմամբ և ֆինանսական բարձր ծախսերով: Իրավիճակը մի փոքր բարելավվել է 2024թ.-ի ընթացքում՝ եկամտի 14%-ով ավելացմամբ և 3.8 մլրդ դրամ շահույթով, որից շուրջ 2 մլրդ առաջացել են արտարժույթի փոխարժեքային տարբերությունների օգուտներից: 2025թ.-ի ֆինանսական հաշվետվությունները դեռևս հասանելի չեն:

Ընկերությունը շարունակում է սպասարկել իր վարկերը, շնորհիվ բաժնետերերի կողմից կանոնադրական կապիտալի ավելացման (2.24 մլրդ դրամ՝ 2024թ.-ին, և 1.66 մլրդ դրամ՝ 2023թ.-ին): Միաժամանակ, ընկերությունը իրականացրել է շահութաբաժինների վճարում երկու տարիների

ընթացքում շուրջ 4.3 մլրդ դրամի չափով, ընկերությունը 2023թ.-ի ընթացքում հայտարարել է 5.5 միլիարդ դրամ բացառիկ շահութաբաժնի վճարում՝ չնայած 2023թ.-ի ֆինանսական վնասների:

Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը բարելավվել է «միջին»՝ հաշվի առնելով ընկերության ֆինանսական վիճակը: 2022թ.-ին իրականացվել է մայր ընկերության ձեռք բերում KKR խմբի կողմից և ապացուցակում: Մայր ընկերության ձեռքբերումը KKR խմբի կողմից Կառավարության համար շարունակում է մնալ անորոշության գործոն, քանի որ ակտիվները կարող են ենթարկվել վերականգնավորման և վաճառքի, ինչպես նաև կարող է փոխվել խմբի ներդրումային քաղաքականությունը:

«ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԲԸ (ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՋԷԿ)

Ընկերությունը Երևան քաղաքում կառուցել և հանձնել է շահագործման ջերմային էլեկտրակայան, որը հանդիսանում է աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր գործունեություն իրականացնող իտալական «Ռենկո» էներգետիկական խմբի և գերմանական «Սիմենս» խմբի դուստր ընկերություն: Ծրագրի գնահատված արժեքը կազմել է 257.575 մլն ԱՄՆ դոլար: Պայմանագրի ժամկետը կազմում է 20 տարի՝ սկսած առևտրային շահագործման մեկնարկից: Կայանը շահագործման է հանձնվել 2021թ. դեկտեմբերի 11-ին:

Հիմնական պայմանական պարտավորությունը ՀՀ կառավարության կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում կայանի հետգնման պարտավորությունն է (նյութականացման դեպքերն են՝ օտարումը, բռնագրավումը, զավթումը, ՀՀ կառավարությանն առնչվող անվճարունակության դեպքի տեղի ունենալը, պայմանագրի շրջանակներում պետության կողմից տրված հավաստիացումների և երաշխիքների էական խախտումը, ծրագրի կառուցման կամ շահագործման՝ Կառուցապատողի կարողության վրա էականորեն և անբարենպաստ կերպով ազդող օրենսդրական փոփոխությունը): Շահագործման առաջին տարվանից հետո պայմանական պարտավորության գումարին կավելանա 15 տոկոս հավելավճար՝ ի հավելումն ներդրման գումարի, իսկ այնուհետև գումարը կնվազի տարեկան 4 տոկոսով: Քանի որ կայանը ստիպված էր վերագործարկվել շահագործման մեջ մտնելուց անմիջապես հետո, հավելավճարը կիրառելի է միայն 2023թ.-ի սեպտեմբերից: Վերագործարկման համար պահանջվել էր լրացուցիչ 3,2 մլն ԱՄՆ դոլար, որը ֆինանսավորվել է սեփական կապիտալի համալրման հաշվին: Հիմնական միջոցների մնացորդը 2025թ.-ի ավարտին կազմել է 220.7 մլն ԱՄՆ դոլար՝ մաշվածության նվազեցումից հետո:

Ընկերության 2024թ.-ի եկամուտը 2023թ.-ի 114.7 միլիոն ԱՄՆ դոլարից նվազել է մինչև 105.7 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է 8% անկում, որը հիմնականում պայմանավորված է հզորության վճարումների անկմամբ՝ 67.4 միլիոն ԱՄՆ դոլարից մինչև 56.3 միլիոն ԱՄՆ դոլար (16% անկում): Համախառն շահույթի մարժան 2024թ.-ին նվազել էր 16.6% մինչև 12.3% և վերականգնվել էր 2025թ.-ին՝ մինչև 31%:

Գործառնություններից ստացված զուտ դրամական հոսքը 2024թ.-ին նվազել է մինչև 20.2 միլիոն ԱՄՆ դոլար՝ 2023թ.-ի 29.7 միլիոն ԱՄՆ դոլարի համեմատ, 2025թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 21.3 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ ֆինանսական ծախսերը մնում են բարձր՝ 14 միլիոն ԱՄՆ դոլար:

Ընկերության վարկային համաձայնագրերով սահմանված պարտքի սպասարկման ծածկույթի գործակիցը (DSCR) խախտվել է նախորդ երկու տարիների արդյունքներով, պայմանավորված իրացվելիության վատթարացմամբ: Ընկերությունը վարկերը չի վերադասակարգել որպես կարճաժամկետ պարտավորություններ՝ հիմնվելով այն կարծիքի վրա, որ դա դեռևս չի ազդում վարկերի սպասարկելու ունակության վրա: Վարկատուներին արդեն տեղեկացվել է, և ստացվել են ոչ

պաշտոնական ազդակներ՝ զիջում (waiver) տրամադրելու վերաբերյալ, նախորդ տարի ընկերությունը ստացել էր վարկատուներից իրավունքից հրաժարում (waiver):

Հաշվի առնելով կայանի հաջող շահագործման հանձնումը՝ չնայած կորոնավիրուսային համավարակի հետևանքով առաջացած ուշացումներին, ծրագրի ֆինսկալ ռիսկի կարգավիճակը կարող էր փոփոխվել ցածրի, սակայն ֆինանսական դժվարություններով պայմանավորված ծրագրի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը պահպանվում է միջին մակարդակում:

«ՄԱՍՐԻԿ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈՒՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ

Այս նախագծի շրջանակներում կառուցվել է 55 Մվտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանը: Այն պատկանում է La Providencia և FRV իսպանական մասնագիտացված խմբերին և ֆինանսավորվում է IFC-ի, EBRD-ի և Ֆինլանդիայի ՀՀ կառավարության վարկային միջոցներով: Պայմանագրի ֆինանսական կայացումը տեղի է ունեցել 2020թ. հուլիսին, իսկ աշխատանքները նախատեսվում էր ավարտել 2022թ.-ին, սակայն հաջորդող լրացուցիչ համաձայնագրերով այն հետաձգվել է մինչև 2024թ.-ի դեկտեմբեր, քանի որ արձանագրվել էին էական ուշացումներ, մասնավորապես ադրբեջանական զինված ուժերի գործողություններով պայմանավորված (Մասրիկի տեղամասը սահմանին շատ մոտ է):

Կայանը ներկայումս գործում է և միացված է բաշխման ցանցին: Առաջին շահագործումը տեղի է ունեցել 2024թ.-ի դեկտեմբերի 15-ին: Այնուամենայնիվ, Կայանի կառուցման ավարտը և շահագործմանը հանձնման ավարտը արձանագրվել է ս.թ. մայիսի 14-ին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) ընդունած որոշումներով, երբ «ԷՖԱրՎի Մասրիկ» ընկերության «Մասրիկ-1» արևային կայանը անցել է էլեկտրական էներգիայի արտադրության փուլ և սկսել առևտրային էլեկտրաէներգիայի մատակարարումները՝ համաձայնեցված պայմանագրային պայմաններին համապատասխան:

Ըստ ընկերության ֆինանսական հաշվետվությունների՝ 2024 թվականի ավարտին հիմնական միջոցների մնացորդային արժեքը կազմում է մոտ 15 մլրդ դրամ, դրանք ամբողջությամբ գրավադրված են 34.2 մլն ԱՄՆ դոլար վարկի դիմաց, որի մարման վերջնաժամկետ է սահմանված 2043 թվականը:

Նախագծի իրականացման արդյունքում շինարարության ավարտից մեկ տարվա ընթացքում առաջանում են մի շարք պայմանական պարտավորություններ, մասնավորապես՝ արտադրվող էլեկտրաէներգիայի համար գնման երաշխիք և անբարենպաստ իրադարձությունների դիմաց լրացուցիչ հատուցման իրավունք:

Մինչ այդ, հիմնական պայմանական պարտավորությունը վաղաժամ դադարեցումն է՝ ՀՀ Կառավարության տարբեր հիմքերով գործողությունների հետևանքով. (ա) ՀՀ Կառավարությունը չի կատարում իր կողմից պարտավորություն հանդիսացող որևէ վճար, (բ) որևէ պետական մարմնի կողմից էքսպորտպրիսցիայի կամ հարկադիր ձեռքբերման է ենթարկվել ծրագրի տարածքը, կայանը, գ) ՀՀ Կառավարությանը վերաբերող անվճարունակության դեպք, դ) Օրենքի փոփոխություն կամ անբարենպաստ պայմանի դեպք, որը վերացված կամ փոփոխված չէ 180 (մեկ հարյուր ութսուն) օրվա ընթացքում և անհնար է դարձնում կայանի կառուցումը կամ շահագործումը: Կառուցապատողի կողմից. ե) ՀՀ Կառավարության կողմից Համաձայնագրի ցանկացած այլ էական խախտում, եթե այդ խախտումը չի վերացվել 180 օրվա ընթացքում:

Հաշվարկվել է առավելագույնը 18.5 մլրդ ՀՀ դրամի փոխհատուցում՝ պայմանավորված պայմանագրով սահմանված վաղաժամ դադարեցման դրույթի կիրառելիությամբ:

Նախորդ հաշվետվության համեմատ, էականորեն նվազել է տվյալ ծրագրի ռիսկի նյութականացման հավանականությունը և հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը գնահատվում է «ցածր»:

«ՀԱՅՓԱՍ» ՓԲԸ ԿԵՆՍԱՀԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

2025թ.-ին ՀՀ ՆԳՆ-ն ամփոփել է կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման համար կազմակերպության ընտրության մրցույթի արդյունքները, ըստ որի՝ հաղթող է ճանաչվել «IDEMIA Identity Security France և A.C.I. Technology S.à.r.l.» կոնսորցիումը: Այս պայմանագիրը առաջինն է, որ ստորագրվել է ՊՄԳ օրենսդրական շրջանակին համապատասխան: Ծրագիրը անցել է ներդրումային փուլ 2025թ.-ի նոյեմբերին և ակնկալվում է, որ 2026թ.-ի օգոստոսից կներդրվի կենսաչափական անձնագրերի տրամադրման նոր համակարգը:

Այս ծրագրի պայմանական պարտավորություններն են՝ պայմանագրի վաղաժամ դադարեցման, նվազագույն ծավալի երաշխիքից բխող պարտավորությունները և գնաճի և փոխարժեքի ազդեցության երաշխիքները: Վաղաժամ դադարեցման վճարը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ ներգրավված պարտքը և դրա մարման հետ կապված լրացուցիչ ծախսեր գումարած փոխհատուցվող սեփական կապիտալ: Այս փուլում առանց ֆինանսական հաշվետվությունների այս պայմանական պարտավորության չափը հաշվարկել հնարավոր չէ:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿ

Աղյուսակ 8. ՊՄԳ ծրագրերի գծով պայմանական պարտավորությունների ամփոփ հաշվարկ, 2025թ. (մլրդ ՀՀ դրամ)

| Ծրագրի անվանում | Այլ ՊՊ | Վաղաժամ դադարեցում | Ընդհանուր ՊՊ | ՀՆԱ նկատմամբ, % |
|--|------------------|--------------------|--------------|-----------------|
| «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ | 27 ³⁸ | 99.6 | 99.6 | 1 |
| «Վեոլիա Ջուր» ՓԲԸ | | 57.13 | 57 | 1 |
| «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ | | 340 | 340 | 3 |
| «Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ | | 98 | 98 | 1 |
| «Արմփատեր» ՓԲԸ | | 96 | 96 | 1 |
| «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ | | 18.41 | 18 | 0 |
| Ընդամենը | 27 | 709 | 709 | 6.3 |

Ծանոթագրություններ. ԱՄՆ դոլարով արտահայտված գումարների փոխարկման համար կիրառվել է 380 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքը: 2025թ. ՀՆԱ-ն՝ 11,317 մլրդ ՀՀ դրամ:

³⁸ Ոչ բացահայտ պարտավորություն՝ ծառայությունների անընդհատությունը ապահովելու նպատակով շարժակազմի ձեռքբերման ծախս: Հանրագումարում ներառված չէ:

ՊՄԳ-ների գծով պայմանական պարտավորությունների ՀՆԱ-ին հարաբերակցության ցուցանիշը նախորդ զեկույցում կազմում էր 5.7%:

Ա3Գ -1

2021թ.-ի հունիսի 18-ի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել են Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում կազմակերպված մրցույթի ընթացակարգի արդյունքները՝ հաղթող ճանաչելով «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոնփանի» ՀԲԸ («Մասդար»): Հայաստանի Հանրապետությանը պատկանում է ծրագրիային ընկերության 15% բաժնեմասը: Ծրագրի իրականացման շուրջ կնքվել է կառավարության աջակցության համաձայնագիր, իսկ ֆինանսական կայացման համար նախապես սահմանված վերջնաժամկետը՝ 2022թ.-ի դեկտեմբեր ամիսը, երկարաձգվել է մինչև 270 օրով, սակայն 2023թ.-ի հունիսին այն երկարաձգվել է ևս մեկ անգամ՝ մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 25: Ներկայումս կողմերը նորից բանակցում են ֆինանսական կայացման ժամկետը երկարաձգման վերաբերյալ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել շուրջ 174 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրում: Նախքան ֆինանսական կայացումը՝ պայմանագրի դադարեցման պարագայում վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորությունը կազմում է 380 մլն դրամ:

ԲՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Աղետների ռիսկը համարվում է Հայաստանում հատուկ հարկաբյուջետային ռիսկեր արդիական աղբյուրներից մեկը՝ հաշվի առնելով երկրում առկա «աղետների պրոֆիլը», որը ներառում է էական երկրաֆիզիկական (հատկապես՝ երկրաշարժերի և սողանքների), եղանակային պայմանների հետ կապված (հիդրոոգերևութաբանական և այլ), ինչպես նաև մարդածին ռիսկեր:

Համաձայն ՄԱԿ Զարգացման ծրագրի տվյալների՝ Հայաստանը աշխարհում ամենից շատ աղետների ենթակա 60 երկրների շարքում է: Հայաստանը բազմաթիվ վտանգներ ունեցող երկրի տիպիկ օրինակ է՝ խոշոր երկրաշարժերի, ջրհեղեղների, երաշտների, ծայրահեղ եղանակային պայմանների (ցրտահարություն և ջերմային ալիքներ), ուժեղ քամիների, կարկուտի, փոթորիկների, սելավների, սողանքների և այլնի պատմությամբ:

Երկրաֆիզիկական ռիսկերից ՀՀ-ում 7.0 կամ ավելի բարձր մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի դեպքում կարող է փլուզվել Երևան քաղաքի շենքերի մեծամասնությունը՝ խլելով շուրջ 300,000 մարդու կյանք: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2012թ. տվյալներով տնտեսական վնասները կարող են հավասար լինել՝ ընդհուպ ՀՆԱ-ի 100 տոկոսին³⁹:

2017թ.-ին Համաշխարհային բանկը հաշվարկել է 1.3 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով «ֆինանսավորման բաց»՝ Սպիտակի երկրաշարժի նման ևս մեկ ուժեղ երկրաշարժի դեպքում⁴⁰: Սակայն, համաձայն աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամի կողմից 2017թ.-ին կազմված՝ Հայաստանի աղետների ռիսկի պրոֆիլի, ընդհանուր տնտեսական ազդեցությունը կարող է շատ ավելի մեծ լինել, չնայած հնարավոր զոհերի գնահատված ավելի փոքր քանակին⁴¹:

ՇՄՆ քարտեզագրման արդյունքներով արձանագրվել է շուրջ 2500 սողանքային տարածք, որոնց համար 2024թ.-ին պետական բյուջեի «Սողանքային տեղամասերի ինժեներաերկրաբանական հետազոտություններ» հոդվածով ուղղվել է 60,376 հազար ՀՀ դրամ, իսկ որպես սողանքներից բխող

³⁹ <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-sd-02.pdf>

⁴⁰ <https://documents1.worldbank.org/curated/zh/316831526641378244/pdf/Armenia-Disaster-Risk-Finance-Country-Note.pdf>

⁴¹ https://www.gfdr.org/sites/default/files/publication/drp_armenia.pdf

խնդիրների ֆինանսավորման աղբյուր ներկայումս դիտարկվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը:

Ինչ վերաբերում է եղանակային պայմանների հետ կապված ռիսկերին, ապա կլիմայի փոփոխությունը համարվում է աղետների և՛ հաճախականության, և՛ ուժգնության վրա ազդող էական գործոն: Այդ իսկ պատճառով կարևոր է ներդրումներ կատարել կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների ռիսկի համապարփակ նվազեցման ուղղություններով: Վերջին 9 տասնամյակի ընթացքում գրանցվել է միջին ջերմաստիճանի կայուն աճ և միջին տեղումների կայուն նվազում՝ համաշխարհային միջինից բարձր և վերջին 3 տասնամյակների ընթացքում արագացող միտումներով: Հայաստանի տարածքի համար 1961-1990թթ. միջինի (5.50 °C) նկատմամբ կանխատեսվում է տարեկան միջին ջերմաստիճանի աճ՝ մինչև 1.60 °C -ով՝ 2040թ. , 3.30 °C-ով՝ 2070թ. և 4.70 °C-ով՝ 2100թ. : Մթնոլորտային տեղումների դեպքում ակնկալվում է 1961-1990թթ. տարեկան տեղումների միջին քանակի (592 մմ) նկատմամբ նվազում՝ մինչև 2.7%-ով՝ 2040թ. , 5.4%-ով՝ 2070թ. և 8.3%-ով՝ 2100թ. (Աղյուսակ 9)⁴² :

Աղյուսակ 9. Տարեկան միջին ջերմաստիճանի (T, °C) և տեղումների քանակի (P, մմ) կանխատեսվող արժեքները Հայաստանի տարածքում՝ ըստ բարձրության տարբեր գոտիների (մ) METRAS մոդելով՝ համաձայն RCP8.5 սցենարի⁴³



| Բարձրության գոտիներ, մ | 1961-1990 | | 2011-2040 | | 2041-2070 | | 2071-2100 | |
|------------------------|------------|------------|------------|------------|------------|------------|-------------|------------|
| | T, °C | P, մմ | T, °C | P, մմ | T, °C | P, մմ | T, °C | P, մմ |
| < 800 | 11.2 | 467 | 12.8 | 452 | 14.5 | 439 | 15.9 | 426 |
| 800 - 1000 | 10.8 | 343 | 12.4 | 332 | 14.1 | 322 | 15.5 | 313 |
| 1000 - 1500 | 8.4 | 502 | 10 | 486 | 11.7 | 472 | 13.1 | 458 |
| 1500 - 2000 | 5.5 | 592 | 7.1 | 573 | 8.8 | 557 | 10.2 | 540 |
| 2000 - 2500 | 3.3 | 660 | 4.9 | 640 | 6.6 | 621 | 8 | 603 |
| 2500 - 3000 | 1.6 | 732 | 3.2 | 713 | 4.9 | 692 | 6.3 | 671 |
| > 3000 | -0.7 | 800 | 0.9 | 776 | 2.6 | 753 | 4 | 731 |
| Հայաստան | 5.5 | 592 | 7.1 | 576 | 8.8 | 560 | 10.2 | 543 |

2025թ.-ին ՀՀ-ում գրանցվել է 18,586 արտակարգ դեպք, որոնցից 3.67%-ը բաժին է ընկել տարերային վտանգավոր երևույթներին: Արտակարգ դեպքերի 80%-ը բաժին է ընկել **տեխնաձին արտակարգ դեպքերին** (Գծապատկեր 17):

⁴² 2021-2025 թվականների Հարմարվողականության ազգային ծրագիր:

⁴³ Տվյալների սկզբնաղբյուր. ՄԱԿ կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ներքո կլիմայի փոփոխության մասին Հայաստանի 4-րդ ազգային հաղորդագրություն (2020թ.): 1991-2010թթ-ի տեղեկատվությունը բացակայում է:

Գծապատկեր 17. Արտակարգ իրավիճակների Գծապատկեր 18. Արտակարգ դեպքերը (քանակ) բաշխումն՝ ըստ դեպքերի (%)



2025թ.-ին 2024թ.-ի համեմատությամբ ունեցել ենք արտակարգ դեպքերի աճ շուրջ 36.94%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել տեխնածին աղետների՝ շուրջ 48.6% աճով՝ մասնավորապես կապված 2025թ.-ին տեղի ունեցած հրդեհների աճի հետ (2025թ.-ին 2024թ.-ի համեմատությամբ հրդեհների քանակի աճել է շուրջ 83%-ով):

2020թ.-ին տարերային աղետների պատճառած ընդհանուր վնասը կազմել է 3,8 մլրդ դրամ, 2021թ.-ին՝ շուրջ 3,1 մլրդ դրամ (հիմնական պատճառներ են հանդիսացել ուժեղ քամիները, երաշտը, տորնադոները և երկրաշարժերը), 2022թ.-ին՝ 727 մլն դրամ, 2023թ.-ին՝ 892 մլն դրամ, իսկ 2024թ.-ին՝ 1,87 մլրդ ՀՀ դրամ, 2025թ.-ին գյուղատնտեսությանը պատճառված վնասը կազմել է 2,19 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2025թ.-ին և 2026թ.-ի առաջին երկու ամիսներին ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը (ջենք, շինություններ) կազմել է 41,6 մլն ՀՀ դրամ, որը պայմանավորված է եղել այնպիսի տարերային աղետներով, ինչպիսիք են կարկուտը, սելավը, ցրտահարությունը, ուժեղ քամին, հրդեհը և առատ ձյունը: Վնասի գնահատումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 10.11.2011թ. թիվ 1582-Ն որոշման⁴⁴:

Հայաստանում փաստացի առկա են ֆինանսական պաշտպանության ռազմավարության որոշ բաղադրիչներ. աղետներին արձագանքման անհրաժեշտության դեպքում օգտագործվում է կառավարության պահուստային ֆոնդը, աղետների դեպքում երբեմն կարող են կիրառվել պետական բյուջեի միջոցների վերաբաշխումներ, ինչպես նաև COVID-19 համավարակով պայմանավորված ճգնաժամի ընթացքում Հայաստանը ներգրավել է հետադեպային ֆինանսավորում:

ՀՀ-ում առկա է աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) 2023-2030թթ. ռազմավարություն, որը ընդգրկում է ԱՌԿ պետական քաղաքականության շրջանակը⁴⁵: Ռազմավարությամբ սահմանված «Կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ անվտանգության բարելավում» ծրագրի շրջանակներում նախատեսված երեք միջոցառումներից՝ «Կրթական հաստատությունների սեյսմիկ ռիսկի գնահատում» միջոցառման իրականացման ուղղությամբ կատարվել է 4 կրթական հաստատության սեյսմիկ ռիսկի գնահատում՝ նախատեսված 12-ի փոխարեն, «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների,

⁴⁴ arlis.am/DocumentView.aspx?DocID=72227

⁴⁵ <https://arlis.am/hy/acts/216092/latest>

երեխաների, տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և պաշտպանության, առողջապահական հաստատությունների շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատում» միջոցառման իրականացման ուղղությամբ կատարվել է 2 նախադպրոցական ուսումնական հաստատության և 12 հասարակական և այլ նշանակության շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատում: Միջոցառումը համարվում է մասնակի կատարված, քանի որ ամբողջությամբ չի ապահովվել «Տարեկան 6 մանկապարտեզ, 2 տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և պաշտպանության շենքերի, 4 առողջապահական հաստատությունների և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող կազմակերպությունների շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատում» ցուցանիշը: «Սեյսմիկ խոցելիության գնահատման արդյունքներով խոցելիության նվազեցման միջոցառումների իրականացում» երրորդ միջոցառման ուղղությամբ կատարվել է ՀՀ տարածքում փլուզման վտանգ ունեցող թվով 41 բազմաբնակարան շենքի հետազոտություն և տրվել են 41 շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի վերաբերյալ եզրակացություններ: Միջոցառումը համարվում է կատարված, քանի որ ապահովվում է սահմանված՝ «Գնահատված հաստատությունների սեյսմիկ խոցելիության նվազեցում առնվազն 20%-ով» ցուցանիշը:

ՀՀ-ում իրականացվում է պետական աջակցության՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական փորձնական ծրագիր՝ համաձայն ՀՀ կառավարության 2019թ. թիվ 1485-Լ որոշման⁴⁶:

2019թ.-ին մեկնարկած գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը շարունակաբար իրականացվում է նաև 2025 և 2026 թվականներին: 2023թ.-ի բարձր վնասաբերությամբ պայմանավորված 2024թ.-ին վերաապահովագրական ընկերությունը դուրս է եկել հայկական շուկայից, և ապահովագրական ընկերությունների ռիսկերը մեղմելու նպատակով ՀՀ կառավարությունը ստանձնել է այդ գործառույթը, որը կրում է շարունակական բնույթ: 2025թ.-ին կնքվել է 32 ապահովագրական պայմանագիր: Մասնավորապես՝ ապահովագրվել է ծիրան, խաղող, դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ և հացահատիկային մշակաբույսերը՝ կարկուտի, հրդեհի, գարնանային ցրտահարման և երաշտի ռիսկերից: 2025թ.-ի ընթացքում թվով 4 ապահովագրական պայմանագրերի գծով վճարվել է 788,840 ՀՀ դրամ ապահովագրական հատուցում: 2024-2025թթ. ընթացքում Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության անդամ ապահովագրական ընկերություններից մեկում առկա է մեկ քաղաքացիական գործ. նշանակվել է դատական նիստ:

2026թ.-ի փետրվար-մարտ ամիսների համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 705 մլն ՀՀ դրամ, սուբսիդավորվող ապահովագրավճարը՝ շուրջ 318 մլն ՀՀ դրամ, իսկ ապահովվագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը՝ շուրջ 3775 հա:

Աղյուսակ 10. Գյուղատնտեսական ապահովագրության ամփոփ տվյալներ, 2020-2025թթ.

| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
|--|--------|-------|-------|-------|------|------|
| Պայմանագրերի թիվ, հատ | 1546 | 4279 | 5091 | 10192 | 27 | 32 |
| Ապահովագրված տարածք, հա | 2363.3 | 5832 | 6444 | 11662 | 247 | 20 |
| Համախառն ապահովագրավճար, մլն դրամ | 130.5 | 474.6 | 866.3 | 1,800 | 21,9 | 1,9 |

⁴⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=173538>

| | | | | | | |
|---------------------------------|-------|-------|-------|-------|------|-------|
| Սուբսիդիա, մլն դրամ | 69 | 275.9 | 513.6 | 1,100 | 10,9 | 1,3 |
| Հատուցումներ, մլն դրամ | 151.3 | 319.1 | 1,300 | 2700 | 0 | 0,789 |
| Հատուցումների քանակ, հատ | | 1517 | 2167 | 3864 | 0 | 4 |

«Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում 01.04.2026 թվականի դրությամբ ավարտվել են 18,036 աշակերտի համար նախատեսված 28 դպրոցի կառուցման աշխատանքները, 6,304 աշակերտի համար նախատեսված 18 դպրոց կառուցման փուլում են:

Աղյուսակ 11. Ծրագրի շրջանակում 2025թ. կատարված փաստացի և 2026-2029թթ. համար պլանավորված ծախսերը, հազ. ՀՀ դրամ

| | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 |
|--------------------------------|---------------|--------------|-------------|------|------|
| Փաստացի կատարված ծախսեր | 14,654,562.43 | | | | |
| Պլանավորված ծախսեր | - | 12,017,288.4 | 9,476,052.5 | - | - |

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻՑ ԵՎ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԻՑ ԲԻՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Համաշխարհային տնտեսության աճի տեմպերի զգալի ավելացումը բնապահպանական մարտահրավերներ է ստեղծում, մասնավորապես, բնապահպանական ասպեկտները հաճախ դառնում են հարկաբյուջետային ռիսկերի աղբյուր՝ հատկապես կլիմայի փոփոխության պայմաններում:

Կլիմայի փոփոխությունը նշանակալի ազդեցություն ունի նաև Հայաստանի Հանրապետության վրա: Մասնավորապես, ավելանում է բնական աղետների քանակը և փոխվում են բնական ցիկլերը (երաշտների, վաղ ցրտահարությունների, անտառային հրդեհների և ջրհեղեղների թվի աճ), կրճատվում է կենսաբազմազանությունը: 2019թ.-ին գրանցվել է +1.5°C շեղում՝ 1961-1990թթ.-ի միջին տարեկան ջերմաստիճանից⁴⁷:

Հայաստանի Հանրապետության 2019թ.-ի ջերմոցային գազերի (ՋԳ) մասնաբաժնում գերակշռում է ածխածնի երկօքսիդը, որի մասնաբաժինը ընդհանուր արտանետումներում կազմել է 55,7%, մեթանը՝ 24,2%, ազոտի ենթօքսիդը՝ 11,4%, և հիդրոֆտորածխածինները՝ շուրջ 8,7%: 2019թ.-ի տվյալներով ՋԳ արտանետումների մասնաբաժնում ամենամեծ աղբյուրը էներգետիկայի ոլորտն է՝ 64% մասնաբաժնով, որն իր մեջ ներառում է բնակարանային (19,1%), տրանսպորտային (30,1%) ենթաօլորտները: Երկրորդ խոշոր ոլորտը գյուղատնտեսությունն է, որի մասնաբաժինը կազմում է 18,8%: ՋԳ արտանետումների կրճատման և կլանման կարողությունների ընդլայնման ուղղությամբ պետությունն իրականացնում է աջակցության ծրագրեր: Մասնավորապես, Կառավարությունը շեշտը դնում է սեփական էներգետիկ ռեսուրսների առավելագույն օգտագործումն ապահովող միջոցառումների վրա (էներգետիկ

⁴⁷ ՀՀ ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն (մինչև 2050թ.)

անկախության) և կենտրոնանում էներգիայի վերականգնվող աղբյուրների և էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերի իրականացման վրա: Այդ նպատակով պետությունն աջակցում է արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմանը և տրամադրում արտոնություններ էլեկտրական մեքենաների ներկրման մաքսատուրքերի համար, որը շարունակական է: Կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «ՋԳ արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշման կատարման նպատակով ստեղծվել է առցանց (MRV platform) հարթակ՝ տվյալների և ազգային հաշվետվությունների հասանելիությունը ապահովելու համար, որի մաս է կազմում նաև ՋԳ գույքագրման էլեկտրոնային շտեմարանը: Գործարկված շտեմարանը ֆիսկալ ռիսկերի գնահատման շրջանակներում հնարավորություն կտա անդրադարձ կատարել բնապահպանական ռիսկերին՝ փաստական տվյալների արձանագրման միջոցով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից (ՇՄՆ), 11.10.2019թ. N337-L հրամանով նույնականացված, հնարավոր բնապահպանական պարտավորություններ ենթադրող 44 տեղամասերից բացի, 2025թ.-ի ընթացքում վերականգնում պահանջող նոր տեղամասեր չեն արձանագրվել: 2025թ.-ին ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների, լքված արտադրական լցակույտերի վերականգնման աշխատանքներ չեն իրականացվել, իրականացվել են տարածքների հստակեցման աշխատանքներ: ՏԿԵ նախարարության հետ նախաձեռնվել են քննարկումներ ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ տեղամասերում հաստատված, մնացորդային արդյունաբերական պաշարների ու ընդերքօգտագործման իրավունքի առկայության, ինչպես նաև այդ տարածքներում ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ: Թվայնացման աշխատանքներին զուգահեռ կիրականացվի նաև հանքավայրերի և հանքերակույմների գույքագրում, որից հետո հնարավոր կլինի անդրադառնալ հանքավայրերում և հարակից տարածքներում առկա ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի ռեկուլտիվացման գործընթացին: 2023թ.-ին հատկացված բյուջետային միջոցների հաշվին մշակվել է Նազիկ և Փխրուտ պոչամբարի ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծանախահաշվային փաթեթները: ՇՄՆ և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն Նազիկ պոչամբարի ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար, որը նախատեսվում էր սկսել 2025թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Ընկերության կողմից 2024թ.-ին տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար ծախսված զգալի ֆինանսական միջոցներով պայմանավորված՝ Նազիկ պոչամբարի ռեկուլտիվացիոն աշխատանքները տեղափոխվել են 2026թ.-ին: «Ալյոտիգ» ՍՊԸ նախատեսում էր իրեն սեփականության իրավունքով պատկանող պոչամբարներում (այդ թվում՝ Փխրուտ պոչամբարում) իրականացնել գոյացած և գոյացող պոչանքների սակավաթափոն մշակման/վերամշակման ներդրումային ծրագիր, ընդ որում՝ ընկերությունը պարտավորվել է համապատասխան թույլտվությունները ստանալիս և ծրագիրն իրականացնելիս պետական բյուջե վերադարձնել նախագծանախահաշվային փաստաթղթերի վրա կատարված՝ 69 000.0 հազ. ՀՀ դրամ ծախսը: 2025թ.-ի դեկտեմբերի 29-ի դրությամբ ընկերությունը չի հստակեցրել աշխատանքների վերսկսելու ժամկետները և ակնկալում է, որ այն կհստակեցվի 2026թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին՝ տեղեկացնելով նախագծի իրականացման և պետական բյուջեից ծախսված գումարի վերադարձի ժամկետների մասին:

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների իրականացման նպատակով ՇՄՆ-ի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 2025թ.-ին կնքվել է դրամաշնորհային պայմանագիր՝ 37 985.0 հազ. ՀՀ դրամի չափով և 2025 թ.-ին հատկացվել է 21 476.1 հազ. ՀՀ դրամ, որի արդյունքում փաստացի մաքրվել է 22.86 հա տարածք:

2025թ.-ին Սևանա լճի առափնյա հատվածներում ծովի մակարդակից 1901,5 մետր բացարձակ նիշից ցածր, ապօրինի կառուցված և քանդման ենթակա շենք-շինությունների ապամոնտաժման (քանդման)

աշխատանքների իրականացման նպատակով ապամոնիտաժվել է ապօրինի կառուցված և քանդման ենթակա 61 շենք-շինություն:


2025թ.-ին ՇՄՆ և «Հայանտառ» ու « Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ների միջև կնքված պայամանագրերով իրականացվել են 95 հա անտառվերականգնման և 170 հա անտառապատման, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթի խնամքի ու լրացման աշխատանքներ, որոնց համար փաստացի ծախսվել է 934 259.24 հազ. ՀՀ դրամ: «Արգելոցապարկային համալիր», «Արփի լիճ» ազգային պարկ, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր, «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ների կողմից՝ առանց ֆինանսական միջոցների իրականացվել է շուրջ 21.38 հա տարածքի անտառվերականգնում:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ **ընդդեմ Հայաստանի Հանրապետության** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոմունիկացրել է 479 գործ (ընթացքում գտնվող գործեր, որոնցով առկա չէ վերջնական դատական ակտ): 2025թ. ընթացքում օրինական ուժի մեջ է մտել ՀՀ-ի դեմ կայացված 24 վճիռ, 3 գանգատ հանվել է քննվող գործերի ցուցակից՝ բարեկամական կարգավորման հիմքով: Նշված վճիռների և որոշումների արդյունքում ՀՀ-ն դիմումատուներին պարտավորվել է վճարել 695,434 եվրոյին համարժեք ՀՀ դրամ և 2,492,000 ՀՀ դրամ, որից վճարվել է 691,834 եվրոյին համարժեք ՀՀ դրամ և 2,492,000 ՀՀ դրամ (Գծապատկեր 19):

2026թ.-ի առաջին եռամսյակում օրինական ուժի մեջ է մտել ՀՀ-ի դեմ կայացված 9 վճիռ, որոնցով ՀՀ-ն պարտավորվել է վճարել 47,587 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Գծապատկեր 19. Կայացված վճիռների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճարված արդարացի փոխհատուցման գումարները (հազար եվրո)



ՀՀ մասնակցությամբ 2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ առկա է 6 միջազգային արբիտրաժային վարույթ և 1 հնարավոր արբիտրաժային վարույթ, որոնցով պահանջվող գումարի ընդհանուր չափը կազմում է շուրջ 1,966,947,981.8 ԱՄՆ դոլար: Վերջին 5 տարիների ընթացքում, ներառյալ 2026թ. առաջին

եռամսյակը, արբիտրաժային վարույթների շրջանակներում ՀՀ-ի կողմից հայցվորներին վճարումներ չեն կատարվել:

Միջպետական վեճերի մասով 2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ ՀՀ մասնակցությամբ քննվում են թվով 11 միջպետական վեճեր, որոնցից 7-ը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, 2-ը՝ Արդարադատության միջազգային դատարանում, և 2-ը՝ Մշտական արբիտրաժային դատարանում: Մշտական արբիտրաժային դատարանում քննվող գործերով հայցապահանջների ընդհանուր չափը կազմում է 1,908,179,102 ԱՄՆ դոլար, **որի մեջ ներառված է նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ ընթացող միջազգային արբիտրաժային գործընթացներում ներկայացված պահանջը:** Մնացած ատյաններում ընթացող վարույթներով դեռևս չի քննարկվել արդարացի փոխհատուցման պահանջների հարցը, ուստի հնարավոր չէ հստակ գնահատել պետական բյուջեի վրա դրանց հնարավոր ազդեցությունը:

Հարկ է նկատի ունենալ, որ պահանջվող գումարների չափը չի արտացոլում ռիսկի իրական մակարդակը, քանի որ նույնիսկ ներկայացված հայցերով հաղթելու պարագայում վճռով հաճախ սահմանվում են ավելի փոքր գումարներ:

2026թ. մայիսի դրությամբ ՀՀ դատարաններում ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականների հիման վրա **ՀՀ ֆինանսների նախարարության** մասնակցությամբ գույքային պահանջներով քննվում է 188 գործ, ընդհանուր 1,541,463,168,328 ՀՀ դրամ պահանջով:


Նշենք, որ 2025թ. մայիսից մինչև 2026թ. մայիսի դրությամբ ավարտված դատական գործերի հիման վրա վճարվել է 111,608,419 ՀՀ դրամ:

2020թ.-ից մինչև 2025թ. մայիս ընկած ժամանակահատվածում ՀՀ դատարաններում ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության մասնակցությամբ գույքային պահանջներով ներկայացվել է 452 գործ, ընդհանուր՝ 3,960,960,226 ՀՀ դրամ պահանջով, 1,572,806,160 ՀՀ դրամի չափով պահանջների մասով դատական գործերն ավարտվել են, որոնց հիման վրա վճարվել է 564,258,419 ՀՀ դրամ: Այդ թվում մերժվել է 517,000 ԱՄՆ դոլարի և 611,459 եվրոյի պահանջ:

Բացի վերը նշվածներից առկա են նաև այլ հայցեր՝ ընդդեմ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի:** 2025թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դեմ ներկայացված հայցադիմումներով ՀՀ դատարաններում քննվել են 5,672 դատական գործեր՝ 257,294,767,545 ՀՀ դրամ գումարով, իսկ 2026թ. մարտի 31-ի դրությամբ՝ 5,930 դատական գործեր՝ 258,012,864,944 ՀՀ դրամ գումարով:

2025թ. ընթացքում դատական վարույթների շրջանակներում հայցվորներին վճարված ընդհանուր գումարը 2024թ.-ի համեմատ նվազել է 17.8%-ով, իսկ 2026թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմել է շուրջ 17.3 մլն ՀՀ դրամ (Գծապատկեր 20):

Գծապատկեր 20. 2021-2025թթ. հայցվորներին վճարված գումարները (մլն ՀՀ դրամ)



3 ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հայեցակարգային փաստաթուղթում ամփոփված են Հայաստանի Հանրապետության հարկային համակարգում փոփոխությունների իրականացման հիմնական նպատակները, սկզբունքները, ժամկետները, ուղղություններն ու ակնկալվող արդյունքները:

Հայեցակարգը բխում է Կառավարության 2026 թվականի հունվարի 8-ի N 16-Լ որոշմամբ հաստատված՝ Տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինից և հատկապես՝ դոկտրինում ամրագրված տնտեսական զարգացման նոր պարադիգմից, որով Հայաստանի Հանրապետությունը պետք է մեծ տեմպերով վերածվի տեխնոլոգիական ու լրգիստիկ հանգույցի, պետք է վերափոխվի պետության դերը տնտեսության մեջ՝ մարդուն դնելով համակարգի կենտրոնում՝ համաձայն «պետությունը պետք է ուժեղացնի մարդուն, մարդը պետք է ուժեղացնի պետությունը» բանաձևի: Ընդ որում, հայեցակարգը նախատեսում է հարկային համակարգի փոփոխությունների այնպիսի ուղղություններ, որոնք կխթանեն և ռեսուրսներ կծնավորեն Հայաստանի Հանրապետության տնտեսության վերափոխմանը նպաստելու համար: Մյուս կողմից, այդ փոփոխությունները կծնավորեն այնպիսի ճկուն հարկային մեխանիզմներ, որոնց արդյունքում «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությամբ տարածաշրջանային լրգիստիկ շղթաներին միացումը, թվային ու տեխնոլոգիական ոլորտի զարգացումը և դրանցից բխող մեծ ֆինանսական, մարդկային և առևտրային հոսքերը առավելագույնս կնպաստեն Հայաստանի Հանրապետության զարգացմանը:

Հայեցակարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգում փոփոխությունների առաջիկա փուլի տեսլականը նախանշելու, հարկային համակարգում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ շահագրգիռ մարմինների հետ փոխշահավետ քննարկումների բնականոն ընթացքն ապահովելու և հանրային իրազեկման աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով: Ըստ այդմ, նախատեսվում է, որ հայեցակարգով նախանշվող հարկային համակարգի փոփոխությունները նախապես մանրամասն քննարկվելու են բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Սույն հայեցակարգային փաստաթուղթը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող գործարար շրջանակների, օտարերկրյա ներդրողների, ոլորտի պետական կառավարման մարմինների, միջազգային գործընկեր կազմակերպությունների, մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների, առանձին մասնագետների և հարկային համակարգի փոփոխություններով հետաքրքրվող քաղաքացիների համար:

Ընդհանուր առմամբ, հայեցակարգով առաջարկվող հարկային համակարգի փոփոխությունները կարևոր են լինելու Հայաստանի Հանրապետությունում հարկային միջավայրի բարեփոխման

տեսանկյունից: Այս համատեքստում, կարևոր է նաև այն, որ հարկային միջավայրի բարեփոխումը կատարվի հետևյալ փիլիսոփայական ընկալումներով.

ՀԱՐԿԵՐԸ ԿԱՍՈՎԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ. զարգացած հարկային համակարգեր ունեցող երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային համակարգի կայացման ու զարգացման համար կարևոր է, որպեսզի տնտեսավարող սուբյեկտներն ու բնակչությունն ունենան հարկերը կամովին՝ առանց վարչարարական միջամտության և ամբողջությամբ վճարելու պատրաստակամություն և մշակույթ: Վերջիններիս ձևավորման տեսանկյունից թերևս ամենակարևոր խնդիրը հասարակության վստահության մթնոլորտի ապահովումն է հետևյալ հիմնական հարցերում.

- պետությունն իրականացնում է միջավայրաստեղծ աշխատանք, որը դրսևորվում է կայուն և կանխատեսելի ձեռնարկատիրական միջավայրի ձևավորման, ներդրումների պաշտպանության համար երաշխիքների տրամադրման, հավասար մրցակցային միջավայրի ապահովման, ազգային տնտեսության մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման, վարձու աշխատողների իրավունքների արդյունավետ պաշտպանության և այլ կարևոր ուղղություններով պետության գործառույթների իրականացման ձևով,
- հարկերի տեսքով պետական բյուջե վճարվող գումարներն ամբողջությամբ, հասցեական ձևով և վստահելի հաշվետվողականությամբ ծախսվում են հանրային բարիքների ապահովման ուղղությամբ՝ նպատակ ունենալով ըստ ճիշտ ընտրված առաջնահերթությունների՝ լուծել սոցիալական, կրթական, առողջապահական, բնապահպանական, գիտական, պաշտպանական և այլ հանրագուտ նշանակության խնդիրներ: Այս իմաստով, հատկանշական է նաև այն, որ միայն պետության միջոցով և պետության սահմանած կանոններով է հնարավոր ներդնել հանրային ռեսուրսների հավաքագրման և ծախսման այնպիսի համակարգեր, որոնց արդյունքում ապահովվում են անվտանգային միջավայր, պաշտպանունակություն, իրավակարգ, մրցակցային, գործարար և համակեցության միջավայրեր, կլիմայի փոփոխության հետևանքով անհրաժեշտ ենթակառուցվածքներ, հասարակության ծերացման հետ կապված հիմնախնդիրների լուծումներ, այլ հանրային բարիքներ, որոնք որևէ կերպ հնարավոր չէ ապահովել անհատական մակարդակում,
- հարկային բեռն արդարացի ձևով է բաշխված տնտեսության տարբեր ոլորտների, գործունեության տարբեր տեսակների, հարկման տարբեր համակարգերի և հասարակության տարբեր սոցիալական խմբերի միջև, և եթե անգամ կիրառվում են օրենքով սահմանված որոշ հարկային արտոնություններ, ապա դրանք բխում են Կառավարության հայտարարած՝ տնտեսության զարգացման առաջնահերթություններից ու գերակայություններից, հանրապետության տարածքային համաչափ զարգացման քաղաքականությունից, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման անհրաժեշտությունից և ի վերջո այդ հարկային արտոնությունները երկարաժամկետ հեռանկարում հասարակության համար ապահովում են ավելի մեծ հանրային բարիքներ կամ կրճատում են ավելի մեծ հանրային ծախսեր, քան դրանց հետևանքով չհավաքագրված հարկերն են,
- չկան արտոնյալ կարգավիճակ ունեցողներ, որոնք հնարավորություն ունեն առանց հարկեր վճարելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել և դրանով իսկ՝ անհավասար մրցակցային պայքարի մեջ մտնել բարեխիղճ հարկ վճարողների հետ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԸ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ և ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. գործարար միջավայրի հետագա բարելավման և հարկային համակարգի զարգացման տեսանկյունից կարևոր է նաև հարկ վճարողների և հարկային մարմնի միջև որակական նոր հարթության վրա գտնվող գործընկերային հարաբերությունների ձևավորումն ու շարունակական զարգացումը: Ակնկալվում է, որ գործընկերային հարաբերությունների

զարգացումն իր դրական ազդեցությունը կունենա հարկ վճարողների հարկային կարգապահության վրա, կնպաստի հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանն ու հարկ վճարողների կողմից իրենց պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով ծախսվող ռեսուրսների կրճատմանը: Հարկային մարմնի և հարկ վճարողների բարձր մակարդակի գործընկերային հարաբերությունները կարևոր են նաև փոխադարձաբար վստահելի ու կանխատեսելի հարկային միջավայրի ձևավորման տեսանկյունից:

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ, ԱՐՏՈՆՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԲԱՑԱՌՈՒՄ. ստվերային շրջանառություններ ունեցող և հարկումից խուսափելու ռիսկեր գնենրացնող հարկ վճարողները պետք է լինեն հարկային մարմնի թիրախում: Ավելին, ըստ անհրաժեշտության, պետք է խստացվի այս շրջանակի հարկ վճարողների նկատմամբ իրականացվող հարկային վարչարարությունը, քանի որ վերջիններիս վարքագիծը պատճառ է դառնում ոչ միայն պետական բյուջե վճարվելիք հարկերն ամբողջ ծավալով և ժամանակին չվճարելու, այլ նաև խաթարում է հավասար շուկայական մրցակցությունը, քանի որ հարկերի վճարումից խուսափող հարկ վճարողներն անհավասար պայքարի մեջ են մտնում կարգապահ հարկ վճարողների հետ և վերջիններիս նկատմամբ ստանում են չհիմնավորված մրցակցային առավելություններ: Այս իմաստով, ստվերում գործող հարկ վճարողների վարքագիծն առաջին հերթին անարդար է հենց օրինական դաշտում գործող հարկ վճարողների նկատմամբ, ուստի Կառավարությունը բոլորի համար հավասար հարկային միջավայրի ձևավորումը կարևորում է առաջնահերթորեն հենց այս խնդիրը լուծելու, հետո նոր միայն՝ պետական բյուջեի հարկային եկամուտները պաշտպանելու համար:

ՀԱՍՑԵԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ. հարկային համակարգի բարեփոխումների տեսանկյունից կարևորվում է նաև հարկային վարչարարության հետագա կատարելագործումը՝ հիմնված տեղեկատվության համաքազման, համադրման ու օգտագործման, ինչպես նաև ռիսկերի բացահայտման ու կառավարման արդյունավետ գործող ժամանակակից համակարգերի և ըստ այդմ՝ թիրախավորված հսկողական գործընթացների վրա: Այս առումով, նոր վարչարարական գործիքների կիրառությունը չպետք է լրացուցիչ բեռ լինի կարգապահ հարկ վճարողների համար: Բացի այդ, վարչարարության հետագա կատարելագործումը և նոր գործիքների կիրառությունը պետք է զուգորդվեն դրանց կիրառության արդյունավետության հստակ գնահատականներով: Այս իմաստով, հատկանշական է նաև այն, որ հարկային վարչարարությունն ինքնին ենթադրում է հանրային ռեսուրսի ծախս, որն առաջնահերթորեն կրում են հենց հարկ վճարողները: Ուստի, միավոր հարկի հավաքագրման վրա կատարվող հանրային ռեսուրսի ծախսի շարունակական կրճատումը կարևոր նպատակ է, որն առաջին հերթին բխում է հենց հարկ վճարողների շահերից:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ. հարկային համակարգի առաջարկվող փոփոխությունները միտված են հետևյալ հիմնական նպատակներին.

- շարունակել ազգային տնտեսության ներդրումային գրավչության ու տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը՝ հիմքում ունենալով տնտեսության զարգացման՝ գնահատված առաջնահերթություններն ու հնարավորությունների ընդլայնումը,
- ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների համար ստեղծել արդար, մրցակցային և կայուն հարկային միջավայր,

- ապահովել պետական և համայնքային բյուջեների հարկային եկամուտների օպտիմալ մակարդակ, որը հնարավորություն կընձեռի ֆինանսավորել հանրային նշանակության խնդիրների լուծման, ծառայությունների մատուցման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ. առաջարկվող փոփոխությունների հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ սկզբունքները.

- արդարություն. հարկային համակարգի փոփոխությունները պետք է իրականացվեն արդարացի մոտեցումներով և բոլոր շահագրգիռ կողմերի շահերի հավասարակշռմամբ,
- կայունություն և կանխատեսելիություն. հարկային համակարգի հիմնական փոփոխությունները պետք է կատարվեն համակարգված ձևով՝ բյուջետային գործընթացին զուգահեռ, որպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի շրջանակներում համատեղել հանրային ռեսուրսի ձևավորման և ծախսման փոխհամաձայնեցված քաղաքականությունները: Այլ կերպ ասած՝ հարկային համակարգի հիմնական փոփոխությունների առաջարկությունները հանրությանը և գործարար շրջանակներին ներկայացվելու են որպես յուրօրինակ «սոցիալական պայմանագիր», որով Կառավարությունը հանձնառու է լինելու նախանշել հարկային բեռի բարձրացման արդյունքում հավաքագրվող լրացուցիչ հարկային եկամուտների ծախսման մտադրություններն ու տեսլականը, կամ հարկային բեռի նվազեցման հետևանքով հավաքագրվող հարկային եկամուտների կորստով պայմանավորված՝ կրճատվող բյուջետային ծրագրերը: Այս համատեքստում, հարկային համակարգի հատվածական և հաճախակի փոփոխություններ չեն կատարվելու: Հարկային համակարգի հիմնական փոփոխությունները լինելու են երկարաժամկետ և կայուն,
- արդյունավետություն. հարկային համակարգի փոփոխությունները պետք է ծախսեր-օգուտներ վերլուծության տեսանկյունից հիմնավոր լինեն: Ընդ որում, արդյունավետության գնահատման համատեքստում կարևորվելու են ինչպես Կառավարության ու համայնքների, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների ու քաղաքացիների հնարավոր ծախսերն ու օգուտները,
- հասցեականություն. հարկային համակարգի ցանկացած փոփոխություն պետք է ունենա անհրաժեշտ հասցեականություն՝ նախապես որոշված շահառուների խումբ, թիրախներ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ. հայեցակարգով առաջարկվող հարկային համակարգի փոփոխությունները կատարվելու են 2026-2027թթ. ժամանակահատվածում:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. հարկային համակարգի փոփոխությունների ուղղությունները նախանշելու համար նախ, անհրաժեշտ է գնահատել, թե գործող Հարկային օրենսգրքի հիմքում դրված համակարգերն ու կառուցակարգերը որքանով են հնարավորություն ընձեռում ապահովել վերը նկարագրված նպատակներն ու սկզբունքները: Այս իմաստով, հատկանշական է այն, որ վերջին տարիներին Հարկային օրենսգրքում կատարվել են այնպիսի համակարգային փոփոխություններ, որոնք, բացի այն, որ կարևոր ներդրում են եղել նշված նպատակներն ու սկզբունքներն ապահովելու գործում, նաև արդիական են ներկա փուլում, ապահովում են ցանկալի արդյունքներ: Հետևաբար, առաջիկա տարիների հարկային քաղաքականությամբ նշված համակարգերին էական անդրադարձ չի կատարվելու: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հետևյալ ուղղություններով կատարված փոփոխություններին.

- անշարժ գույքի հարկով հարկման բազայի ճշգրտման ճանապարհով անշարժ գույքի հարկի համակարգի վերանայում, ինչը հնարավորություն ընձեռեց վերահիմաստավորել անշարժ գույքի հարկի համակարգը, համարժեք ձևով հարկել տեսանելի հարստությունը և մեծապես ընդլայնել համայնքների հարկային եկամուտները,

- Եկամտային հարկի գծով հարկային բեռի նվազեցում ու համահարթ դրույքաչափի ներդրում, ինչը մի կողմից հնարավորություն ընձեռեց, որպեսզի հայտարարագրվեն աշխատավարձերի իրական մեծություններն ու աշխատատեղերի իրական թվերը, մյուս կողմից նպաստեց ազգային տնտեսության մրցունակության ամրապնդմանը,
- շահութահարկի գծով հարկային բեռի նվազեցում, ինչը կրճատեց ներդրումների հետ գնման ժամանակը, հնարավորություն ընձեռեց բարձրացնել ազգային տնտեսության ներդրումային գրավչությունը,
- միջազգային պրակտիկայում կիրառվող՝ ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերի համակարգի ներդրում, ինչը մի կողմից հնարավորություն ընձեռեց վերափոխաստավորել ակցիզային հարկի համակարգը, պարզեցնել այն և արտադրողների ու ներմուծողների համար ապահովել ավելի կանխատեսելի հարկային միջավայր, մյուս կողմից նպաստեց վնասակար սպառման կրճատմանն ու առողջ ապրելակերպի զարգացմանը,
- մետաղական օգտակար հանածոների համար միջազգային գներից կախված՝ ռոյալթիի նոր բաղադրիչի ներդրում, ինչը հնարավորություն ընձեռեց մետաղների միջազգային գների բարձրացման պարագայում զգալի լրացուցիչ եկամուտներ հավաքագրել պետական բյուջեում՝ որպես ազգային հարստություն համարվող ընդերքի արդյունահանման և շրջակա միջավայրին վնաս պատճառելու արդար փոխհատուցում:

Այդուհանդերձ, հարկային համակարգում դեռևս առկա են կարևոր խնդիրներ, որոնք մանրամասն ուսումնասիրության ու համակարգային լուծումների կարիք ունեն: Այս իմաստով, նախատեսվում է, որ հարկային համակարգի փոփոխությունները կատարվելու են հետևյալ հիմնական ուղղություններով.

- տնտեսության կայուն զարգացման առաջնահերթությունների և հնարավորությունների հիման վրա հարկային միջավայրին ներկայացվող կարիքների գնահատում, այդ կարիքներից բխող՝ հարկային համակարգի փոփոխությունների նախաձեռնում,
- հարկման համակարգերի պարզեցում, հիմնական և այլընտրանքային համակարգերի համար հիմնավորված հարկային բեռի սահմանում, հարկման այլընտրանքային համակարգերի վերափոխաստավորում,
- տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի, այդ թվում՝ սոցիալական ծախսերին առնչվող լուծումների հետագա զարգացում,
- համայնքների հարկային եկամուտների ավելացման հնարավորությունների ընդլայնում,
- գույքի արժեքի հավելաճի աստիճանական հարկման համակարգի ներդրում,
- հաշվապահական (ֆինանսական) և հարկային հաշվառման կարգավորումների աստիճանական մոտարկում,
- բնապահպանական և բնօգտագործման վճարների կիրառության արդյունավետության բարձրացում,
- միջազգային հարկային հարաբերությունների բնագավառում համագործակցության ակտիվացում, միջազգային հարկման արդի խնդիրների լուծում:

Հարկային համակարգի փոփոխությունների հիմնական ուղղություններն առավել մանրամասն ներկայացված են հաջորդիվ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ակնկալվում է, որ սույն հայեցակարգային փաստաթղթով առաջարկվող հարկային համակարգի փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի տնտեսության զարգացման տեսանկյունից գերակա և առաջնահերթ համարվող ոլորտների զարգացման համար ձևավորել առավել նպաստավոր հարկային միջավայր,

ամրապնդել հարկման հավասարության ու արդարության սկզբունքները, ինչպես նաև ապահովել պետական և համայնքային բյուջեների հարկային եկամուտների օպտիմալ մակարդակ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Առաջարկվում է հարկային համակարգի փոփոխություններն իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ. ընդհանուր առմամբ, հարկային քաղաքականությունն ուղղված է լինելու հարկման բազաների ընդլայնմանը: Այս համատեքստում, Կառավարությունը չի խրախուսելու հարկային արտոնությունների տրամադրումը: Հետևաբար, հարկային արտոնությունների ձևով պետական աջակցության որոշումը կարող է կայացվել միայն այն դեպքում, եթե կատարված վերլուծություններով և ուսումնասիրություններով հիմնավորվել է, որ այս կամ այն ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է հենց առավել նպաստավոր հարկային միջավայր, և որ հարկային արտոնությունների տրամադրումը պետական աջակցության ամենաառաջնային և ամենաարդյունավետ քայլը կարող է լինել՝ ուղղված երկարաժամկետ հեռանկարում հասարակության համար ավելի մեծ հանրային բարիքների ապահովմանը, քան հարկային արտոնությունների հետևանքով չհավաքագրված հարկերն են: Հակառակ պարագայում, հարկային արտոնություններ տրամադրելու առաջարկությունները գնահատվելու են որպես պետության տեսանկյունից՝ ծախսատար, շահառուների տեսանկյունից՝ անհասցե, հարկային վարչարարության տեսանկյունից՝ հարկումից խուսափելու ռիսկեր ձևավորող, իսկ ձեռնարկատիրական միջավայրի տեսանկյունից՝ գործունեության հավասար պայմաններն ու մրցակցային միջավայրը խաթարող, և հետևաբար, աջակցության անարդյունավետ միջոցներ, քանի որ՝

- յուրաքանչյուր նոր հարկային արտոնության տրամադրում ենթադրում է հարկային եկամուտների կորուստ, հետևաբար նաև՝ առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանության, բնապահպանության, պաշտպանության, գյուղատնտեսության և այլ հանրօգուտ ոլորտներում չկատարված բյուջետային ծախսեր: Մյուս կողմից, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ պետության ծախսային քաղաքականության շրջանակներում պետական աջակցության բյուջետային գործիքակազմն ավելի հասցեական ու, հետևաբար նաև՝ ավելի արդյունավետ է, ակնհայտ է դառնում, որ հարկային արտոնությունների տրամադրումը պետական աջակցության լավագույն միջոցը չէ, քանի որ հարկային արտոնությունը դրա իրական հասցեատերերի համար հաճախ որոշակի կոնկրետ արդյունք չերաշխավորելով հանդերձ՝ հանգեցնում է հարկային ծախսերի առաջացման՝ պետությանը զրկելով աջակցության ավելի հասցեական ծրագրեր իրականացնելու հնարավորությունից,
- ցանկացած հարկային արտոնության կամ հարկային խթանի տրամադրում առաջացնում է չարաշահումների ռիսկեր: Մասնավորապես, հարկային արտոնությունների կիրառության նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ տարբեր հնարքների ու չարաշահումների կիրառությամբ դրանցից սկսում են օգտվել նաև այնպիսի շահագրգիռ կողմեր, որոնց համար ի սկզբանե դրանք նախատեսված չեն եղել: Այս առումով, հարկային արտոնությունների կամ խթանների տրամադրման արդյունքում, որպես կանոն, պետության կորցրած հարկային եկամուտները շատ ավելի մեծ են, քան արտոնության իրական շահառուների օգուտները կարող են լինել:

Վերոնշյալը, սակայն, չի նշանակում, որ Կառավարությունը որևէ դեպքում չի քննարկելու ձեռնարկատիրական միջավայրը շարունակաբար բարելավելու առաջարկությունները: Պարզապես, նպատակն այն է, որ ընտրվող գործիքակազմը լինի հստակ հիմնավորված և հասցեավորված, իսկ դրանցից ակնկալվող արդյունքները լինեն չափելի ու տեսանելի: Օրինակ, կարևորելով օտարերկրյա ներդրումների ներգրավումը, տեխնոլոգիապես զարգացած և արտադրողական արտադրությունների կազմակերպումը, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը՝ Կառավարությունը կարող է քննարկել տեղական և վերագգային ընկերությունների կողմից խոշորամասշտաբ, արտահանմանը միտված մրցունակ և բարդ ապրանքների արտադրությունների կազմակերպման, ինչպես նաև երկրի ներսում մարդկային կապիտալի զարգացման համար առանձին աջակցության ծրագրերը:

Հատկանշական է նաև այն, որ պետական աջակցության որևէ գործիքակազմ կիրառելու պարագայում այն չպետք է լինի անժամկետ: Այս առումով, նոր տրամադրվող հարկային արտոնությունները և աջակցության այլ համակարգերը ժամանակավոր բնույթ են կրելու և ունենալու են կիրառության հստակ վերջնաժամկետներ:

Բացի այդ, պետական աջակցության գործիքներ կիրառելու առաջարկությանը զուգահեռ առնվազն պետք է գնահատվեն դրանց հնարավոր ազդեցությունները պետական բյուջեի հարկային եկամուտների, բյուջետային ծախսերի, արդյունավետ վարչարարության հնարավորությունների, մրցակցային միջավայրի, ինչպես նաև շահառու համարվող ոլորտի զարգացման հնարավորությունների վրա: Միևնույն ժամանակ, պետական աջակցության գործիքակազմի կիրառությունը չպետք է հանգեցնի Հայաստանի Հանրապետության՝ միջազգայնորեն ստանձնած հանձնառություններից շեղման:

Կարևորելով տնտեսության ոլորտների առանձնահատկությունները հաշվի առնող հարկային քաղաքականության մշակման անհրաժեշտությունը՝ անհրաժեշտ է հարկային քաղաքականությամբ անդրադառնալ նաև տնտեսության զարգացման և հասարակական կյանքի վրա կարևոր ազդեցություն ու ՀՆԱ-ի կառուցվածքում տեսանելի մասնաբաժին ունեցող ոլորտների հարկման առանձնահատկություններին: Խոսքն այս դեպքում առավելապես վերաբերում է բանկային և գյուղատնտեսության ոլորտներին: Նշված ոլորտներում առկա են հարկման մոտեցումների հետ կապված խորքային հարցեր, որոնք անպայմանորեն պետք է հասցեագրվեն: Մասնավորապես՝

- գյուղատնտեսության ոլորտում հիմնական խնդիրն այն է, որ գյուղատնտեսական արտադրանքի մի զգալի մասն արտադրվում է տնային տնտեսությունների և փոքր գյուղացիական տնտեսությունների կողմից, որոնք իրացման շրջանառության փոքր ծավալներով պայմանավորված՝ չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն նրանց արտադրանքի գնորդ համարվող խոշոր առևտրային ցանցերը, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղվող տնտեսությունները կամ հյուրանոցային տնտեսությունները համարվում են ԱԱՀ վճարողներ: Որպես հետևանք, արժեշրթայի այս երկու օղակների միջև ԱԱՀ-ի հաշվարկման և հաշվանցումների կատարման առումով խզում է առաջանում, որն էլ իր հերթին հանգեցնում է գնագոյացման մեխանիզմների խաթարման: Նկարագրված խնդրի լուծման համար դիտարկվել են տարբեր այլընտրանքային լուծումներ, գնահատվել են դրանց դրական ու բացասական կողմերը: Թեև դեռևս չկա խնդրի լուծման ընդունված տարբերակ, այդուհանդերձ տեսանելի լուծումներից են ԱԱՀ-ով հարկման բազայի նվազեցման, ԱԱՀ-ի տարբերակված դրույքաչափերի սահմանման կամ ձեռքբերողների կողմից ԱԱՀ-ի հաշվանցումների կատարման տարբերակները,
- գյուղատնտեսության ոլորտի հարկման մյուս խնդիրը կապված է շահութահարկից ազատման արտոնության հետ՝ հաշվի առնելով այն, որ այս արտոնության ժամկետն ավարտվում է 2026 թվականի վերջին: Այս իմաստով, անհրաժեշտ է գտնել լուծումներ, որոնք մի կողմից գյուղատնտեսության ոլորտի հետագա զարգացման համար կշարունակեն ապահովել նպաստավոր միջավայր, մյուս կողմից չեն հակադրվի հարկման հավասարության ու արդարության սկզբունքներին,

• բանկային ոլորտում հիմնական առանձնահատկությունն այն է, որ լինելով ԱԱՀ-ից ազատված՝ ոլորտը վերջին տարիներին ապահովում է նաև սովորականից բարձր շահութաբերություն: Հատկանշական է նաև այն, որ բանկային ոլորտը հանրությանը մատուցում է բացառիկ բնույթի ծառայություններ: Եվ այս պարագայում օբյեկտիվորեն հարց է ծագում, թե արդյոք սոցիալական պետության կարգավիճակը և պետության՝ եկամուտների վերաբաշխման գործառույթն իրականացնելու հանձնառությունը չեն ենթադրում, որ պետք է քննարկվի բանկային ոլորտի համարժեք հարկում ապահովելու հնարավորություն ընձեռող քաղաքականության իրականացումը: Այս առումով, բանկային ոլորտի համար պետք է ձևավորել հարկման այնպիսի միջավայր, որի պարագայում կերաշխավորվի արդար հարկում:

ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ, ՀԻՄՆԱԿԱՆ և ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՀԱՐԿՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ. հարկման տարբեր համակարգերի կիրառության նախորդ տարիների, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ հարկման այլընտրանքային համակարգերի կիրառությունն անխուսափելիորեն հանգեցնում է այնպիսի բացասական երևույթների, ինչպիսիք են՝

- ձեռնարկատիրական գործունեության վերջնական ֆինանսական արդյունքների և հարկի մեծության միջև փոխադարձ կապի բացակայությունը,
- արտոնյալ հարկման համակարգերում արհեստականորեն տեղավորվելու և այդ կերպ հարկերի վճարումից խուսափելու ձգտումը,
- հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ հարկային պլանավորման հնարավորությունների ընդլայնումը,
- գործարքների փաստաթղթավորման շղթայի ամբողջականության խաթարումը,
- հարկային վարչարարության հետ կապված դժվարությունները, հետևաբար նաև՝ արդյունավետության ցածր մակարդակը:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկման այլընտրանքային համակարգերում գործելու հիմնական շարժառիթներ են համարվում անհամեմատ ցածր հարկային բեռը, մեղմ հարկային վարչարարությունը և պարզ հարկային հաշվառումը:

Մյուս կողմից, հարկման այլընտրանքային համակարգերի կիրառությունը որոշ դեպքերում օբյեկտիվ անհրաժեշտություն է: Հետևաբար, գործնականում հնարավոր չէ ամբողջությամբ հրաժարվել հարկման այլընտրանքային համակարգերի կիրառությունից: Ինդիհրը, մասնավորապես, այն է, որ՝

- իրացման շրջանառության փոքր ծավալներ ունեցող կամ պարզունակ գործունեության տեսակներով զբաղվող հարկ վճարողների հիմնական մասը չունի բավարար մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ամբողջական ծավալով հարկային հաշվառում վարելու համար, իսկ այդ նպատակով համապատասխան մասնագետ ունենալը կամ մասնագիտացված կազմակերպություն ներգրավելը գործնականում ծախսատար է,
- իրացման շրջանառության փոքր ծավալներ ունեցող կամ պարզունակ գործունեության տեսակներով զբաղվող հարկ վճարողների մոտ հարկման ընդհանուր համակարգի պայմաններում հարկային վարչարարության իրականացումն արդյունավետ չէ, քանի որ պետական բյուջեի հարկային եկամուտներ ապահովելու տեսանկյունից այս խմբի հարկ վճարողներն առանձնապես հետաքրքրություն չեն ներկայացնում: Փոխարենը, հարկման ընդհանուր համակարգի պայմաններում նրանց մոտ հարկային վարչարարության իրականացումը պահանջում է մեծ ծավալի աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ,

- գործունեության որոշ տեսակների պարագայում գործնականում հնարավոր չէ իրականացնել արդյունավետ հարկային վարչարարություն, քանի որ գործունեության տեսակի առանձնահատկություններով պայմանավորված՝ հնարավոր չէ արդյունավետ հսկողություն ապահովել ձևավորվող հարկման բազաների նկատմամբ:

Հաշվի առնելով հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության դրական ու բացասական հետևանքների վերոնշյալ ամբողջությունը՝ կարելի է վստահաբար նկատել, որ հարկման համակարգերի ճիշտ ընտրության և դրանց կիրառության շրջանակի որոշման հետ կապված խնդիրները լուրջ մարտահրավեր են անգամ զարգացած հարկային համակարգեր ունեցող երկրների համար: Այս առումով, անհրաժեշտ է ընտրել հարկման համակարգերի կիրառության այնպիսի մոդել կամ հարաբերակցություն, որի պարագայում հնարավոր կլինի առավելագույն չափով խուսափել հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության բացասական հետևանքներից՝ միաժամանակ հնարավորին չափ օգտագործելով դրանց կիրառության դրական ազդեցությունները: Այլ կերպ ասած՝ հարկային համակարգերի կիրառության հարցում անհրաժեշտ է ունենալ հավասարակշռված մոտեցում: Այս ուղղությամբ վերջին շրջանում արդեն իսկ կարևոր օրենսդրական փոփոխություններ են կատարվել, որոնց արդյունքում մասնագիտական աշխատանքների կատարումն ու ծառայությունների մատուցումը դուրս է բերվել շրջանառության հարկի համակարգից, գործունեության հիմնական տեսակների մասով շրջանառության հարկի դրույքաչափերը բարձրացվել են՝ զուգահեռաբար հնարավորություն ընձեռելով փաստաթղթերով հիմնավորված ծախսերի որոշակի մասը նվազեցնել շրջանառության հարկի գումարից, սահմանափակվել է միկրոձեռնարկատիրության համակարգում գործող հարկ վճարողների կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի հիման վրա շահութահարկով հարկման բազան նվազեցնելու հնարավորությունը և այլն:

Այդուհանդերձ, հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության հետ կապված վերոնշյալ խնդիրները դեռևս արդիական են, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության շրջանակը շատ լայն է, իսկ հարկման այլընտրանքային համակարգերն իրականում ոչ թե այլընտրանք են հարկման ընդհանուր համակարգին, այլ համարվում են հարկման արտոնյալ համակարգեր: Մասնավորապես, միկրոձեռնարկատիրության պարագայում տնտեսավարող սուբյեկտներն ազատվում են բոլոր հիմնական հարկերից, իսկ շրջանառության հարկի պարագայում գործունեության այս կամ այն տեսակի համար վճարվող շրջանառության հարկի դրույքաչափերը, անգամ վերոնշյալ բարձրացումից հետո, շարունակում են ցածր լինել նույն գործունեության տեսակի համար հարկման ընդհանուր համակարգում վճարվող ԱԱՀ-ի և շահութահարկի արդյունավետ դրույքաչափերի հանրագումարից:

Ուստի, նախատեսվում է հարկային համակարգի առաջիկա փոփոխությունների շրջանակում մեկ անգամ ևս անդրադառնալ հարկման համակարգերի բովանդակությանը՝ ակնկալելով կրճատել և պարզեցնել հարկման համակարգերը: Մասնավորապես, նախատեսվում է միկրոձեռնարկատիրության շեմը բարձրացնել տարեկան մինչև 50 միլիոն դրամ՝ զուգահեռաբար վերաիմաստավորելով հարկման այս համակարգի հիմքում դրված քաղաքականությունը: Այս փոփոխությունները կնպաստեն փոքր և միջին բիզնեսի զարգացմանը՝ ստեղծելով ավելի կանխատեսելի և հավասարակշռված հարկային միջավայր: Բացի այդ, կապահովվի տնտեսավարող սուբյեկտների սահուն անցումը հարկման հիմնական համակարգ՝ նվազեցնելով այդ գործընթացի հետ կապված հնարավոր բեռը և անցումային փուլի դժվարությունները: Նաև նախատեսվում է, որ նշված փոփոխություններից հետո Կառավարությունը տեսանելի ապագայում այլևս ձեռնպահ է մնալու հարկման համակարգերի վերանայումից՝ այդ կերպ ձևավորելով կանխատեսելի և կայուն հարկային միջավայր:

Ցանկալի է, որ հարկման համակարգերում կատարվող փոփոխությունները հանգեցնեն ԱԱՀ վճարող համարվողների թվաքանակի ավելացման, ինչը, կարծում ենք, պետք է դրական երևույթ համարել, քանի որ եթե կարճաժամկետ հեռանկարում կամ անցումային որևէ ժամանակահատվածում հարկման այլընտրանքային համակարգերի կիրառությունը կարող է որոշակիորեն հիմնավորված լինել, ապա երկարաժամկետ հեռանկարում հարկման այլընտրանքային համակարգերի լայնամասշտաբ կիրառությունը որևէ կերպ արդարացված չէ, ինչը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով.

- պետությունը չի կարող երկարաժամկետ հեռանկարում հարկային եկամուտների ապահովման ռազմավարությունը կապել հարկման այլընտրանքային համակարգերում գործող հարկ վճարողների հետ,
- հարկման այլընտրանքային համակարգերի լայնամասշտաբ կիրառությունը խոչընդոտում է տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման խնդրի լուծմանը,
- հարկման այլընտրանքային համակարգերի լայնամասշտաբ կիրառության պարագայում, ըստ էության, կիմաստազրկվեն Հարկային օրենսգրքով կատարված այն բոլոր բարելավումները, որոնք առավելապես վերաբերում են հարկման ընդհանուր համակարգում գործող հարկ վճարողներին: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման համակարգի ազատականացմանը, ԱԱՀ-ի գծով դեբետային մնացորդները ամսական պարբերականությամբ հարկ վճարողներին հետ վերադարձնելու համակարգի ներդրմանը, արտադրական նշանակության մեքենասարքավորումների, հումքի ու նյութերի ներմուծման ԱԱՀ-ից ազատելուն, արտահանման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի Օ տոկոս դրույքաչափի կիրառության պարզեցմանը, արտահանողներին ԱԱՀ-ի գումարները հետ վերադարձնելու ընթացակարգերի պարզեցմանն ու ժամկետների կրճատմանը, շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումներ կատարելու համակարգի ազատականացմանը, շահութահարկի կանխավճարների այլընտրանքային համակարգի ներդրմանը և այլն:

Հիմնական խնդիրն այստեղ, թերևս, այն է, որ հարկման համակարգերում կատարվող փոփոխությունների արդյունքում մեկ մակարդակ ավելի բարձր հարկման համակարգում հայտնվող հարկ վճարողները կարող են սկզբնական շրջանում որոշակի դժվարություններ ունենալ՝ կապված հարկային հաշվառման համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունների ու հմտությունների ձևավորման հետ: Այս խնդրի լուծման գործում կարևորվում է ինչպես հարկ վճարողների մասնագիտական կարողությունների ու հմտությունների շարունակական բարելավումը, այնպես էլ հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման հարթակներում հարկային պարտավորություններն ինքնաշխատ եղանակով հաշվարկելու և հարկային վճարումներ կատարելու հնարավորություն ապահովող՝ պարզ ու օգտագործման տեսակետից հարմարավետ համակարգերի, տեխնոլոգիական գործիքների ներդրումը: Ուստի, ցանկացած նման փոփոխություն կատարվելու է միայն այն դեպքում, երբ Կառավարությունը վստահ կլինի, որ նոր ի հայտ եկող հաշվառման պահանջների հիմնական մասն իրականացվելու է հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման ինքնաշխատ համակարգերով: Միևնույն ժամանակ, հարկման համակարգերի փոփոխության անցումային ժամանակաշրջանում Կառավարությունը կարող է փոխհատուցել կամ համաֆինանսավորել հարկ վճարողների՝ հարկային հաշվառման վրա կատարվող ծախսերը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԳՈՐԾՈՂ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԳԱԶԱՐԳԱՑՈՒՄ. հարկային քաղաքականության այս ուղղության շրջանակներում նախատեսվում է շարունակել ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի հետագա

զարգացումն այնպես, որ հնարավոր լինի վերջնարդյունքում ունենալ պարզ ու հարմարավետ հայտարարագրման համակարգ, որը Կառավարությանը հնարավորություն կընձեռնի՝

- ձևավորել ֆիզիկական անձանց ու ընտանիքների եկամուտների հաշվառման անձնավորված համակարգ,
- ապահովել սոցիալական, առողջապահական, ժողովրդագրական և այլ քաղաքականությունների լիարժեք հասցեականություն և արդյունավետություն,
- սոցիալական ծախսերի համակարգի հետագա զարգացմամբ խրախուսել մարդկային կապիտալում ներդրումները, առողջ ապրելակերպ ապահովելու համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերումն ու ծառայությունների ստացումը,
- ամրապնդել հասարակության շրջանում հարկեր վճարելու մշակույթը,
- եկամտային հարկի համահարթ դրույքաչափերի կիրառության պայմաններում որոշակի պրոգրեսիվություն հաղորդել ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգին:

Եկամուտների հայտարարագրման համակարգը նաև հնարավորություն է տալիս բարձրացնել սոցիալական ծախսերի արդյունավետությունը, քանի որ սահմանվող չափաքանակների շրջանակներում սոցիալական ծախսերի ուղղություններն ու չափերը որոշում են հայտարարատուները՝ ելնելով իրենց անհատական կարիքներից ու առաջնահերթություններից:

Մինևույն ժամանակ, նախատեսվում է, որ սոցիալական ծախսերի համակարգի հետագա զարգացումն ընթանալու է հայտարարատուի կամ նրա ընտանիքի եկամտային խմբից կախված՝ սոցիալական ծախսերի ուղղություններն ու չափերը տարբերակելու տրամաբանությամբ, որպեսզի ցածր եկամտային խմբերում գտնվող հայտարարատուները և նրանց ընտանիքի անդամները հնարավորություն ստանան սոցիալական ծախսերի գծով ավելի մեծ չափով հատուցումներ ստանալ պետական բյուջեից:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ. հայեցակարգով նախանշվող ժամանակահատվածում հարկային քաղաքականության կարևոր ուղղություն է լինելու համայնքների հարկային եկամուտների ավելացման հնարավորությունների ընդլայնումը: Հատկապես համայնքների խոշորացման քաղաքականության համատեքստում համայնքների եկամուտների ավելացումը չափազանց կարևոր է՝ հաշվի առնելով առանձին ոլորտների կառավարման բնագավառում համայնքների իրավասություններն ընդլայնելու՝ Կառավարության մտադրությունները, ինչպես նաև համայնքային ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությունը:

Վերոնշյալի համատեքստում, ի լրումն արդեն իսկ բազմաթիվ ուղղություններով կատարված օրենսդրական փոփոխությունների, որոնք համայնքներին հնարավորություն են ընձեռնել ապահովել լրացուցիչ հարկային և այլ եկամուտներ, նախատեսվում է համայնքներին իրավասություն վերապահել՝

- Հարկային օրենսգրքով սահմանված միջակայքում սահմանել անշարժ գույքի հարկի՝ Հարկային օրենսգրքով սահմանված դրույքաչափերից տարբերվող դրույքաչափեր,
- կիրառել Հարկային օրենսգրքով սահմանվող զբոսաշրջային կամ հյուրանոցային հարկ,
- մասհանում ստանալ համայնքի տարածքում անշարժ գույքի օտարումից առաջացող անշարժ գույքի արժեքի հավելածի նկատմամբ կիրառվող հարկից (նախատեսվող քաղաքականությունը նկարագրված է հաջորդ կետում):
- ներդնել այնպիսի խթանող մեխանիզմներ, որպեսզի համայնքները գործունե հետաքրքրություն ունենան նոր ներդրումների ներգրավման և սովորի դեմ տարվող աշխատանքում:

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱԾԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ. 2020 թվականի հունվարի 1-ից եկամտային հարկի հաստատուն դրույքաչափի ներդրման համատեքստում հարկային քաղաքականության տեսանկյունից կարևորվեց տեսանելի հարստության և շքեղ գույքային միավորների համարժեք ու պրոգրեսիվ հարկման անհրաժեշտությունը, քանի որ միայն այս ճանապարհով հնարավոր կլինի ապահովել պետության՝ վերաբաշխման գործառույթի արդյունավետ իրականացումը՝ դրանով իսկ ապահովելով տարբեր եկամտային խմբերում գտնվող անձանց հարկման արդար ու տրամաբանական համակարգ, ինչպես նաև հասարակական համերաշխություն: Բացի այդ, տեսանելի հարստության կամ ունեցվածքի հարկումը բխում է հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի կիրառությունից:

Այս քաղաքականությունն իրացնելու նպատակով նախաձեռնվեց անշարժ գույքի հարկի համակարգի վերանայման գործընթացը, որի շրջանակներում 2021-2026 թվականների ընթացքում աստիճանաբար բարձրացվում է անշարժ գույքի հարկի գծով բեռը:

Սա կարևոր քայլ է, սակայն բավարար չէ գույքային միավորների հետ կապված հարկերի համակարգն ամբողջությամբ կատարելագործելու և հարկային եկամուտների կարևոր աղբյուր դարձնելու համար: Այս իմաստով, սույն հայեցակարգով նախանշված ժամանակահատվածում քննարկման առարկա է դառնալու գույքի արժեքի հավելվածի հարկման հեռանկարը: Իհարկե, նախատեսվում է այս քաղաքականությունն իրացնել աստիճանաբար՝ սկսելով անշարժ գույքերի արժեքի հավելվածի հարկումից, քանի որ անշարժ գույքին վերագրվող հարկերն ամենից չեզոքն են տնտեսական ակտիվության վրա հնարավոր բացասական ազդեցության տեսանկյունից: Ընդ որում, պետք է հստակ կարգավորվեն անցումային հարաբերություններն այնպես, որ հարկման կանոնը կիրառվի միայն այդ կանոնը ներդնելուց հետո կառուցվող կամ ձեռք բերվող անշարժ գույքի օտարումից ձևավորվող արժեքի հավելվածի նկատմամբ: Համակարգի հետագա զարգացումը կարող է ենթադրել նաև այլ գույքային միավորների արժեքի հավելվածի հարկում:

Գույքի արժեքի հավելվածի հարկման համակարգի ներդրման համատեքստում կարևոր է նաև չհարկվող շեմի և դրույքաչափերի այնպիսի հարաբերակցության սահմանումը, որը հնարավորություն կընձեռի որոշակի շեմից ներքև արժեք ունեցող գույքային միավորների գծով հավելվածը չդիտարկել որպես հարկման օբյեկտ՝ հնարավորին չափ ապահովելով նաև հարկման արդարության սկզբունքի կիրառությունը:

Այդուհանդերձ, գույքի արժեքի հավելվածի հարկման համակարգի ներդրման հեռանկարը քննարկվելու է նաև այն տեսանկյունից, որ համակարգի ներդրումը որևէ բացասական ազդեցություն չունենա ազգային տնտեսության ներդրումային գրավչության և մրցունակության վրա:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ) ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄ. ընդհանուր առմամբ, հաշվապահական (ֆինանսական) հաշվառման համակարգերի շարունակական զարգացումը շատ կարևոր է կազմակերպությունների թափանցիկության ու հաշվետվողականության աստիճանի բարձրացման և դրանով իսկ՝ կազմակերպությունների նկատմամբ վստահության ապրապնդման, ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնման ու կապիտալի շուկայի զարգացման տեսանկյունից: Այս իմաստով, կարևոր է հաշվապահական (ֆինանսական) հաշվառման դերի ընդգծումը, որի ապահովման ճանապարհներից մեկն էլ պետք է լինի հարկային հաշվառման կանոնների որոշակի մոտարկումը հաշվապահական (ֆինանսական) հաշվառմանը: Իհարկե, սկզբնական շրջանում այս մոտեցումը կարող է կիրառվել կամավորության սկզբունքով՝ հարկ վճարողի ընտրությամբ՝ հաշվի առնելով այն, որ դեռևս մեծաթիվ են այն հարկ

վճարողները (հատկապես փոքր հարկ վճարողները), որոնց համար հարկային հաշվառման կանոններն ավելի նախընտրելի և գործնականում ավելի հեշտ կիրառելի են, քան ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները: Ընդ որում, հաշվառման նշված համակարգերի մոտարկումը պետք է կատարել այնպես, որպեսզի չստեղծվեն հարկումից խուսափելու անկառավարելի ռիսկեր:

Ակնկալվում է, որ վերոնշյալ տրամաբանությամբ հարկային ու հաշվապահական հաշվառման համակարգերի հնարավոր մոտարկումը կարևոր քայլ կլինի մի կողմից հաշվապահական հաշվառման դերի բարձրացման, ըստ այդմ՝ նաև թափանցիկ և արժանահավատ գործելաոճի ամրապնդման, մյուս կողմից գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից:

Այս իմաստով, առաջնահերթորեն դիտարկվելու է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի համակարգի, ինչպես նաև նշված ակտիվների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի հաշվառման համակարգի շրջանակներում հաշվառման կանոնները մոտարկելու հեռանկարը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՈՌՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԿՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ. Ինտեգրացիոն գործընթացների ակտիվացման ներկա ժամանակաշրջանում ակնկալվում է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և տնտեսական համակարգերն ինտեգրվելու են համապատասխան միջազգային համակարգերի հետ: Ուստի, շատ կարևոր է, որպեսզի հարկային համակարգում ընթացող բարեփոխումներին զուգահեռ, ակտիվ աշխատանքներ իրականացվեն նաև միջազգային հարկային հարաբերությունների շրջանակներում: Կարևորվում է հատկապես կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնումը:

Կարևոր ուղղություն է նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում հարկային համակարգի զարգացման առանձին ուղղություններով անդամ պետությունների հետ փոխհամաձայնեցված մոտեցումների սահմանումն ու կիրառությունը:

Միջազգային հարկային հարաբերությունների շրջանակներում առաջնահերթ նշանակություն ունի հարկման բազաների պաշտպանության ուղղությամբ հստակ և նպատակային քաղաքականության ձևավորումն ու իրականացումը: Զարգացող երկրների դեպքում միջազգային հարկային ստանդարտները հաճախ ամբողջությամբ չեն արտացոլում ազգային տնտեսությունների առանձնահատկություններն ու կարիքները: Ուստի, նպատակահարմար է ոչ միայն այդ ստանդարտների տեղայնացումը, այլ նաև ազգային մակարդակում համապատասխան քաղաքականության ձևավորումը՝ ուղղված հարկման բազայի պաշտպանությանը: Այս առումով, միջազգային հարկային հարաբերությունների զարգացման կարևոր ուղղություն է ՏՀԶԿ BEPS ծրագրի ներառական հարթակի շրջանակներում իրականացվող աշխատանքներին ՀՀ անդամակցությունն ապահովելու համար համապատասխան կարողությունների ձևավորումը և այդ աշխատանքներին ՀՀ պատշաճ մասնակցության ապահովումը:

Երկրների հարկման բազաների պաշտպանության առումով ժամանակակից միջազգային հարկային հարաբերություններում առանձնակի կարևորվում է նաև հարկային տեղեկատվության փոխանակման միջազգային ստանդարտներին համապատասխան տեղակատվության փոխանակման համակարգերի ներդրումը: Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ համարվում է հարկման նպատակով տեղեկատվության փոխանակման միջազգային հարթակի՝ Գլոբալ ֆորումի լիիրավ անդամ: Միաժամանակ, ֆորումին անդամակցությունը ենթադրում է հարկման նպատակով տեղակատվության փոխանակման

ստանդարտների տեղայնացում և հարկման նպատակով տեղեկատվության փոխանակման համապատասխան համակարգերի զարգացում: Մինևույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության տնտեսությունը տարածաշրջանի ու աշխարհի տնտեսություններին արդյունավետ ինտեգրելու և Հայաստանի Հանրապետության ներդրումային գրավչությունը բարձրացնելու տեսանկյունից կարևոր է, որ հարկման նպատակով ստացվող տեղեկությունների ու փոխանակվող ֆինանսական հաշիվների աշխարհագրությունն ընդլայնվի, արդյունավետորեն ինտեգրվեն հարկային վարչարարության թվային հարթակներն ու ռիսկերի գնահատման համակարգերը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ. հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկ վճարողների համար վարչարարական բեռի նվազեցման և պետական եկամուտների կայունության ապահովման նպատակով հարկային վարչարարության կատարելագործումը դիտարկվում է որպես հարկային քաղաքականության առանցքային ուղղություն: Այս համատեքստում առաջնահերթ է հարկային մարմնի կողմից իրականացվող բարեփոխումների ռազմավարական մոտեցումների շարունակական զարգացումը՝ ուղղված ծառայությունների թվայնացմանը, վերլուծական կարողությունների հզորացմանը և հարկ վճարողների հետ համագործակցային հարաբերությունների խորացմանը: Հարկային վարչարարության կատարելագործումը նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

- հաշվարկային փաստաթղթերի և հարկային հաշվարկների ներկայացման պարզեցված և հարմարավետ, թվային և հնարավորին չափ ավտոմատացված մեխանիզմների գործարկում, որոնք կնվազեցնեն ինչպես հարկային մարմնի վարչարարական ծախսերը, այնպես էլ հարկ վճարողների ծախսերը և կբարձրացնեն հարկ վճարողների կամավոր կարգապահության մակարդակը: Այս գործընթացը ենթադրում է ընթացակարգերի ստանդարտացում, էլեկտրոնային հարթակների զարգացում և ծառայությունների մատչելիության բարձրացում՝ համապատասխանելով հարկային մարմնի թվայնացման ռազմավարական մոտեցումներին,
- թվային տեխնոլոգիաների, այդ թվում՝ արհեստական բանականության, հարկ վճարողների թվային համակարգերի, մեծ թափ առնող էլեկտրոնային առևտրի ու կրիպտոակտիվներով գործարքների մշտադիտարկման և թվային հետախուզության վրա հիմնված գործիքների ներդրում՝ հարկային մարմնի վերլուծական կարողությունների կատարելագործման նպատակով: Այս համակարգերը պետք է հիմնվեն հարկ վճարողների վարքագծի, օրինապահության կամ ռիսկերի գնահատման (վարկանիշավորման) մոդելների վրա՝ հնարավորություն ընձեռելով լավարկել ռիսկի վրա հիմնված վերահսկողության համակարգերը: Այս մոտեցումը միտված է վարչարարության արդյունավետության բարձրացմանը և ստվերային տնտեսության նվազեցմանը՝ միաժամանակ խթանելով հարկային պարտավորությունների կամավոր կատարումը,
- տեղում սուուգումների գործիքակազմի վերանայում և վերափմաստավորում՝ այն վերածելով ոչ միայն վերահսկողական, այլև կանխարգելիչ և կրթական գործիքի, որը կնպաստի հարկ վճարողների կարգապահության և իրազեկվածության բարձրացմանը՝ տուգանային մոտեցումներից աստիճանաբար անցում կատարելով ուղղորդող և համագործակցային մոդելների: Այսպիսով, հարկային վարչարարությունը պետք է ավելի մարդակենտրոն բնույթ ստանա՝ խթանելով վստահության վրա հիմնված հարաբերություններ պետության և հարկ վճարողների միջև,
- հարկային մարմնի և հարկ վճարողների հաղորդակցության գործիքների ընդլայնում: Սա ենթադրում է հարկ վճարելու մշակույթի տարածման լայնամասշտաբ ու պարբերական արշավներ, հարկ վճարողների համար առաջարկությունները ներկայացնելու և խնդիրները բարձրաձայնելու համակարգված հարթակների ու մեխանիզմների ձևավորում (այդ թվում՝ հասարակական խորհրդի դերի ընդլայնման, ընդգրկումն հարցումների իրականացման և ոլորտային հանդիպումների դերի մեծացման

ճանապարհով), հարկ վճարողների սպասարկման և աջակցության՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառություն (chatbot, voicebot և անհատական սպասարկում):

Ընդհանուր առմամբ, հարկային վարչարարության կատարելագործումն ուղղված է արդյունավետ, թափանցիկ և տեխնոլոգիապես զարգացած համակարգի ձևավորմանը, որը կնպաստի ինչպես հարկային եկամուտների կայուն աճին, այնպես էլ գործարար միջավայրի բարելավմանը:

Մինչև ժամանակ, հարկային վարչարարության կատարելագործումը պետք է նպաստի ստվերային շրջանառություններ ունեցող և հարկումից խուսափելու բարձր ռիսկեր գնեցնող հարկ վճարողների բացահայտմանն ու հասցեական վերահսկողությանը՝ ապահովելու համար ստվերում մնալը ավելի ծախսատար լինելու՝ համընդհանուր ընկալումների ձևավորումը: Նման հարկ վճարողները պետք է գտնվեն հարկային մարմնի թիրախային վարչարարական ուշադրության կենտրոնում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց նկատմամբ կիրառվող վերահսկողական գործիքակազմը պետք է խստացվի:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.1. Հայաստանի Հանրապետության 2027-2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերը ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների

Հավելված 1.2. Հայաստանի Հանրապետության 2027-2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հավելված 1.3. Հայաստանի Հանրապետության 2027-2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Հավելված 1.4. Հայաստանի Հանրապետության 2027-2029 թվականների պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները

Հավելված 1.5. 2027-2029 և 2026-2028 թվականների ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի համեմատական աղյուսակները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ